

ՀԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԳԱՎԵԼԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՌՍՈՒԹՅԱՆ ԽԵՍՏԱՏՈՒՅՑ

ՏԱՅԱՅ
ՊԱՌՍՈՒԹՅԱՆ
ՎԱՐՅԵՐ

17



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՎԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՍՈՒՔԻԵՐԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՍՈՒՔԻԵՐԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՐԱ ՀՈՂՎԱԾՈՒԵՐԻ ԺՈՂՈՎՇՈՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СВОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

17

ՄԵՐՄՈՒՐԻ ԱՐԱ ԱԾԵՅԻՆ
ԱՊԱԽԱՆՆԵՐ

159



ARCH. MESROB ASHURN
BOOK SERIES

159

Հայոց պատմության հարցեր

ԵՐԵՎԱՆ
ՊԱՍՈՒՔԻԵՐԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ
2016

**Տպագրված է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհրդ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), ՀՀ ԳԱԱ բղբակից անդամ Ա.Ա. Խառտույան, պ.գ.դ. Է.Լ. Դավիթյան, պ.գ.դ. Հ.Մ. Հարուբյան, պ.գ.դ. Կ.Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ), պ.գ.թ. Ա.Բ. Շահնազարյան, պ.գ.թ. Հ.Ղ. Սուրանյան, պ.գ.թ. Հ.Կ. Սուրիանյան:

Редакционная коллегия

Академик ՀԱՀ ՊԱ Ա.Ա. Մելքոնյան (председатель), член-кор. ՀԱՀ ՊԱ Ա.Ա. Խառտույան, д.и.н. Է.Լ. Даниелян, д.и.н. Գ.Մ. Арутюняն, д.и.н. Կ.Հ. Խաչատրյան (заместитель председателя), к.и.н. Ա.Ի. Շահնազարյան, к.и.н. Ա.Բ. Մուրադյան, к.и.н. Ա.Կ. Ծոկնալյան.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Տարց պատմության խարցեր» տարիքի ելքը ամառական 17-րդ հասորում գևունդիած աշխատությունները սկզբանային արդիքի, մասնաւորապես մասնակի երաժշտականների, հարեւելի և համաշխատիալին պատմության կամականքին լրացնելու վեհական աշխատավորության շարքում գործում են սփյուռք Հարց պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Տարեզօտում գևունդիած են նաև ՀՀ ԿԳՆ գիտաբանական պետական կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ տեղի ունեցած ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Երևանաբարդ գյուղաշխատության ՀՀՕՎՆ գիտական Խոռոչական 1-3 հունվարի 2016 թ., Արթիկան) գևունդամենք:

**Կ. Ֆ. ԼԵՍՄԱՆ-ՀԱՈՒՊՏԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՎԱԼԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԽՂՐԻ ՇՈՒՐՉ**

Վաև քաղաքում շինարարական գործունեություն իրականացնելու վերաբերյալ առուրերինով զրկած առաջին սեպազիր արձանագրությունը պատկանում է՝ Կանի քաջավորության արքա Սարդուրիին։ Սույն արձանագրությունը հիմք ընդունելով՝ որոշ հետազոտողներ երան համարել են Տուշքա-Վաև մայրաքաղաք-ամրոցի հիմնադիր¹, ինչպես նաև, Արամեի արքայական հարստությունից զանազանելով, «Կանի» որպես արքայական հարստության սկզբնավորող։ Եթէ նախկինում Սարդուրիի գահակալության ժամանակաշրջանը աներկրա թվագրվում էր Արամեից հետո՝ մոտավորապես մ.թ.ա. 845-825 թթ.², ապա ներկայումս հետազոտողները միակարծիք չեն Արամեի և Սարդուրիի գահակալության հաեզանակըների և ժամանակաշրջանի, բայց այդու նույն բիայնական պետության վաղ շրջանի իրադար-

¹ Սարդուրին արձանագրությունում հետո է Ակինունից քարերի այսուհետակա քարեր և պարիսպն կուտայքու մասին (ուստի Lehmkuhl-Naujoh C. F., Corpus Inscriptionum Chaldaicarum, III, Berlin-Leipzig, 1928-1935, N 1-3, Salvini M., Corpus dei testi iraniani (արքունիք), CTU, vol. I, Roma, 2008, A 1A-1F):

² Տես Դավիթից Գ., Ուրացանի պատմություն, Երևան, 1940, էջ 137-138։ Ա. Աղբացեց Սարդուրիի համարում է Արամեի որպէս գոնելով, որ Աքեմենյան մականունները կը Հորդիպը (ուստի Աղասի և Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 186, 194):

³ Արյուսան Բ. Ենթական (Մարգրե), Երևան, 1970, էջ 120-123, Կարագիշեան Յ. Հայելուք լեռաշխատիքի սեպազիր տեղուանուելուն, Երևան, 1988, էջ 27-28։ Ըստ Գ. Աղերքինյանի Տուշա քայլացի տեխնոլոգիաները դարձել են «Կանի քաջավորության արքաներ» ինչ Դաւիդ Մարտրանցա (ուստի Մելքոնյան Ռ. Ա. Նայր-Մարգրե, Եղանակ, 1954, էջ 202, 230):

⁴ Ֆուլիքը հավանական է համարում և Հորդիպըին պարզ Արամեից զառ, Արամեի ժամանակակից առանձին արքու պատարկեց և Հորդիպըն Արամեի կողմու համարկը (König F. W., Handbuch der chaldischen Inschriften (աշուանին Խի), Bd. III, Craz, 1955/1957, S. I, N 1a-c):

Ճուրյունների թվազրման հարցում՝ Պատմագրության մեջ, վերաբերյալ թեզուկի վերաբերյալ, առաջինն իր վարկածներն է առաջարկել ականավոր գերմանացի հայացետ, արևելացնու Կ. Ֆ. Լեման-Հառուպուրը: Հեղինակը Վասի բազավորության մթա. 9-րդ դարի իրողությունների վերականգնման մեկնակետ է ընտրի Տուշպայի ամրոցի կառուցումը և ներառյալ՝ երկու տարբերակ:

Ըստ Կ.Ֆ.Լեման-Հառուպուրի, «առաջին հայացքից» հնարինոր է Իշպուինի հորը՝ բիախական և ասորեստական արձանագրություններում հիշատակվող Սարդուրի-Մերուրին, նույնացնել Վածա ամրոցը՝ կառուցող Սարդուրիի հետ և նրա զահակալության ժամանակաշրջանը թվազրիկ Արամեից հետո: Նման համարության դեպքում հեղինակը Վածա ամրոցի կառուցման պատճեռ է համարում այն հանգամանքը, որ Սարդուրին, ասորեստական արքա Սալմանասար III-ի (մթա. 858-824 թթ.) զահակալության երրորդ տարում՝ մթա. 856 թ., հյուսիսից իրազործած արշավակերից հետո⁵, եթե Սալմանասարը զրավել էր՝ Վածա լճի հյուսիսային և հյուսիսարեւեցան որոշ շրջաններ՝ այդ թվում Արտամի արքայական քաղաք Արծաշըուն⁶, նման կառուցապատճեռ է իրականացնել հյուսիսից սպասվող նոր արշավակերը կատեցնել:

⁵ Տես Գրեյսոն Էր. Տուշպա բազարը և բիախական (արքայության) պետության կողմանից որոշ հորդեր. «Հայուստակի մայրաքաղաքները», I. «Լան», Երևան, 2013, էջ 48-49: Ա. Սալվինիի կարծում է, որ ի դեմս Արամեի, ասորեստական արձանագրություններում նշվում է առն արքայացի իջող՝ բիախական տերություն հիմնադիրը Եղել է արքայացի և մրայլ հետապողությունը Սարդուրի I-ի օրոք անցել է բիախական արքայությունին (տես Salvini M., Geschichte und Kultur der Urartier, Darmstadt, 1995, էջ 26-27, 35):

⁶ Տես Grayson A. K., Assyrian Rulers of the Early First Millennium BC II (858-745 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. III, Toronto-Buffalo-London, 1996, (սյունիքներ՝ RIMA), A.0.102.2, ii 47b-56a, iii 56b-60a:

⁷ Տես Lehmann-Haupt C. F., Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens (Abhandlungen der Königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, Philologisch-Historische Klasse, Neue Folge Band IX, Nro 3.), Berlin, 1907, էջ 35 (16, 17), 41 (7, 8):

յու համար։ Սույն տարբերակի դեպքում, ըստ հեղինակի, Վանք
մայրաքաղաքը է դարձել հետազայռու Սարդուրիի որդի Բշպուի-
նիի օրը։

Լեման-Հառուպու կարծում է, որ Տուշպայի ամրոցի բարե-
րը տարբերվում է իրենց բնույթով տեղանքի հումքից և, եթե՛ ըս-
դունենալով Սարդուրիի արձանագրության մեջ հշված Ալիսունուից
քարերն այսուղ բերելու հանգամանքը, գտնում էր, որ քարերն
այսուղ են բերվել Խավերով՝ Կանա լճի եյտափսադին շրջանեն-
թից։ Հեղինակը ներադրում էր, որ Մանազկերտ քաղաքը ենում
անվանել է Ալիսունի⁸։ Հետեաբար, ըստ հեղինակի ներադրելի
է, որ պարսպի շինանյութը Կան է բերվել Մանազկերտից, կամ
Կանա լճով ափամերձ հյուսիսային այլ բնակավայրերից⁹։ Հե-
տազայի Մանազկերտ անվանումը Լեման-Հառուպու համարում

⁸ Sie Lehmann-Haupt C. F. Armenien einst und jetzt (այսունին՝ ԱԵ), Խմ. III/1, Berlin-Leipzig, 1926, էջ 21։

⁹ Հեղինակը որպես օրինակ նույն էր պատմի Թոփիս Արձրունու երկու պատացոված միքամբարան համայնքում անցներ (ան ԱԵ, Խմ. II/1, էջ 20)։ Գողեկ Արծրունու Մանազկերտ քաղաքից Կան տաշած քարեր բերելու ինչ-
ուն նույն Աղձնիկի Կոտումի ամբողջ Կան լճով Աղքամարի նկեղեցու քարե-
րի բրածոց (ան Արծրունու Արձրունու և Ուսունու Դատուուրին տան Արծրու-
նեաց, Երևան, 1985, էջ 391, 461)։

¹⁰ Ս. Երեսյան Ալիսունիի տեղադրությունը է Ալիսունա գավառում (ան սերեման Ս. Արքարան պետական 860-590 թթ. մ.թ.ա., Երևան, 1980 թ. (բարուել))։

¹¹ Տե՛ս ԱԵ, Խմ. II/1, էջ 20։ Բ. Պիոտրովսկին նշում է որ դժվար է մոտեցնելով
հոմանակին Լեման-Հառուպու այլ ներայինությանը, առաքի հասուն է որ
քարերի պատճեն էն բերվել այլ վայրից (ան սՊոտրովսկի Բ. Բ., Յանչես պատճառ
(Մարտու), Մոսկվա, 1959, էջ 58-59)։ Ս. Սալվինին, հաֆանական է համարում Ալ-
իսունու քաղաքի և ըստ այդ ամենի հին իշխանական կենուրություն-
ուր Լարրի հուրուցինական, իսկ ամրոցի քարերի տեղափոխումը՝ Կամից ոչ
հեռան գտնվու քարանոտապահությունը։ Ըստ հեղինակի՝ Ալիսունու անվանումը իր
բերականական կուսուցվածքով համապատասխանում է Սուզունիս և Արծրու-
նեաց(ա) անվանութերին (ան ս Salvini M., Geschichte und Kultur der Urartäer,
էջ 35-36)։

եր Մելուայի անունից ծագած, քանի որ Մելուան այստեղ գտնվող ամրոցը վերակառուցել է¹²:

Համաձայն Լեման-Հառլապտի առաջարկած երկրորդ տարբերակի՝ հարկ է Վանա ամրոցի հիմնադիր Լութիարիի որդի Սարդուրիին զանազաններում բիայևական և ասորեստանյան արձանագրություններում հիշատակվող Ծափուիսիի հայր Սարդուր Սեղուրից: Ըստ այդմ, հեղինակը Լութիարիի որդի Սարդուրի զահակալությունը հավանական է համարում տեղի ունեցած Արամեից առաջ՝ Աշուրեածիրապալ Ի-ի (Ա.թ.ա. 883-859 թթ.) բազավորության տարիներին¹³: Տեղինակը եման բժազրման համար հիմք է ընդունել այն, որ Սարդուրիի տիտղոսաշարը խիստ նման է Աշուրեածիրապալ Ի-ի տիտղոսաշարին և արմատապիս տարրերին է բիայևական հաջորդ արքաների տիտղոսաշարերից¹⁴: Ըստ հետազոտողի՝ Խախվիլիում միայնաց հետ բոլյ կապված Խախրյան բաղարական միավորքները Լութիարիի որդի Սարդուրիի օրոք արդեն միավորվել էին մեկ պետության մեջ¹⁵:

Կ. Ֆ. Լեման-Հառլապտը, եշելով Սարդուրիի տիտղոսերին արձանագրության մեջ՝ «աշխարհի արքա, արքաների արքա», գոևում է, որ ևս է եղել Խախրյան առաջինադաման շարժիչ ուժը Աշուրեածիրապալ Ի-ի օրոք: Լութիարիի որդի Սարդուրին, զիտակցարար կրելով ասորեստանյան արքայի տիտղոսաշար, փորձել

¹² Պատմանար Սովոր Խորենացին ավանդություն է, որ Հայքի ժողովածերից Սահմանը Ժամանակեց Հարրը (առև Սովոր Խորենացի (պատմեան Սովոր Խորենացի), Պատմություն Հարրը, Երևան, 1991, էջ 36):

¹³ Այս տարբերակն, ինչպես հեղինակն է եղամ, իր հունար առավել հավանական է (առև ԱԷլ, Բd. II/1, էջ 21, 24):

¹⁴ Ե. Աշոնեց թեսարանուն է Լեման-Հառլապտին, երկու արքաների տիտղոսաշարերի հետանքը պարմանանվորված նման հզուակացություն է կառաջընկալու համար, սակայն Լեման-Հառլապտը միայն այդ փաստաքը չէ: որ թերում է (առև Արևո և., նշվ. աշխ., էջ 186-187):

¹⁵ Տե՛ս ԱԷլ, Բd. I, Berlin, 1910, էջ 13:

է նաև այդ կերպ վիճարկել Աշուրեածիրապալի աշխարհակալական հսկակեռորութերը¹⁶:

Վաես ժայռի հարավային կողմում իր և Վ.Բելը հայտնաբերած ժայռափոր որմնախորշի աջ և ձախ կողմերի մասամբ ընթեռելի արձանագրությունը նույնպես Լեման-Հառուպող թվագրում է Սարդուրիի զահակալության ժամանակաշրջանով¹⁷. Արձանագրությունում, ինչպես իրավացիորեն եղում է նա, առողբերենով բժարկվում են զոհաբերվող կենդահիները. սեպերի ոճը նման է Սարդուրիի արձանագրությանը. իոկ բովանդակությունը՝ Մելքի դռանը. Արքայի կամ առածո անուն արձանագրությունում պահպանված չէ Լեման-Հառուպող հայտնաբերած այս արձանագրությունը տևական ժամանակ մեաց հետագույնների ուշադրությունից դուրս:

Հետազոտում U. Սալվիինե, օգտագործելով Լեման-Հառուպողի արձանագրության պատճեներ, ենթադրեց, որ սույն տեքստն այդերս չունի բիայնական արձանագրությունների հետ. այս որովախորշը և արձանագրությունը կարող են պատկանել Սարդու-

¹⁶ Տե՛ս Lehmann, C. F., *Sar Urartu. Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete*, Bd. 8, Weimar, 1896, 5. 200, 202: Գ. «Մինենդ, թեկող վերահիշյալ արձանագրություն. եկել է այդ եղանակության, որ Սարդուրիի արքայության տիտղոսաշնորհ ու մակարիքերը համապատասխանում են Աշուրեածինական Ա-ի տիտղոսաշնորհ հետ, իոկ մասնաւում արձանագրությունների այդքունում է նոր ասորեանական եամականք և բարբարի (խոսվածք) հետ: Ըստ հետազոտույթի՝ արձանագրության կազմողը սերել է Աստքառական կուսախախին շրջանի բայրակի կողմէ, մասնավությունը եղել եամակազիք, տիրապետել է եայլող տասնամյակների արքայության արձանագրությունների որոշ կարևոր ձևակերպություններին: Տեղայա է յերմէ ուսպնական արցախակի մասնաւույնու սեփական ցանկությունը (տե՛ս Wilhelm G., Urartu als Region der Keilschrift-Kultur, in: V. Haas (Hrsg.), Das Reich Urartu. Ein altorientalischer Staat im 1. Jahrtausend v. Chr., "Xenia", 17, Konstanz, 1986, էջ 106):

¹⁷ Տե՛ս Lehmann-Haupt C. F., Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, էջ 63, Fig.41, AEJ, Bd. II/1, S. 26-28, CTU, vol. I, A1-2:

թի 1-ին, կամ էլ թիշ հավանականությամբ, ասորեստնյան որևէ արքայի, քանի որ հետազոտում այն կցնչվեր²⁸: Ի. Շալիլոնովը, սակայն, քննելով արձանագրության տեքստը և քննադատնով Ա. Սարգիսիին, եզրակացնում է, որ արձանագրությունում առկա է աղերս նոր ասորեստանյան խոսվածքի հետ և բնորոշ է գոհաբերության կարգ սահմանող բհայնական տեքստերին²⁹:

Ըստ այդու, եթե իրավացի է Անման-Հառուպտը, ապա Լուրիացի որդի Սարգուրիի ժամանակաշրջանով թվագրվող այս արձանագրությունը, կարող է վկայել արդին նրա օրոր Վասի քազավորությունում գոյություն ունեցող զոհաբերության կարգի ու նաև՝ աստծո, կամ՝ աստվածների՝ պետական քաղաքականության ծիրում ներառման մասին:

Անման-Հառուպտը միաժամանակ, իիմբ ընդունելով ասորեստանյան արձանագրությունների տվյալները, կարծում էր, որ Աշուրիսածիրապալ II-ի օրոր տևելի է ունեցել նախրյան պետության առաջիշտաղացում դեպի Ասորեստանին պատկանող հյուսիսային շրջանները³⁰:

²⁸ Տե՛ս M. Salvini. Eine vergessene Felsinschrift mit einem assyrischen Opferext. "Societies and Languages of the Ancient Near East (Studies in honor of I. M. Diakonoff)". Warminster, 1982, լո 331. Salvini M.. Le pantheon de l'Urartu et le fondement de l'état. "Studi epigrafici e linguistici sul Vicino Oriente Antico". vol. 6, 1989, լո 83:

²⁹ Տե՛ս Դալкоնօս Ի. Մ. О некоторых напроказиях в урартских языковознании и новых урартских текстах. "Древний Восток", 5, Ереван, 1988, լո 157-159:

³⁰ Հեղինակը նաև եզրակացրել է նաև իիմբ է ընդունում այն, որ ասորեստանյան արքա Աշուրիսածիրապալ II-ի զանակալարյան 2-րդ տարում ուղղու նրա արքայական բանարք է նշվում "Խոհեմառնան. նոկ արքեն 18-րդ տարում ֆանանան Իշտիմի ամրոցը Թանանուն հարավում Նախրան շրու շրջաններից մեկի էր (տե՛ս ԱԲՀ. Յն. II/1, լո 21, 395): Գ. Ալիքիշչյանի Անման-Հառուպտին թվականությունը նշում է, որ այս իրադարձություններին ուրարտական տիրակալ Արք Անտիանի վերաբերա տվյալներ չկան, և իրականում ընդգամնել են Բրու Բաննանի իշխանության տահմանները (տե՛ս Մելլումանը Շ. Ա. Կոչ աշխ., լո 201, ծան. 1), ունիոյն այս տարրերանից Անման-Հառուպտը քաղաքական դիրքականություն վերապահում է միայն Նախրան պետությանը:

Ըստ երա՝ ոչ միայն Սալմանասար I-ի, այլև Աշուրեածիրապալ II-ի զահակալության տարիներին, նախքիները մասսամբ միացած արևմուտքից Միջագետք ներխուժող սեմերին՝ արամեացիներին, զգալի առաջխաղացում են ունեցել հարավում՝ նախկինում Ասորեստանին պատկանող տարածքում²¹: Աշուրեածիրապալ II-ը Միջագետքում և Եփրատի միջին հոսանքում արամեական բաղարները նվաճելուց հետո իր ուշադրությունը կենտրոնացնեց Սիրայի ուղղությամբ, որտեղ առաջնորդող դերակատարություն էր ստանձնել Դամասկոսը²²: Դամասկոսի և Համարի կուլյցիան, որը ձգվում էր միեցն Փոքր Ասիա, իր հերթին Հայաստանում ենաւ օժանդակություն էր որում:

Համաձայն Լեման-Հառուպտի, ըստ այդու հարկ է պատճառական կապ տեսնել Սալմանասար III-ի՝ արամեացիների դեմ, ինչպես նաև Հայկական լեռնաշխատի կոտորած արշավանքերի միջին²³: Սալմանասար III-ին հաջողվեց կասեցնել հայկական լեռնականներին (der armenischen Bergvölker) և երանց հետ միավորված արամեացիներին, չեզոքացնել ասորեստանյան «միջնաբերդի» վրա կախված վտանգը²⁴: Հաջորդ դարերի ընթացքում նոյնպես բիականական արքաները Ասորեստանի թշնամիների հասկապես Հյուսիսային Ասորիքի (Սիրիա) արամեական պետությունների հետ դաշնակցային հարաբերություններ էին պահպանում:

²¹ Տե՛ս AEJ, Bd. 1, էջ 13:

²² Տե՛ս Lehmann-Haupt C.F., Israel-Seine Entwicklung im Rahmen der Weltgeschichte. Tübingen, 1911, էջ 72, 75:

²³ Անդրքաստանի ուղղականառանձնյական հետարքությունները հրասվում են արքունական մինչաց հետ շարկապահ էին, որը արտացոլված է ինպէս արևակապարբերությունում, այնուև է պատկերներում (տե՛ս Schachner A., Bilder eines Weltreichs. Kunst- und kulturgeschichtliche Untersuchungen zu den Verzierungen eines Tores aus Balawat (Imgur-Enlil) aus der Zeit von Salmanassar III. König von Assyrien, "Subartu" 20, Turnhout, 2007, էջ 227-228):

²⁴ Տե՛ս AEJ, Bd. 1, էջ 443:

Ասորեստանյան արքա Աշուրեածիրապալ II-ի իր արձանագրություններից մեկում նշում է, որ նվաճել է Սուրբատ գետի ակունքներից մինչև Ռուբառու երկիր ընկած տարածքը: Սուրբատը Լեման-Հառապտը տեղորոշում է Միջազգետրում՝ Նիւվելից Տուր-Աբդին ճակապարհին՝ Արևմտյան Տիգրիսի մոտ²⁵: Աշուրեածիրապալ II-ի համահման տերստերում Ռուբառու անվան փոխարեն եշվում է Նիբրու անունը: Հետազոտողը նախապես ենթադրում էր, որ ասորեստանյան արձանագրություններում, ի դեմք Ռուբառու անվան ամենահին վկայության, պետք է հասկանալ Արարտ/դի լեռները²⁶: Տեղինակը չի բացառու նաև, որ Ռուբառու անվան վկայությունը կարող է լինել ասորեստանյան շահազանցուրյան արդյունքը. Նրանք Միջազգետրին հարող շրջակի անունն օգտագործել են իրենցից հյուսիս գտնվող երկրի և բնուկցուրյան համար²⁷:

«Սա Լեման-Հառապտի՝ Աշուրեածիրապալ II-ին այդպես էլ չհաջողվեց Հայաստանի կենտրոնական շրջաններ ներխուժել».

²⁵ St u. Lehmann-Haupt C. F., Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Եջ 22:

²⁶ St u. AEJ, Bd. I, Եջ 443: Grayson A.K., Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. II, Toronto-Buffalo-London, 1991, A.O. 101.1, 1 54b-55a, A.O.101.30, 1-20a. Դմկոնով Ի. Մ., Ասսիր-հայության աշխատանքները և առաջնահայությունը Արարական աշխատանքներում (աշխատանքներ և առաջնահայությունը Արարական աշխատանքներում) (աշխատանքներ և առաջնահայությունը Արարական աշխատանքներում), Մասկով, 1951, Ն 2-4, 23-24. Նիբրու կոմ Նիբրի կարող է եղանակի նաև լիռանցը (առև և նոյն տեղում, ծան 4): Լեման Հառապտը Նիբրին տեղաբաշխում է որպես Երկիր՝ Արարտի լեռների հայազարին կողմում, որին միջազգային դրաշատագործ հյուսիսայն առանձնահայությունը է (առև և AEJ, Bd. I, Եջ 443): Դաստիարակ Սովորս Խորենաց Երկրության Հայիի և Բյեղ մասին շարադրությունը կարգության մեջ՝ «Ճան ճանաւոր գործի խր զԱրամանեալ ի Բաբելոնի ցա արարեալ վեց յերկիր Արարարուն» որ է ի կոր հինգիւա» (առև և Սովորս Խորենաց, Եջ 33): Նշենք, որ բազրի տարրընթերցածում պատկե առկա է Արարտա ձիր:

²⁷ St u. AEJ, Bd. II/2, Berlin-Leipzig, 1931, Եջ 847-851: Ըստ Ս. Սավինիի՝ պատկե տարրինական մեջքանցըցը Ռուբառուն եղանու է որպես ընդհանուր աշխատանքային ուժավում (առև և Salvini M., Առաջ. Ա. Geschichte, "Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie", Bd.145/6. Lief., 2015, Եջ 390):

բանի որ Սարդուրիի ասորեստանան արշավանքը կառցել-
լու համար կառուցել էր Վանու ամրոցը: Ամրոցի պաշտպանա-
կան նշանակությունը կարևորվում էր պաշտպան ժամանակ,
որի ընթացքում նյութական ապահովումը իրականացվում էր
նաև լճի մյուս ափից²⁸: Հետագուստող կարծում էր նաև, որ ամրոցը
պաշտպանում էր նաև Սարդուրիի հիմնած նավահանգիստը²⁹:

Ըստ Անման-Հասուպանի հայեցակարգի՝ Արամեի օրոր, ոս
հայեց որպես իրենց հերոս և տիրակալ են մեծարում³⁰. տեղի է
ունեցել իշխանական փոփոխություն: Իշխանությունը Հայկա-
կան լեռնաշխարհում նախրան պետական միավորից անցել է
բիայնական (խալլյան) հարաւորթյանը³¹: Հեղինակը հետազա-
յում փորձել է բիայնական արքաների տիտղոսաշարում «Նախի
երեցների արքա» տիտղոսի բացակայությանը նման հիմնավո-
րում տալ³²: Սույն տեսակետի համար կովան էր համարվում
նաև այն հանգամանքը, որ Արամեի օրոր պետության մայրաքա-
ղաքի Արծաշընուն էր և միայն ավելի ուշ բիայնացիների իրենց

²⁸ Տե՛ս ԱԷՀ, Բd. II/1, էջ 20, 22:

²⁹ Ա. Յ. Անման-Հասուպանը կարծում էր, որ այն ժամանակ Վանու լճի մակար-
դակին տիկին ցածր է եղել, և Խոսկահականու ամրոցից մեկ կիլոմետր հետո է
եղել լին մակարդակի տառականությունը ժամանակ ցուրը զգերի ամրոցին է
հասել (տե՛ս նշվ. աշխ., էջ 18):

³⁰ Տե՛ս Մայկա Խորենացի, էջ 43-44:

³¹ Տե՛ս ԱԷՀ, Բd. I, 5, 13:

³² Տե՛ս Lehmann-Haupt C. F., Das urartäisch-chaldaische Herrscherhaus, "Zeitschrift
für Assyriologie und verwandte Gebiete", Bd. 33, Berlin-Leipzig, 1921, էջ 28-29: Ան-
ման-Հասուպանը եղան է, որ պիտուղինային, Լորինցիի որդի Սարդուրիին և
Արամեին վերջանկանական տառընը քաղաքական մշակորություն ներկայացն-
ուելու համարելու համար բավար ֆառանք չկան. և հետաքանի ու որ Լորինց-
ին որդի Սարդուրիի տիտղոսաշնորհ համար հիմք են հանդիսացել Աշուան-
միրապայի այդուն հարուի արքանուցուքը նեկը և կրտ արևանազուրբան-
ները կազմու են Սարդուրիի գահակալության տարիներին շարադրված լի-
նել (ԱԷՀ Բd. II/1, էջ 24):

տիրապետությունը տարածեցին Հայկական լեռնաշխարհի հարավային և Կանա լճի արևելյան շրջանների վրա³¹.

Հարկ նշել, որ Սալմանասար III-ի գահակալության առաջին տարվա արշավանքի ժամանակ Արամեի պետության հարավային շրջանում նշվում է Սուզունիա բնակավայրը³². Սուզունիա բնակավայրի տեղորոշման շուրջ առկա են տարաբնույթ կարծիքներ, սակայն բոլոր դեպքերում էլ հետազոտողների այն տեղորոշում են Հայկական լեռնաշխարհի հարավային Կանա և Ռիմիա լճերի միջև ընկած հատվածում³³. Այս հանգանակությունների կողման է երազընելու, որ արդեն Արամեի բաղադրական իշխանության ոլորտում ընդգրկված են եղել Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները³⁴.

Սալմանասար III-ի գահակալության երրորդ տարվա՝ մ.թ.ա. 856 թ. արշավանքին վերագրվող բանաստեղծական տեքստերից մեկում նշվում է, որ արքան հարկ է ստացել Տուրուշպա բաղարից³⁵: Սույն արշավանքի նկարագրությունում, Արամեի պետության կենտրոնական շրջաններում՝ մայրաքաղաք Արծաշըուի հարևանությամբ, նշվում է Արամալու բաղարը³⁶:

³¹ Հեյփունկը կարծում է, որ Սալմանասար III-ի օրոր բիամեացիների բնակիում էին Ֆերգիսից հյուսիս, հյուսիս-արևելք և Արածանիի շրջակացուում. իսկ մայրաքաղաք Արծաշըու գտնվել է Դաշտ լճից հյուսիս (տես AEM, Խմ. II/2, կը 595, 679, 851):

³² See RIMA, vol. III, A.0.102.1, 29b-33a, 33b-40a, A.0.102.2, 423b-25a, A.0.102.28, 10b-18a.

³³ See Ալեքս Ն., եղջ աշխ., կը 79. Պայտրուսուն Ե., եղջ աշխ., կը 55. Արցոյան Բ. Բ., Տոպոգրաֆիկա Ուրարտ, Երևան, 1985, ս. 171, Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, կը 28.

³⁴ See Պայտրուսուն Ե., եղջ աշխ., կը 60:

³⁵ See RIMA, vol. III, A.0.102.17 (57):

³⁶ See ս ԱԲԻՄԵ. N 27 (II-54), RIMA, vol. III, A.0.102.2, 426b-60a: Ա. Ցուրց կարծում է, որ Արածանին պատկերվում է որպիս բարձր, որը չունեն սեփական պարա և ուղարկիորեն աղվերում է Արծաշըուի շարք քիչա բիամեացին կենտրոնի ամայացման հետ (տես Fuchs A., Urartu in der Zeit, Biasnili-Urartu,

Արծաշրուի վերաբերյալ արձաւագրության տևելեկությունների վերլուծությունը հետազոտողներին քիրել է ոչ միաւշանակ եղանակագումների³⁸. Տուշպայի (Տուրուշպա) հիշատակությունը հետարափրություն է տալիս նաև հերադրություն կատարել Դայթից արշավանքի հավանական երթուրությունը: Ասորեստանի առաջը գործը, Դայթին երկրից շարժվեց Արծաշրու, անցավ Արմարու⁴⁰ և Էրիխուա լեռները⁴¹ և ամերեց Արամալու քաղաքի ու երա շրջակա քաղաքները, այնուհետև շարժվեց Զանգիունա քաղաք. Նախի երկրի ծով և Գիզանու երկիրը⁴²: Գիզանու երկիրը տեղորոշվում է Ռուբիա լճի հարավարեմոյան հատվածում⁴³. Տուրուշպա քաղաքից հարկ ստանալու իրողությունը ներառյալի է.

The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007. "Acta Iranica" 51, Peeters, 2012, էջ 159:

"Ն Աղջոց կարծում է, որ Արծաշրուն հետազոյն Մատագիրուն է, յոտ Արմալին (Արմալի սփյուռք) հորի է տակարոցի Ապահովիցուն. Զանգիունը Ալիմիսսում (ոտք ս Աղջոց և, եղան աշխ., էջ 35, 354): Ո Երեմանը Արծաշրուն Արմալը. Սինետին. Ծիար ու Արուն տեղորոշում է Վանս լճոց հովուն և հյուսնա-աքեւեր գանձան Արտավազի շրջանում (ոտք ս Երեման Ս. Տարաբու ովանուրյունը 860-590 թթ. մ.թ.ա.): Բ Պատրութիւնի Արծաշրուն տեղորոշում է Արամանքի վերին հոսանքի շրջանում Հինգինի մոտ. Գ Սելիբիշվիլին Ուրիշ մի հրամանարձության հոսանքունութ. Դ Հորությանանի Արծիկուն (ոտք ս Պոտրուսին Տ. Ե., եղան աշխ., էջ 55, Մելետանու Շ. Ա., եղան աշխ., էջ 32. Արցունա Ի. Ե. Յանձնում (Մարգր), էջ 108). Ս. Սալվինին Արծաշրուն տեղորոշում է Ուրիշ լճոց հորու լուս" հարավ-արևմտսոց (ոտք ս Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 31): Երուց բնադրականություն Սալվինիի տեսանկար. Կուռ է, որ Արծաշրուն Վանս լճոց հովուն Արմանքի շրջանում. լուս արևելք տեղորոշելը շարունակում է մաս արտիստներ (ոտք ս Kroell St., Salamancares III. und das frühe Urartu, Baintoni-Urartu, էջ 167):

³⁸ Եթեացը վայ է, որ Արտարու լիոց Միհանն է և Կայիսերան է բնակության արձաւագրություններուն հիշատակվող ³⁹Eiduru-ի հետ (ոտք ս Արցունա Ի. Ե. Տօնություն Մարգր, էջ 12-13, CTU, vol. 1, էջ 70):

⁴⁰ Երիտիսի հիշատակվում է Մարզու Ա-ի արձաւագրությունում Իրաֆիս ձևով (ոտք ս ԱԲԻԱԿ, N 49(233))

⁴¹ Տի և RIMA, vol. III, A.0.102.2, ii 47b-56a, ii 56b-60a, ii 60b-63a:

⁴² Տի և Reside J. E., Hasanlu, Gizanu, and related considerations, "Archaeological Minitellungen aus Iran", Bd. 12, 1979, էջ 175-181:

որ տեղի է ունեցել արքայական բաղար Արծաշրուի ավերումից հետո՝ ըստ այդ Ադուրուից Արամալու-Զաևզիուսա ճանապարհիւ⁴⁴. ասորեստանյան գորգը Վանա լճի հյուսիսային շրջանին-ից շարժվել է Տուշպա, այնուհետև՝ Գիզան:

Լեման-Հառուպոն առանձին թեսության չի ենթարկել Մալմաւասար III-ի այն արձանազրությունները, որոնցում համատեղ նշվում են Արծաշրուն և Արամալեն, թեպետ երա օրոր սույն արձանազրություններն արդեն հրատարակված էին⁴⁵:

Սարգոս II-ի գահակալության 8-րդ տարվա՝ մ.թ.ա. 714 թ., արշավանքի նկարազրությունում Արմարիլի մարզում հիշատակվում են Օուսայի հայրենական բաղար Արքուն և Սարդուրիի բաղար Ռիարը, որի շրջակայարում ապրում էին երա 7 եղբայրները⁴⁶. Զնայած արձանազրությունում հասակ չէ, թե որ Սարդուրիի մասին է խոսքը⁴⁷, սակայն ակնհայտ է, որ Արամեի պետության կենտրոնական շրջանները և Օուսայի ու Սարդուրիի հայրական բաղարների գտնվելու վայրը՝ Արմարիլին, Կունական են⁴⁸. Լեման-Հառուպուր Արամարիլին տեղորոշում է իր ժամանեակի պարսկա-թուրքական սահմանից արևմուտք՝ Բազի վայրի և Արմիշակի միջն՝ ենթադրելով նաև, որ Արամարիլին կարող էր Արմիշակից ավելի հեռու տարածվել⁴⁹. Հարկ է նաև

⁴⁴ «Լ Խամբերին Արծաշրուն տեղորոշում է Կունա լճի հյուսիսում, իուկ Գիզանը նույնին լին արևմտյան տիփ երկանուով. արշավանքի երրությին առջևբարձությունը է Շայեհից Արամանիկի ակնկերենով Ուրբիտ լճի հյուսիս-արևմտուոք, սահմանին Կունա լճի հարամաքրելեցան շրջանները և դարձալ Գիզանով Սարդուրին» (տե՛ս Lambert W. G., *The Sultantepe Tablets: VIII. Shalmaneser in Ararat, "Assyrian Studies"*, vol. II, 1961, էջ 155-157):

⁴⁵ Տե՛ս Schrader E., *Keilinschrifliche Bibliothek*, Bd. I, Berlin, 1889, էջ 128-174:

⁴⁶ Տե՛ս ԱՅՀԻԿ, N 49(269):

⁴⁷ Տե՛ս Lehmann-Haupt C. F., *Das urartäisch-chaldische Herrscherhaus*, էջ 42-43:

⁴⁸ Տե՛ս Արցուուռ Հ. Ե., *Տօնումուն Սրբոց*, էջ 38:

⁴⁹ Տե՛ս AEJ, Bd. II/1 էջ 319:

նշել, որ Արամալի-Արմարիլի նշանակում է «զարմիկ այրերի և ասհանք», «իշխանական»³⁰:

Արդի տվյալների համապատասխան դեպքում համաձայն Լեման-Հառլապտի առաջարկած առաջին տարբերակի, եկրաղրելի է, որ Արամելի իշխանության ներք գտնվում էր նաև ապագա Տուշպա մայրաքաղաքը³¹: Տուշպա քաղաքից Սակմանասար III-ի հարկ ստանալու իրողությունը հավանաբար հանդիսացել է Լոթիացիի որդի Սարդուրիի կառուցապատում իրականացնելու պատճառներից մեկը: Սարդուրիի՝ արձանագրությունում բիայնական արքաներին բնորոշ «ուերը Տուշպա քաղաքի» տիտղոսը չի հատակվելու համամաթը, և ըստհանրապես Տուշպա քաղաքի անկան բացակայությունը ևս հուշում են, որ բիայնական պետության համար Տուշպան դեռևս չեր ստացել մայրաքաղաքի նշանակությունը³²:

Երկրորդ տարբերակի համաձայն՝ Լոթիացիի որդի Սարդուրին արդեն Աշուրեածիրապալ II-ի օրոք իր քաղաքական իշխանության սահմաններում ընդորկել էր Տուշպան, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները: Տերության

³⁰ Տե՛ս Յայցանցյան Գ., Հայկական տեղականները մակարիք աշցութեառում, Երևան, 2012, էջ 93: Ա. Յայցան Արամելի անոնքն աղերսում է Արամալի-Արմարիլի անշահետման հետ, որը 856 թ. տերության կենորունական ցրտահերքից էր, և Արամելի անոնքն աշակերտում է «ուերը Արամալի», որը Լոթիացիիի տիտղոսն է եղել: Աշխեակը եղում է, որ այս անոնքն ապրեասական արձանագրություններում համարտ է զայիս որպես Արամել, իսկ բիայնակայտերում՝ երիտան ձևով: Ա. Յայցան համարում է, որի այսպահանական լուրիպրի անոնքը կրող առանձին զայիսկական եղիք է առաջ նույն պիտի զայիսկական լինի: Մ. Բ. Ա. 844-830 թթ. (տե՛ս Fuchs A., Կով. աշխ., էջ 159-160):

³¹ Տե՛ս Kroll St., Կով. աշխ., էջ 167:

³² Սարդուրին արձանագրությունում կրում է «MAN GAL-e MAN dan-nu MAN SU MAN³³» ու-ի-ր տիտղոսը (տե՛ս ՀՏՍ, տոլ. I, A 1A-1F 1:1), այս տիտղոսում է համեմտ զայիս Ծցպուիինի Թելիցիիի Երկինքիս արձանագրությունում և իրա տիտղոսաշարում բիայնական և սահմանական սերտական, արդեն սակա նուի «[MAN³⁴] են-ո-ւ-ո-ւ մ-ո-ւ ա-ն-ո-ւ-ո-ւ ա-ն-ո-ւ-ո-ւ | URU|», «[MANGAL]- ն MAN dan-nu MANSU MAN³⁵» ու-ի-ր շահուական գար ան-ո-ւ-ո-ւ (ան URU)- սիմազոսը (տե՛ս ՀՏՍ, տոլ. I, N 3-11 և այլ.):

կենտրոնը երա հաջորդ Արամեի օրոք շարունակում էր գտնվել Հանա Դմիտրի կյանքին ընկած շրջանում: Ենթադրությունը, որ բիակացիները Արամեից հետո հաստատվեցին Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում, չի համապատասխանում իրականությանը: Հարկ է եղել, որ Լենան-Հառուպտե այս տարրերակում իրավացիորեն պետականության կազմավորումը Հայկական լեռնաշխարհում Արամեից վաղ է թվագրում: Համաձայն արդի ռւսումնասիրությունների՝ Արամեի օրոք գոյություն ունեցող պետականությունը ոչ թե նոր էր կազմավորվել, այլ ավելի խոր արմատներ ուներ¹⁰: Ռուբիարիի որդի Սարդուրիին Աշորևածիրապալի ժամանակակից համարելը՝ պայմանավորված տիտղոսաշարով, և Արամեի ու Սարդուրիի իշխանությունների գրաված տարածքի տարրերությամբ դեռևս մնամ է առկային: Երկու տարրերակներում էլ հեղինակը Տուշպան դիտարկում է որպես տերության ապագա մայրաբարձրաց:

Մի կողմից Սարմանասար III-ի արձանագրությունում Արծաշրուի որպես արայական քաղաքի և Արամալիի համատիր նշվելը, իսկ մյուս կողմից՝ Սարգսն II-ի տարեգրությունում վկարված Արմարիլիում արքայական քաղաքների գումարը, վկայում են, որ ըստ սեպազիր աղբյուրների պատմաշխարհագրական բնույթի տվյալների, Արամեի տերության կենտրոնական շրջանները և իրեն հաջորդած քաղաքներների տոհմական տիրությունները նույնական են:

¹⁰ Սարմանասար III-ի Բարագարյան գայապահի բանեց պատմաներում պատմելերից է կոչել կարասի տեղափոխություն որպես ուսկմակար: Այս իր ոճով հիմնականում նույն է նույսիմինիին պահողի մնել կարասներին 500-600 տար տարբությամբ (տե՛ս A. EJ, Bd. II/2, էջ 467, 560): Ը Կրոջը, ներք ընդունելով այս պատմելելը, կարծում է, որ Արամեի օրոք Վանի բազմիքության ամբողջությունը պահվել է և հազարամյա նույն անորոշություն, ինը վեստում է որ Երկրի պահուատային տնօտությունն արքեն Անահորին էր (տե՛ս A. Krosl St., աշխ. աշխ., էջ 168, Խոհ. A., եղջ. աշխ., էջ 138):

Համաձայն հեղինակի առաջարկած երկու տարբերակների՝ Լուրիարիի որդի Սարդուրիի իշխանության կենտրոնական շրջանները գտնվել են Վանս լճի հյուսիսում և հետագայում՝ Վանս ամրոցի կառուցմամբ, պայմանավորված ասորեստանան վլուանքով, ևս իր քաղաքական ազդեցությունն ամրապնդել է հարավում։ Ըստ հեղինակի ընթարկած նյութերի՝ Վանս ամրոցի կառուցմամբ, Սարդուրին Ասորեստանի հետ տագմանան առնակատման տարածքն ավելի հարավ էր տեղափոխում։ Համաձայն Լեման-Հաուպտի հայեցակարգի՝ Սարդուրին այսուհետ իրականացրել է համակարգային կառուցապատում՝ հեռահար նպատակներ հետապնդելով։ Մայրաքաղաք Արծաշը ունի Վանս լճից հյուսիս տեղորոշելը և ըստ այդմ՝ Լեման Հաուպտի ենթադրությունը, պիտականության ծավալումը Վանս լճի հյուսիսային շրջաններից դեպի հարավ։ Չարունակում է պահպանել իր զիտական արդիականությունը։

ВАГЕ САРГСЯН

КОНЦЕПЦИЯ К. Ф. ЛЕМАНА-ХАУПТА ПО ВОПРОСУ ФОРМИРОВАНИЯ ВАНСКОГО ЦАРСТВА

РЕЗЮМЕ

Первая клинописная надпись на ассирийском языке относительно осуществления строительной деятельности в городе Ван принадлежит царю Ванского царства Сардури. К.Ф. Леман-Хаупт, как исходную точку для восстановления истории Ванского царства 9-го века до н. э., принял надписи Сардури, сына Лутипри. По мнению исследователя, строительство крепости способствовало распространению государственности на Армянском нагорье от северных областей озера Ван к южным. К. Ф. Леман-Хаупт прав-

диво, предполагал, что к Сардури необходимо преписывать только строительство Ванской крепости, а Тушпа в дальнейшем при Ишпуини стала столицей государства. Концепция Лемманн-Хаупта о расширении государственности на Армянском нагорье и в настоящее время сохраняет свою актуальность.

VAHE SARGSYAN

THE CONCEPT OF C. F. LEHMANN-HAUPt ON THE
FORMATION OF THE KINGDOM OF VAN

SUMMARY

The first Assyrian cuneiform inscription on the construction activities carried out in Van belongs to king Sarduri of the Kingdom of Van. C. F. Lehmann-Haupt regarded the inscription of Sarduri, son of Lutipri, as a starting point for the reconstruction of the history of the 9th c. BC of the Kingdom of Van. According to the scholar, the construction of the castle by Sarduri conduced to expanding the statehood southward from the northern regions of Lake Van in the Armenian Highland. C. F. Lehmann-Haupt rightly considered only the construction of the castle of Van could be ascribed to Sarduri while Tushpa became the capital of the state later, already during the reign of Ishpuini. The concept of Lehmann-Haupt on the expansion of statehood in the Armenian Highland maintains its relevance up to day, too.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄՐԵՎԵԼՅԱՆ

ՄԻԶԵՐԿՐԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՒՌՈՒՄ XII ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ

(ըստ հայ-հռոմեական 1199 թ. բանակցությանների վավերազգության)

XII դ. վերջն Արեւելյան Միջերկրականի երկրներում նշանավորվեց ոչ միայն մի և որ քրիստոնյա պետության՝ Կիլիկիայի հայկական քաղաքության հոչակմամբ, այլև նրա և հարևան երկրների քաղաքական կյանքում Հռոմեական եկեղեցու դերակատարման շեշտակի ընդլայնմամբ։ Սա հենց այն շրջանին էր, երբ Հռոմի պապի գերիշխանությունն ընդունել էին Եվրոպական քաղմարիվ միապետություն։ Իր ազդեցության տակ առնելով զրեր ամբողջ քրիստոնեա Եվրոպան։ Հռոմն աշխատուում էր նույնին հասել են Արեւելյան Միջերկրականի քրիստոնյա երկրներուն, մասնաւույ, որ Վերջիններս այս կամ այն շափով ենթարկվում էին Բյուզանդական կայսրության և հունադավան եկեղեցու ուժաճորություններին։

Վերջին հանգանակույ և քաղաքական նկատառումներով էր պայմանավորված են Արևելյի քրիստոնյա երկրների, այդ թվում Կիլիկիայի հայկական քաղաքության ձգութամբ՝ սերտ հարաբերություններ հաստատելու Սուրբ Պետրոսի գահի հետ։ Պատճառն այն է, որ Հռոմի եկեղեցու հետ Կիլիկյան Հայաստանի կրոնական և քաղաքական կապերը հայերի քաղաքական և ազգային ինքնարույնությունն ավելի քիչ էին վտանգում, քան Բյուզանդիայի և քաղկեդոնիկ եկեղեցու հետ մերձեցման դժուգում էր։

Հռոմի հետ մերձեցման առաջին լուրջը քայլը Արքազան հոռմեական ինքնակալի շնորհած քաղով 1198 թ. հունվարի 6-ին Տարսուի U. Սոֆիա եկեղեցում Լուս Բ. Շուրիկյանի (1187-1219) քաջադրումն էր, որևէ իրականացրեց Մայսի արքապիսկոպոս

Կոնքայ Վիտելյարախը¹: Դա Կիբակոս Գաևձակեցու որոշակի վկայությամբ, տեղի ունեցած Հռոմեական եկեղեցուն արված ծիսական մի քանի զիջումներից հետո միայն: Թագի շնորհման դիմաց պահանջվում էր Հայոց եկեղեցու ծիասկարդում կոստարել հետևյալ փոփոխությունները: «Տօնէլ զուս տեսան և ամենայ սրբոց յորում առոր և հաւայիսի. և միշտ յեկեղեցուն կոստարել զարօռուն տուըթեան և զիշերոյ. զոր ի վաղոց հետ ոչ առեկին հայր ի հիւահարաւթեանց Խռմայէի. բայց միայն ի ժամ խորհրդածութեան սրբոյ պատարազին. և ոչ լուծանել զարազալոցուն ծննդեան և յարութեան. բայց միայն ձկամբ և ձիբով: Եւ յորժան զայր առնիցէք. ասէ. ոչ ինչ փոյք մի առնիցէք զորոց և զըսծայից կայսէրն և պապին վասն բազիդ»²: Հայ բարձրաստիճան հոգևորականները նախապես ընդդիմացան այդ պահանջին: Վերջիններիս համոզելով ընդունել բազի շնորհման դիմաց Պապի պատվիրակի առաջադրած պահանջները: Առնը երանց հավատիացնում էր. որ կատարվէլիք փոփոխությունները բխում են Ռուբինյան իշխանապետության տվյալ պահի բաղարական շահերից ու եւրակա չեն պարտադիր կիրառության: «Էոր մի ինչ հոգայր վասն այդորիկ, ես հաճեցից զմիւս նոցա առ անզան մի եկեղաւորութեամբ»³: Սակայն կատարված փոփոխությունները չեին եշանակում, թէ Վիլիկիայի հայոց աշխարհիկ ու հոգևոր իշխանություններն ընդունելու էին Հռոմի պապի եկեղեցական իշխանությունը: Դրա հաստակ ասպացուցը Լեռն Ա-ի երդմնագիրն է որտեղ արձանագրված է արքայի հավատարմությունը Հայոց եկեղեցուն և երա դավանանքին: «Ես Լեռն բազաւոր Հայոց, որ կամարք Աստուծոյ լինելոց եմ բազաւոր Հայոց, խոստա-

¹ Մերաստաց Մարտապետի Տարեգիրը. Վնենիկ. 1956, էջ 207-208.

² Կիբակոս Գաևձակեցի. Հայոց պատություն. աշխատանքային բառարկանք Կ. Ա. Մելքոն-Շնայդերականի. Երևան, 1961, էջ 156-157:

³ Նույն տեղում, էջ 157:

նեմ, ովասեմ եւ երդիսում առաջի Աստուծոյ և Երանելոյն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, որ լինեմ ես յայսմենատէ պահապահ եւ գերծանող քահարանապետին և սուրբ Եկեղեցոյն Հայոց եւ ամենայն կղերիկոսոց նորայ. ի յամենայն կարիս եւ ի յաւզուսո իւր պահելով և խնամելով գիայրենիս, գպատիս, որշափի կարողացաց աւզեականութեամբն Աստուծոյ. ըստ զիտութեան եւ կարողութեան իմոյ ուղել յստակ հաւատով, այնպէս Աստուծած աւզնէ ինձ եւ այս սուրբ Աւետարանս Աստուծոյ⁴. Սակայն այս ծիսական փոփոխությունները, որոնք Հռոմի պապի պահանջով ստորագրել էին տասներկու Կայիսրությունները, այդպէս եւ կցանքի չկոչվեցին, թեև, ինչպէս ստորև կտեսնենք, տարիներ անց դրանց անդրադառնայրու անհրաժեշտություն առաջացավ:

Թագավորության հոչակոսմից հետո Կիլիկիայի աշխարհիկ ու հոգևոր Վերևախավի (թագավոր և կարողիկոս) և Հռոմի պապ Խոկենտիոս III-ի (1198-1216) միջև աշխայդ նամակագրություն սկսվեց: Այս հասնկապես ակտով էր 1199 թ.: Նամակները հետաքրքրական են տարբեր տեսակներներից: Այստեղ միահյուսված են կրոնադավանաբանական հարցերը, կողմերի դիվանագիտությունները ու քաղաքական որոշակի շահախնորությունները: Մեզ առաջին հերթին հետաքրքրում է Կիլիկյան Հայաստանի և նրան շրջապառող Երկրների ու ժողովուրդների քաղաքական փոխհարաբերությունների մասին նամակների հաղորդած եյտքը, ինչպէս նաև այն, թե կողմերը ինչ դիրքորոշում են ցուցաբերել այս կամ այն քաղաքական կճճուտ հարցի վերաբերյալ:

Նամակագրության առաջին տարում՝ 1199 թ., Խոկենտիոս III-ն ուղարկում է վեց եռմակ՝ հետևյալ ամսաբանով.

⁴ Սար ցուցով հոյերն ձևացրց Մեծի Տան Կիլիկյան կարողիկութեան, կոչմաց Անուշան վարդուղեա Շահնշահան. Անդիշտա-Արտաշ. 1984, էջ 97. Սար ցուցով հոյերն ձևացրաց Տաղեաի և Անդիշտաի ու մասնաւորաց. Բառար. էջ 32:

1) 1199 թ. և 1203 թ. Ասդարլու կարողիկոսին, 2) 1199 թ. և 1203 թ. Ասդարլու կարողիկոսին, 3) 1199 թ. և 1203 թ. Ասդարլու կարողիկոսին, 4) 1199 թ. և 1203 թ. Ասդարլու կարողիկոսին, 5) 1199 թ. և 1203 թ. Ասդարլու կարողիկոսին, 6) 1199 թ. և 1203 թ. Ասդարլու կարողիկոսին:

Անս Ա-ն ու հայոց կարողիկոս Գրիգոր Զ Ասդարլու (1194-1203) և այլ տարում Հռոմի պապին ուղարկել են Երեք Խաչակը, որոնցից երկուսի ամսաթվերը նշված չեն. 1) 1199 թ. առաջ օրը նշելու Գրիգոր Զ կարողիկոսից, 2) 1199 թ. մայիսի 23-ին, Լուս Ա բազավորից, 3) 1199 թ. օրն անհայտ, Լուս Ա բազավորից⁵:

Ամսաթիվների անհայտ երկու Խամակների բավականությունից կարելի է եզրակացնել, որ սկզբից ուղարկվել են հայերի (կարողիկոսի և բազավորի) Երեք Խամակները. իսկ Հռոմի պապի ուղարկածները դրանց պատասխաներն են. որոնցից երրորդն ու չորրորդն ուղարկվել են արդեն 1200 թ. հունվարին:

Հայոց Խորանոցակ բազավորության և Հռոմի արքունի միջև Խամակազմության սկիզբը դրել է Գրիգոր Զ Ասդարլու. Նրա Խամակի այսպես ասած «վերևազրից» պարզվում է, որ այս զբունքը է հայերեն և ապա բարգմանին լատիներեն:

⁵ Վիլիկանի համական պետության և հոգևոր-առաքեական միացաւությունների փոխարարքությունների և զրաց տեսահոգություն այն Խոհեմիկերի թիմուրուն ուն ս Chevalier M.-A. Les ordres religieux-militaires en Arménie et Cilicie. Templiers, hospitaliers, teutoniques & Arméniens à l'époque des croisades. Paris, 2009, էջ 146-149. Խովինի Վիլիկան Հայուսական և հոգևոր-առաքեական միացաւությունների փոխարարքությունների պատությունից ֆրանքերենից բարգմանեց Վ. Պաղոսյանը, Եղինակ, 2007:

Ինչպես կարողիկոսի, այնպէս էլ Անհ Ա-ի նամակներում որոշակիորեն արծարծվել է Եկեղեցիների միության հարցը. որի կայացմանը հայկական կողմը, ինարկե, ոչ առաջ շահախնդրության, հավանություն է տվել: Հայոց բազավորք ու կարողիկոս իրենց բրերում բաժից հայուսում են Հռոմի պապի գերազահությունն ըստունելու պատրաստակամության մասին, սակայն դա, ինչպես իրավացիորեն եշվել է պատմագիտության մեջ, ձևական հավաստիացումներից այն կողմ չի անցել: Նույն տրամաբանությամբ են շարադրվել նաև հայ-բյուզանդական Եկեղեցական բանակցությունների ժամանակ հայոց կարողիկոսներ Ներսէն Շառիալու (1166-1173) և Գրիգոր Դ Տղայի (1173-1193): Բյուզանդիայի կայսրերին հղած նամակները: Բնակեն ճիշտ նկատել է Հ. Բարթիկյանը. «Պարզ է, որ այդ բոլորը սովորական դիվանազիտական բայեր էին, հազիվ թէ հայոց հոգենոր և պետական դեկապարեւրը լրջորեն էին այդպէս մտածում, բայց Բյուզանդիայի օգևությունը ստանալու կամ թշնամական բայերը կանխէլու համար, կարող էին նման բաներ գրել»⁴. Նույն տրամաբանությամբ՝ թեևնոր թիմայի տեսանկյունից առավել էական են ոչ այերան Հռոմի պապի կամ Սրբազնության կայսրության ինքանակալին հավատարմության վերաբերյալ շուայլ հավաստիացումները, որուան Կիլիկիայի հայկական բազավորությունը դրկից մոտումահական պետությունների հարձակումներից պաշտպանելու մասին հիշեցումները: Այսպէս, Ինուկենտիոս III-ին զրած իր առաջին նամակում Գրիգոր Զ-ն նշում է. «Եկ մեսք ձեզ խնայում ենք, որ աղոքեր մեզ համար Աստծո մոտ, բայսի որ մենք վիշապի երախում ենք և խայի»

⁴ Բարթիկյան Հ., Կիլիկան Հայաստանի և Բյուզանդիան կայսրությունների պական վեհակարգերությունները և որաց բարպարական ծարքը. «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա. Երևան, 2002, էջ 64։

բշխամիների շրջապատում և նրանց միջն. որոնք ընականաբար մեր թշխամիներն են»⁷. Վերջինելերից Կիլիկիայի հայկական պետությանը հիմնականում սպառնում էր Իվոնիայի սելցուկյան սուլթանությունը⁸. Ինչ վերաբերում է երբեմնի հզոր Աղուբյան սուլթանությանը. ապա այս Սալահ ալ-Դինի (1174-1193) մահվանից հետո ընկրությունների մեջ և նկատելիորեն բռնագծել: Այդուհանդերձ, մուսուլմանական այդ տերության և վաճառքական նկրտումները Կիլիկիյան Հայաստանի նկատմամբ չեին վերացել:

Բնուկենախոս III-ին հղած նամակում Գրիգոր Ապիքրատը դիմանազիտորեն շրջանցում է երկու եկեղեցիների դավանարական տարբերությունների խնդիրը. փոխարենը հիշեցնելով ծիսական այս փոփոխությունների մասին, որոնց բազի շնորհման դիմաց Լոռե Մեծագործի հորդորով ժամանակավորապես կատարել էր Կիլիկիայի հայ հոգևորականությունը. «Իմացեք Տեր. Զեր խորհուրդները, որ Դուք մեզ տվեցիր և մենք նրանց հաճույքով լսեցինք և հաճույքով ցանկանում ենք լինել Զեր հրամանի տակ»⁹. Այս, որ հայ քարքարատիման եկեղեցականները և հետօքարողիկոսը նախապես դևմ են եղել այդ միոփոխություններին, վերև արդեն նշվել է: Ուստի դրանց «կատարումը» «հաճույքով» չի եղել, ինչպես նշված է նամակում:

Որոշակի զիվանազիտական նպատակներ ունի նաև նամակի այն հատվածը, որտեղ կաթողիկոսը Հռոմի պապին տեղե-

⁷ Acta Innocentii PP. III (1198-1216), E. registris Vaticanae aliasque Erat, introductione auctit, notisque illustravit P. Theodoreus Habakynskyj hieromonachus ordinis Basiliani S. Iosaphat E pontifica commissione ad redigendum C.I.C.O., Fons series III, vol. II, Vaticanae, 1944, pp. 554-555 (այսուհետ՝ Acta Innocentii PP. III (1198-1216)):

⁸Տեր Անդրեան Վ. Կիլիկիան Հայաստանը և Մերձավոր Արևելքն արարական երկրեղբ 1145-1226 թվականներին, Երևան, 1994,էջ 113:

⁹ Acta Innocentii PP. III (1198-1216), p. 554.

կացւում է, որ հայ եկեղեցականները «բազմաթիվ երկրներում ևս և մեծարիվ են Աստծո ողորմածությամբ»¹⁰. Երանով հայոց կարողիկոսը հասկացւում է, որ հոգաևավորելով Կիլիկիայի հայկական քաջավորությունը Հռոմ իր հենարանն կուտեսա այլ երկրներում (հասկապես՝ Մերձավոր Արևելքի մի շարք պետություններում) ի դեմս հայկական հոծ համայնքների. Այլ կերպ ասած, Հայոց եկեղեցու և քաջավորության դեմ ուժեղությունները, կարողիկոսի հավաստիացմամբ, հավասարապես սպառնում են Հռոմեական եկեղեցուն և Մերձավոր Արևելքի լատին իշխանություններին:

Թերեւ երբեք Հայոց եկեղեցին այերան քաղաքականացված չի եղել որքան Կիլիկիայի հայկական քաջավորության գրայության ընթացքում. Եվ, անկանոն շատ դեպքերում, Կիլիկիայի միապետն ու հայոց հոգևոր գերազույն առաջնորդը հաւելես են եկեղեցական գործույթ և ամեն մեկն իր անելիքն ու ասէլիքն իմացող գործիչները. Այդպիսի մի օրինակ է 1190 թ. Լուս Բ իշխանապետի ու Գրիգոր Դ Տու կարողիկոսի համագործակցությունը Սալահ ալ-Դին - խաչակիրենի բախտան ժամանեակ (խաչակրաց III արշավանը)¹¹. Նոյն համագործակցությունը տեսնում ենք արդեն քաջավոր Լուս Ա-ի և նոր կարողիկոս Գրիգոր Զ Ապիրատի միջն 1199 թ.:

Մերձավոր Արևելքի մուսուլմանական պետությունների դեմ համատեղ պայքարի անհրաժեշտության մասին բազմից շեշտված է նույն Պապի Լուս Ա-ի հոյած նամակներում:

Պարողիկոսի նամակից հավանաբար շատ շաեցած Լուս Ա-ը Հռոմի քահանայապետին մի նամակ-ուղերձ է գրութ. Այդ

¹⁰ Նոյն տեղում:

¹¹ Այդ մասին մակրամատ տե՛ս Տեր-Վանեցան Դ. Կիլիկոն Հայուսութիւն արտօնքին բաղադրականությունը XIII դարի վերջին, «Պատմա-բահանակրության հանդիս», 2010, N 1, էջ 114-128.

Խամակում նա իրեն կոչում է «Լոռն, Զեր և Հռոմեական կայսեր ողբրմածությամբ Թագավոր Ամենայն Հայոց»¹²: Ի դեպ, 1214 թ. և հետագա տարիների իր հրովարտակներում Լոռն իրեն կոչում է: «Թագավոր Հայոց՝ շնորհիվ Աստծո» (*Dei gratia Rex Armenorum*) տիտղոսը¹³:

Դիմելով Բոլեսլաուս III պապին՝ Լոռն Ա-ը եղաւ է, որ շակրեր է զգացադրում «հեռավոր վայրերում ապրող հայերին» միացնելու Հռոմեական Եկեղեցուն¹⁴: Խոսքն անտարակույն վերաբերում է Մեծ Հայրին: Այս հակամակրի շնորհադրումն ամենենին էլ պատճենական չեր: Եկեղեցիների միությունը տուկ կաթողիկոսի «համաձայնությամբ» չեր կարող կայանալ, քանզի դրա համար անհրաժեշտ էր Եկեղեցական ընդհանուր ժողովի վավերացումը: Վերջինիս օրինականությունը պայմանավորված էր հայաստանյան հոգևորականության համաձայնությամբ: Հոգման դա շատ լավ զիտակցում էին, ուստի, ամենայն հավանականությամբ, «Կառք Ալեքսից պահանջել էր թագավորման դիմաց պահանջված ծիսական փոխությունները կատարել նաև Հայաստանում»¹⁵: Խոստանալով հանդերձ՝ Լոռն Ա-ը երկար ժամա-

¹² Այս Ա-ի տիտղոսաշնորհ Հայոց պատի և Սրբազնի Հռոմեական կայության ինքնական հիշատակությունների առկա ևս սրբայի ոց Խոստանելուն ևս (առև. և Langlois V., *Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Rouspétiens*, Venise, 1863, էջ 105, 112-113, 115, 117-118):

¹³ Տե՛ս Langlois V., էջեւ աշխ., էջ 122, 124, 126, Ալիյան Շ.՝ Ախուսան Հայութաբարին Հայկական Կիցիկոյ և Լոռն Սենաքը, «Կենակի-Ա. Դաւթը», 1885, էջ 481-482, Mutafian C., *La diplomatie arménienne au Levant à l'époque des croisades XIII-XVI^{me} siècle*, Thèse de doctorat, Université Paris I Panthéon-Sorbonne, 2002, էջ 130-131, Տե՛ս Պետրոսյան Լ., Խաղաղիկություն և հայկաց, հ. Բ (*Պատմաբանական հետազոտություններ*), Երևան, 2007, էջ 189-190:

¹⁴ Acta Innocentii PP. III (1198-1216), p. 555.

¹⁵ Այս յօնդին արձարձիկ էր լոռն Հռոմեացի 1178 թ. Եկեղեցական ժողովի համարեց հայ թագավորական բանահարցություններում: Այս ժամանակ ևս Եկեղեցիների միության վավերականությունը հարց կարութեաւարդյուն պահանջվություն էր: Մեծ Հայոց Եկեղեցական համայնքաւորյանը: Դա, ուշայն:

եակ (ըստիուգ մինչև 1207 թ.) խուսափել է այդ խնդրի արձարձումից: Այս ու ես այդ թվականին վճռեց բարձրացնել ծխական փոփոխությունները Հայաստանում կատարելու հարցը: Ցանկանալով վերականգնել արշավանքների ժամանակ պատարազի շարժական սեղան կիրառելու ավանդույթը՝ Զարարի ամիրուպասապար Սիսիրար Գոշի խնդրանքով ոյսեւ էր Անն Ա-ին և Հովհաննես Զ Մատեղի կաթողիկոսին: Սառմ Լուսի Խայասձենությունը երավիրված եկեղեցական ժողովը, բավարարելով հաւերձը Զարարի խնդրանքը, ուր կետերից բաղկացած ժողովական որոշում է ուղարկում Հայաստան: Ուշագրավ է, որ զրաხց մեջ ընդգրկված էին այս ծխական փոփոխությունները, որոնք հայկական կրողը խոտացել էր կատարել Լուսին քաղ Չեռքիկու ոյնաց: Տվյալ պարագայում բաղարական շահը բավարարվում էր Անտիոքի խնդրում Հռոմի պապի հայամնա ողբրորոշմամբ¹⁴.

առավելագույն կրու էր խուսափության ընթցք, բայց Հռոմեացու մասն էին, որ Խայաստանուն եկեղեցականները որևէ կերպ չեն Խոնականելու, բողոքական եկեղեցու առվելից որևէ պահան, ուստի և Խոյերի կողմէն բաշխեցնականություն, ինչպես եսու Կ. Պատի պատրիարքություն վերապահության ընդունում մասին խոր վիճակը էր կարող: “Դիմունացնորդին մռամարով խորին էլքրու Ընդհանուրի Մատուց Է կայսրին (1143-1180) վասանեցնում էր, որ Ակելց ցիոնի միուրուն վայերացնան համար անհրաժեշտ է հայուսաւոր յօների համաձայնությանը: «...ու ուժինը մերս զորս զորս զորս մասնակին հայուսաւորություն և նախառականություն և առաջ խորհրդակցութեան նույնականությունը է վկասութեան տար պատասխանի հարցինու ձերոց»: զորմ է հայրապետ (Ըստիներական բռնըք սրբոց Ներքինի Ընդհանուր, յերազարել, 1871 թ. 147): Կարաքիլուք, ճնարկի, զուտան էր, որ Մեծ Հայքի սրբանությունը որևէ կերպ չին Խոնականություն եկեղեցիների մասնաւորը, բայց կաշվանշան չին Բյուզանդիայի ազդեցությանը՝ դուրս լինելով կարսություն ուստի շահապահական իշխանությունից: Հռոմեացի ժողովի Խոհեմիքոց բանակցությունների մասին մակրամասն ու Բարբիկուն Հ. Խոյ աշխ., թ. 639-653, Բարբիւն Ա. Թյուզանդիայի արեւածա բազարականությունը և Կիցիկոս Հայուսությունը ԺԲ զարի 20-70-ական թթ., Երևան, 1988, թ. 218-253, Խոյնի Հայ-բազմականության և կեղեցական բանակցությունների վամբարությունը (1165-1178 թթ.), Երևան, 1995:

¹⁴ Տե՛ս Թոքարաց Վ. Սահի, Լուսի և Անդի եկեղեցական մռամարներ, «Հարց պատմության հարցեր», N 11, Երևան, 2010, թ. 30-31.

Հայութի է, որ Անժ Ա-ը վարում էր Աստիճարի իշխանապետությունը Կիլիկան Հայաստանից կախման մեջ զգելու քաղաքականությունը։ Ըստ 1194 թ. Անժ Ա-ի և Աստիճարի իշխան Բոհեմուշ Ա-ի միջև կերպած դաշինքի՝ Անժի եղբոր՝ Ռուբենի դուռը Ավելի ամուսնացավ Բոհեմունդի որդի Ռայմոնդի հետ՝ պարբեկով, որ երանց զավակը պետք է ժառանգեր Աստիճարի զակը¹⁷։ Այդ ամուսնությունից ծնված Ռայմոնդ-Ռուբենին շուտով Անժ Ա-ը վերցրեց իր խօսմակալության տակ։ Սակայն զահի ժառանգության խնդրում հակասություններ ծագեցին Ռայմոնդ-Ռուբենի հորեղբոր։ Տրիաուլիսի կոսմ Բոհեմունդ Ա-ի հետ, որը ևս հավակնում էր Աստիճարի զահին։ Հետաքրքրական է, որ այս խնդրում 1207 թ. Անժ Ա-ն առանում է Հոռի պապի օհությունությունը։ Բայս այս է, որ 1207 թ. մարտի 4-ին՝ Խոհեման Սովորովի հրավիրումը, Հոռի պապ Ռուիլիսիոն Ա-ը, Բոհեմունդ Ա-ի բյուզանդական դիրքորոշմամբ պարմանալորված, իր Խլիբակին հանձնարարում է եկեղեցական բանադրակրող սպառնալ երան¹⁸։ Աստիճարի լատին պատրիարք Դևորոս Անգուլիացին Ա. Պետրոսի տաճարում Անժ Ա-ի խնամակալ Ռայմոնդ-Ռուբենին հողակնում է Աստիճարի իշխան¹⁹։ Անգուլիացու ազդեցությամբ Բոհեմունդին ընդդիմացավ նաև Հիվանդախնամների

¹⁷ Պարմակարքի մասին մաքրանան տե՛ս Stg.-Պետրոսի Լ., Եղջ. աշխ., հ. Բ. կը 169-179։ Ըստ Ժնվ. Ռիչարդի՝ 1194 թ պարևառողից քարձավ քաղաքություն հոգակնակ կորինք Խախաղյալ (տե՛ս R. J. Let Aménienus dans les états Latins d'Orient: les lendemains de la Croisade, «Հայություն» և Թրիֆոնիոս Արքաց», Երևան, 2000, կը 169, Stg.-Պետրոսի Լ., Եղջ. աշխ., հ. Բ. կը 179)։

¹⁸ St. à Gouraud R., Histoire des Croisades et du royaume Franc de Jérusalem. Paris, vol. III, 1936, կը 255։

¹⁹ St. ս Առաջ տեղում։ Հոռիական պրազման կայսրության ինքնուրուց Օտոնու Ա-ի (1196-1212) շնորհած բարձր Ռայմոնդ-Ռուբենի բազուդրվելու մասին իր ուղեցույցին մեջ Երիշու հիշատակում է կայսեր պատվիրակ Հիլդենբերդի կուսակիցու Վալերիոսի Օդենբերության (տե՛ս Wihlbrand of Oldenbourg. Journey to Holy Land (1211-1212). Pilgrimage to Jerusalem and the Holy Land 1187-1291. Crusader texts in translation, Farnham, 2012, կը 74, 79)։

ասպեսների մեծամասնությունը²⁰: Այսպիսով, Անք Ա-ի կողմից Սոյն եկեղեցական ժողովի կանոնները Հայաստանում կիրառվի դարձելու նախաձեռնությունը կրել է բաղարական ընույթը: Չա է վկայում ևս այն, որ նա Լոռի և Ասքի ժողովների կողմից ծիսական փրկությունների առաջարկը մերժելուց հետո որևէ բայլ չի ձեռնարկում դրանց ընդունման ուղղությամբ²¹:

«Երադատնալոյն եամակին» եշերը, որ Անք Մեծագործը պապին տեղեկացնում է, որ խնդիրներ են հարուցվել «Սիրիայի բազավորի» (Հայկանաբար նկատի ունի Հայեակի Այուղան առվան ալ-Մալիք ալ-Զահիրին) հետ և օգնություն խնդրում Հայոց արքան որոշակի փաստում էր, որ Մերձավոր Արևելքի մուսուլմանական պետությունները սպառնում են ոչ միայն Կիլիկյան Հայաստանին, այն Հռոմի եկեղեցուն: Անոնց պապին հասկացնել է տալիս, որ իր բազավորությունը «իսայի թշնամիների» դեմ պայքարող միակ հուսալի ուժն է²²: Նա օգնություն առելով նկատի է ունեցել ոչ թե Հռոմի պապի հորդորական կամ խարառական թղթերն Արևելքի խաչակրաց իշխանապետներին, այլ ռազմումի անհապաղ տրամադրումը: «... չենք կարող դիմանուլ ստանց ձեր կողմից ուսպանական և այլ օգնություն հնույին»²³: - զրում է Անք Ա-ը:

Նամակից կարելի է մակաբերել, որ արքան, ըստ երեսութիւնի, առավել մասրամասն տեղեկություններ հաղորդել է Կոն-

²⁰ Տե՛ս Grousset R., Եղիւարք, էջ 255:

²¹ Դատարանի շարժական սեղանի լիրառության հարցը ընթիւ է Սոյն Լոռի (1207 թ.) և Անդի (1207 թ. վեց կամ 1208 թ. սկիզբ) եկեղեցական ժողովներուն Վերբթերին մասին մահմանան ուն և Թորոսան Վ.՝ Սոյն, Լոռի և Անդի հիկանցության ժամանելու բժանքան շուրջ, «Հայոց պատմության հորոց», N 10, Եղիսաբե, 2009, էջ 50-59, Խոյքի՝ Սոյն, Լոռի և Անդի Ավելեցության ժողովներ, էջ 20-44:

²² Տե՛ս 2 Acta Innocentii PP. III (1198-1216), էջ 555-556:

²³ Լոռի տեքստը:

բայ Վիտելյանին, որպեսզի ևս քրանչացի փոխանցի Հռոմի քահանայագետին²⁴:

Լուս Ա-ը Խամակն ավարտում է օգնություն ստանալու Խոշրանքով, և շենով որ այլապես կարող է ուշ լինել²⁵: Աղբյուրները Կիլիկիայի և Հաղեսդի Այսուրյան սուլթանության միջն 1199 թ. տեղի ունեցած որևէ լուրջ տարրածայնություն կամ բախում չեն արձանագրել: Այս պետությունների առաջին հակամարտությունը բժագրվում է 1201-ով²⁶: Հաղեսդի սուլթանն անհանգստացած էր Ալահիորի նկառամամբ Կիլիկիայի հայոց քաջավորի հավակնություններով, քանզի զիտակցում էր, որ հայերի կողմից այդ իշխանապետության գրավման դեպքում լուրջ վտանգ կատեղծվեր իր իշխանության համար: Հավանաբար Լուս Սեծագրոծը ոյսումամբ գովածերը խոտացրել է օգնություն ձնոր բերելու կամ այն արագացնելու հույսով, և կամ էլ, որպես փորձված և հետատես բադացես, արդեն 1199 թ. զարնաեր կատիխազզացի է Հաղեսդի Այսուրյան սուլթանի հակակիլիլյան տրամադրությունները: Բացառված չեն որ վերջիններս արդեն իսկ ի հայոտ էին եկել կապված Ալահիորի զահակալական վեճի հետ: Այս վերջին եզրահակումը, ինչպես սոորոք կտևսնելոր, առավել հիմնավոր է:

Թագավորի հաջորդ Խամակը շատ ավելի երկարաշունչ է և հետապնդում է որոշակի բազարության նորառուակեր: Ինցիս կարողիկոսը, Լաանը ևս շեշտում է այն համազանքը, որ Կիլիկիյան Հայաստանը շրջապատված է «խաչի թշնամիներով» և հայերը, պաշտպանելով իրենց, կովում են ամբողջ բրիտաններյան համար: Նրա հետևյալ Խախաղասուրյունը գրեթե բար առ բար

²⁴ Տե՛ս Խոյի տեղամ, էջ 555:

²⁵ Տե՛ս Խոյի տեղամ, էջ 556:

²⁶ Այս թվականին սկսվեց այսպիս կոչված Անօհորյան պատերազմը, որը շարունակվեց մինչև 1216 թ. (մասշաբան տե՛ս Cahn G., La Syrie du nord à l'époque des croisades et la principauté franque d'Antioche, Paris, 1940, էջ 596-623).

կրկնում է կարողիկոսի միտրը «...իսկ մեեք հեռու վայրերում խաչի թշնամիների կողմից շրջապատված լինելով, հաեւս ուրբ Հռոմեական նկեղեցու և ամբողջ քրիստոնեության պատուի ըսդիմ բարբարոս ազգերի պայքարելով...»²⁷. Ապա արքան անց հում է բուն կյուրին, որն է՛ Անտիոքի զահակալության հարցը²⁸. Բացի հարտի փաստերից, այս նամակից նաև պարզվում է, որ Լուս Ա-ի եղբար թոռը Շայմոն-Ռուբենը կամ պարզապես Ռուբենը (նամակում այսպէս է հիշվում), մկրտվել է Մայսի արքեպիսկոպոսի կողմից²⁹. Լուսը մակրամասն պատում է Հռոմի պատին. թէ ինչպես Անտիոքի իշխանությունն օրինականորեն ժառանգվեց Ռուբենին նրա պապի կողմից (հայրն արդեն չկար) բազմաթիվ բարոնների և այլց ներկայությամբ. Եվ վերջինիս մահից հետո նա պիտի բազմեր Անտիոքի զահիլ:

Հասկածալով, որ Պապը, թերևս, տեղակ լիևելով Կիլիկյան Հայաստանի և Անտիոքի իշխանությունն նախկին թշնամությունն ու երկու պետությունների միջև 1185-1187 թթ. տևյու ունեցած անցուղարձերին, կարող է ինչ-որ կերպ կասկածել իր անկեղծությանը, արքան նշում է. որ թշնամաերը մի կողմ է դրանք և Բնիկունու III-ի կյանքի վերջին տարիներին երկու քրիստոնյա երկրների միջն բարեկամությունը վերահստանալովէ:

Կիլիկիայի հայոց արքան Հռոմի բահանայապետին հավաստիացում է, որ Անտիոքի զահամարակման հարցում առաջացած կնճիռը, որն իր բազավորության դեմ է դուրս բերել ոչ

²⁷ Acta Isiocenii PP. III (1198-1216), p. 556.

²⁸ Անտիոքի զահամարակման յանդի շուրջ Կիլիկյան Հայաստանի և Անտիոք-Տրիպոլիսի կոմմունան մասն պարբար ժամանական ընթերթի և պատմագիտություն մեջ (առ և Gévaudan R., եղջ. աշխ., էր 246-263, Cahen Cl., եղջ. աշխ., էր 596-623, Mutafian C., եղջ. աշխ., էր 72-78, Skr-Շետրուան Լ., եղջ. աշխ., հ. թ, էր 210-235):

²⁹ Տե՛ս Acta Isiocenii PP. III (1198-1216), էր 556-557.

միայն Աևտիոր-Տրիպոլիսի իշխանությանը, այլ նաև Կիլիկիայի տարածքում գտնվող ասպետական միաբանություններին, եկատելիորնեն խոշրափուռն է Երուսաղեմի շուտափույթ ազատազրաւմը. «Տրիպոլիսի կոմսը, Տաճարականների մագիստրը և միաբանները, Հյուրընկալների մագիստրը և միաբանների Աևտիոր նկան մեզ և մեր երկիրը Խվաճելու և ըստ կարողության կողուստնելու», ինչի պատճառով հայոց գորքը երեք ամիս սիպիսած պացարել է Նրանց դեմ. որի հետևաերով էլ, ինչպես Անոն է նշում. «Դուքեղի տուեր մեզանից հեռացավ» (ըստգծումը մերև է - «Ա.Տ.-Ղ.»):

Կիլիկիայի արքան հաջորդիվ նկարազրում է Աևտիորի օրինական իշխանի՝ Ռուբենի զահընկեց արմելի ու հայրենիքց վկունվելը. որի գիշակիր մեղավորներն են Տրիպոլիսի կոմս Բոհեմոն և IV Միականի. Տաճարականների և Հյուրընկալների (Հյանդախնամների) մագիստրոսներն իրենց միաբաններով: Հետաքրքրական է, որ Անոն Սեծազորձը շեշտում է, որ Բոհեմոն և IV-ի այս գործը գումա է բերել իր՝ Աևտիորում ունեցած բարեկաների և գումարի (այսինքն կաշառի) միջոցով ու նաև ավելացնելով, որ բաղարի բեռնիշները մոլորեցված են²⁶: Այս անելը պատմելուց հետո Անոն Ա-ը Հոռմի պապին խնդրում է իր հեղինակությամբ վերականգնել արդարությունն ու օրինականությունը:

Նա գրում է, որ Տաճարականները և Հյուրընկալները բահականությամբ շարժվելով, ի վերջո հաշտություն կստեցին իր հետ²⁷: Սա շատ կարևոր հանգանակ էր, որը հետագայում և վճռական դեր խաղաց (օրինակ 1225-1226 թթ.) Կիլիկիան Հայա-

²⁶ Նոյն տեղում, էջ 557.

²⁷ Տե՛ս նոյն տեղում:

²⁸ Տե՛ս նոյն տեղում, էջ 558. Հոգևորապետական միաբանությունների շատ ուժաւուներ համար համար են Անդ որպես միջնորդ կամ բանագեց Հոռմի պապական արքունի և Կիլիկիայի հոգիստական պետության փոխհարաբերություններում (առ ս Ըստին Ա.-Ա., էջվ. աշխ., էջ 68):

տան – Անտիոք-Տրիպոլիսի կոմսություն փոխհարաբերություններում Հայութի է, որ Տաճարական և Հյուրընկալ ասպետների ամենամարտունակն էին բոլոր խաչակիրեների մեջ և, բացի այդ, Նրանք լինելով հողատերեր կամ բերդատերեր այս կամ այն պետության մեջ, մինևույն ժամանակ, ինչ-որ խմասով ինքնիշխան էին և ենթարկվում էին Հռոմի պապին:

Որքան է որ հայ վերևախառվը (Լուս Ա, Գրիգոր Զ և ուրիշներ) հավաստիացներ իր հավատարմությունը Հռոմի եկեղեցուն, Բոլքնետիոն III-ը քաջ զիտակցում էր, որ կարովիկությունը Կիլիկիայում դեռևս արմատացած չէ և բաղարական հանգամաերների ցանկացած փոփոխություն կարող էր ի շիր դարձնել առաջին ծիլերը, և նույնիսկ այն, որ Լուս Ա-ին քազարեկ է Հռոմը, կարող էր ոչ մի նշանակություն չունենալ: Միեցե՛տ Անտիոքի զահակալության հարցում կրուսական միարանությունների դիրքորոշումը Պապը հաշվի շատնել չէր կարող: Անս թէ ինչու Կիլիկիոն արքան ևս մեկ անօպան շեշտում է այդ մասին: Մեր կարծիքով պատահական չէ ևսն այն, որ Լուս Ա-ը որպես նամակաբեր Հռոմ է ուղարկում (ինչպես նշված է նամակում) Ուրբերա ոյ Մարզաք ակունք մի մարդու իր «հավատարիմ և սիրելի» զիւվորին»³², որը ֆրանկ էր, կարովիկ և բացառված չէ, որ նույն այդ Հյուրընկալ կամ Տաճարական (ավելի հավանական է առաջինը) ասպետներից մեկը լինելը:

Այսուհետև կրկին հետևում էն օգկության և աջակցության խնդրանքներ ու հորդորներ: Այս նամակն ավարտվում է մի նախադասությամբ, որը կարող է ճշգրտումներ մտցնել և որոշակիացնել 1199 թ. դրությամբ տարածքային փոփոխությունները Հայոց բազավորության և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության միջև: Այս հիշում է հետևյալ կերպ .«Ի միջի այլոց, հուզումով Ձեզ

³² SL և Acta Leonisencii PP. III (1198-1216), էջ 558.

ենք հանձնում Սիրիայի մասցած մասերը, որոնք ամեն օր սպասում և խնդրում են Ձեր օգնությունը»²⁴ Ամենայի հավասարականությամբ, մինչև 1199 թ. երկրորդ կերպ հայկական քահանկի և Բոհեմուսի IV-ի գորքի միջև բախումներ էին տեղի ունեցել, որի հետևանքով Անտիոք քաղաքում Տրիպոլիսի կոմսն այլևայլ միջոցներով կարողացել էր իր կողմը գրավել քաղաքի վերևախավին և ըսակցության մեծ մասը, զահընկեց անելով Ռուբենին, սակայն Անտիոքի իշխանության մասցած տարածքը, կամ որ այնի հավասարան է՝ Անտիոքից հյուսիս (մինչև Կիլիկիա) ըսկած երկրամասերն այդ ժամանակ կամ դրանից մի փոքր առաջ գրավել և իրենց ձեռքում էին պահում հայկական զինված ուժերը Սակայն նվաճումն ամուր չէր կարող լինել, քանի որ Անտիոք քաղաքին տիրելը մեծ առավելություն էր տալիս կողմերից մեկին: Հայկանարար, այդ հոդերը ևս գիշելու մոտայրութ վտանգն է Լոռինին դրդել քաջազորին հիշյալ նախադասությամբ ավարտվում իր երկարաշուշ նամակը:

Ըստ Ա.ի և Գրիգոր Զ Ապիրատի՝ Հոռոմի պապին հղած 1199 թ. նամակները որոշակի փաստում են, որ թագավորության հոչակումից անմիջապես հետո կիյիկյան իշխանությունները լրջագույնս նախապատրաստվել են Անտիոքի զահամառանդման խնդիրը լուծելու, ինչը հաստատվում է այդ տարվա ակտին նամակագրությամբ:

Գրիգոր Ապիրատին Բուլենտիոս III-ի հղած առաջին պատասխան նամակից տեղեկանում ենք, որ հայոց կաթողիկոսը Հոռոմի պապին ուղարկել է ոչ թե մեկ, այլ մի ամբողջ շարք նամակները²⁵:

²⁴ Տե՛ս նոյն տեղում:

²⁵ Տե՛ս նոյն տեղում, էջ 199:

Այս նամակում Պապը ոչ այնքան պարզորոշ ձևակերպված նախադասությամբ Հայոց կարողիկոսին իրավունք է տալիս «օգնել», որը տվյալ դեպքում կարելի է հասկանալ «նվաճել» իմաստով, ինչպես ինքը է գրու «Երուսաղեմի նահանգին» (Երեխ Նկատի ունի Երուսաղեմի բազավորությունը) և վերադարձնել խայի բազմաթիվ եղանակները: Պապը, հավանաբար նկատի է ունեցել Այլուրյան սուլթանության կողմից դեռևս Սալահ ալ-Դինի օրոք նվաճված Երուսաղեմ քաղաքից և Պաղեստինի մյուս զրավյալ շրջաններից գերված խաչերն ու բրիտանիական տարբեր սրբությունները:

Նույնական նամակի ավարտում է դեսի «արևելյան նահանգներ» օգևություն ուղարկելու խոստումով²⁶: Նամակի բրվանդակությունից դժիքը չէ մակաբերել, որը Հոռոմի պատճեն այնքան էլ հայատ չի ըստայէլ Կիլիկյան Հայաստանի ծանր վիճակի և խաչի թշնամիներով շրջապատված լինելու վերաբերյալ Հայոց կարողիկոսի ու Կիլիկիայի հայոց արքայի հավաստիացումներին: Հարկավ, ևս տիրապետում էր տեղեկատվության այլ աղբյուրների, որուց միջոցով դժվար չէր պարզել, որ Կիլիկյան Հայուստանը ուզուարադարձական առումով Այլուրյաններից ծանր հարկած ստացած Մերձավոր Արևելի խաչակիրներից առավել բարվար վիճակում էր: Այդ իսկ պատճառով նա բարձրացնում է ոչ քեւ Կիլիկյան Հայաստանին օգևելու, այլ հայերի միջոցով Երուսաղեմի նահանգի, այսինքն՝ Պաղեստինի և առաջին հերթին Երուսաղեմի և այնուեղ գտնվող Տիրոջ գերեզմանի ազատազրության հարցը:

Ասաւ Ա-ին պապի ուղղած առաջին նամակում որևէ արժեքավոր հաղորդում չկա: Այս հիմնական զաղափարներով կազուիկոսին զրած նամակի կրկեսությունն է:

²⁶Տե՛ս նույն անշարժ, էջ 201.

Լևոն Ա-ին Պապի ուղղած հաջորդ նամակն ընդամենք մի փոքրիկ ուղերձ է, որով նա «Հայաստանի պայծառափայլ քազավորին», տէղեկացնում է որ նրա նամակաբեր Ռոբերտ Մարգարու հետ ուղարկում է Ս. Պետրոսի նշանով դրոշը, որով ըստ Պապի, Լևոն Ա-ի առավել ջանապարհար ու բացուրյամբ պիտի պաշտպանվի խաչի թշնամիներից:

Շայած նամակի բռվանդակությունը հիմնականում վերաբերում է Ս. Պետրոսի նշանով դրոշն ուղարկելուն, սակայն պարզորոշ երևում է, որ սա մի կոչ է ուղղված Կիլիկյան Հայաստանում բնակվող լատին ազնվականներին և ամբողջ կարողիկ բնակչությանը Լևոնին աջակցելու և ամեն կերպ օգնելու նրա արտաքին քաղաքականության և հատկապես խաչակիրեների օգուին ծավալած գործունեության մեջ:

Լևոն Ա-ին Պապի գրած վերջին երկու նամակները վերաբերում են որոշակի քաղաքական անցքերի: Դրանցից առաջինը Անտիոքի զահակալման հարցն էր, իսկ երկրորդը՝ Գաստոն (Բաղրամ) ամրոցի պատկանելության և ույսպես վիճակարուց խնդիրը⁷⁷: Նախ, պարզվում է, որ Լևոն Ա-ը ոչ թե մեկ, այլ մի քանի նամակներ է ուղարկել միայն Անտիոքի հարցի վերաբերյալ: Անդրադառնալով այս հարցի շուրջ Կիլիկյան Հայաստանի քաղաքորի նամակներին՝ Խոկենտիոն III-ի ընդունում է Անտիոքի զահաժառանգության վերաբերյալ Լևոն Ա-ի գրածը և գունում, որ Ռուբենի իրավունքներն օրինական են: Սակայն Հոռոմի քահանայապետը գգուշավորություն է ցուցաբերում՝ չարդարացելով Բոհեմոնդ IV-ին և ոչ ել քաջալերները Լևոն Ա-ին: Կարծ ասած, Պապն ամեն կերպ աշխատում է խաղաղ ճանապարհով

⁷⁷ Տե՛ս ներք տեղում, էջ 203-206: Այս ամրոցի պատկանելության շորջ ծագած հականարության մասին մականակ ու Շառլին Մ.-Ա., եղջ. աշխ., էջ 18, 36, 50, 74, *The Cilician Kingdom of Armenia*, edited by T. S. R. Boase, Edinburgh, 1978, էջ 45.

լուծում տալ այս խնդրին: Նա չի շտապում դատավորի դեր խաղալ, այլ գրում է, որ պատվիրակներ է ուղարկել, որոնք տեղում կրկնեն այդ հարցը՝ անկանխական որոշում ընդունելով: Պարբռություններ ավարտվում է այսպիսի նախադասությամբ: «...չեմ ցանկանում երանց այդ գործին ուղարկել որպես դատողներ, որը կողմերից մեկի և հասկապես քա կարծիքով, կարող է կասկածելի թվայ»²⁸.

Ամեն դեպքում երեսում է, որ թեև Պապը դեմ էր Անժիորի գործերին Լուս Ա-ի զինական միջամտությանը, սակայն գտնում էր, որ Ռուբենը պետք է ժառանգի իր իշխանությունը: Բացի այդ, այսուեղ մեկ անգամ ևս երեսում է Հռոմի քահանայապետի արևելյան քաղաքականության կարեռագույն դրույթը՝ միավորել բրիտոնյաներին ընդդեմ մուսուլմանների: Նա գրում է: «Եվ Խառնմարդարում ենք որ! ձգուն սարակի խոսների բարբարություններ վիճել և ոչ թե այդ կունի կամ մեկ ուրիշի դեմ պատրաստ մրես, հասկապես մահացու պատերազմ, ինչպես որ գրված է այդ մասին երանց Խամակներում: Այնպէս որ քա բռնակ համոզիր իշխանությունը ժառանգել, որ իր համար ապրելու սեփականությունն ու տիրույթ ձեռք բերի և Խախօսն այդ կողմերը կհասնեն մեր պատվիրակները, բռ գործին հետևիր ոչ թէ գեւրով այլ օրենքով, ոչ թէ սրով պատժելով, այլ արդարությամբ դատելով»²⁹. Ապա ավելացնում է, որ Բաննենուն Խ-ին ևս Խոյեսիսի խադաբանիրական հօրդորներով եամակ է ուղարկել:

Բոլորովին այլ, շատ խիստ և ոչ այնքան դիվանագիտական ոճով է գրված Հայոց քազակորին Խոկենստիոս Խ-ի 1199 թ. հեղած վերջին Խամակը: Այս վերաբերում է Գաստոն ամրոցը Տաճարականներից զրավելուն: Պապը խորհուրդ է տալիս այս վե-

²⁸ Acta Imperiorum PP. III (1198-1216), p. 204.

²⁹ Խոյես տեղում:

բայարձենել օրինական տերերին. իսկ եթև կարիք կա, դատական քականություն աեցկացնել, որը կարող էր իրականացվել իր պատվիրակների մասնակցությամբ Նամակը շատ հակիրճ է, խիստ և ինչ-որ չափով՝ սպառնական»⁴⁵:

Անոնի Ա-ին և Մերձավոր Արեւելի խաչակրաց իշխաններին Տուկինստիոս պապի հղած «խաղաղամահրական» հորդորերին ի գորու չեղան կատախելու Անտիոքի հարցում նրանց միջև հասունացող հակամարտությունը: Իրադարձությունների առաջան միանգամայն այլ՝ Հռոմի պապական աթոռի համար ոչ ցանկայի ընթացք: Խոսքը վերաբերում է Անտիոք-Տիրիապոլիսի կոմսության և Բկանիայի սելցուկյան սուլթանության միջև արդին 1201 թ. գոյություն ունեցող դաշնակցությանը, որն իր առողջ ծայրում ուղղված էր Կիլիկյան Հայաստանի դեմ, և ինչպես գրված է Տուկինստիոսին III-ին Անոնի 1201 թ. հոկտեմբերի 1-ին հղած նամակում: «Տիրիապոլիսի և Անտիոքի կոմսն ուղարկեց իր բանագեցներին Ռուք աղ-Դինի մոտ՝ խաչի թշնամու և մեր հակառակորդի մոտ և մեր դեմ երա հետ դաշնակցեցին ու համագործակցում են թշնամիների հետ, որպեսզի ամենաբաժան Ռուք աղ-Դինը մի կողմից, Տիրիապոլիսի և Անտիոքի կոմսը մյուս կողմից չդադարեն մեզ վրա հարձակվելոց, մինչև որ ինձ զարդեկեց անեն»⁴⁶:

Հայ-հռոմեական 1199 թ. բանակցությունների վավերագրերն արժեքավոր սկզբանյուրենք են Կիլիկյան Հայաստանի նորընծա բազավոր Անոնի մերձավորաբեկյան բաղարականության թեսության թեսության տեսանկյունից: Խցագես 1199 թ., այսպես է Կիլիկիո արքայի և Հռոմի պապի հաջորդ տարիների նամակագրությունն աներկրա փատում է Կիլիկիայի հայկական բազա-

⁴⁵ Տե՛ս անոյն տեղում, էջ 20%:

⁴⁶ Անոյն տեղում, էջ 560:

վորույան բացադիկ և վճռորոշ դերակատարումը Մերձավոր Արևելքում: Հիրավի ճկուն և խիստ կշռադատված դիվանագիտության միջոցով էր հեարավոր Արևելյի խաչակրաց իշխանությունների հետ հակադրույան պայմաններում ապահովել Հոմի պապի հայանպատ զիրքորոշումը, ինչը, անուարակույն, Ան Ա-ը հաջողեց:

ВААН ТЕР-ГЕВОНДЯН

ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В СТРАНАХ ВОСТОЧНОГО СРЕДИЗЕМНОМОРЬЯ В КОНЦЕ XII ВЕКА (ПО ДОКУМЕНТАМ АРМЯНО-РИМСКИХ ПЕРЕГОВОРОВ 1199 Г.)

РЕЗЮМЕ

После провозглашения Киликийского армянского царства (1198 г.) Левон I Рубенид, защищая интересы своего племянника Рубена-Раймона в вопросе престолонаследия Антиохского княжества, вступил в переговоры с Папой римским Иннокентием III. Особенно активно переговоры велись в 1199 г. относительно которых сохранилось 9 писем. В основном относящиеся к проблеме Антиохии и Армяно-Римским конфессиональным проблемам, эти письма также сообщают чрезвычайно важные сведения о воинственности мусульманских государств Ближнего Востока (Иконийский сельджукский султанат и Алеппский Айюбидский султанат) в это противостояние. Из писем становится ясно, что Триполийское графство, противостоящее армянскому царству Киликии в вопросе Антиохии, пыталось создать военный союз с вышеупомянутыми мусульманскими государствами. Исходя из содержания этих писем-документов становится ясно, что Левон

Первый, с целью обеспечения проримской позиции Папы римского, старался его заверить, что Киликийское армянское царство способно освободить Иерусалим, поскольку оно является основной и надежной силой, борющейся с мусульманскими государствами региона.

VAHAN TER-GHEVONDIAN

THE POLITICAL SITUATION IN THE EASTERN MEDITERRANEAN COUNTRIES AT THE END OF THE XII C. (ACCORDING TO THE DOCUMENTS OF 1199 ARMENIAN-ROMAN NEGOTIATIONS)

SUMMARY

After the proclamation of the Armenian kingdom of Cilicia (1198) Levon I Rubenid initiated negotiations with Innocence III, Pope of Rome, on the inheritance of the Principality of Antiochia, in order to protect the legitimate rights of his nephew Ruben-Raymond. Especially active negotiations took place all along the year of 1199, from which 9 letters were preserved. Mainly they concern the problem of Antiochia and confessional issues between Armenians and the Rome, but at the same time the letters contain valuable information on the involvement of moslem states of the Middle East (Seljuk sultanate of Iconium and Ayyubid sultanate of Aleppo) in that conflict. It comes clear from the letters that the rival of the Cilician Armenia in the issue of Antiochia was the County of Tripoli, which tried to cooperate with the moslem states of the region. Based on the content of these letters we come to a conclusion that Levon I, in order to ensure the support of the Pope of Rome, tried to convince him that the Armenian kingdom of Cilicia is the main and safe power fighting the moslem states of the region and capable to liberate Jerusalem.

ՏԱՐՈՆ ԳԱՎԱՐԻ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐԳ՝
(VIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – IX Դ. ՄԿԻՉՔ)

Մամիկոնյան Խախարարական տունի ճակատագրում վհռուց դեռ խաղաց 774-775 թթ. Խամաժողովրդական ապրուամբուրյունը 775 թ. ապրիլի 24-ին տևեցած Արձեի նշանաւոր ճակատամարտում անհավասար մարտում ընկած ապառամբության դեկափար Մուշեղ Մամիկոնյանը, Մամիկոնինց տեր Սահմեկը, սպարապետ Սմբատ Բագրատունին և մի շարք այլ Խախարարեկներ։ Համաժողովրդական ապառամբությունը պարտվեց արաքների զերազանցող ուժի և երանց շահերը սպասարկող մի շարք Խախարարեկների ցանքերով։ Փորձելով փրկվել արաքների հետապնդումից՝ Մուշեղ Մամիկոնյանի երկու որդիներն ապաստանցին հարավային Հայաստանի ապառամբությունը զիյավորող Հանիգասպ Արծրունու մոտ՝ բնականաբար սպասով գնալով իրենց երեկին դաշնակցի շրջապատճամ և տուրք տալով Մամիկոնյանների ու

¹ Տորոն քայլած տեղաբարյուն, առհնակեների և այլ հորցերի մասին մակրումներ ու Մարգիստան Ն., Տեղացուրիներ ի Փոքր և ի Մեծ Հայր, Վեհանիկ, 1864, էջ 225-237. Յանաչել Վ. Սարսի և Ֆիզրիսի աղջերաց առհնակեները պատմական և տեղացրական հետազոտություն, մաս առաջին, «Հնան», 1896, էջ 47-57, Երևան Ս. Հայաստան բառ «Աշխարհացոյց»-ի Երևան, 1963, էջ 86 և կից բարձրեղություն Հայոցը թ., Հայաստանի պատմական աշխարհացրություն և Երևան, 1968, էջ 165-168. Գրիգորյան Գ., Տարոնի Բացառությունների Ֆելուարյան իշխանականության IX-X դարերում, Երևան, 1983, էջ 19-55. Հայուրինեան Բ., Մեծ Հայքի վարչութափառական բաժնեւանների մասին աշխարհացոյց-ի, Երևան, 2001, էջ 225—228 և կից բարձրեղություն Եղիշապարսի Ա. Հոյ Բագրատունիների տեղաբարյուն (885-908 թթ.), Երևան, 2011, էջ 92-107 և կից բարձրեղություն։

² Պատմության Անկերեան մօծի վարչութեանի Հայոց (արտանեան՝ Անկեր), Ա. Վաներբորդ, 1887, էջ 130-131. Բամազոր, Կուրտ չափումներ стран. текст и перевод. Г. Жуке, Баку, 1927. с. 20. «Ընուր աղբաբիրերը Հայուսունի և հայերի մասին», 16, «Արարակուն աղցուրիներ», Գ. Արար մառնեացիների, Ք-ի բարեր, Կերանեւրությունը և բնագրերից բարգաւառությունները Ա. Տեր-Ղոնեցանի (արտհեան՝ Արար մառնեացիներ), Երևան, 2005, էջ 281, 500.

Արծուանիների միջև ապառաքուրյան շրջանում ձևավորված համագործակցությանը՝

Ապառաքուրյունից հետո մյու կարճ ժամանակահատվածում Հայաստանում հարաբերական խաղաղություն տիրեց. Սավայն խալիֆ Հարուս ալ-Շաշիդի կառավարման օրոր (786-809 թթ.) հազարակ ժողովորդերի մասնավորապես հայերի վիճակը նորից ծանրացավ⁴. Արաբները, որ չէին հաշովել նոր ավարուխած ասստամբուրյան ժամանակ իրենց կրած կորուստերի հետ, պահը հարմար համարեցին ապառաքմեների կենսակի մնացած դեկավարերից վրեւ լուծելու համար. Արմինիա վարչական շրջանում նոր ռատիկան նշանակված Խուզայանա-իրև Խազիմին (786-787թթ.)՝ ժամանելով Ալին՝ կրաց կանչեց իր մոտ. Ռատիկանին ներկայացած Համազատպ և Սահմակ Արծուանիները չորսացան հավատը և մահապատճի ենթարկվեցին⁵. Հետազոտողները, եկեղեց սկզբանդրյաների թեոփրյունից պարզել են, որ Արծուանի երրոյթերը մահապատճի են ենթարկվել 786 թ.⁶ Առաջ անցելուն՝ Կշենք, որ Արծուանի եղբայրների նահատակության թվականը և Մամիկոնյան իշխանազումների ողբերգական մահը կատարվել է Խոյի ժամանակահատվածում, գույք և կույք թվականին՝ Խոսպարման ռատիկանին դուր զայտ համար Արծուանի եղբայրներից կրուս-

⁴ Հարուրյանը Բ., Արծուանոց խիստության ընուանիցը հայոց պատմություն Ելք, Երևան, 2016, էջ 123.

⁵ Ghazarian M., Armenien unter der arabischer Herrschaft bis zur Entstehung des Bagratidenreiches, Malburg, 1903, և. 65-68. Տեր-Գևորգյան Ա., Արմենա և Արաբական խալիֆություն, Երևան, 1977, էջ 113-118.

⁶ Արար Ժանիենացիներ, էջ 500. Նազնիւրդի Հ., Արմենաց ռատիկանիները Հայություն (7-րդ դարի վերջից մինչև Աշոտ Ա-ի զանաքաղաքական), Տեղեկագիր, Խոյս, զին, 1, 1956, թիվ 8, էջ 114. Տեր-Վանցան Ա., Արմինիայի ռատիկանների ժամանակագրություն, Հարլանիների ժամանական, Երևան, 2003, էջ 390.

⁷ Ղանդ, էջ 162. Զամյանց Ա., Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվական), հ. Բ., Երևան, 1984, էջ 417. Վաշնյակով Վ., Արծուանիները հայոց պատմաբաններ, Երևան, 2002, էջ 63. Հարուրյանը Բ., Երևան, էջ 123.

⁸ Արտեգ Ա., Երևան, պատմագիտության ուսումնակիրություններ, Երևան, 2006, էջ 457. Վարդակյան Վ., եղեւ աշխ., էջ 63. Հարուրյանը Բ., եղեւ աշխ., էջ 123-124.

բը՝ Ակրոմանը, ոչ միայն հավատութաց եղած, այլև, ռուսահարկով հյուրընկալության կանոնները, սպանել տվեց Մուշեղ Սամիկոնյանի երկու որդիներին. «որպէս թէ ի պատճառու հօրս նոց եղի աղիոն մէծ»⁴. Վատահարցար պատիի է, որ քանի դեռ Սերուժանի այսաց ելյայրըները կենչանի էին, հավատութաց դափամանը չը կարողանա ևման բառմնելի ոճիր գործել. Հարց է ծագում, թէ Տարոն գավառոյ դրանից հետո միջին երբ էր պատրիարքում Սամիկոնյան իշխանական ընտանիքին Ռուսականիքութիւնի տեսակետերի այս հարցով տարածին էն Նրանց մէծ մասը Մուշեղ Սամիկոնյանի որդիների մահվանը համարում է, որ Տարոնի այսն չի պատկանել Սամիկոնյաններին: Ծ. Լորանն անզամ կարծիք է հայութեց, որ Տարոնը Բազրատութիւններին է անցել 747-750 քր. ապատամբությունից հետո⁵: Սակայն Գ. Գրիգորյանը ֆրանչիացի հետ պատողի տեսակետոր լուրջ մաստարկներուն հերթէ է⁶: Նա մանրակրկիտ թվառարյամբ Էջրակացրել է, որ Մուշեղ Սամիկոնյանն արար հարկանափարիերի ապատությունից հետո Արտազէն է զայցել Տարոնից, հետևաբար այս VIII դ. կեսին Բազրատութիւններին էր կայտող անցած լինել⁷: Համեմենք, որ Մուշեղ Սամիկոնյանի կենացակալության օրոր ոչ միայն Բազրատութիւնները, այլև արարիները չեն կարող ոտեղաբարյան կատարել նրանց տիրույթների նկատմամբ:

Գերմանացի հայագետ Յ. Մարկվարտի կարծիքով Տարոն զայցած նախ պատկանել է Սամիկոնյաններին, ապա արարիներին (այսից հաջողապես -Ա. Վ.) իսկ Բազրատութիւններին է անցել 820-

* «Հուարումն պատմութեան Պարղածաց վարշապեսի լուսաբանեալ», (այսուհետեւ՝ Վարդան վարշապես), Կենսութիւն. 1862, թ. 76: Մերուժան Արկանին ապահովեց Դավիթ Սամիկոնյանի կողմից («Սովորք Հայկական», Ժ. Վահագան, 1854, թ. 68):

⁵ L'Arménie entre Byzance et l'Islam, depuis la conquête arabe jusqu'en 886, Paris, 1919, p. 93. Գրիգորյան Գ., Եղիւարձու աշխարհ, թ. 42:

⁶ Գրիգորյան Գ., Եղիւարձու աշխարհ, թ. 42-45:

⁷ Լույն աւելում, թ. 45:

ական քվականելերին²²: Այսպէս կտեսենք տոռքն, Տարոն արարելերին՝ մասնավորապես Զահապատելերին ընդհանրապես չի պատկանել: Ենու, հետևելով Յ. Մարկֆարտին, Տարոնի անցումը Բագրատունելերին փաստում է Խ դ. Երկրորդ տասնութակով²³ Ա. Երևանակ հագեցիկ ակրածառալով հարցին կարծում է, որ Տարոնը մինչև Խ դարը Մամիկոնյան Խախաբարական տան հայրենիքն էր²⁴: Գ. Գրիգորյանը եշում է: «Տարոնը Բագրատունելերին է անցել VIII դարի վերջերին կամ IX դարի սկզբներին, մինչև 804 թ., մինչ Խախիքայուրյան կողմից Աշոտ Մամկերին հայոց իշխան ճակացելը»²⁵: Ա. Տեր-Նոնայանը գրում է: «Աշոտ Մամկերը մոր կողմից լինելով Մամիկոնյան, ժառանգական իրավունքի հիման վրա տիրագույն Տարոնին... կազմաձերելին (Տայրի մեծ մասն, Տարոնին, Շիրակին, Արշարունիքին – Ա. Վ.) տիրամալուց հետո Աշոտը 804 թ. պաշտոնապես ճակացվեց Հայոց իշխան»²⁶: Է. Դավիթյանը Տարոնում Մամիկոնյանների իշխանուրյան ավարտը ժամանակագրութեանաբում է: Խ դ. սկզբները²⁷: Ա. Եղիսաբերտը եշում է, որ «Տարոնին Բագրատունելերը տիրել էին Աշոտ Մամկերի օրոք»²⁸ Այսպիսով՝ ուսումնասիրութերը Տարոնի անցումը Բագրատունել-

²² Markwart I., Sütarmünden und die Tigrisquellen, Wien, 1930, ս. 294.

²³ Լ. Ա., Հայոց պատմություն, Երկերի ժողովական, հ. 2, Երևան, 1967, էջ 412.

²⁴ Երևանակ: Ա., Կով. աշխ., էջ 85:

²⁵ Գրիգորյան Գ., Կով. աշխ., էջ 55: Ըստ Տ. Ցուցացանի՝ Աշոտ Մամկերի իշխանուրյան սկզբը պետք է համարել ոչ քե 804 թ., այլ 802 թ. (Արամանակ ցուցաբետ առաջ Կարսանակ և Վազգութ Խ-Խ թ., Մոսկվա, 1988, ս. 54), 802 թվականը Աշոտի իշխանուրյան առաջին տարի է ընդունում Ա. Եղիսաբերտը (Կով. աշխ., էջ 28, ծան. 4): Հ. Նազարելյանի կաքինությունը՝ Աշոտ Մամկերի իշխանուրյան տարին պետք է համարել 806 թ. Կով. աշխ., էջ 117), Ո. Մելքոնյանը կոչում է 806 թ. (Հայաստան VІІ-IX դարերում, Երևան, 1968, էջ 346): Տայախոնին ենք հսկապում 806 թ.:

²⁶ Տեր-Նոնայան Ա., Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, Երևան, 1984, էջ 347: Խոյսին՝ Արամանակ և Արեմանակ համար, ս. 126.

²⁷ Դավիթյան Է., Բագրատունելերի հսկապությ Տարոնում և Արշարունիքում, ԿԲՀ, 1992, թիվ 1, էջ 123:

²⁸ Եղիսաբերտն Ա., Կով. աշխ., էջ 92:

ներին տեսառում են 785 թ.¹⁹ միեցև 820-ական թվականների միջակայքում: Վերտպրյամի հաշվառմանը փորձենք պարզել, թէ Տարռն զավարը կոնկրետ եթք է անցել Բագրատունիներին:

Արձիի ճակատամարտից հետո չորք մեկ տասնամյակ՝ Հայուստանում համեմատաբար խաղաղություն տիրեց Սակայն ինչպես նշվեց, վիճակը փոխվեց Խուզայանա ուստիինակի կարծառն կատավարման ժամանակ: Արարական իշխանությունները, տեսնելով, որ հայ նախարարները տարբեր ժամանակներում մերք բյուզանդիակի դրդմամք, մերք սեփական նախաձեռնությամբ փորձում են բորափել իրենց լուծը, վարձեցին խորամասեկուրյանը կամ բուի ուժով վերացնել նախարարական դասին: 785 թ. Հայոց իշխան Տաճառ Անձնացին, սպարապետ Բագրատ Բագրատունին և Նկրան Կամսարականը իրենց գորազնելերով ուսումնականի հրամանով կանչվեցին Աղվանք՝ իբր թէ խոզարների դեմ պայքարելու համար: Հայ իշխանները ամբողջ ամառ մնացին Շերան կոչվող զաշտափարում: «... ի դժուդակ և յանհանդուժելի ջերմութեան տապոյ խորշակին»²⁰: ինչն էլ եղավ կրած մահվան պատճառը: Արևով զիշատվեց Հայաստանի քաղաքական իշխանությունը: Հարույ տարի, ինչպես տեսանք, Խահաստակվեցին Արծրունի Երբարձրենքը: Ժամանակակի արաքների համար Խպաստավոր էր և վերջիններու արագ հաշվեհարդար կիս տեսառում երեկվա իրենց քաղաքական հակառակությունի նկատմանը: Նույն՝ 786 թ արաքերի դրամամք մորթապատշտ դավաճան Մերուժան Արծրունին սպանեց զորտիար Մուշեղ Մամիկոնյանի երկու որդիներին²¹: Հայաստանի քաղաքական կառերում Մամիկոնյանների ազդեցության թուլացու-

¹⁹ Զավարը մինչև 785 թ. համարվում էր «Տարօտ աշխարհին Մամիկոնյանից» (Յանցակ Խաջերին Ալուազրաց Մառենապարանին Միիթրարեանց ի վիճակ, Վիեննա, 1895, էջ 158):

²⁰ Վետեր, էջ 161:

²¹ Կարգակ վարդպատին, էջ 76:

մը հանգեցրեց նրան, որ հարավ-արևմտյան Հայաստանի գավառներում մեացին միայն մաեր իշխանութան տներ: Ինչպէս ճիշտ եշել է Ա. Տեր-Ղևոնյանը, նրանք «Ի վիճակի շէին ընդիմակալը որևէ ներխուժման, ուստի ճակապարեց բաց էր արաք գաղթակաների առաջ, որոնք ներխուժեցին Հայաստանի հարավ-արևմտյան գավառները»²²:

Սամիկունյան Երիտասարդ իշխանազուների մասն ազդակ հանդիսացավ, թէ՝ հայ, և թէ՝ արաք իշխողների համար, որ նրանք փորձեն գերի ուժով տիրանալ այդ փառապահն տոնինի բոլոր հոկայական ժառանգությանը՝ մասնաւորապես Տարբեին:

Սուշեղ Սամիկունյանի չորս աղջիկներից մեկն ամուսնութեան էր Զահանգ անունով մի մահմելյականի հետ: Վարդան պատմից փորձում է այս ամուսնությանը տալ գործարքի կերպարանը. «... ես զինք յամուսնութիւն Զահանգի ու մեմն խմայեացույ՝ ի թիկունս առնելով գնա»²³: Ինչպէս իրավացիորեն եշել է Ն. Ալիկանը, այս ամուսնության պատճառը հանդիսացի է այն, որ Սամիկունյան իշխանադրությունը, որի անունը մեզ անհայտ է, տեսելով հայրենակիցների և իրենց երեկով դաշնակիցների վարժունքն իր եղբայրների նկատմամբ, փորձեց արաքների օգնությամբ պաշտպանել իր հայրենական ժառանգությունը»²⁴:

Սյուս կողմից էլ Սամիկունյաների ժառանգության համար պայքարում էին սպարապետ Միքան Բագրատունու որդիներ Աշոտն ու Շապուհը: «Երջիններս նույն ճակատամարտում զոհված Սամուել Սամիկունյանի թոռներն էին»²⁵: Լիոն կարծում է, որ

²² Տեր-Ղևոնյան Ա., Արաքական ամերությունները Բացառություն Հայութանութեան, Երևան, 1965, էջ 45, Արաքական ցեղեցի համաստանը Հայութանութեան (նշվ. աշխ., էջ 58-79):

²³ «Վարդան վարդապետ», էջ 76:

²⁴ Ալիկանն Ն., «Դանու երեց և Սովու Նորենացի, Մասենացրական հետազոտորիներ», հ. 9, Վիեննա, 1930, էջ 247:

²⁵ Միքան Բագրատունինի ամուսնության էր Սամուել Սամիկունյանի դուռը հետ (Դանու, էջ 151):

Սամուելի կալվածքները (Տարոն – Ա. Պ.) անցան նրա բռնիքին Բագրատունիսաց տոհմից, այն է՝ Աշոտին և Շապուհին²⁸: Սակայն այս տեսակետոց թվայության չի բռնաւ, բանի որ պատմիչները չեն փաստում Տարոնը Սամուել Սամիկույսին պատկանելը, բայց փաստ է, որ Մուշեղ Սամիկույսանը ապստամբության սկզբում Արտազես է եկել Տարոնից²⁹: Հետևաբար այն ոչ թե պատկանում էր Սամուել Սամիկույսին, այլ՝ Մուշեղին: Բացի այդ՝ Տարոնը չէր կարող վերը կշգած Խաթրամակըով անցելը Բագրատունիներին այն պարզ պատճառով, որ դեռ կենացանի էր Սամուել Սամիկունյանի եղբարը՝ Շապուհը³⁰: Ավատատիրական իրավունքի համաձայն հետեւ նա էր համարվում Սամուել Սամիկույսանի ժառանգորդը, այլ ոչ թե վերջինիս դատեր որդիները: Հետազոտողների ուշադրությունից վրիպել է այս կարևոր հանգամանքը, որ դեռ Տարուտանում իր գործունեությունն է ծավալու Դավիթ Սամիկույսանը և նրա հեղինակությունը Խաթրամարելերի շրջանում այսքան բարձր էր, որ երբ հարավային Հայաստանի ապստամբության դեկանար Համազասպ ու Սահակ Արծրունիները մեկնում էին ոստիկանին ներկայանալու: «զերակացուրին աշխարհին և զգործ խրեանց տային ի ձեռն Դավիթ Սամիկունի...»³¹: Հետևաբար վերջինս կարող էր խոցլելունի իր տոհմի կալվածքները Բագրատունիներին կուտիելու: Շապուհ Սամիկույսանի ներուումներին³² կամ Զահասպի ու Բագրատունիների համականություններին: Արաւից կարող էր եղանակցնել, որ 786 թ. ոչ միայն Սամիկույսանների մյուս կալվածքները, որուն սփուխած էին ամբողջ Հայաստանով, այլև նրանց հետզոյն ուստան Տարոնը, գուսկում էին այդ տոհմի իրավասության ներքո: Կարող ենք միանշանակ փաստել, որ Դավիթ և Շապուհ

²⁸ Ա. Եղիկ աշխ., էջ 412:

²⁹ Ալիյան Դ., Արքայուն, Վեհանիկ, 1890, էջ 524: Գրիգորյան Գ., Եղիկ աշխ., էջ 45:

³⁰ Շահինցան Է., Եղիկ աշխ., էջ 120:

³¹ «Սովելը Հայութեանը», էջ 65:

³² Է. Շահինցան կարծում է, որ Բագրատունիների ժառանգական իրավունքներ Տարոնի վեռ կարող էին ուժի մեջ մտնել միայն Շապուհ Սամիկույսանի կողմէց Տարոնը կամացը հանձնելուց: Իսահ կրտսեղ զրամելուց և կամ էլ նրա մտահանից հետո (առ և եղի աշխ., էջ 120) և շարունակելով կուռմ որ Շապուհի իշխանությանց Տարոնում ժամանակացրէն կարող է տևած լինել մինչև Շաքը սկզբները, ու ո կը այժմ., էջ 123:

Մամիկոնյանների կենդանության օրոց Բագրատունի իշխանները չեն կարող հավակնություններ ներկայացնել նրանց կազմաձրեսթի նկատմամբ։ Դրանք որունորվեցին մի վորք ուշ, եթե նրանք այլևս կենդանի չեն։ Թե հետագայում ինչ պատահեց Շավիրի, Շապուհի ու նրա ժառանգների հետ, պատմությունը տեղեկություններ չի պահպանէ։

Եթե 785 թ. Ներքի Կամսարականը մահացավ, ըստ Ասոյիկի Աշոտ Բագրատուննին՝ «գանձափել արտար զգաւատն Արշարունաց յազգին Կամսարականաց և զարդունին ի Կողովուէ յԱրշարունին փոխեաց»²¹: Ուստիևսիրողները չեն փորձում գոնք մոռագոր ճշուել, թէ Աշոտ Բագրատուննին երբ Ներքի Կամսարականի ժառանգներից գենե նրանց կալվածքները²²: Դա, ինարկե, 785 թ. չեր, քանի որ այդ ժամանակ Աշոտ Բագրատուննին մեծ դեր չեր իսպում Հայաստանի քաղաքական կյալերում և ինչպես վերը նշել ենք, ես արարիների կողմից Հայոց իշխանի պաշտոնում առաջ բաշվեց 806 թ.: Կարծում ենք, որ Աշոտ Մասկերը Կամսարականների Արշարունիքի մի մասին տիրել է ավելի ուշ շրջանում։ Տարբեր իր տիրույթներին միացնելուց հետո, եդր հարկադրված բախտեց Զահապի հետ, քանի որ վերջին «ժառանգության իրավունքով» իր տիրապետությունն էր հաստատել Արշարունաց զավարի Մամիկոնյաններին պատկանող մասունք։ Իսկ Զահապի Արշարունիքի Մամիկոնյանների կալվածքներում տեր ու սևորինությունն կարող

* «Առելամատի Տարօնելոյ Առողջական Պատուրինի տիեզերական» (արտհան)՝ Ասոյիկ, Ս. Պետերով, 1885, էջ 106:

= Ս. Կողանց հետեւյած Առջն. առանց հետևողիրանք գումառ է որ Կամսարականները իրենց այլուրքները Բագրատուններին են փամունք 785թ. (ուն Կամսարականները «Տեսք Ծիրուկա և Արշարունաց», Վիեննա, 1926, էջ 168-169): Հեղինակը հաշվի չի տալու այն համբաւմները, որ այդ ժամանակ դժու կենդանի էր Ներքի Կամսարականը և Փրցիկնի մասից 785 թ. հետո նրա ժառանգները վաճառեցին իրենց տիրույթները։

²¹ Արշարունիք զավարի մի մասը՝ Արշարունիք պատկանում էր Մամիկոնյաններին (Մանե, էջ 139, «Արդյուն մարդաբան», էջ 76, 83), ունի Գրիգորյան Գ., Արք. աշխ., էջ 53, Եղիշեպատան Ա., Աշք. աշխ., էջ 84:

եր աներ այս ժամանակ. Երբ կենաչափ չէին թէ՝ Դավիթ և Շապոհ Մամիկոնյանները, թէ՝ Մուշեղի երկու որդիները:

Վերոգրայից կարելի է կցրակացնել, որ Բազրատուիիները մրցակից նախարարների²⁴ մասնավորապես Կամսարականների տիրույթներին տիրել են ոչ թէ VIII դ. վերջին, մասնավորապես 785 թ., ինչպես ըլդունված է ուստմասիրադների մեծ մասի կողմից, այլ IX դարի սկզբներին՝ 810-813 թթ. միջակայրում, երբ Զահառը Արշարուսիքի համար պայքարում վերջնական պարտություն կրեց Աշոտ Բազրատունոց և նոյն բակաւինին իր որդի Արյ ալ-Մալիքի հետ զրավեց Դվինը, որտեղ է 813 թ. սպանվեց.

Պատմիների եզրաւոր հայորդումները համադրելով կարող ենք եղբակացնել, որ Տարոն զավարը ամբողջ VIII դարում եղել է Մամիկոնյանների ռատակը: Գավառը եակ պատկանել է Մուշեղ Մամիկոնյանին, առաջ Նրա որդիներին: Վերջիններին մահվանից հետո՝ 786 թ., այս չի աեցէլ Բազրատուիիներին, ինչպես ըլդունված է մասնագիտական զրականության մեջ, այլ որոշ ժամանակ ևս եղել է Մամիկոնյանների տիրույթը: Այսունզ, ինչպես տեսանք, տիրապետել են կամ մ' Մամունի Մամիկոնյանի եղբայր Շապոհը կամ է Դավիթ Մամիկոնյանը, որոնց իշխանությունը տևել է մոտավորապես 786-ից մինչև IX դ. սկզբները: Նրանց մահվանից հետո է միայն զավատն աեցէլ Բազրատուիիներին: Խոկ այն Զահառայաններին թիւնուզ կարճ ժամանակով, չի պատկանել այն պարզ պատճառով, որ Կարդան պատմից նկարագրելով Զահառայի և Աշոտ Բազրատունու պայքարը Արշարուսիքի համար, նշում է՝ «ոտքնեն Զահառայ զօրացեալ ի Դուին, իբրև հինգ հազարար կամեցան զեալ ի Տարօն, յիշխանութիւնն Աշոտոյ որդինոյ Ամբատայ...»²⁵: Պատմիչի համաձայն՝ Աշոտ Սասկերն արաքերի նկատմամբ փայլուն հայրանակ է տանում և կոտորում նրանց մեծ մասին:

²⁴ Վարդակ վարդապետ, թ 78:

²⁵ Կոյսն տեղում:

Վարդան վարդապետի վերջ նշված հաղորդումից կարելի է եղակացնել, որ Տարոնին արդին գտնվում էր Բագրատունիների տիրակալության տակ և որ Աշոտն այն տռացել էր ոչ թե Զահապին հաղթելու շնորհիվ, այլ Շապուհ և Դավիթ Մամիկոնյանների մասից հետո՝ գուցե դատեալով նրանց ժառանգորդը, քանի որ Շապուհի եղբար թուռ էր: Իսկ Զահապի դեմ պայքարում վարվում էր Մամիկոնյանների մյուս տիրույթերի՝ մասնավորապես Արշարունիքի այև մասին ճակատազիրը, որը պատկանել էր նրանց ինչին կարծ ժամանակով տիրապետել էր Սուշեղ Մամիկոնյանի դռներ հետ ամուսնացած Զահապը: Պարուրյան մատնելով վերցինիս՝ Աշոտ Բագրատունին գրավեց ամբողջ Արշարունիքը և ձեռնամոխն եղավ հայկական հողերի միավորամասը՝ ինչը պետք է մի քանի տասնամյակ անց հանգեցներ Բագրատունիաց արքայատիւնի հաստատմամբ:

Այսպիսով՝ Աշոտ Բագրատունին Տարոնին պետք է տիրացած լինի IX դ. առաջին տասնամյակում, 806 թ., այն է՝ Հայոց իշխան եռակվելոց հետո, մինչդեռ 810 թ. ընկած ժամանակահատվածում, Խախտան Զահապի դեմ Արշարունիքի համար պայքարը: Բագրատունիները Տարոնին տիրեցին ժառանգաբար, թե բնի ուժով, սկզբնաղբյուրերի սակավախտության պատճեռով այսօր չենք կարող ասել: Նրանք 810-813 թթ. միջակայրում գետեին Արշարունիքի Կամսարականների տիրութենքը²⁶, ասկա Խոյի ժամանակ Զահապին հաղթելոց հետո, տիրացան գալաքի Մամիկոնյանների կարվածքներին: Գրավելով Տարիք մեծ մասը, Շիրակը, Աշոցքը²⁷ և Տարոնը՝ Աշոտ Բագրատունին, որպես Հայոց իշխան և Հայաստանի մեծագույն մասի հողատեր²⁸, սկսեց մեծ դեր խաղաղ երկրի քաղաքական կյանքում:

²⁶ Առաջին, էջ 106:

²⁷ Վարդան վարդապետ, էջ 76:

²⁸ Դեռ է եղաւ, որ Բագրատունիներին այդ ժամանակ հաջորդեց տիրության Մամիկոնյանների բռնը տիրութենիքին: Կռնի վեցիններին տիրապետության տակ էին Բագրատացը և մի շաբաթ այդ շրջանունքը (ուշ և Թուման Արծունի և Սեւան:

АРГИШТИ ВАРДАНЯН

Х ВОПРОСУ О ПРИНАДЛЕЖНОСТИ КАНТОН ТАРОНА
(ВТОРАЯ ПОЛОВИНА VIII ВЕКА – НАЧАЛО IX ВЕКА)

РЕЗЮМЕ

Алгнарабское общегенеральное восстание 774 - 775 гг. сыграло решающую роль в судьбе нахарарского рода Мамиконянов. Короткое время после этого и Багратиды, и арабы боролись за владение Мамиконянов, особенно за Тарон. Детальное исследование показывает, что кантон Тарона был передан Багратидам не в конце VIII, а в начале IX века, в частности – в период между 806-810 годами.

ARGISHTI VARDANYAN

THE ISSUE OF THE BELONGING OF TARON CANTON IN THE
SECOND HALF OF THE VIII C. AND AT THE BEGINNING OF
THE IX C.

SUMMARY

As it is known, the anti-Arab nationwide rebellion of 774 - 775 played a decisive role in the fate of the Mamikonyan ministerial clan. After a short while both the Bagratuni and Arabs fought for the estates of the Mamikonyan, particularly for Taron. Our detailed study indicates that the canton of Taron was given to the Bagratuni not at the end of the VIII c., but at the beginning of the IX c., particularly in the period between 806 - 810.

Պատմության տակ Արքունիքը, բազմդր կողմանակարյան պատրաստէց. Վ. Հարրանելիք. Երևան, 1985, էջ 302. Կարճա փարզութեան, էջ 81:

**ԽԱՌԱ ԱՍՈՒԽՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՁԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (IX-XI ՀՆ.)**

Բազրստութիների կողմից Հայաստանի պետականության վերականգնումը նրանց ներքին և արտաքին ձևուն ու հեռատես բաղադրականության արդյունք էր: Դրա դրսություններից է ժամանակի հզոր իշխանական տներ Արծրունիների և Սյունիների հետ, ուրա հարաբերություններ ունենալու նպառակոլությունը, խնամիական կապերի հաստատումը:

Հայկական աղբյուրները փաստում են, որ ոչ միայն Բազրստութիների, այլև որոշ հայ իշխանական տների խնամիական կապերը միայն հայկական միջավայրով չեն, որ սահմանափակվում էին: Երբեմն հետապնդելով փոխշահավետ բաղադրական շահեր՝ դրանք հաճախ դուրս են գալիս նույն Արարական խալիքայության շրջանականեր:

Քևելոր խնդրի տեսանկյունից հատկապես հետաքրքրական են ինչպես խառն ամուսնությունների կատառական-իրավական կարգավորումները, շարժադիրները, հանգստանքների ու հետևանքները, Հայոց նկեղեցու վերաբերմունքը դրանց նկատմամբ, այսպես էլ՝ միջնադարյան իրականության ուսումնասիրությունը, ինչը շատ հաճախ կարող էր հակադրվել ինչպես գործող կանոնական-իրավական համակարգին, այսպես էլ՝ Հայոց նկեղեցու վերաբերմունքին:

Վ դարի երկրորդ կեսից սկսած՝ միջնադարյան Հայաստանում ամուսնություններ ամբազումում էր եկեղեցում՝ քահանայի կող-

մից կատարվող օրինարյամբ (պահպան): Դա է վեպում Շահնշահ-վանի եկեղեցական ժողովի (444 թ.) ընդունած Գ կանոնը¹:

Տեղոր առարկա հարցի ընթարյան առումով հետաքրքրական է ևսիրան այդ Լավողիկեի եկեղեցական ժողովի (365 թ.) ընդունած հետևյալ կանոնը, որի ընդորվել է՝ «Կանոնագիրը Հայոց ժողովածուի մեջ. «ԶԵ մարք ոոր յեկեղեցոյ մերոյ են ի պիտի եւ ի ցոյի հարսանիս ալլազգեաց մերձեցուցանել գուստերս եւ զուտերս, կին տալ լոցա կամ կին առևու ի նոցաւել»²:

Ի հավելումն սրա՝ Մխիթար Գոշի Դատաստանագրում կարդում ենք, «Դատաստան ըստ կամաց կանոնաց այս լիցի այս-պիտեացն զի թէ ի հերանոս ալլազգիս տան, եւ զրկին ի հաղորդութեան, զրկեսցին, տուողորս ի հաղորդութեան իրեանց, եւ եթէ ի հերձուածուս, յորոց մեր ոչ հաղորդիմք, գոյսուաստան խոճին ծնոցին, որք ըստ եռաս ամուսնացոցին, հասուսցեն»³: Ինչպիս տեսանմ ենք, թեպետ Մխիթար Գոշի պահմամբ օտարազգիների հետ խոսութիւնական հարաբերությունները որին կանոնով չեն կարգավորվում, այդուհաւետերա, դեռևս Լավողիկեի ժողովի ընդունած կանոնն ազազիների հետ խոսութիւնական կապերի հաստատումը համարում է. «ԶԵ արծան առ ամենայն ալլազգիս խնամութիւն առնել կամ առ հերձուածուս, բայց եթէ յանձն առևուցուն հաւատալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի»⁴:

Այս հարցին անդրադարձած Սմբատ Գոււղատարին իր հերթին զրել է. «Զկայ հրաման յարինաց, որ կարէ ի կարգաւորաց եկեղեցոյ ըստ թերահաւատ կամ ըստ ալլազգի մարդոյ խնամութիւն այնել՝ ոչ ունենալ հարս եւ ոչ տալ՝ եւ թէ այնէ չինի ընդունած, եւ

¹ Տե՛ս Կանոնագիրը Հայոց, հ. Ա, աշխատախիրությամբ Գ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 432 (արտահետո՝ Կանոնագիրը Հայոց):

² Լոյն տեղում, էջ 231. ուն և նուն՝ Մխիթար Գորշ, Գիրք դատաստանի, աշխատախիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 99.

³ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 99.

⁴ Կանոնագիրը Հայոց, հ. Ա, էջ 236:

ոչ բողոք եսիսկոպոսն, որ լինի՝ և տուգանին մեծ տուգանար ի-
րաւագը, թէ այսէ»⁵.

Վերշաբաղրյալից հետևում է, որ եթե Հավոյիկի եկեղեցա-
կան ժողովի ընդունած կանոնը դատապարտում է օտարազգինե-
րի հետ ամուսնությունը, ապա Միջբար Գոշն այն թողևում էր
ծնողների խրճին և ակնկալում, որ երանց պետք է հասուցեն կր-
տարվածի համար: Այց վերաբերում է Սուրան Գումշտարին,
ապա նաև ոչ միայն դատապարտում էր խառն ամուսնությունները,
այլև պատիժ էր նախատեսում պասկ կատարած նախկինությունի-
համար: Այն առավել մեղմ էր քան մերձավորներին պասկելու
դեսպում նախատեսված պատիժը: Եթե խառն ամուսնությունների
դեսպում նախատեսում էր խոշոր չափի տուգանը, ապա Շահապի-
վակի եկեղեցական ժողովի ընդունած ԺԳ կանոնը մերձավորնե-
րին պասկելու պարագայում նախատեսում էր պատմել հոգևորա-
կանին: «... եւ ի կարգէ պաշտանեից հեռացեալ եղիցի»⁶: Վերը
թվարկված կանոնները, թեպես որևէ կերպ չին սահմանում, կար-
գավորում խառն ամուսնությունները, սակայն ակնհայտ է, որ կա-
նոնական իրավունքում դրանք դիտվում են անցանելալի, մերժելի,
դատապարտելի և արգելված երևոյթներ:

Կանոնական իրավունքի տեսանկյունից դատապարտելի
իրավությունը՝ արարի և առհասարակ մահմեդականի հետ խառն
ամուսնությունը, չեղ կարող ենթադրել նաև Հայոց եկեղեցու ծիստ-
կարգով պասկի կատարումը, քանի որ կանոնական իրավունքի
այլազգիներին համարում էր անարժան՝ Հայոց եկեղեցի մոտելը»⁷:

Միջնադարյան Հայաստանում հասարակական հայոց-
րությունները կարգավորվում էին ոչ միայն կանոնական իրավուն-

⁵ Սուրան Սպարապետ, Շառամառանազիքը, համարական տերաց, ռատերն քարզանությունը, առաջարանը և ծանրազուրյունները Ա. Գալստյան, Երևան, 1958, էջ 30.

⁶ Կանոնագիր Հայոց, հ. Ա, էջ 448.

⁷ Տ. և Առնեն աւելում, էջ 229:

թի սահմանած կանոններով, այլ եաւ աղքաների երամաններով, որութ ավելիաց օրենքի ուժ ունեին: Դրանցից հետաքրքրական է Հայոց Արա բազավորի (928-953) այսպես կոչված «բազատրասատ պայմանը» (երդվարտակը), որով արգելվում էր անզամ հունադավան եկեղեցու հետևորդների հետ ամուսնությունները: «Ես նոյն ժաման զիրաման բազատրասատ պայմանին դեմք, զի մի որ իշխանց ամուսնությունը ըստ երկարական է, ու աւտզակաց զգլինառնան տայր վճիռ, և եկեղեցեաց զշինութեան տայր զիրաման»⁵:

Ամուսնությունների⁶ միևնույն կրոնին և եկեղեցուն պատկանելու խնդիրը կարևոր էր անզամ նրանց նշանակութեան կամ նշանադրության ժամանակ⁷:

Այդուհանդեռձ, հայկական աղբյուրներում պահպանված վկայությունները փաստում են մահմենյականների հետ հայերի խորեւ ամուսնությունների բազմաթիվ դեպքեր: Ըստ որում, եթե դրակիր լուսում են հասարակ բնակչության շրջանում կատարված խորեւ ամուսնությունների մասին, որոնք, անկասկած, ավելի մեծ թիվ են կազմու, ապա ազնվագարի դասի ներկայացուցիչների վերաբերյալ պահպանին են մի շարք արժանահանվատ վկայություններ: Դրանք փաստում են ինչպես նման ամուսնությունների դրդապատճառները, այնպիսի է՝ հետևանքները:

Խորեւ ամուսնություններին աելորադրած Ա. Այդոյանը թե՛ նշում է, որ «Միայն հասարակական և տեսության առուելին շահերը կարող են դրժել հայ իշխաններին ու ֆեոդալներին մերձամուսնական կապեր ստեղծել ոչ միայն միմյանց, այլև օտարազգի

⁵ Անոնիս Սուլացի Տեառն Անոնիս Հայոց կորուպիկոսի բարձր ապրանքավորեան տանեւ Անոնիսից որ ըստ ժամանակի ժամանակս լնու ից ձևուադրութիւն արտօնուց Մուրց Լուսաւորչի արտօնի, Մատենացից Հայոց, Ժ հատուք, Ժ դար, Երևան, 2011, էջ 259:

⁶ Տե՛ս Անիքրազյան Ա., Պատմի կարգ ըստ «Մաշտոց» ծխական ժողովածուների, «Բաները Մատենացարանի», 2012, թիվ 19, էջ 76:

մեծամեծների միջև¹⁰, այդուհանդեռ, կիսում է Սիհբար Գոշի անհանգուտությունը. «Թե զեազով հայ մեծամեծները ունեանարում են սուրբ Ալեքսանդրի ու մանափառի ազգի սովորությունները, եթե ամուսնական են այլազավակ կամ հեթանոս իշխանազարմիքի հետ. Ամուսնական նման կապերը վերջիններօն գալիս են լուսին զրկելու հայ ֆեռազներին ներքին անկախությունից, որի հետևանքները չեն կարող բացասարար շագրել թեկուց հայ ընտանեկան հաստատության վրա ։ Բնաւոտն Գոշը լավ զիտեր, որ այս կարգի ամուսնական դաշնապարհությունները ոչ միայն կազի և ունեցվածքի հոկայական վառնումների հիմք են ծառապում, այլև լայն դրսեր են բացում հայ մեծամեծների առջև գելս ու շվայր կցանքի համար»¹¹:

Այժմ տեսնեմ, թե իրականում, իսակն ամուսնությունների օւարեսերի և վաճառյական բաղարականության տրամաբանուկան հետևանք են, թե՝ միակողմանի կամ փոխշահավիճակ բաղարական զործարք և ինչպիսի հարաբերություններ կարող են ստացվել:

Վարդյան վարդապետի վկայությունների համաձայն՝ Սուշեղ Սամիկուսան իշխանի դատրերից մեկն ամուսնուցիւ եր արար Զահասի հետ «Սուշեղա» երկու որոշիք և չորս դատերը... և մի ի թերու նոցա ետ զիեր յամուսնութիւն Զահասի ուսմեմ խամայելացւոյ՝ թիկունս առնելով զես»¹²: Զահասին իր հերթին տիրելով Արշարուակի մի մասին «խորհեր տիրել ի ձեռն կտոցն բոլոր աշխարհին»¹³: Առաջին հայացքից այս ամուսնությունը կարելի է դիտել իբրև փոխշահավիճակ գործարք: Եթե Սուշեղի դրաստին արար

¹⁰ Արքուն Ա. Հայրական ամուսնությունների նորարկությանները միջնադարական օրենքներում, ՊԲՀ, 1965, թիվ 3, էջ 64.

¹¹ Լույս տեղուու:

¹² Հաւաքրության պահանջման Վարդապետի վարդապետական լուսաբանույ (արտհետնե՝ Վարդապետ Վարդապետ), Վենետիկ, 1862, էջ 76:

¹³ Լույս տեղուու:

ամեւստու միջոցով փորձում էր հայրական կալվածքները պաշտպանել հայկական ռուսական ռազմություններից, ապա Զահասպը, իր հերթին, կեց միջոցով, դրանց վկավին տիրելու նպատակ էր հետագայում:

Այսուղի հետաքրքրական են Զահասպի հավակնությունները՝ կեց հոդերին տիրելը: Բայց¹⁴ է պատմիչն այս հաևզամանը շեշտում կամ կարմորում: Նա հիշատակում է Մուշեղի դառեր և Զահասպի ամուսնու թյունը Սուշեղ Մամիկոնյանի մահվանից հետո¹⁵: Այս պարագայում, կարելի է նկատել, որ Զահասպը կարող էր երատիրություններին տիրել հեշտությամբ և անսրգել, քանզի Մամիկոնյաները 774-775 թթ. ապստամբություններից հետո դուրս էին եկել քայլքական ասպարեզից և այլևս վտանգ ներկայացնել չեն կարող: Այս ինչպիս ստերագում է Հովհաննես Դրասխանակերտոցու մի վկայությանը, որի համաձայն՝ կեց միջոցով Երատիրությունների մի մասին տիրել էր Սևադան: «Բոլ Սևադայ ոմն անոն ի Պարսիկ տոնմէ, - որ առեալ էր իր կին զԱրուսեակ ի Բագրատունի տան: և ի ձեռն այստիք զուրկ մասն երկրիս բռնակալեալ սեպհականացար իմն տիրելք»¹⁶: Սևադայի վերաբերյալ պատմիչի վկայությունները վերաբերում են Դավիթ Բ Կակատեցի կարողիկոսի արուակալման շրջանին (806-833):

Մուշեղ Մամիկոնյանի դառեր ու Զահասպի և Սևադայի ու Արուսակ Բագրատուններ ամուսնության վերաբերյալ Վարդակ Վարդապետի ու Հովհաննես Դրասխանակերտոց վկայությունների ընկարությունից հետևում է, որ Զահասպը նոյն Սևադան է Զահասպ-Սևադան ամուսնացել էր Արուսակ Բագրատուններ Սոյն դեպքերը տեղի էին ունեցել IX դարի սկզբին¹⁷:

¹⁴Տէ ա հոյի տեղում:

¹⁵Յովհաննես կարողիկոսի Դրասխանակերտոցը Պատմության ճայց (այսուհետև Հովհաննես Դրասխանակերտոց), Թիֆլիս, 1912, էջ 113:

¹⁶Այս մասին առավել մակրամասն տես Գրիգորյան Մ, IX դարունից Արշակունիքի տերերի հարցի տարբերակությունը, Բնակ, 2011, թիվ 1, էջ 26-32:

Տվյալ դեպքում մեզ համար առանձնակի հետարրական է կը լո՞յ միջոցով երև հայրական հողերին տիրելու պարագան:

Միջնադարյան Հայաստանում՝ կանաց սեփականության մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել¹⁷: Ազնվագարն դասի կանաց ունեին ինչպես անշարժ, այնպես էլ շարժական սեփականություն: Անշարժ սեփականության մաս էին կազմում նաև հողառարածքները՝ գյուղերը, ագրարակները, աշգիները և այլք: Դրանք ձեռ էին բերվում ինչպես իրենց ժառանգություն կամ օժիտ տանապես միջոցով, այնպես էլ իրենց մերձավորների (հիմնականում ամուսինների) նվիրառության շնորհիվ¹⁸: Երբեմն հանդիպում էին նաև ինքնուրույն գործարքների կըման միջոցով անշարժ սեփականության ձեռքբերման դեպքեր¹⁹:

Նշված ժամանակաշրջանում՝ IX դարի սկզբին, Բագրատունի իշխանական տոնինի ներկայացուցիչները երկրում ունեին լուրջ բաղարական կշիռ և արարեների և վաճառչական ձգումները հանդիպում էին երանց համառ դիմացրությանը: Այս էր պատճառը, որ արարեները հաջողության համեմ համար օգտագործում էին նաև հայ իշխանությունների հետ խառն ամուսնությունները: Ավելին, երանք ոյսանով հետապնդում էին առավել հեռահար խալապաններ՝ իրավական իիմբերի վրա դնել հայկական հողերի նկատմամբ իրենց իրավունքները:

Փաստորեն Զատհապ-Սևադայի այս հայկականություններն են արևացողված պատմիչների վկայություններում: Հատկապես, որ IX դարի առաջին կեսին Արարական խալիֆայությունը վերստին

¹⁷ Տե՛ս Պատմություն Խանագին Միասնական պարեալ Ստեղծանման Օրբելյան արքայինուրուցով Սյանեաց (արտահետեւ՝ Ստեղծանու Օրբելյան), Թիֆլիս, 1910, էջ 174-175, 229-230, 291, ուն և նաև՝ Այլշատ Դ. Ծիրակ. Տեղագործության պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 113 և այլն:

¹⁸ Տե՛ս Ստեղծանու Օրբելյան, էջ 218-219:

¹⁹ Տե՛ս և նոյն տեղում, էջ 174-175:

ճանաչել էր հայ Խախարաքների հողատիրական ժառանգական իրավունքները²⁰ և հայրական տիրուպըների նկատմամբ այդպիսի իրավունքներ կարող էին ունենալ նաև կանայք:

Այս միտումը որոշ շափով նկատելի է նաև Սյունիքի իշխան Վասակի դատեր և պարսիկ Բարեկի (մերօին Աստրապատականուն ծավալված խուռամյան շարժման առաջնորդն էր - Ա. Գ.) ամունության պարագայում: Վասակի մահվանից անմիջապես հետո նրա դատերը կնուրբյան է առնում Բարեկը և դրա շնորհիվ աներոջ տիրուպըներն առնում իր իշխանության տակ²¹: Այստեղ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Բարեկը միայն Վասակի մահվանից հետո է ամուսնանում նրա դատեր հետ: Հետևաբար Վասակը կենդանության օրոր գուց բույլ չուար այս միտույունը, կամ Բարեկը թերևս այս ամուսնությամբ իրավական հիմքերի վրա որեց Վասակի ախրույթներին տիրանալը:

Հայկական հողերի նկատմամբ իրենց իրավունքները, օրինականացնելուց զատ, խարև ամուսնությունների հետևաերով արարելու ու հայ ազնիակաների միջև նկատմանին նաև մի շարք այլ հարաբերություններ:

Այս առումով ուշադրության են արժանի Հայոց իշխան (826-851) Բագարատ Բագրատունու ըրոջ և Բաղեջի ամիր Մուսա իր Զորարայի, Արուպակ Բագրատունու և Աւալյա-Զահնապի ինչպես նաև Սմբատ I-ի (890-914) եղբար՝ Շապուհի, դուռեր և Աստրապատականի Սացյան ամիր Աշշինի ամուսնությունները:

²⁰ Տե՛ս Տեր-Նոնեցյան Ա., Հայ Խախարաքների հողատիրական իրավունքները VII-IX դարերուն ըստ խախարաքների պարմանագրերի. «Հնորիմների ժողովածու», Երևան, 2003, էջ 297.

²¹ Տե՛ս Սովորս Խաչակրացացի. Պատմության Աղուանից աշխարհի. Քենական թագիրը և ներառություններ Վ. Աստրելյանի. Երևան, 1983, էջ 326; Մուխինս Օրբելյան էջ 158:

Խաղաքն ամուսնություններով պայմանավորված, իսկ կանոքը, հարկ էրած դեպքում, միջամտում էին երկրի ներքին գործերին՝ նպատակ ունենալով պաշտպանել իրենց ամուսինների շահերը:

Այսպէս, օրինակ, Հայոց իշխան Բագարատ Բագրատունին քրոջ կնուրյան էր տուիլ Արզիի և Բաղեշի ամիր Սուսա իրն Զուրարափին²²: Սակայն դա չսանձարեց, որ վերջինս գործով ներխուժի աներորդուն պատկանող Տարու: Աշուտ Բագրատունին օգնության կանչեց Վասպուրականի իշխան Աշուտ Արծրունու: Նրանք միացաւ բանակով Մշո դաշտում ջախջախեցին Սուսա իրն Զուրարափի գործին, որի մեացրողներն ամրացան Բաղեշի բերդուն: Նրանք գիտովին կոչեցացնեին, եթե Բագարատի քրոջ աղերսակը ների շնորհիլ չներլիինք²³:

Արուսյակ Բագրատունու և Զահապ-Մեսիայի ամուսնությունը հետարրրական է նաև խնամիական համագործակցության առումով: Արմինիայի արք կատակարիչ Խալիլ իրն Յազիդ իրն Մազիադ ալ-Շայքանիի դեմ ապստամբած Զահապ-Մեսիայի համախոնեների թվում պատմից հիշատակում է նաև Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունուն. Այուսաց զահերեց իշխան Սուսանին և այլոց²⁴: Այսինքն, ընդհանուր թշնամու դեմ համառնել պայքարի անհրաժեշտությունը կամ ընդհանուր վտանգը միավորներ կը հայ իշխաններին ու Մեսիա-Զահապին: Ասվածը փաստվում է նաև պատմիչի մեկ այլ վկայությամբ, որի համաձայն Խալիլ իրն Յազիդ իրն Մազիադ ալ-Շայքանին Հայոց կաթողիկոս Դաւիթ Կոկկապետուն (806-833) իրըն պատվիրակ, ուղարկում է Զահապ-Մես-

²² Տե՛ս Թովհան Արծրունի և Ալեքսանդր, Պատմությունների առանձին Արմենական Արծրունի և Ալեքսանդր, Քենազուն թագիրը, ստուգարտներ և ծանոթացնությունները Մ. Դարբիկյան-Մելիքյանի, Երևան 2006, էջ 125, Տարբաք. Արաքաջի մատնեազնիւեր Հայուսանի մասին, հասարեց և բարզմանեց Բ. Խաչարեանց, «Վենետիկ», 1919, էջ 97:

²³ Տե՛ս Թովհան Արծրունի և Ալեքսանդր, էջ 125:

²⁴ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերուց, էջ 113-114:

դայի, Սմբատ սպարապետի և Սյունյաց գահերեց իշխան Սահակի մոտ։ Շառյած Զահարայ-Սևադան ամուսնացել էր Արտայակ Բագրատունու հետ և կըսոց միջոցով տիրել հայկական հողերին, այդուհանդերձ ևա չեր ստովերում հայ իշխանների հեղինակությունը։ Հայոց սպարապետը և Սյունիքի տէրերեց չեին կորցրել իրեց հեղինակությունը։ Նեաց սրանով կարելի է պատճառաբանել Խալիդի իրև Յազիդի իրն Սազիայ ալ-Շայխակի՝ կարողիկոսին երաց երերի մոտ ուղարկելը։

Սմբատ I- ի և Առրաջատականի կառավարիչ Աֆշինի միջն կիրիած դաշինքի շխախտման երաշխիքը սեկն է Աֆշինի և Հայոց արքայի նույն դատեր ամուսնությունն էր²⁵։

Թվարկված երեր ամուսնությունները, ունենալով բացառապես քաղաքական շարժմանիրենք, առաջացրեցին տարբեր հարաբերություններ։ օտարազգի ամուսնու քաղաքական շահերի պաշտպանություն, իմասմիական համագործակցություն և հաշտության պահպանման երաշխիք։

Խառն ամուսնություններից ծնված զավակներից որոշները, մահմեդական հայր ունենակով հանդերձ, հարել են քրիստոնեությանը։ Սուսա իր Շուրարայի մահվանից հետո նրա որդին՝ Աղձնիքի տեր Արտ-Լ-Մաղրան, որը Բագրատ Բագրատունու ըրոց որդին էր, փեսայացն էր Արծրունիներին և ծածուկ քրիստոնյա դարձել²⁶։ Նրա ամուսնությունը ևս քաղաքական ներառական ուներ։ Բացի այն, որ Արտ-Լ-Մաղրան, Արծրունյաց տոհմից կին առելոց հետո վերադարձել էր իր հայկական արմատներին, այն Շայրակիների վերահաստ սպառնալիքների պարագայում կարող էր ապավինել Արծրունիների աջակցությանը²⁷։

²⁵ Տէ ս նույն տեղում է 180։

²⁶ Տէ ս Հայ ժողովոյի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 59։

²⁷ Տէ ս նույն տեղում։

Նույն չեմ կարող պետի Ասիի տմբը Մակուշի և «ի տան Բազգաւորութիւն»²⁸ Կառաջի ամուսնությունից ծնված Արու-լ-Աս-վարի պարագայում: Նա խիստ քշնամարար էր տրամադրված հա-յիրի ու քրիստոնեության նկատմամբ և անզուն հանել է Ասիի մայր տաճարի խաչը²⁹: Փոխարենը նրա որդիներից մէկը, պատասի հա-սակում խմանալով, որ իր տատը՝ Կառուս, «ի տանէ Բազգաւորու-թիւն» քրիստոնեայ էր», քրիստոնեություն է ընդունում³⁰:

IX-XI դդ. խառն ամուսնությունների այսրանով չեն տահիս-նախակիում: Կարելի է հանդիպել նաև այլ ազգի ներկայացուցիչ-ների հետ խառն ամուսնությունների բազմարիլ դեսքերի:

Այսպիսով, ի մի բերելով վերը Աշյալը, կարելի է եղալկացել, որ IX-XI դդ. միջնադարյան կանոնական իրավունքում խառն ամուսնությունների որակվում էին իրքը անցանկայի. մերժելի և դատապարտելի երևույթներ, որուք որևէ կերպ չէին սահմանվում և կարգավորում: Հայոց առաքելական եկեղեցը կողմից ևս խառն ամուսնությունները մերժելի էին, եկեղեցու ծիսակարգով պատր-բացառելի:

Խաշենքի շիևարարության ծախսի կեսը համան առավ նորրայս-գետի մեծահարուստ Հայրապետ Խաչատրյանը (Կողու Հայրա-պետ)՝ պայմանով, որ իր ակունքը փորազրվի դպրոցի շնորի ճա-կատին։ Իսկ տղաների մասնաշենքը կառուցվեց հանրության ուժերով։ Այդ նպատակով Սուրադբեկյանի Խախազահությամբ շիևարարական մասնաժողովը հանգաեակություն իրականաց-րեց Հասարակություններ իր հետապոր նպաստն եր բերում դպրոցաշինությանը։ Սուրադբեկյանի ցանքերով, Հայրապետ Խաչատրյանի դրամական օժանդակությամբ և հասարակության հանգաեակած դրամական միջոցներով 1902 թ. հուլիսին սկսվեց Նոր Բայազետ քաղաքի U. Աստվածածին եկեղեցու վերակա-ռուցումը։ Աշխատանքներն ավարտվեցին 1905 թ.: Եկեղեցու օծ-ման արարադությունը կատարեց Ամենայն Հայոց կարողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանը¹¹։

Խորեն արեդա Սուրադբեկյանը շուրջ 2 տարի (1901-1903 թթ.) վարեց Նոր Բայազետի եկեղեցիների բարեկարգի պաշտո-նը։ Այդ կարճ ժամանակահատվածում նա իր ծավալած գործու-ներության շնորհիվ ձեռք բերեց ինչպես տեղի քանչըության, այն-պես էլ Ամենայն Հայոց կարողիկոսի սերե ու համակրանքը։ 1902 թ. մարտի 24-ին Վեհափառ Հայրապետի կուսդակով նրան շնորհվեց վարդապետի աստիճան և գալազան կրելու իրա-վունք, իսկ նույն թվականի հունիսի 19-ին պարզեատրվեց ծաղկ-յա փիլոնով¹²։

1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ II ցարի ստորագրած օրեն-քով Խախատեսվում էր պետականացնել հայ եկեղեցու կալվածք-ներն ու գույքը։ Արդյունքում փակվում են նաև ծխական դպրոց-ները։ Նոր Բայազետում այդ առթիվ տեղի ունեցավ հակապե-

¹¹ «Աշակ», 24 օգոստոսի 1910, Հարաբելյան Հ., եղջ. աշխ., էջ 256-258.

¹² ՀԱԱ, ֆ. 57, գ. 2, գ. 378, թ. 17.

տակած խոշոր ցույց: Կարողիկոսի կարգադրությամբ Խորեն վարդապետը գործություն է Շուշի, որտեղ ևս երա կողմից կազմակերպվում են բողոքի ցաման բռն ցույցեր: Շուշիից վերադարձալով Եջմիածին՝ Խորեն Սուրաղբեկյանը մասնակցում է Եջմիածնում կայացած բարձր հոգևորականության ժողովին՝ Նկեղեցական կալվածքների գրավման առիվ, ապա վերադարձում Նոր Բայազետ: Նոր Բայազետի և Շուշիի ժողովրդական ցույցերը պատճառ դարձան, որպեսզի ցարական իշխանությունները երիտասարդ վարդապետին արտորելու որոշում կայացեն: Այդ լուրը շատ արագ տարածվում է Խորբայագետների շրջանում և առաջացնում մեծ զայրութ ու ցասում: Խորեն Սուրաղբեկյանը կտրականապես հրաժարվեց ենթարկվել արտորի հրամանին: Միայն զավառապետ Ստեփան Նորդայանի ցանքերի շնորհիվ է հաջողվում հանդարտնեցել ժողովրդին և խնդրել Սուրաղբեկյանին ենթարկվել որոշմանը՝ ենտաօա անախորժություններից խուսափելու համար: Խորեն Սուրաղբեկյանի Նոր Բայազետից հետաքայլու ժամանակ մի քանի հազար անձից բաղկացած բազմությունը երբ էր կազմակերպել՝ սիրելի բարեկարգին ճանապարհելու համար¹³: 1903 թ. դեկտեմբերի 15-ին կաթողիկոսական կոնդակով Սուրաղբեկյանը պարզեատրվում է վարդապետական ականակութ լանջախաչով¹⁴: Խրիմյանի կողմից դա մի յուրահատուկ մարտահրավեր էր՝ ուղղված ցարական վարչակարգին:

Մեկուկես տարի արտորդավայրում մնալուց հետո Սուրաղբեկյանը վերադարձում է Եջմիածին և կաթողիկոսի 1905 թ. մարտի 16-ի կոնդակով նշանակվում Սայր Արքուի վանական կառավարության անդամ: Այսուհետև երան վատահվում է Գորի-

¹³ ՀԱԱ, ֆ. 319, գ. 1, գ. 310, թ. 1-15.

¹⁴ ՀԱԱ, ֆ. 57, գ. 2, գ. 87, թ. 158-159.

Խմբերի-Բարումի և Արդվիսի առաջնորդական փոխանորդի պաշտոնը: 1906 թ. հրաժարվում է փոխանորդությունից և մեկնում է արտասահման, որտեղից վերադառնում է 1907 թ. և ստանձնելու եջմիածնի դիվանապետի պաշտոնը¹⁹:

Նորբայազետցիները, լսելով իրենց սիրելի վարչապետի վերադարձի մասին, համախոսականով դիմում են Խրիմյան Հայրիկին՝ խնդրելով նրան եշանակել Նոր Բայազետի և Դարաշիշակի հայոց եկեղեցիների գործակալ: Կարողիկոսն ընդառաջում է խնդրանքին և 1907 թ. հոկտեմբերի 3-ին նորեն Սուրբ բեկյանին վերանշանակում Նոր Բայազետի շրջանի եկեղեցիների բարեկարգիչ²⁰:

Դպրոցեր բացելու և վերաշինելու ասպարեզում նորեն - Սուրբ բեկյանի հետագա ծրագրերի մասին ուշագրավ տեղեկություններ կան 1908 թ. հունիսի 22-ին Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհրդին ուղղված նրա նամակում: Նա տեղեկացնում էր, որ անցնող ամսում շրջագայի է գալառում և դպրոցներ բացելու վերաբերյալ բազմաթիվ համախոսականներ հաւաքել: Բարիլի կուլտուրական ընկերության առաջարկել էր դրանցից 10 խոշոր զյուդերում (Երևան, Վայշաղալու, Ներքին Աղյաման, Ալիրդին, Վերին Ղարանդուլ, Գոլո, Զոլահանց, Զաղապու, Քոլաղուն, Փաշարենց) դպրոցներ բացել: Նա անհրաժեշտ չէր համարում նոր դպրոցներ բացել Ղալյալարդաշ. Ներքին Ղարանդուղ և Բասարօնչյան զյուդերում, որտեղ պետական դպրոցներ էին գործում: Նա բարձր էր զեահատում արմատներով նորբայազետցի. Բարիլում բնակվող բարեկար Տիգրան Ալիրիկյանի վաստակը, ով մեծ ջանքեր էր գործադրել հայոց գիրքն ու գրականությունը հարազատ գալառում տարածելու հա-

¹⁹ ՀԱԱ, ֆ. 319, գ. 1, գ. 310, թ. 1-15:

²⁰ ՀԱԱ, ֆ. 57, գ. 2, գ. 1697, թ. 1:

մար. վերջինս խոստացել էր առաջիկա սեպտեմբերից իր միջոցներով դպրոցներ բացել զավարի Նորատուս և Ներքին Գյոզալդարա գյուղերում։ Վերջում ևս անհրաժեշտ էր համարում նոր բացվելիք գյուղական դպրոցներին հատկապես առաջին տարում դրամական նպաստ տալ¹⁷։

Վեր նշված նամակին կցված էր նաև 1907-1908 ուսումնական տարին նորաբաց դպրոցների ցանկը՝ ուսուցիչների և սաների մասին վիճակագրական տվյալներով։ Պրոֆ. Հ. Հարությունյանի հաշվումների համաձայն Նոր Բայազետի զավառում նորին վարդապետ Մուրադբեկյանի պաշտոնավարության ընթացքում՝ 1907-1908 թթ., նոր ծխական դպրոցներ են բացվել Դուլյալի, Քարվանսարա, Նորատուս, Ֆամարաբերդ, Շիբուխլու, Օրդարլու, Քեռյադրան, Ներքին Գյոզալդարա գյուղերում, որոնց սովորում էր 899 աշակերտ, այդ թվում՝ 194 աղջիկ։ Արդյունքում՝ ուսումնական տարում զավառում արդեն գործում էր 24 դպրոց՝ 1754 աշակերտով, այդ թվում՝ 297 աղջիկ։ Ուսուցիչների թիվը՝ 47 էր։ Դեռ նշանակում էր, որ նշված ուսումնական տարում Նոր Բայազետի զավառում սովորում էր ըսդիանուր բանկչության մոտ 1.6 %-ը։ Ծխական դպրոցների տարեկան մուտքային գումարը կազմել է 9272 ռուբլի, ծախսային մասը՝ 9281 ռուբլի։ Հատկանշական է, որ Ռուսամալ, Շիբուխլու, Օրդարլու, Ներքին Ախտա, ինչ 1909 թ. ևան Նորատուս, Դդմաշեն (Շիբուխլու փոխարեն) և Ներքին Գյոզալդարա գյուղերի դպրոցները գործում էին Տ. Ալբրիկյանի միջոցներով։ Բավական է նշել, որ վերջինը միայն 1909-1910 թթ. հիշյալ դպրոցների ուսումնական ծախսերի համար հատկացրել էր 2700 ռուբլի¹⁸։

¹⁷ Հարությունյան Հ. Խշ. աշխ., էջ 253-254.

¹⁸ Լույս տեղայում, էջ 255.

1908 թ. հոկտեմբերի 5-ին Նոր Բայազետի հայ ազգաքնակչությունը, ոգևորված վարդապետի ձեռնարկումներով, զավառապետ Ստեփան Շորջանյանի զյլսավորությամբ մի համախոսական է ուղարկում կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքապիտոպոս Սուրբելյանցին, որով առաջարկվում էր Տ. Խորեն Սուրադրելյանին Եշանակել Երևանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ⁷⁹:

1909 թ. փետրվարի 1-ին Երևանի թեմի պատգամավորական ընդհանուր ժողովը ձայների մեծամասնությամբ Խորեն Սուրադրելյանին ընտրում է թեմի առաջնորդական փոխանորդ⁸⁰. Սակայն ցարական կառավարությունը չի հաստատում այդ ընտրությունը: Հետազոյամ Կովկասի փոխարքայի համաձայնությամբ Սուրադրելյանը կարգվում է Երևանի հայրապետական թեմի փոխքեմակալ⁸¹. Ստանձնելով այս պատասխանատու պաշտոնը՝ Տ. Խորեն Սուրադրելյանի համար բացվում է զործունեության լայն ասպարեզ, որը միտված պիտի լիներ թեմի առօս ծառացած բազմաբնույթ խնդիրների լուծմանը:

Այսպիսով՝ Խորեն վարդապետ Սուրադրելյանը խորապես զիտակցելով իր առաքելության խմանոր՝ 20-րդ դարի առաջին տասնամյակում իր կարևոր նպաստը բնրեց Նոր Բայազետի զավարի ընակչության ինչպես հոգևոր, այսպես էլ կրթական մակարդակի բարձրացմանը: Նա ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու նվիրյալ բարեկարգի էր, այլև կրթության և մշակության առաջնորդ մշակ:

⁷⁹ ՀԱԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 177, թ. 14:

⁸⁰ ՀԱԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 202, թ. 4:

⁸¹ «Համեմատագրեր Հայ եկեղեցու պատմության», Գիրք Բ, էջ 13:

КАНАКАРА АЙРАПЕТИЯН

ХОРЕН МУРАДБЕКЯН—БЛАГОСТРОИТЕЛЬ ЦЕРКВЕЙ НОР
БАЯЗЕТА В 1901–1909 ГГ.

РЕЗЮМЕ

С 1901 по 1909 гг. Хорен Мурадбекян дважды был избран на должность благостроителя церквей провинции Нор Баязет. В течении этих лет он пытался изменить культурно-образовательную жизнь местных армян, находящихся во тьме невежества. Несмотря на царящие политические, экономические и финансовые преграды Мурадбекян основал новые школы и церкви.

QANAQARA HAYRAPETIAN

KHOREN MOURADBEKYAN: A REFORMER OF THE CONDITION
OF THE CHURCHES IN NOR
BAYAZET REGION IN 1901–1909

SUMMARY

From 1901 to 1909 Khoren Muradbekyan, being the reformer of churches in Nor Bayazet Region, discarding all political, economic and financial obstacles and applying the potential of Nor Bayazet inhabitants, made an attempt on reforming educational and cultural life of local inhabitants fumbling in the dark and illiteracy through founding new schools and churches. As G. Bishop Chorekchyan once mentioned, "Writing about His Holiness Catholicos of All Armenians means the same as giving a whole description of national, social, religious, educational and school events of a definite historical period".

**ՀՅԴ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴՎՐՈՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՑՈՒՄ**

XIX դարի վերջին և XX դարի սկզբին օսմակյան դարավոր ցից ազատագրված Բուլղարիան դարձավ այն երկրներից մեկը, որտեղ իր կառուցքները ստեղծեց և բազմատեսակ ու եռանդուն գործունեություն ծավալեց հայոց ազատամարտի դեկը ստանձնած ՀՅԴ Դաշնակցություն կուսակցությունը։ Դրան որոշակիորեն նպաստում էր այն, որ Բնոյինի պայմանագրի 23-րդ և 61-րդ հոդվածներով միջազգայինացված Սակեղոնական և Հայկական հարցերն ընդհանուր քշնամու դեմ համատեղ պայքարի և ուղմարադական սերտ համագործակցության հետափոխություններ էին տալիս հայ և բուլղար-մակեդոնացի հեղափոխականներին։

Հայ և բուլղար-մակեդոնացի հեղափոխականների համագործակցությունն այդ տարիներին ունեցավ իր ամենաբազմազան դրսերումները՝ ռումբերի, պայքուցիկ և ուրբերի և այլ զինամքերի ձեռքբերում ու փոխադրում Կ.Պոլիս, ազատամարտի համար դրամական միջոցների ձեռքբերման նպատակով իրականացված համատեղ ձեռնարկներ։ Բուլղարիայում հայկական զինավարժական-մարմանամարզական կամ նշանառության խմբերի ստեղծում, բուլղարական ռազմական ուսումնարաններում հայացի զինվորական կազմերի պատրաստում, Եվրոպայում Հայկական և Մակեդոնական դատերին ի նպաստ համատեղ ջանքերի գործադրում, բուլղարական բանակի կազմում բազմաթիվ հայ կամավորների մասնակցություն Բալկանյան պատերազմներին և այլն։

Հայ-բռնկարական համագործակցության վերը թվարկված շարքում իր արժանավոր տեղը ունեցած Բռնկարխայում ՀՅԴ Զինվորական զադունի դպրոցի հիմնումը և գործունեությունը: Ըստ ՀՅԴ տպազիր վավերագրերի՝ այդ դպրոցի ստեղծման զադափարը առաջին անգամ արձածվել է դեռևս 1906 թ. մարտի 26-ին բացված ՀՅԴ Բաղկանյան կոմիտեների 1905-1906 թթ. տարեկան շրջանային ժողովում:¹ Ժողովի մասնակիցները որոշում են զինվորական կադրեր պատրաստելու և Երևան ուղարկելու համար հեղափոխական ուժերին կենսորուսացնել մեկ վայրում: Նախնական ծրագիրը բավականին համեստ էր, և դպրոցը պետք է ունենար ընդամենը 12 ունկնդիր:

Իր հուշերում Զինվորական դպրոցի ստեղծման պատմությանը միանգամայն այլ կերպ է ներկայացնում Ս. Մինասյանը: Նրա վկայությամբ այդ նախաձեռնության հեղինակները ՀՅԴ օժանդակությամբ բռնկարական սպայական դպրոց սփարուած և հայ-բռնկարական 1905-1906 թթ. կոիմների ընթացքում աչքի ընկած Ռաշինը (Նիկոլա Պաևս) ու իր ընկերերն են: Ռաշինի խնկական անուն ազգանունը հայտնի չէ: Գիտենք, որ նա Գարեգին Նժդեհի համազուրացին էր և վերջինիս հետ ոչ բարյացուկամ հարաբերություններ ուներ: Ըստ Ս. Մինասյանի՝ ՀՅԴ Բաղկանյան կենսորուսական կոմիտեն դպրոցի ստեղծման այդ զադափարին ընթացք չի տալիս: Դրանից հետո՝ 1906 թ. մարտին, այդ հարցում Ռաշինը հանդիպում է բռնկար-մակերուսական կազմակերպության գործիչ Բ. Սարաֆովին, որը հավանություն է տալիս այդ զադափարին:²

¹ Տե՛ս Նիկոլե Հ. Յաջնակցութեան պատմութեան համար (այսուհետեւ՝ Նիկոլե...), Դ. Խառը, խմբ. Հ. Տառնապետեանի, Ալբուր, 1962, էջ 161:

² Տե՛ս Եղիշ Ակոբոս, Գ. Խառը, խմբ. Հ. Տառնապետեանի, Ալբուր, 2007, էջ 60:

³ Տե՛ս Մինասյան Ս., Զինվորում ՀՅԴ-ին Զին Արք. դպրոցի. «Հայունիք» ամսագիր, 1958, յուլիս, № 7, էջ 68:

Զիևվորական դպրոցի մասին հետաքրքիր տեղեկություններ հաղորդելով հանդերձ՝ Մ. Սիսայանը չի անդրադառնում այդ դպրոցի ճակատագրում Ռաշիդի բացասական դերակատարությանը և ՀՅԴ շարքերից նրա վտարմանը: Որքան էլ Ռաշիդի և բուզար-մակենդոնացի նշանավոր գործի հանդիպման ու համագործակցության մասին Մ. Սիսայանի վկայությունը հետաքրքրական է, պեսը է արձանագրենք, որ այս ՀՅԴ տպագիր վայերազրելով և այլ աղբյուրներով չի հաստատվում:

ՀՅԴ տպագիր վավերագրերի համաձայն զիևվորական դպրոցի ծրագիրը գգալիորեն փոխվում է, երբ դրա կազմակերպման գործը ստանձնում է Անդրանիկը: Վերջինս գենք ձեռքբերելու նպատակով, Ռուսություն հանձնարարությամբ նախ մեկնում է Փարիզ, ապա՝ նույն նպատակով 1905 թ. մարտին ժամանում Բուլղարիա: Այստեղ նրան վիճակված էր ստանձնել ՀՅԴ Զիևվորական դպրոցի կազմակերպման գործը:

Անդրանիկի Բուզարիա ժամանելուց հետո բուզար-մակեդոնացի հեղափոխականները հանդես են զայխ համագործակցության նոր առաջարկով, որը գգալիորեն նպաստում է Բուզարիայաւ ՀՅԴ դիրքերի ամրապնդմանը:

Բուզար գործից Լյապով Գուրինի ուղեկցությամբ Անդրանիկը և ՀՅԴ Բալկանյան կենտր. կոմիտեի ներկայացուցիչ և Ալաջաջյանը 1906 թ. մայիսի 30-ին ներկայանում են Բուզարիայի ռազմական նախարար Սագոնովին⁴: Այդ հանդիպումը նպաստում է հայ և բուզար հեղափոխականների համագործակցության ընդլայնմանը և հանգեցնում մի շարք նոր գործերի և ձեռնորբեկների իրականացմանը: Հանդիպման ժամանակ Անդրանիկ առաջնահերթ անդրադառնում է սպառագիեսության, ուսգմամբերի փախադրման գործում առկա արգելվելուն:

⁴ Տե՛ս Նիկոլա... Դ. Խաչար, էջ 132.

մականեախարարը խոստանում է արտասահմանից, այդ թվում՝ Հիննեայից, ստացվող գենքերը Բուլղարիա տեղափոխվել առանց մարսի, այնուհետև՝ ազատորեն (իբրև Մակեդոնիայի ազատազրության համար նախատեսված գերեր) հասցնել անհրաժեշտ նախահանգիստները⁵:

Հանդիպման ժամանակ քննարկվում է նույն ապագա համագործակցության մի նախագիծ, որն էլ կարեղոր շարժադրի է հանդիսանում Բուլղարիայում Զինվորական դպրոցի հիմնման համար: Բուլղարական կողմը վստահ էր, որ երկու կողմ երեք տարի հետո սկսվելու էր բուրք-բուլղարական պատերազմ: Հայկական կողմը, իր հերթին, խոստանում է այն սկսվելու դեպքում Երկրում ապստանընթյունն բարձրացնել, ինչպես նույն անմիջականորեն մասնակցել ռազմական գործողություններին: Բուլղարիայի ուսումնական նախարարությունը պատրաստ էր սպառազինել 10.000-աւոց հայ-բուլղարական խառը բանակ, որը դրվելու էր Անդրասիկի հրամանատարության ներքո և առաջադրակի էր ունենալու գրավել Սև ծովի բուրքական նախահանգիստները⁶: Սազենովը մարտական հնտությունն առանձուն նպատակով 400 հայ երիտասարդների բուլղարում է ծառայելու բուլղարական բանակում: Միաժամանակ 20 հայ երիտասարդների (նրանց թվում էր Գարեգին Նժենեց) հետափորությունն է ընձեռվում անվճար կրթություն ստանալ Սոֆիայի Կոյածն արվարձանում գունդող սպայական վարժարանում⁷:

Այսպիսով, եթե մինչ այդ բուլղարական իշխանությունների կողմից ՀՅԴ-ն ընդունվում էր որպես հեղափոխական ուժ, որի հակարության գործունեության վրա արգելվ չէր դրվում, ապա այս պահից այն դիտվում է իբրև Օսմանյան կայսրության

⁵Տէ՛ս Խոյք տեղում, Ե. Խառոր, Խոյք. Եօր. Ե. Փամբուկանի. Պէտքը. 2007, էջ 370.

⁶Տէ՛ս Խոյք տեղում:

⁷Տէ՛ս Խոյք տեղում, Գ. Խառոր, էջ 60:

դեմ պատերազմի հետքավոր դաշնակից Ավելին ՀՅԴ-ին թույլառքում է Բուղդարիայում հիմնելու առանձին գիտչորական դպրոց պայմանում, որ այն պետք է գաղտնի պահել ոչ միայն թուրք և օսմար բանարական շրջանակներից, այլև բարբար հաստիականությունից⁸: Այսուամենայնիվ, բուղդարական իշխանությունների կողմից այս արտօնությունը հաստատող որևէ գրավոր ժամանակուոց չի տրվում⁹:

ՀՅԴ Բաղկանյան կենտր. կոմիտեն 1906 թ. հունիսից մինչև 1907 թ. հուլիս Ամերիկայի կենտր. կոմիտեին ուղղված նամակներում իր հերթին տեղեկացնում է Անդրամեխիկ և բուղդարական իշխանությունների միջև ըսրացող բանակցությունների մասին, ինչպես նաև անդրադառնում գիտչորական դպրոցի ֆինանսավորում և սաների թվաքանակին գերաբերող հարցերին:

ՀՅԴ Բաղկանյան կենտր. կոմիտեն 1906 թ. հունիսի 8-ին գրված նամակում տեղեկացնում է, որ դպրոցը նախառնախում էր բացել սեպտեմբերին, եթե «անսկինեալ պարմաներ (նկատի ունի բուղդարական կառավարության հետ համագործակցությունը - Ս. Հ.) առելի յաջող ու նպատակայարմար ձևուարկի մը առջեւ թերին... ձևուարկ, որ կոր գործունեութեան անսպասելի եւ ամեն միախարութեան վեր հեռանկար մը կը պարզ: ...»¹⁰: Բաղկանյան կենտր. կոմիտեն Ամերիկայի իր գործընկերոց կոչ է ահում հետևողական լինելու, որ ՀՅԴ շարրորդ ընդհանուր ժողովը գումարվի 1906 թ. հունիսին կամ օգոստոսին, որպեսզի «... շրջենու որ մինչև հիմա մնը յեղափոխական տարիքութեաց մեջ ահօրինակ յաջողութիւն մը՝ որպիսին է: մեր շօջա-

⁸ Տե՛ս Միմիքազյան Ծի., Հ.Բ. Դաշնակցութեան Զինվորական դպրոցը (Ծնկը Մարտիկ Յամիանինեանի տուշերը), «Հայրձնից» ամսագիր, 1951, միարբար, Ն-4, էջ 29:

⁹ Նյուեր... Գ. Խոնոր, էջ 60:

¹⁰ Կույս անդրում, Ե. Խոնոր, էջ 374:

փած ձեռնարկը՝ վիճի՝ անօգուտ գղջումի, կույրի ու նախառախիքի տակ ծածկելով՝ Դաշնակցութիւնն ու ամբողջ հայ յեղափոխութիւնը»¹¹:

Միեւ այդ ՀՅԴ Բալկանյան կենտր. կոմիտեն հայ-բռնշարական համագործակցության մասնամասները, մասնավորապես Անդրանիկի տևզեկագիրը, ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ներկայացնելու համար Կովկաս էր ուղարկել Ե. Ալաջաջյանին¹²:

ՀՅԴ Արեւելյան բյուրոն, հայ-բարարական կոֆիլսերով պայմանավորված, այդ օրերին գերազանցազես զրադված էր արևելահայության ինքնապաշտպանության կազմակերպման հետ կապված աշխատանքներով. ուստի հրաժարվում է Զինվորական դպրոցին ֆինանսական օժանդակություն ցուցաբերել:

ՀՅԴ Արեւելյան բյուրոյին ուղղված իր 1906 թ. նոկտնաշերի 5 (18)-ի նամակում Բալկանյան կենտր. կոմիտեն հայտնում է հայ-բռնշարական համագործակցության պաշտօնական ձևակերպման և Բուլղարիայի ուսումնական նախարարության կողմից Զինվորական դպրոցի գործունեության համար տարածք հասկացվելու մասին¹³. Սիամամանակ նշվում է, որ ՀՅԴ Ամերիկայի կենտր. կոմիտեն համաձայնությամբ ստիմոնվել է Զինվորական դպրոցի բյուջեն՝ 9 ամսվա համար կազմելով 40-50.000 ֆրանկ¹⁴:

Բորիս Սարաֆովի աջակցությամբ դպրոցը հիմնվում է Բուլղարիայի Դուքսից շրջանում՝ Ռիլայի վանքի մոտ: Բ. Սարաֆովը և նրա գլուխակիցները համաձայն չեին դպրոցի սեղի ընտրությանը: Այն գումարով էր բուրք-բուլղարական սահմանի մոտ: Բացի այդ, այս շրջանում մեծ ազդեցություն ուներ Բ. Սա-

¹¹ Լոյն տեղում:

¹² Տե՛ս Խոյի տեղում, էջ 372:

¹³ Տե՛ս Խոյի տեղում, էջ 376:

¹⁴ Տե՛ս Խոյի տեղում:

բայ ովի հակառակորդ Յանե Սահստանսկու գլխավորած մակեդոնական կազմակերպությունը¹¹: Նրանք առաջարկում էին Զինվորական դպրոցը հիմնել երկրի խորքում՝ իրենց անմիջական ազդեցության ներք գուևող Տիրառվոյի շրջանում: Բայց, տեղի տալով Շաշիդի պնդումներին, ՀՅԴ Բալկանյան կենտր. կոմիտեն, չի փոխում որոշումը¹²:

Շայած կարմասն գրյությանը (1906 թ. նոյեմբեր – 1907 թ. հունիս), ՀՅԴ Զինվորական դպրոցը տայիս է ուսումնական արվեստի մեջ հմտացած շուրջ հիսուն շրջանավարտ: Զինվորական դպրոցն առաջնորդվում էր բուդյարական սպայական վարժարանի ծրագրով, որը հարմարեցված էր հայ իրականությանը բնորոշ սպայմաներին¹³: Զինվորական դպրոցի հիմնական առաքելությունը գլխավորական կրթություն տավելու մարտական ուժեր պատրաստելն էր: Ունկնդիրները պարտավոր էին առնվազն եինզ տարի հակառարիմ մուալ իրենց երդմանը և ծառայել Հայոց ազատամարտին¹⁴:

Զինվորական դպրոցի ֆինանսավորումը գլխավորապես հոգաւոր էին ՀՅԴ Բալկանյան և Ամերիկայի կենտր. կոմիտեները¹⁵: Մեկ տարվա հատկացումների չափը կազմում էր 50 հազար ֆրանկ (50 ունկնդիրներից յուրաքանչյուրի համար սահմանված էր առմեկուն 100 ֆրանկ, հետևաբար, 10 ամսում այն կազմելու էր 50 հազար ֆրանկ):¹⁶ ՀՅԴ Արևմուսն յուրօն դպրոցի կարիքների համար տրամադրեց 16.000 ֆրանկ, մինչդեռ Արևելյան

¹¹ Տե՛ս Սիմիրարքն Օն., Եղվ. աշխ., էջ 41.

¹² Տե՛ս Խոյի տեղում:

¹³ Տե՛ս Նիկոլ. ..., Ը. հասնոր, էջ 374:

¹⁴ Տե՛ս Խոյի տեղում, Դ. հասնոր, էջ 133:

¹⁵ Տե՛ս Խոյի տեղում, Ը. հասնոր, էջ 378:

¹⁶ Տե՛ս Սիմիրան Ճր., Հայ ազատագրական պայքարի ուղիներում, գլուխ Ա. Երևան, 2003, էջ 497:

բաւրոն ըստհանրապես հրաժարվեց օժանդակել²¹։ Դպրոցի բուժքի տեօրինումը ստանձնեց խառը հանձնաժողովը, որի մեջ ընդգրկվեցին Աստրակիկը, ՀՅՌ Բալկանյան կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Ե. Ազածացյանը, ԱՄՆ կենտր. կոմիտեի ներկայացուցիչ Թ. Զելայյանը (Հայկ Արմեն)՝²²:

Դպրոց կարող էին ընդունվել 20-35 տարեկան երիտասարդները, ովքեր չունեին առողջական խնդիրներ: Կարևոր հայապայման էր համարվում նաև ունկնդիրների ազեխվ. բարութեան նկարագիր ունենալը ու հեղտափոխական գործին ծառաւելու պատրաստակամությունը: Նրանք պարտավոր էին ենթարկվել հրահանգներին և ցուցաբերել կառարյալ կարգապահությունը: Կասկածներից գերծ մնալու համար բուլղարական կառուվարությունը արտոնել էր, որ դպրոցի ունկնդիրները կրնեն բուլղարական բանակի գինվորական համազգեստը²³: Հայ գործիչների հետ բախկցությունների ժամանակ կառավարությունը խոստացել էր հոգալ նաև դպրոցի համար անհրաժեշտ գեների հարցը²⁴:

Դպրոցն իր պարապմունքները սկսեց 24 ունկնդիրներով, որոնցից 10 հոգի ներկայացել էին Բալկանյան երկրներից, նոյերան՝ Ամերիկայից, 4 հոգի՝ Կովկասից²⁵: Դեռևս օգոստոսին կովկասահայ 15 երիտասարդներից կազմված առաջին խումբը ժամանել էր Բուլղարիա: Բայց ծանրութեալով գինվորական դպրոցի ներքին կանոնագրին, նրանք հրաժարվեցին հավատարմության երդում տալ և հետ վերադարձան Կովկասը²⁶: Բուլղարա-

²¹ Տե՛ս Նիկոլե Շահումյան, էջ 136:

²² Տե՛ս Սիմոնիկ Հր., եղջ. աշխ., զիրք II, էջ 498:

²³ Տե՛ս Նիկոլե Շահումյան, էջ 375:

²⁴ Տե՛ս Սիմոնիկ Հր., եղջ. աշխ., զիրք II, էջ 497:

²⁵ Տե՛ս Նիկոլե Շահումյան, էջ 375:

²⁶ Տե՛ս Սիմոնիկ Հր., եղջ. աշխ., զիրք II, էջ 498:

²⁷ Տե՛ս Սիմոնիկ Հր., եղջ. աշխ., էջ 68, տե՛ս նաև՝ Նիկոլե Շահումյան, էջ 133:

կաև բանակի հարլուրապետ Պողոս Պողոսյանը 1906 թ. դեկտեմբերի 5-ին ժամանում է գիևվորական դպրոց և նշանակվում տխօրին։ Նա իր հետ բերեց ևս երեք երիտասարդների և ուսկեղիքների թիվը դարձավ 27²⁰։ Ավելի ուշ ՀՅԴ Կովկասի գործիչները (որոնց թվում էին Ռուսոնը և Սեբաստացի Մուրադը) կարողացան ավելի խիստ պայմաններ ստորագրել տալով մեծ թվով երիտասարդներ ուղարկել գիևվորական դպրոցՆրանց մեծամասնությունը Անդրանիկի նախկին գիևվորներից էին²¹։

Պ. Պողոսյանը, հիանալի գիևվորական լինելով հանդեռ, վարժ չեր տիրապետում հայերնեին, ուստի ստանձնում է գործական պարապուերների կազմակերպումը։ Տեսական-դասախոսական բաժինը հանձնարարվում է Ռաշիլիկ։ Կարճ ժամանակ անց վարժարանի դասավանդման գործըթացում երդուագվում է նաև Գարեգին Նժենեցը²²։ Ռաշիլիկ և Գ. Նժենեցը բոլորական սպայական դպրոցի շրջանավարտներ էին և ունեին սպայի աստիճան։

Դպրոցն ուներ հազեցած և խիստ օրակարգ։ Դարապմուխերներն անցկացվում էին հասուն ծրագրով։ Ունկնդիրները բաժանված էին երեք խմբի. առաջին խմբում պատրաստում էին խմբապետներ, երկրորդում՝ խմբապետի օգևականներ, երրորդում՝ գիևվորներ։ Ունկնդիրներն արթեանում էին առավույն ժամը 5-ին։ Դասերը տևում էին մինչև ժամը 12-ը։ Ժամը 12-14-ը հասկացվում էր հանգստին։ Այսուհետ մինչև ժամը 17-ը անցկացվում էին գիևվորական վարժություններ։ Դպրոցում դասա-

²⁰ Պողոս Պողոսյանը Խանոսարի արշավանքի մասնակիցը. ՀՅԴ Կովկասի գործիչ Բուլղարացի Պետրոս (Պետրոս Սեբաստացի) հարեցոր որոնի եր.

²¹ Տե՛ս Այմանյան Հր., եշջ. աշխ., զիրը II, էջ 498.

²² Տե՛ս Եիսիքը..., Դ. Խանոր, էջ 133.

²³ Տե՛ս Անդր առեղութ, Ե. Խանոր, էջ 377, Խան Մինուկան Հր., եշջ. աշխ., զիրը II, էջ 498.

վաւովիրմ եր 22 առարկա²²: Դրանք էին՝ զինվորական հեղա-
խուզություն, ուսպմավարություն, թշնանոթաձգություն, ականա-
յին ծառայություն, պայթուցիկ և յութերի պատրաստում, դաշնա-
յին ծառայություն, ներքին ծառայություն, զինվորական կարգա-
պահություն, զրիմ, վիրաբուժություն, մարտավարություն, զո-
րաբաժնային ծառայություն, խրամատաշինություն, զինվորական
շրջանի կազմակերպում, Հայոց պատմություն, հեղափոխության
պատմություն, մանկավարժություն, հրաձգություն և այլն²³: Նա-
խապես ցանկալի էր համարվում բուլղարերենի խմացությունը,
բայց ուսկընիմերի մեծամասնությունը բուլղարերեն զրել կարող չգիտեր²⁴: Պարապմունքները շարունակվելու էին մինչև սեպտեմ-
բեր: Ծրագրված էր, որ մայիս ամսից հետո սաները գործեական
պարապմունքներն անցկացնելու էին լուսերում²⁵:

Զինվորական դպրոցը, սակայն, չկարողացավ ծավալի եր-
կարառու բնականու գործունեություն: Այս փակվեց բաշխական,
ֆինանսական և ներքին գողաճարական խնդիրների պատճառով:

Թուրք և ռուս լրտեսները, ի վերօն, հայուսաբերեցին
դպրոցը: Թուրքական և ռուսական իշխանություններն այն փա-
կելու պահանջով դիմեցին բուլղարական կառավարությանը:
Ռուսական իշխանություններն ամեն կերպ փորձում էին խա-
րարել դպրոցի բնականու աշխատանքը, բայտ որ, ինչպես կար-
ծում էր Բայկանսերում ռուսական գործակալությունը վարող
Օդեսայի բաժանմունքի պետը, դպրոցի շրջանավարտները
պատրաստ են դառնալու «ապատամբական հրոսակախմբերի
դեկավարներ»²⁶.

²²Տե՛ս Սինոսիան Ա., եղվ. աշխ., էջ 68.

²³Տե՛ս Նիկոլը..., Բ. Խառը, խմբ. Հ. Տանեանցեանեան, Պերայ, 1985, էջ 333.

²⁴Տե՛ս Մինասեան Ա., եղվ. աշխ., էջ 68.

²⁵Տե՛ս Նիկոլը..., Գ. Խառը, էջ 60.

²⁶Տե՛ս Սինոսիան Հր., եղվ. աշխ., գիրք II, էջ 500.

Բուլղարական կառավարությունը այս ընթացքում փորձում էր շեղեւ բուրգական կողմի ուշադրությունը: Նախապես հրահանգելով կտորներում և ներքեահարկերում բարցնել կասկածելի իրերը, իշխանությունները ձեռկանորեն խուզարկեցին դպրոցը: 1907 թ. փետրվարի 26-ի խուզարկության ընթացքում 34 հոգի ստիպված եղան բարևվել մոտակա անոռում: Դպրոցի 10-15 ունկնդիրները, որպես «մակերսացի» ենդափոխականներ» ձերբակալվեցին, բայց կարճ ժամանակ անց ազատ արձակվեցին:

Այդ ընթացքում առաջ նկատ հրատապ լուծում պահանջող մեկ այլ խնդիր: Դպրոցի կարիքների համար նախապես հառկացված 50.000 ֆրանկն արդեն սպառվել էր: 1907 թ. փետրվարից կառույցը կրկին ֆինանսավորման կարիք ուներ: Մոտավորապես նույնընտան գումար էր անհրաժեշտ սկսված գործն ավարտին հասցելու և ունկնդիրներին նշանակման վայրեր ուղարկելու համար²⁷: ՀՅԴ Արևելյան և Արևմտյան բուրյունները հրաժարվեցին նյութական օժանդակություն ցուցաբերել, իսկ Բաղկական և Ամերիկան կենտր. կոմիտեների միջոցները բախարար չեն դպրոցի ծախտերը հոգալու համար:

ՀՅԴ շորրորդ ընդհանուր ժողովում՝ 1907 թ. մարտի 7-ին, ընսարկվում են գիւղորական դպրոցի վաղաժամ բացման, ֆինանսավորման և այլ խնդիրների հետ կապված հարցեր: Անգամ բարձրացվում է դպրոցի հիմնադրման իրավասության հարցը: Այդ հարցադրմանը համոզիչ բացատրություն է տալիս Խաչատրու Մարտունյանը (Ե. Ակնունի): Իր եկույթում նա նշում է, որ դպրոցին վերաբերող հարցերը նախատեսված էին ընտարկել ՀՅԴ շորրորդ ընդհանուր ժողովում: Բայց վերջինիս ուշ հրավիրումը, ինչպես նաև բուլղարական կառավարության կողմից

²⁷ Տ. ս Եկատեր..., 7. հանոր, էջ 133:

Ներկայացվող առաջարկները, անհետաձգելի են դարձրել մինչ ընդհանուր ժողովը Զինվորական դպրոցի հիմնումը²⁸.

Խ. Մալումյանի, Ռ. Զարդարյանի և Անդրանիկի բացասարություններն ընդհանուր ժողովի մասնակիցների կողմից միանշանակ չեն ընդունվում: ՀՅԴ մի շարք գործիչներ, հառկապես՝ Մաշուրը (Ալ. Մաշուրյան) և Ար. Բասիակյանը (Արտաշես Չիլինզարյան), ստեղծված իրավիճակում անհմաստ էին համարում զինվորական առանձին դպրոցի ստեղծումը: Նրանց կարծիքով ՀՅԴ Բալկանյան կենտր. կոմիտեն իրավասու շեր առանց ընդհանուր ժողովի համաձայնության դպրոց հիմնել:

Նման հարցադրումների գլուխ հանդիս են զայխ Շուտոնը, Արամը, Ա. Կոսմիանը, Ռ. Զարդարյանը, Ե. Թոփչյանը և այլք²⁹: Ռ. Զարդարյանն իր ելույթում եցում է «մեր կացութիւնն առհասարակ այսպէս է եղել, որ դեռ 15 տարի առաջ պետք է հիմնուած լիներ այս Դպրոցը: Եւ ես ցանում եմ, որ Դպրոցի օգտակարութեան վերաբերմանը, այսուեղ... կասկածեր են բարեւում...»³⁰:

Ըստհանուր ժողովում Զինվորական դպրոցի վերաբերյալ հետեւյած տարակարծիք մոտեցումները, որոշ պատվիրակների կողմից դպրոցի հիմնումն անպատճե և սխալ համարելը զիսավորապէս պարմանավորված էին ներկուսակցական լարված իրավիճակով: ՀՅԴ դեկավարության կողմից 1905 թ. հրապարակված «Կովկասյան նախագծի» վերաբերյալ կուսակցության շարքերում ծայրահեղ հռանքներ էին ձևավորվել: «Կովկասյան նախագծի» կողմնակիցների կողմից զինվորական դպրոցի հիմնումը չեր կարող իրավական համարվել, իսկ գործուելությունն էլ դրական զնահատութել, քանի որ «Կովկասյան նախագիծը» մեր-

²⁸ Տե՛ս նոյն տեքստ, էջ 62.

²⁹ Լոյն տեքստ:

ժողովը և անօրինական համարողերը հիմնականում ՀՅԴ Բալկանյան և Ամերիկայի կենտր. կոմիտեներն էին:

Զինվորական դպրոցի աხժամանակ փակման գործում փոր չեր նաև Նրա դասավանդողերից մեկի՝ Ռաշիդի անզգուց և ոչ պարկեցած վարքագիծը. Դպրոցի ստեղծման առաջին խև օրից նա դրսորեց ոչ պատշաճ պահպածը. Ստանձնելով Սովորացած դեպի Ռիլայի վաեր դպրոցի գույքի փոխադրման գործի դեկավարությունը՝ Ռաշիդը «...Օք ցերեկով վարձեց ուրսուն սայեր եւ մարդաշատ խճուղիներով ճամբար ինչպատ դեպի իր գաղտնի պահուող Զինուորական Կարմարանը. ...»⁴¹. զրում է Ա. Հովհաննիսյանն իր հուշերում: Դա չեր կարող չգրավել բուքը և ուստի լրտեսների ուշադրությունը: Օսմանյան իշխանական շրջանակներում տարածում է գունում այս մուսայեռությունը. որ Բուլղարիան պատրաստվում է վերսկսել պայքարը Օսմանյան կայսրության դեմ և ամրացնում է իր սահմանները⁴²: Ռաշիդը կուսակցական նկատությունն է արժանանում. բայց հետագա յում շարունակում է իր անփույք վարքագիծը:

Ռաշիդը դավեր էր լարում Պ. Պողոսյանի դեմ և հաճախա կի խախոռում դպրոցի կարգապահությունը: Անդրամիկին գրած նամակում Ռոստոմը հայունում է Ռաշիդի՝ ուսանողության շրջանում անջատողական մորեր տարածելու մասին⁴³: Ա. Հովհաննիսյանի վկայությամբ՝ Երևանականության և անկարգա պահության արդյունքում. ունկնդիրները «մահացու թշնամյներ դարձան իրարու»⁴⁴: Բալկանյան կենտր. կոմիտեի միջամտության շնորհիվ ունկնդիրները հաշուվում են. բայց Ռաշիդի

⁴¹Տե՛ս Մխիթարյան Օկ., եղի աշխ., էջ 42:

⁴²Տե՛ս Կայի տեղում:

⁴³Տե՛ս Ռոստոմ, Լուսականի. մահուած ուրանի ամեակին առին. Խմբ Հ. Համբարձումն. Պէյքոք, 1999, էջ 414:

⁴⁴Տե՛ս Մխիթարյան Օկ., եղի աշխ., էջ 42:

արարքներին այսպահով չեն տահմանափակվում: Դ. Պողոսյանի բացակայությունից օգտվելով՝ նա փորձարկում է դպրոցի պարուցիկները, որոնք նախատեսված էին գործածել միայն գործառկան պարապմունքների ժամանակ⁶:

ՀՅԴ շնորհու ընդհանուր ժողովը, ընտրյան առնելով Զինվորական դպրոցին վերաբերող խնդիրները, չի շրջանցում նույն Ռաշինի հարցը:

Ռաշինին հեղափոխական կառույցի մեջ ընդգրկելու և զինվորական դպրոցի ուսկեցիքների դաստիարակումը նրան վստահել համար Խ. Մալումյանը մեղադրում էր ՀՅԴ Բալկանյան կենտր. կոմիտեին⁷: Ռ. Զարդարյանը պատասխան խորում նշում է, որ Բալկանյան կենտր. կոմիտեն Ռաշինի մասին տեղեկագիրը ստացել է ավելի ուշ, եթե նա արդեն աշխատում էր և վարպետորեն կառարում իր աշխատանքը: Թ. Ջելաշյանը պարզաբանում է, որ Ռաշինի ընտրությունը թյուրիմացության արդյունք է եղել: «մենք մի ենուազիր ստացանք, որով յայնում էին, Ռաշինին ընդունելու մասին, բայց, յետո ինչպէս նամակից պարզուեց, դա ոչ թէ Ռաշինին, այլ Տաճատին (Վ. Սելյույան) էր վերաբերում»⁸: Ի վերջո, հարցի վերաբերյալ ընդհանուր ժողովը կայացնում է հետեւյալ որոշումը: 1907 թ. ապրիլի 25-ին Խ. Մալումյանի 16 կետից բաղկացած առաջարկների փարեթի 6-րդ կետը վերաբերում էր Զինվորական դպրոցին, մասնավորապես՝ Ռաշինի ուսուցչական գործունեությանը: Փաստաբարի բովանդակությունը հետևյալն էր: «Ուղարկել երկու ընկեր Բուլղարիա, տեղայութեան ծանօթանալու Զինուորական Դպրոցի մեջ տեղի ունեցող դժգոհութիւններին, իրաւուք տալով նրանց պատաս-

⁶Տե՛ս Ա Խոյել տեղում, էջ 43:

⁷Տե՛ս Ա Խոյել տեղում:

⁸ Ելարքը..., Գ. Հասոյը, էջ 253-254:

խանատուուրեան եսթարկել դասատու Ռաշիտին և հարկ դատած դեպքում՝ հեռացնել Նրան. կարգի բերել դպրոցի դասընթացը. դրամական վիճակը Եւ գործերը: Արդյունքը տեղեկազրել Արեւելեան և Արեւմտեան Բիւրոներին»²⁸:

Ռաշիդից դժոխն էին նաև բովդար-մակեղոնացի գործիչները: Նրանք պնդում էին, որ Ռաշիդը համագործակցում է Բ. Սարաֆովի հակառակողի, մակեղոնական կազմակերպության աջ քայի ներկայացուցիչներ Յանէ Սահմանակու և Վանչ Միահիլովի հետ²⁹: Կարճ ժամանեակ անց պարզվում է, որ կասկածները տեղին էին: Յ. Սահմանակին իր փոքրարիվ ուժերով ապաստանել էր Ռիլայի վանրում: Ռաշիդի օգնությամբ Նրանք կարողանում են ազատվել Բ. Սարաֆովի կուսակցության և բուլղարական կառավարության հետապնդումներից: Վանքը խուզարկելուց հետո պարզ է դառնում, որ Ռաշիդը նրանց քարցւում է Զինվորական դպրոցում: ՀՅԴ Բալկանյան կենտր. կոմիտեի ներկայացուցիչները և Պ. Պողոսյանը պահանջում են Ռաշիդից անհապաղ դուրս բերել նրանց դպրոցից: Ռաշիդը պատասխանում է, որ Նրանք կիեռանան միայն այն դեպքում, եթե Ռիլայի վանրում մնացած զենքերը վերադարձեն իրենց Զինվորական դպրոցը կոմի բատերաբեմ շգարձնելու նպատակով Պ. Պողոսյանը և Կենոնը կոմիտեի երկու ներկայացուցիչներ անձամբ կազմակերպում են զենքերի փախադրումը³⁰: Այս միջադեպից հետո Ռաշիդը ազատվում է զբաղեցրած պաշտոնից³¹:

Ռաշիդի վարրազիծը չեր կարող անհետնեան մնալ: Բուլղար-մակեղոնացի հեղափոխականները վերանայեցին իրենց

²⁸ Լոյն տեղառ, էջ 253:

²⁹ Տե՛ս նոյն տեղառ, էջ 354:

³⁰ Տե՛ս Միջիարևան Օ՛կ., եղբ. աշխ., էջ 45:

³¹ Տե՛ս նոյն տեղառ:

և այսպիս վերաբերմունքը՝ Զինվորական դպրոցի նկատմամբ ցուցաբերվող աջակցությունը Խիազեց:

Թեև բուլղարական բանակի հրամանատարության պահանջով Զինվորական դպրոցը 1907 թ. մարտի 24-ին փակվեց, բայց չյաղարեցրեց իր գործութեառքունքը: Նրա սահերք տեղափոխվեցին բուլղարական սահմանից հետո գտնվող Շուղումստի շրջանի Փելովա վանքը: Տեղափոխությունը սկսվեց մարտի 27-ին և ավարտվեց ապրիլի 9-ին: ՀՅԴ Զինվորական գաղտնի դպրոցը շարունակում է գործել ևս երկու տարի: Դպրոցի կանոնադրության մեջ նշված էր, որ դպրոցը փակվելուց հետո հաստանությանը պատկանող առարկաները կարող են վաճառվել միայն զինամթերք գնելու պայմանով⁵²: Դպրոցին պատկանող հրացանները տեղափոխում են Սոֆիա, որից հետո անարգել բաշխում Արևմտյան Հայութակի տարրեր հայովաճերում: «Այդ զենքերով, շրջաներու ընկերությունը որադրութեան պատրուակով զինավարժութիւն կը ստուգեմ»,- եղում է Ա. Պետիկյանի իր հուշերում⁵³: Այսուհանդեռձ, դպրոցի հիմնական գույքը և սենյամթերքի պաշարները մնացել են Ռիլա վանքի կալվածքում: Շաշիովը դրանք վաճառում է Վանյո Միահիլումին և բուլղար սահմանապահ գործի հրամանատար Գեորգիևին ու անհետանում⁵⁴: ՀՅԴ Սոֆիայի կազմակերպությունը Ռուսանուի և բժիշկ Հ. Տեր-Դավթյանի առաջարկով վճիռ է կայսցեաւմ ահարեկել Շաշիոյին, բայց նրան գտնելու վետրուութեան ապարդյուն են աხցեում⁵⁵: Նա փախչում է Պարսկաստան, այ-

⁵² Տե՛ս Ելուրեք... 3. հատոր, էջ 133.

⁵³ Արմեն. Հ. Պ. Պաշտամությանց Պարանուկրան մէջ (Աստամը Պետիկյանի յաշը), «Հայութից» ամսագիր, 1933, Խորեներք, № 12, էջ 109. Միիրարձն Օհ., եղվ. աշխ., էջ 42. Խոհ Ռուսան, եղվ. աշխ., էջ 414.

⁵⁴ Տե՛ս Ախիթքարեան Օհ., եղվ. աշխ., էջ 42. Խոհ Ռուսան, եղվ. աշխ., էջ 414.

⁵⁵ Տե՛ս Սիսնուան Հր., եղվ. աշխ., զիրք II, էջ 502.

Խոհեմու ծառայության աხցանմ ռուսական բանակում և Նրա լաս-
սին որնէ տեղեկություն այլև հայունի չէ²⁶:

Այսպիսով, Զինվորական գաղտնի դպրոցը հաւայիսացավ հայ-յուղաբարձրական համագործակցության ամենակարևոր արդյունահանություն մեջը, որը սկզբանավորվել է ու դեռևս 1890-ական թվա-
կաններից: Ստեղծվեց ռազմական դպրոց, որում ի մի բերվեց բոլորական սպայական դպրոցի վորքը՝ միաժամանակ և սպաստելով ուսկսերիների գերափառ արվեստի տիրապետուման, զին-
վորական պատրաստվածության և ռազմահայրենացիրական դաստիրակության բարձրացմանը: Զինվորական դպրոցը կար-
ձաւան գոյության ընթացքում տվեց հրամանաւորենք, որուցից
մի բանիսին վիճակված էր մեծ դեր ունենալ հայոց սպատամար-
տի պատության մեջ, ինչպես Գարեգին Նժդեհը, Թոուցիկ Գնոր-
դը, Մատթեոսը, խմբապետ Խորենը և այլք: Զինվորական դպրոցի սահերթ մեծ դեր էն խաղում նաև բոլոր ժողովրդի ճակատագ-
րում: Նրանց մի մասը տարիներ անց մարտնչում էի Գ. Նժդեհի և
Անդրածիկի հրամանատարությամբ գործող հայկական վաշտում և մասնակցում Բաղկանյան 1-ին պատերազմին:

²⁶Տե՛ս Մխիթարյան Օհ., նշվ. տշն. Եթ 46:

СОЗДАНИЕ ВОЕННОЙ ШКОЛЫ АРФ ДАШНАКЦУТОН И ЕЕ ДЕЯТЕЛЬНОСТЬ В БОЛГАРИИ

РЕЗЮМЕ

В конце XIX и в начале XX веков Болгария стала одной из тех стран, где свою деятельность с большим энтузиазмом начала АРФД. В результате военно-политических отношений с болгаро-македонскими революционерами в Болгарии основывается военная подпольная школа АРФД, которая за короткий срок существования имела значительные успехи. Военная школа произвела большое влияние на военно-патриотическое воспитание армянских революционеров. Выпускники этой школы вливались в армянское освободительное движение и полученные знания применяли на полях сражений. Многие из выпускников участвовали в первой Балканской войне, которая стала наилучшим примером взаимоотношений двух народов.

MARIAM HAKOBYAN

THE ESTABLISHMENT OF ARF MILITARY SCHOOL AND ITS ACTIVITY IN BULGARIA

SUMMARY

At the end of the 19th c. and early 20th c. Bulgaria became one of the countries, where ARF initiated its activities with big enthusiasm. As a result of military and political cooperation with the Bulgarian-Macedonian revolutionaries in Bulgaria ARF established an underground military school, which achieved significant successes in its short existence. The military school had a great impact on the patriotic education of the Armenian revolutionaries. The graduates of the school got involved into the Armenian liberation struggle and used the knowledge received at the military school already on the battlefield. Many of the graduates took part in the Balkan War I which became the best example of the relationship between the two nations.

**ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՈՒՆ ՕՍՄԱՆՅԱՆ
ԲԱՆԱԿՈՒՄ (1914-1916 թթ.)**

Առաջին աշխարհամարտի տարիներին Հայոց Անձ եղեռնի իրականացման գործում բուրքական պետության պատասխանատվությունը հիմնավորելու առումով կարևոր նշանակություն ունի և այս օսմանյան բանակ գորակովզած հայ զինվորականության դրույթան, ինչպես և այս երանց հետագա ճակատագիր ուսումնասիրությունը։ Քանի որ բանակն օսմանյան պետության կառնոր կառուցեներից մեկն էր, որի դերը պատերազմի ժամանակ առավել մեծացավ, ուստի նրա կողմից իրականացված հանցագործությունները, մասնավորապես հայ զինվորականության ոչխացումը, նույնպես ենթադրում են պետական պատասխանատվություն։

Սույն հոդվածում կփորձնեմ տարբեր աղբյուրների համադրության միջոցով ցույց տալ հայ զինվորների ոչխացման եղանակների համակարգված լինելը, գեահատել օսմանյան բանակի դերը հայ զինվորականության ոչխացման գործում, անդրադառնալ հայ զինվորների այսպես կոչված «դասալրության» հարցին, որը շահարկվում է Հայոց ցեղասպանության ժիւման բորբական բաղադրականության շրջանակներում։ Նշեմ, որ թեև վերը բարեկված հարցերի վերաբերյալ կան որոշ հրապարակումներ, սակայն հայ պատմագիտության կողմից դրանց մասին համալիր ուսումնասիրություն դեռևս չի կատարվել։

Առաջին աշխարհամարտի ընթացքում օսմանյան բանակի և տարատեսակ հանցագործ խմբավորումների կողմից փուլ առ փուլ իրազործվեց հայ ժողովրդի, և նախ և առաջ պաշտպանության ուժի՝ տղամարդկանց ոչխացումը։ Օսմանյան բանա-

կում հայ զինվորականության մի մասը զոհ գեաց անձարդկային պարագաներին, իսկ մյուս մասը, զինաբափի արտիլերվ, սպանելեց Զորակոչի առաջին իսկ օրերին բրիտոնյաների զինաբափման հրահանքի արդեն տրված էր: Կառավարությունը միայն հրահանգով շշավարարվեց: Իրականացվեցին խուզարկություններ՝ «բարսողներից գեսրեր հայտեաբերելու» և, սարսափի մքննորոտ տաեղծելով, հայերի ընդվզման փորձերը ճնշելու, հայերին միջազգային հայրության առջև որպես դաշտանա ներկայացնելու նպատակով: Թուրքական իշխանություններն անհրաժեշտ համարեցին զինաբափել նաև բանակի հայ զինվորներին, որոնք, երաց կարծիքով, կարող էին «իրենց ըստանիցին պատահած դժբախտությունների լուրջը իմանալով, ըստվզել փախուստ տալ բանակից իրենց գեսրերով և կովել կառավարական ուժերի դեմ»¹:

Տարածված է այս տեսակետը, որ թուրքական իշխանությունների կողմից հայ զինվորականությունը զանգվածաբար սկսել է զինաբափվել և ոչնչացվել 1915 թ. հունվարին Սարիդամիշի ճակատամարտից ու 1915 թ. ապրիլին Վասի դեպքերից հետո, եթե Սարիդամիշում օտանայն ուժերի ջախջախիչ պարտության մեջ մեղադրեցին հայերին, իսկ Վասի ինքնապաշտպանությունը ներկայացրեցին իրք ապառամբություն: Սակայն վավերագրերից ու տարբեր աղբյուրներից պարզվում է, որ իրականում հայերի զինաբափման հրամանը տրվել էր Սարիդամիշի ճակատամարտից առաջ:

Երրորդ բանակի հրամանառար, գեներալ Խօճերի ծածկագիր հեռացրից պարզվում է, որ թուրք-գերմանական զարտեն դաշինքի կերպում և հայերի գորակույից յոթ շաբաթ անց՝ 1914 թ. սեպտեմբերի 24-ին, հայերի զինաբափման հրամանը արդեն

¹ Հոդվածական Ն. Համապատկեր արևմտահայոց մէջ դարձ պատմութեան. Գ Հանոր (1908-1922). Դիքոր. 1975, էջ 358:

տրդել էր²: Այս մասին գերմանական վավերագրերը հաղորդում են: «Թուրք հաշվի էին առնում այն, որ ուստի առնվազն կհասնեն միեցև Մուշ, ուստի վճռվեց: «Եթե Նրանք այլքան հասնելու հետո ուրեմն սկզբում մենք կոչեցանենք հայերին, իսկ որպեսից հետո թող Նրանք փորձեն գալ»: 1914 թ. Խոյեմբերին պաշտոնավես ընդունվում էր, որ Նրանք միայն առիթ են փետրուսի կոտորածի համար, ենու որ այդ առիթը գտնեն, ոչ մի հայի չեն թողնի կենդանի»: Դեպքերի ականատես Ա-Դու գրում է, որ Վանի շրջանի գորքերից կազմված ավելի քան քառա գումարտակներ Խոյեմբերի սկզբին գտնվում էին Բերկրիում, Արաղավան, Արճակում, Խոշարում և Բաշկալեռում: Այս ընթացքում Թյոփիր-Թյոյում տեղի էին ունենում համար կոփվեր, իսկ Պարսկաստանի ուստաձևի գորքը շարժվում էր դեպի Սարայ և Բաշկալ: Նոյեմբերի սկզբին, երբ թուրքերը պատրաստվեցին այս գումարտակները ուսաների դեմ ուղարկել, ևսիս զատեցին հայ զինվորներին և զինարարեցին³: Նոյեմբեր հաստատում է ևսիս Գրիգորիս վարդապետ Պալաջյանը՝ նշելով, որ Թյոփիր-Թյոյի մոտ տևակի ունեցած սաստիկ կոփվերից հետո մի քանի տասնյակ հայ զինվորների «ոյասալցության» պատճառով հայ զինվորականություններ ամբողջապես զինարարի արվելով ուղարկվեց Փոքր Ասիայի խորքերը՝ իբր ճանապարհ շինելու համար: Բայց միտումնավոր գրկելով քավարար սենյից, զգեստից, դեղորայքից՝ աշխատանքային գումարտակների հայ զինվորները ենտղիետ տուից ու ցրամհարուրյունից կոտորվեցին: Իսկ 1915 թ. հուլիս-օգոստոս ամիս-

² Dadrian Vahakn N., The Armenian Genocide: an interpretation, Cambridge, 2003, p. 16.

³ Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիմանագնուների հաղորդագրություններում (1915-1918 թթ.), ըստ կայսերական Գերմանիայի Արքային գրքերը Խոհարարության քաղաքական արքինոյի, Երևան, 2004, N 35, էջ 101: Տե՛ս Յուհանոս Ա. Արքայաց մուտքերը, Երևան, 2008, էջ 44:

⁴ ԱՅ-Թօ. Մեծ պատճերը՝ Կապուրականություն 1914-1915 թականներին, Երևան, 1917, էջ 99:

ներին հայերի համատարած զարդերից հետո դեռ ողջ մնացած բեկորները ևս կրտսորվեցին քուրք զինվորների կողմից էլեվերի հրամանով։ Բաևակից փախուստի դիմած հայ զինվորները ևույսպես հաստատում են, որ Կովկասյան ճակատում ուղմական գործողությունները սկսվելուն պես իրենց զինաքափել և տեղափոխել են աշխատանքային գումարտակներ։

«Դատերազմի հետ միաժամանակ հայտարարվեց ևսև մեծ զինաքը, սրբազն պատերազմը քրիստոնյաների դեմ, ուսոի քրիստոնյա զինվորներին սկսեցին նայել խորք ացրերով և ծուռ բերանելով։ Ծեծ, հայիոյակը, բազմատեսակ զրկանքներ և ապա զինաքափություն»⁷, - նշված է «Մշակում: Հականայ քարոզության համար հարմար առիջ ծառայեց ևսև ուստական բանակի կազմում գործող հայ կամավորական ցոլատների համարանքը»:

Զինաքափումից հետո հայ զինվորները հայտնվեցին օսմանյան բանակի մասունքարարման, ճանապարհներ կառուցող և փոխադրություններ կատարող բանվորական գումարտակներում, որտեղ նրանք ճնշող մեծամասնություն էին կազմում։ Զինվորական երամանատարության հաջորդ քայլե այդ գումարտակներում աշխատող հայ զինվորների համար այսպիսի պայմանների ստեղծումն էր, որոնք կապատեին նրանց ոչնչացմանը։ Շատախի Շուշնամերկ գյուղի վերապրած Խաչող Գրիգորյանը վկայում է որ ձմռանը շալակավորները զնում էին մինչև մեօք ձան միջով անձրնի ու ձյուն ու բորբ տակ։ Տար շոր չկար հազերին, շատերը բորբ ու մերկ էին, որովհետև պատերազմի

⁷ Գրիգորիս Շ. Գարյ ՝ Պալարյան, Հայ գուղքուան, ցովազեթ հայ մարտիրասացուրեննեն, Բնոյին գլուխ Զաք (1914-1920), Երևան, 1991, էջ 63.

⁸ Հարց ցեղասպանությունց Օսմանյան Թուրքիայում, վերացրածների վկայությունները, Փառաւորդերի ժողովածու, Խոր. Ա. Վիրաբյան, հ. Ա. Երևան, 2012, N 24, էջ 55, ևսև Խոյի, հ. III. Երևան, 2012, N 7, էջ 63.

⁹ «Մշակ», Թիֆլիս, 6 բակնոյի 1915, N 121.

դաշտ զեացող զինվորները հաւառմ էին նրանց վրայից նոր սունամաններն ու տար շորերը: Ճանապարհին զեալիս սկսվող չէին տալիս: Ամբողջ օրը անձրին տակ քայլելուց հետո, եթե հաւառմ էին դուր, երանց փոխանակ տանելու կրակի մոտ, որ չորացնեն իրենց շորերը և տարանան, լցում էին մարագեկրում, որտեղ մինչ առավոտ դրդում էին գրտից, և շատերն էլ մահանում: Ճանապարհին երբ կանգնում էին շունչ առնելու կամ որևէ բնուկան պետքի համար, երացանազարկ էին լինում՝ մեղադրվելով փախչելու դիտավորության մեջ: Ավելին, ուստիկանները հայրին առաջարկում էին ազատվելու դիմաց փող տայ, որը առանալուց հետո երացանազարկ անելով սպանում էին⁸:

Օսմանյան բանակում հայ զինվորականության ոչեցացման համար կիրառվեցին բոլոր հևարավոր միջոցները: Հայ զինվորներ ենթարկվում էին ևաս հոգեբանական ճնշման: Ազգային ինքնուրյունը, կրոնը հայույնը, զինաթափումից հետո զրաստի դեր ստանձնելով ստորացնում և վիրավորում էր երանց: Այս մասին բանակից փախուստի դիմած բիրլիստեցի հայ զինվորները վկայում են, որ բոլոր սպաներն իրենց չարաշար աշխատեցրել են, օրերով քաղցած բողել, իսկ ամենահասարակ զինվորներն անգամ իրենց կրոններ ու բոլոր սրբությունները հայույնել են: Զինաթափելուց հետո հավաքել են Երզնիկայի Ծակըքար կոչվող ձորի մեջ և ստիպել փորեկ զանազան տեղեր: Երբ բավական փորեկ են, ստիպել են իջնել իրենց իսկ բացած փոսերի մեջ, որից հետո երացանազարկ են արել: Ուստի իրենց ընկերների այսպիսի վախճանը տեսնելուց հետո զիշերը փախուստի են դիմել⁹:

Բազմարիկ վկայություններ կան այն մասին, որ զրահավար կալարիկունուց հետո զինվորներին ուղեկցում էին ոչ թե զ-

* Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հ. II, N 169, էջ 253:

⁹ Լոյն տեղում, N 34, էջ 71-72, ևս՝ Խոյի, հ. III, N 9, էջ 82-83:

բանոց, այլ ճակապարհին կուտրում¹⁰. Ականց բնակավայրից մի որմնադիր հետեւյալն է վկայում. «Հարքեն գյուղի ներքեռում մի կիրճ կա, որի միջով հոսում է Դարս-Զամին անունը կրող գետակը. Նոր էինք տեղ հասել, եթե ժանդարմունքը մի կողմ բաշվեցին և հրացանեները մեզ ուղղելով՝ սկսեցին կրակել»¹¹. Այսօքի դեպքերի մասին վերապրած Մկրտիչ Հովհաննիսյանը վկայում է, որ ինքը, ազատված լինելով զինծառայությունից, մինևոյն է. Ճերքակալվել և տարվել է զորացոց, որտեղ իր նման տասելակ հայեր կային: «Շուտով մեր կայանի դուռը բացվեց և 39 հոգու տարած: Բառորդ ժամ անց դուռը կրկին բացվեց և նու հովհանն մարդ դուրս հանվեց... Երբ 50 հոգով դուրս եկանք, զորակոցի միջանցքում ժանդարմունքը զազանի նման հարձակվեցին մեր վրա: Մեզ ժանդարմունքով շրջապատված ու միմյանց կապած բաղարից հանեցին: Տարած Կուրաչի Յուրդի գետափ»: Այստեղ էլ շատերը զոհ գնացին ժանդարմունքի արձակած գլուխելորին¹²:

Ալշավագի և Արմեցի շրջակա բնակավայրերից բանկուրական գումարտակներ զորակոչելով շուրջ 2500 մարդ՝ 40 հոգանոց խմբերով դուրս են բերել բաղարից և զինականարել՝ դիակները զցելով զետը¹³:

Ավելին, հայ զինուրներին հավաքելով աշխատանքային գումարտակների մեջ՝ բուրք թժիշկեները և մանրեարանները նրանց վրա են փորձարկել թծավոր տիկին դեմ իրենց ստեծած երևակայական պատվաստակութը: Սակայն իրականում հայ զինվորներին ներարկել են տիֆանիարակ, ոչ մանրեազերծված

¹⁰ «Փայլակ», Շոշի, 21 մայիսի, 1915, N 21, «Արեւ», Ադերսանդրիա, 18 յունիսի, 1915, N 18:

¹¹ Պաշոստին Ս., Պաղոստին Կ., Հայրական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն. Հայոց երկրորդ Գիրք Երկրորդ, Երևան, 2002, էջ 20:

¹² Նոյն ակնում, էջ 21-22:

¹³ «Կառավագական հայոց ազգական պատմություն», 29 ապրеля 1915, N 96.

արյուն։ Նպատակը պարզ է. «պատվաստանյութը» արագ միջոց էր ազատվելու «փորձարկման կենդանի» դարձած հայ զիսվար-բանորենքից¹⁴.

Օսմանյան բանակում գոյության սպառնացող ստեղծված անմարդկային պայմանները, զորակոչվածներին կոտորելու լուրերը, իրենց ազգակից զիսվորների զնշակահարության ականատես լինելը հայ զիսվորներին հարկադրում էին փախուստի դիմել¹⁵։ Կառավարության կողմից բրիստույա զիսվորներից գերեք ու համազգեստը վերցնելը շարժային զիսվորների մոտ ընկալվում էր որպես բրիստույաների հանդիպ հետազա ավելի դաժան միջոցառումների և ախտավիճակից, ուստի այդ հանգամանքը եւ ստիպում էր նրանց փախուստի դիմել¹⁶.

Փախուստի էին դիմում ևան բնակչության կոտորածի սարսափելի տեսարանին ականատես լինելու պատճառով։ Դերջանի զավարի Խումլար գյուղի բնակիչ Հովհաննես Մարկոսյանը, որը աշխատաերային գումարտակ էր տարվել, ականատես է եղել տեղահանված բնակչության կոտորածին։ Նրան և մյուս հայ զիսվոր-բանվորներին ստիպել են իրենց ազգակիցների համար փորել գերեզմաններ, սպանվածներին և անզամ վիրավորներին լցնել մեջը և ծածկել։ Շղիմանալով նուև տեսարաններին՝ հայ զիսվորներից մի բանիսը փախուստի են դիմել¹⁷։ Փախուստի պատճառ էր նաև այն, որ ոռւսական զորքերի առաջնադաշտամբ կանգնեցնելու եպատակով թորքական հրամանաւարությունը

¹⁴ Генонид аրмян в османской империи, сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, с. 438-439.Տե՛ս Խաչատրունիք Ա. Աղաջանյան, Եղիսաբետ Տիգրանի աշխատանքները՝ հայ զիսվորներից մի բանիսը փախուստի են դիմել։

¹⁵ «Հարուսակ», Սոֆիա, մարտի 14. 1915, թի. 2.

¹⁶ Генонид армян. Официальные документы из германских архивов, опубликованные впервые. Вольфганг и Зигрид Густы (составители сборника документов). Под редакцией, с предисл. и прим. Степана Степаняна, Ереван, 2005, с. 70.

¹⁷ Հայոց ցեղապահությունը Օսմանյան Թուրքիայում, հ. III, N 19, եղ 105

հայ գիևվորներին՝ որպես «քննաւորի միա»՝ ուղարկում էր առաջին զիծ՝ ոչնչացման նպատակով²⁸. Վերապրած Տիգրոս Սուրայյանը, ով Բուլանըխից դեպի Հասան-կալա և դեպի Խուտերզում մրերը փոխադրող շալակավորների վերահսկիչն էր եղել, վկայել է, որ Խորու-Դյուզի (Բասեն) կողի ժամանակ իր աշքով է տեսել, թէ ինչպես բուրբական գործը բժնամու դեմ կովելու փոխարեն կրակ է բացել դիրքերում գտնիող հայ գիևվորների վրա: Սա տեսելով՝ հայ գիևվորներից շատերը որոշել են փախչել ուստեղի կողմը²⁹:

Այս և բազմաթիվ նման դեպքեր ցույց են տալիս, որ օսմանյան բանակն իր գործունեության մեջ չի սահմանափակվել միայն ռազմական գործողություններով, այլև ակտիվորեն մասնակցել է նաև հայերի կոտորածներին³⁰: Ավելին, պատերազմական իրավիճակը ոչ թէ խանգարել, այլ նպաստել է, որ բանակը «Հատուկ կազմակերպության» զոկատերի հետ միասին իրականացնի հայ գիևվորների կոտորածը: «Բոլոր հրամանների անմիջականորեն իրականացվում էին բանակի միջոցով, և որոշումներն ընդունվում էին բանակային կառուցելում: Խոսքը վերաբերում է բանակում հայ գիևվորների գիևարափմանը և ոչնչացմանը նպատակով նրանց թիկունքային աշխատանքների տեղափոխմանը»³¹:

Այն, որ հրամանների խնկապես բանակի միջոցով էին իրականացվում, ապացուցում է նաև Երրորդ բանակի տառեն-

²⁸ Գևորգան Հ. Եթե լուեր, բարերը կադարձակեն (վեպ-հուշագրություն), Երևան, 2014, էջ 150-153:

²⁹ Հայոց ցեղասպանության Օսմանյան Թուրքիայում, հ. II, N 103, էջ 153, N 25, էջ 59, N 27, էջ 62. Գեղուց արման: Официальные документы из германских архивов, публикуются впервые. с. 251.

³⁰ Առաքի Ա., Գեղուց արման: механизмы принятия и исполнения решений, Ереван, 2013, с. 123.

³¹ Նույն տեղում:

յորդ գումարտակի անձնակազմի նախկին սպաներից, պաշտոնաբորոջ գեներալ Փերքը փաշայի վկայությունը։ Համաձայն այդ վկայության՝ հայերի հանդեպ ոճրագործությունների համար առավել պատասխանատու անձը Երրորդ բանակի հրամանատար Թամիլն էր, որը իր գեկուցները ներկայացնելիս շափականցրել է որոշ դրվագներ և հայերին մեղադրել բռրքական ուժերի կուծ բոլոր պարտությունների մեջ։ Փերքը փաշան վորձում է արդարանալ, որ հայերի ջարդերի հրականացման մեջ ինքն անձնական պատասխանատվություն չունի. բայի որ պահպանել է Թամիլի կողմից իրեն ուղարկված հեռազերքը. որոնցով հրամայվում էր ջարդեր իրականացնել²². Անկախ նրանից, որ ջարդեր իրականացնելու հրամանը տրվել էր Թամիլի կողմից, հանցանոր հրամանի կատարումը, անուանեալիվ, Փերքը փաշային չի ազատում ջարդերի իրականացման պատահանառվորությունից։

Մի բոլոր սպա, որը ծառայել էր գեներալ Հալիլի հրամանատարության տակ գտնվող ստորաբաժանումներում, հաստատել է, որ իրեց ստորաբաժանման բոլոր հայ սպաները և զինվորները կուտրվել են Հալիլի հրամանով²³. Բացի այդ՝ Ալի Խաններ, որը Սոսուլում Վեցերորդ բանակի հրամանատարն էր, գերմանացի սպաների ներկայությամբ բազմիցս ասել է, որ նա իր հրամանատարության գոտում գուսլող որևէ հայի չի բողեի կենդանի։ Անզամ հպարտացել է, որ հայերին սպանել է իր սեփական ձիորերով²⁴.

Ավելին, բանակում գտնվող հայերին ոչխացելու գործում բոլոր զինվորականների մասնակցության մասին են փաստում

²² Արշամ Թ., Երիտրուքերի գործած ոճքը նարզակորան դեմ. Հայոց ցեղասունությանը և էղիկ զուտմելոց Ծանոթական կարգություններ, Երևան, 2015, էջ 212.

²³ Dadrian Vahakn N., Խցկ. աշխ., էջ 15; Տէ ս Խուլ՛ Ակշամ Տ., A shameful act: the Armenian genocide and the question of Turkish responsibility, New York, 2006, p. 173.

²⁴ Ակշամ Տ., Խցկ. աշխ., էջ 173.

Սարիդամիշի մարտերից հետո՝ 1915 թ. հունվարի սկզբներին, երիտրուրբերի խիստ զաղումն ժողովում ընդունված «տասը հրամանները» Ռուբերդ հրամանում մասնավորապես նշվում է. «Քաջեցի բանակում գտնվող բոլոր հայերին այնպէս, ինչպէս այդ պատշաճ կհամարվի. այս պէտք է վատահվի զիսդորականերին» (ըստգծումը մէքն է – Ա. Բ.)²⁵. Սակայն հարկ է նշել, որ մինչև այս հրամանները տալն էին սկսել զիսարափել և ոչկացնել բանակում գտնվող հայերին. Մեր կարծիքով՝ այս «տասը հրամանները» դեռ 1910-1911 թթ. Սալոնիկում երիտրուրբերի ժողովներում ընդունված հրամանների լրկետքուն էին: Քանզի երիտրուրբերն այս հրամանները, մասնավորապես որեւրդը, արդեն խակ սկսել էին իրականացնել մինչև 1915 թ. հունվարը, իսկ Սարիդամիշում պարսությունն իրին առիր օգուազործելով՝ ավելի զանգվածային էին դարձնել հայերի զիսարափումն ու ոչկացումը:

Բացի այդ, 1914 թ. սեպտեմբերի 23/24-ուն թվազրված թիվ 347 շրջաբերականի համաձայն՝ բանակում ծառայող հայ զիսդորները բուրբերի դեմ շարժման դեպքում պէտք է անմիջապես ուժով ձևավեհին, իսկ հանդուզն զիսդորները՝ սպասվեին»: Կապիտան-լեյտենանտ Հակո Հովհանի 1914 թ. հոկտեմբերի 16-ին հաղորդած տեղեկության համաձայն էլ՝ 1914 թ. հոկտեմբերին արդեն կազմվել էին հույներից և հայերից բարկացած աշխատանքային գումարտակերեր:²⁶

Վերսուշյալ փաստերը ևս ցույց էն տալիս, որ հայերի նկատմամբ միջոցներ էին ձևոնարկվել և որոշումներ էին կայաց-

²⁵ Անձ տերությունները. Օսմանին կարսությունը և հայերը Ֆրանսիական արխիվներում (1914-1918). աշխատասիրությունը Արքուր Դեզերյանի, հ. 1, Երևան, 2005, էջ 28.

²⁶ Արշակ Թ., եղին աշխ., էջ 188:

²⁷ Լույս տեղայում, էջ 189:

վել Խախոցան 1915 թ. հունվարին երիտրուրբերի զաղսնի ժողովում «ռասր հրամանների» ընդունումը։ Որպես հավելում նշեք, որ բանակային ստորաբաժանումներին արտունուրբուն եր տրվում ևան վերացնելու բարը Նրանց ուժեր չեն ենթարկվի կառավարության հրամաններին։ Եթե բնակիչներից որևէ մեկը որևէ կերպ գործեր կարուիրույթին հրամաններին հակառակ կամ մասնակցեր զինված հարձակումների ու խոռվարդունների բանակի կորպուսների, ստորաբաժանումների և կայազորների հրամանատարները պարտավոր են անփրափես գործել զինվարական ուժերով՝ խստագույն ճնշելու ևան դեաքերը։ Խոյ բուռությամբ ուղեկցված խոռվարդունների ընթացքում վերացելու բոլոր օրինազանցերին²⁸։ Այս որոշմանը հաջորդող ամիսներին կատախարությունը նահանջներից ստանում էր հայերի «ապատամքելու» մասին տեղեկություններ, որին էլ հետևում եր ցանքայի որոշման կիրառումը։ Այս իր հերթին հոգ էր նախառարարական հայերի տեղահանությունները արդարացնելու համար²⁹։

Այդուհանդեռձ, հայ «դասալիք» զինվորների թիվն անհամարեալ թիվ էր բուրք և բուրդ դասալիքներից։ «Ավելի շատ բուրքերի մին փախուստի դիմում և հինգ փախչող բուրքին հազիվ մեկ հայ էր ընկելում»³⁰։ Այսպէս, օրինակ, եթե 1914 թ. դեկտեմբերի սկզբին Թուֆրի-Թոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո ամրոց բուրրական զորքը փախուստի դիմեց, զեղակահարվեցին միայն փախուստի դիմած և Եղան զուհում ապաստան գտած 50 հայ զինվորները³¹։ Դասալության խորի վերաբերյալ ավատրություններին վավերագրերը նույնութեան հայտ-

²⁸ Լոյն տեքստում, էջ 199.

²⁹ Լոյն տեքստում, էջ 199-200։

³⁰ Կիբակուրան Զ., Առաջին համաշխարհային պատերազմի և արևմտաստորոտի 1914-1916 թթ., Երևան, 1965, էջ 227։

³¹ Ա-Դօ, Աշկ, աշխ., էջ 101։

նում էի, որ զորքերը բարձիրողի վիճակում էին տառապում և կարիքից այստեղից էլ՝ բազմաթիվ դասալիքները²⁰:

Այս, որ բուրքական բանակում անկարգություն էր տիրում, իսկ զինվորները ոդքալի վիճակում էին, վկայում է հայ Օսմանյան կայսրությունում գերմանական ռազմական առաքելության դեկավար, զեներալ Լիման Ֆոն Զանդերով: Ըստ երա՛ պատերազմի առաջին տարիներին բուրքական բանակում հաշվվում էր 300 հազար դասալիք, որոնք թիկունքում գրադարձում էին ավերով ու բարակով²¹: Ըստ Յ. Բյունցերի՝ բուրք զինվորների դասարարությունը ծայր էր առել հետո զորակոչի առաջին օրերից: Հարյուր հոգաւոց մի խումբ Ուրֆայից Ալեքսակ մարզին և Կարստակով ուղարկելուց հետո տեղ էր հասել ընդամենը երեք զինվոր, երեցն էլ՝ քրիստոնյան²²: Ըստ Լ. Ֆոն Զանդերովի՝ 1915 թ. հունիսին Կարինի շրջանում դասարանում էին հետո բուրք զինվորները, որոնց թիվը 1916 թ. հասնում էր մինչև 30 հազարի, իսկ 1918 թ. բուրքական բանակում արդեկ ավելի շատ դասալիքներ կային, քան զինվորներ²³: Վկայություն կա այս մասին, որ փախուստի դիմած զինվորները բարձրաւում էին լեռները և ապրում ուղևորների ու բարավանեների վրա հարձակվելով, հաշվի չեին առնում հարձակման ենթարկվածի ազգությունն ու կրոնը: Իսկ երաց բռնկվու կառավարության ցաւըների ապարդյուն էին, որովհետև նրանց ձերբակալումը նպաստում էր վրիժառու նոր «դասալիքների» և «ավագակային» խմբերի ի հայտ գալուն²⁴:

²⁰ Österreich-Armenien 1872-1936, Faksimilesammlung diplomatischer Aktenstücke, herausgegeben und eingeleitet von Mag. Dr. Artem Ohandjanian, Bd. VIII, 1918, Wien, 1995, S. 5512. Տես և այս՝ «Մշակ», Թիվ 1, 6 տարիսի 1915, N 121:

²¹ Սովոր Շ., Լիման Ֆոն Զանդերով, «Յրօշակ», Փարիզ, 1929, սեպտեմբեր, N 9, էջ 177-179:

²² Զոնիցերիացի հայուսներ Յազում Բիալցեր. իր հայանապատճենության 40-ամեացին այրին, Շելտար-Շալեա, 1946, էջ 64:

²³ Կիբակուսան Զ., Եղվ. աշխ., էջ 224:

²⁴ Գեղուց արմեն: Օֆիցիալություն գումարում ու գումարություն պահպանության մեջ, 65. Օնմանեան կայսերական բանակի սպայ թիվը Աւստիա ճ-

Ի տարբերություն թուրք դասալիքների՝ խորական վերաբերմունք կար փախուստի դիմած հայերի նկատմամբ։ Նրանք անհամեմատ թիշ «դասալիքներ» հանդերձ՝ պատժվում էին խստազով։ Ուստի՝ այսպես կոչված «դասալրությունը» սուսկ առիթ էր հայ գիևվորներին ոչխացնելու համար։

Հայերի փախուստը պարմանավորված էր ևան այս հանգամանքով, որ Կովկասյան ճակատում ուստական և թուրքական բանակներում հայ գիևվորները կովում էին միմյանց դեմ։ «Տաճիկերը պարտության ամբողջ մեղքը սկսեցին բարդել հայերի վրա. իսկ տաճկահայ գիևվորը, տեսնելով իր առաջ կանգնած ուսւ զրքը, երա շարքերում ևան հայ կամավորներին, ձեռքը սկսեց անզորանալ, չկրակել իր հարազատի վրա. Ճգել զրքի շարքերը, հաճախ անցնել ևան ուստական բանակը», - գրում է Ա. Դուե²⁸։

«Թուրքական բանակում գտնվող հայ գիևվորները լրված էին, բաղցած կամ կիսակուշտ՝ դատապարտված խրամատներ փորելու և ձեռի աշխատանքներ կատարելու։ Սակայն ամեն զիշեր, զրկվելով իրենց գենքերից, հանձնվում էին իրենց դարավոր քշնամու՝ մահմեդական ընկերների բժանաձույթին։ Ուստի կա՛մ փախչում էին, կա՛մ, «քեդել» վճարելով, առժամանակ ազատվում։ Իսկ նրանք, ովքեր այս երկուսից ո՛չ մեկն էին կարողանում անել և ո՛չ էլ մյուսը՝ բնակ չեն հանձնվում և մնում էին փախտուական»²⁹։

Անդրադասեալով հայերի «դասալրության» պատճառներին՝ օտարական խորհրդարանի պատզամավոր Ա. Վուամյանը

պիմանին օրագիրը 1914-1918. Դեյտուր, 1986, էջ 67, Ակամ Տ., եղիլ. աշխ., էջ 198-199։

²⁸ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, Հատուր III, N 19, էջ 104, N 89, էջ 342, N 5 (Համիլզած), էջ 396-397։

²⁹ Ա. Դու. եղիլ. աշխ., էջ 96։

³⁰ Բրայս Ջ. Անցյալական կուռավարության կազմոյն գիրքը Հայոց ՄԵԾ Եղեռնի մասին (1915-1916). Թերթը, 2012, էջ 89։

ներքին գործերի ևախարարության ուղղված իր հեռազբում
նշում է, որ «դասալըռության» համար կար երեք պատճառ: Նախ՝
24 տարեկանից բարձր հայերը գենք գործածել չգիտեին: Նրանք
չեին վարժվել այն զրկանքներին, որոնք իրենց պարտադրվեցին
բանակում: Եվ, ի վերջո, նրանց կրտսական զգացումներն արհա-
մարիվում եին բանակում: Ըստ նրա՝ «դասալիքների» թիվը
սկզբում շատ բիշ էր: Եթէ վերոհիշյալ պատճառները հաշվի
առնվեին, «դասալըռության» անհշան տուկոսը հետապոր կիներ
վերացնել: Սակայն թուրքական կառավարության անվտա-
հությունը հայերի նկատմամբ նոր պատճառներ տռենթեց: և
«դասալըռություն» ընդհանուր ընույթ կրեց: Այդ անվտահութ-
յան հետևաերով հայ զինվորներն ու ժանդարմները զինաթափ-
վեցին, իսկ նրանց փոխարեն այդ պաշտոնները հահձևնեցին
սպառագեն, մողեռանդ խպամահավաներին: Տղամարդկանց
բացակայության պայմաններում համիլիին գտերի մսալը հայ-
կական բնակավայրերում, նրանց գործադրած բնություններն
անպաշտապան բնակչության, մասնավորապես կանանց ու երե-
խաների նկատմամբ, ստիպում եին հայ զինվորներին բանակից
փախչելով նախ փրկել իրենց կյանքը, ապա, նաև վերադառնա-
լով, տեր կանգնել իրենց ընտանիքին, ունեցվածքին ու պատվին:
Ռուսի պետք է դադարել «դասալիք» բարը գործածել հայերի հա-
մար, որնեցից գենքերը վերոցրել եին: Զեկո՞ր էական հանգաւանք
է զինվորի համար: Դասալիք չի կարող լինել նա, ով զինվոր չէ»⁴.

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի տարիներին օսման-
յան բանակ գորակոցված հայ զինվորականությունը գտնվում էր
անմարդկային ու ստորացուցիչ պայմաններում, մահվան մշտա-
կան սպառնալիքի տակ: Հայ զինվորների զինաթափումը, որի
նպատակը նրանց ոչնչացումն ավելի ոյսորին դարձնելն էր,

⁴ Տե՛ս «Ճայրենիք», Բուռնե, ապրիլ 26, 1915, թիւ 49, ուշ ս համ: Պատճի Հ.
Մարտաֆի երկրին մեջ Խանստան Հայուսան, Կ. Պոլս, 1919, էջ 145-148.

սկզբեց հենց այս ժամանակ, երբ Կովկասյան ճակատում ռուսական և բուրբական ուժերի միջև տեղի ունեցած առաջին մարտը ըստ Բացի Խախապես մշակված ծրագրից, 1914 թ. աշնանից ի վեր հայ զինվորականության զինաքափմանը նպաստեց նաև բուրբական կողմից այս մտայնությունը, որ կայսրության տարածքում ռուսական գործերի հայտնելուն պես հայ զինվորները կմիանան Նրանց Բրականում այս մտայնությունը հակահայ քարոզչության արդյունք էր: Իսկ ռուսական բանակի երաժանաւության ենթու գործող հայ կամավորական ցոկատների հաեզամները պարզապես առիթ էր հակահայ քարոզության ուժեղացման, օսմանահպատակ հայ զինվորներին առաջին զիծ ուղարկելու, նրանց զինաքափելու և ոչնչացնելու համար: Հայ զինվորականության ճնշող մեծամասնությունը սպասելոց ոչ թե ռազմածակառներում ռազմական գործողությունների ժամանակ, այլ հենց օսմանյան բանակում թուրք զինվորների կողմից, հաճախ գորակայան հասնելու ճանապարհին: Խոկ աշխատակային գումարտակներում շահազործվելուց հետո՝ մուշ ու խոկ անկյուններում: Օսմանյան բանակի կողմից հայ զինվորները ոչնչացվեցին դիտավորյալ կերպով, ինչը ևս յասելու վկայում է ցղասպանության պետական ծրագրի առկայության: Ինտեղարար նաև պետական պատասխանատվության մասին: Ըստ որում հայ զինվորականության ոչնչացման երահազեները տրվում էին բանակի երամանատարության կողմից և իրականացվում բանակային կառուցյաների միջոցով:

Հայ զինվորականությունը ոչնչացվեց ոչ միայն օսմանյան բանակի մասնաշական զինվորների, ժանդարմենների միջոցով, այլև միտումնավոր կերպով ստեղծված ծանր պայմանների հետևաբարով: Իսկ այսպես կոչված «դասավորություն» առիթ ծառայեց հայ զինվորների զինաքափման և ոչնչացման համար: Բայսա-

կում հայ զիւվորենքի համար արիեսուականորեն ստեղծվող անմարդկային պայմանները հեռահար նպատակ էին հետապնդում՝ նրանց հարկադրելով փախուստի. ինչն էլ օգուազործում էր որպես հարմար առիթ հայ զիւվորենքի ավելի զանգվածային ոչնչացումը կազմակերպելու համար. Մասնակիրապես ուժականությունը էին նրանց կրոնական, ազգային զգացումները, մատևում էին սույնի, ֆիզիկական ոչնչացման, զիւռքափում, ուստի և անպաշտապան բողոքում: Փախուստի դիմած հայրը, ի տարբերություն բուրք դասավիրենքի արժանակում էին ամենախիստ պատճի: Սակայն, այդքանուն հանդերձ, բուրքերի համեմատ հայերն ավելի քիչ էին փախուստի դիմում և մահվան մշտական սպառնալիքի պայմաններում կատարում էին իրենց պարտականությունները:

ԱՌԽԵՆ ԲԱԾԵՆԾՅԱ

ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКИХ СОЛДАТ В ОСМАНСКОЙ АРМИИ (1914-1916 ГГ.)

РЕЗЮМЕ

Во время Первой мировой войны армянские солдаты-призывники Османской армии находились в бесчеловечных и уничижительных условиях, под постоянной угрозой смерти. Сравнение различных источников выяснило, что армянские солдаты были разоружены с осени 1914 года, когда на Кавказском фронте начались первые бои между российскими и турецкими силами.

После разоружения армянские солдаты были отправлены в рабочие батальоны, затем были убиты в массовом порядке. Бу-дучи не в состоянии выдержать особо жесткие условия, часть армянских солдат были вынуждена бежать из османской армии. Следует отметить, однако, что дезертирство из армии больше

совершали турецкие солдаты. Спасение бегством и другие обстоятельства стали поводом для массовых убийств армянских солдат. Координированные методы уничтожения армянских солдат в османской армии свидетельствуют о наличие соответствующей государственной программы и об ответственности турецкого государства в целом.

ASHKHEN BASENTSYAN

THE STATE OF ARMENIAN SOLDIERS IN THE OTTOMAN ARMY
(1914-1916)

SUMMARY

During World War I the Armenian conscript soldiers of the Ottoman army appeared to be in inhuman and demeaning conditions, being under the constant threat of death. By comparing different sources it became clear that Armenian soldiers had been disarmed since the autumn 1914 when the first fights broke out between the Russian and Turkish forces in the Caucasian front.

After the disarmament they were taken to labor battalions where Armenian soldiers underwent various humiliations. After their exploitation in construction engineering all of them were massively massacred. A part of the Armenian soldiers, being unable to withstand the harsh conditions created for them in the Ottoman army, had to flee. It should be noted that the Turkish deserters of the army were more frequent. The escape and other circumstances became an occasion for the Turkish Military Forces Command for massive massacre of the Armenian soldiers. Coordinated methods of destruction of Armenian soldiers testify to the existence of a state program and therefore the responsibility of the Turkish state as a whole.

**ՄԱՅՐ ԱԹՈՌՈ ՍՈՒՐԲ ԷՉՈՒԽԱԾԻ ՏՊԱՐԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 1918-1920 թթ.**

Հայրաստանի առաջին հանրապետության գոյության երկու սույն տարիները, չխայած առվի և հիվանդությունների ծանր պայմաններին, երասարակական գործի տեսակետից կարելի է արդյունավետ ժամանակահատված համարել, ինչու փոքր չեղ Հայ առաքելական եկեղեցու ավանոք, որն իր սույն միջոցներով պահպան տպարանում լույս ընծայեց տարաբնույթ զրբեր¹:

Հանրապետության գոյության տարիներին Մայր Արքոի տպարանի գործունեությունը կապված է կարողիլու Գնորդ Ե Մուրենիացի (1911-1930) անդամ հետ. Այդ շրջանում երկրում գործող բազմաթիվ տպարանների² համեմատությամբ եզրիածնի տպարանը բավականին բերմանվոր գործունեություն է ծավալել: Սույն պետք է նշել, որ նորանկախ հանրապետության բայցա-

¹ «Հայ զիրքը 1901-1920 թթ.- մատեևազիտության մեջ ընդգրկված զբքերի ցանկեր» ան բանի, որ 1918-1920 թթ. Հանրապետությունում տպան 58 զբքերից 23-ը բար է տեսակ հետեւ եղիսածնի տպարանում (Հայ զիրքը 1901-1920 թթ. Մատեևազիտություն, հ. 1, Երևան, 2007, էջ 563-624):

² Հայրաստանի Հանրապետությունում գործող տպարանների և տպագրման զբերի վերաբերյալ պատմաբաններն իրարամերձ կարծիքներ են հայտնում: Այսպիսի խորհրդացած շրջանի պատմաբան՝ Կ. Խուզանելյանը պատճեն է, որ 1918-1920 թթ. երկուում գործել է ընդամենը 6 տպարան, որոնց տպագրմանը է մոտ 10 զիրք (Խուզանելյան Կ. Կոլեկցիոն քառօրյան և Հունգարության (1918-1920), Երևան, 1966, է. 55): Ըստ պատմաբան Գ. Վարդակականի՝ 1918-1920 թթ. ընթացքում Հանրապետությունում գործել է 11 տպարան, որոնցից 4-ը՝ Երևանում, 3-ը՝ Ալեքսանդրովում, իսկ մնացած՝ Վարդակական, Նոր Բարձրավանում, Գյուղական և Կարստու: Տօպոգրոֆի է 36 անոն զիրք (Վարդակական Գ., Մշակույթը Հայրաստանի պատմին հանրապետությունում (1918-1920 թթ.), Երևան, 2003, էջ 125): Առանձին Կարստուառանի և Էնոն Ազգահանձնական կուսակցությունը 2012 թ. կարմիր բարձրավանդակում նշյալ է 20-ից (Տօպոգրոֆի նոր հայրենական, 1771-2012 (նախրին է տպագրության 500-ամյակին), բարտեց, կազմ՝ Ս. Կարստուառան, տվյալ մշակ.՝ Է. Արքանական, Երևան, 2012):

ված տեսությունը, անկում ապրած մշակութային կյանքը չէին կարող իրենց բացասական հետքը զբողել տպարանի գործության վրա: Նկեղեցին մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի շրադարի այդ հաստատության գործունեությունը:

Մայր Արտօնի տպարանն առաջնորդվում էր դեռևս 1917 թ. մայիսի սկզբին Գյուտ վարդապետ Դագարյանի և այլ նշանավոր հոգխորականների կողմից մշակված և նույն թվականի հունիսի վերջերին ընդունված միաբանական կազմությունը², որում կար 17 հոդվածից բաղկացած ենթին հրահանգ տպարանի համար: Անկախ պետականության գոյության տարիներին հաստատության կառավարումն իրականացնող տեսուչները եղել են երկուսը՝ Արտել ծ. վարդապետ Դամայանը, ով կառավարել է տպարանը ընդմիջումներով և Աշոտ Էպիփանոս Շայանցը:

Նշյալ կանոնադրությամբ առաջնորդվելը ոչ միայէլ կառավակարգում էր տպարանի գործունեությունը, այլև պատուախանությունը էր սահմանում տեսչի առաջ՝ բարեխմճորեն կառարելու իր պարտականությունները և պարբերաբար միաբանական ընդհանուր ժողովին տեղեկացնելու ֆինանսական խնդիրների մասին: Դրանք հիմնականում լուծվում էին ժողովի որոշմամբ՝ տպարանին գրամարենք տրամադրելու ճանապարհով:

Այս տարիներին տեսուչների ներկայացնած հաշվեմերից պարզ է դրանում, որ տպարանը կանգնած է եղել լուրջ ֆինանսական և բազմաթիվ այլ խնդիրների առաջ: Հասկապես մեծ ջափոռ զգացվել է թորի պակաս:

Թեև դեռևս 1919 թ. մայիսի 23-ին «Հայաստանի աշխատավոր» թերթում տպագրված էջմիածնի պետականացման վերաբեր-

² ՀԱԱ, ֆ. 57, գ. 1, գ. 459, թ. 6, 26-29. Կանոնադրությունը 1920 թ. լույս է տևել նույն տպանին գրություն տևերով (Մայր Արտ Ար. Էջմիածնի միաբանական կանոնադրություն, Էջմիածն, 1920, 16 էջ):

յալ հորդվածում, Մայր Արքորի հասցեին հևշեցված մեղադրանքների թվում, ըստզօնում էր նաև այն, որ «ուպարտան ունի մեծարանակ բռույթ, որուք անխիսամ էն, իսկ մի մասն էլ Վաղարշապատի շուկաբում լիովի վաճառում էն այն դեպքում, եթե Երևանի պետական հաստատությունները բորբ առվ էն ապրում»⁴: Սակայն իրավիճակը մի փոքր այլ էր:

Թույլը բերվում էր մեծ մասամբ Թիֆլիսից, որը ճանապարհների անապահովության, խառնակ իրավիճակում հարոցվող դժվարությունների պատճառով երբեմն չէր հասկում Հայաստան: Նույնիսկ գումարի առկայության պայմաններում՝ վագոններով թորերի ամիսներ շարունակ մնում էին սահմանին: Այդ պայմաններում դրակի երկիր հասցենու համար Սիւնդը երբեմն ոիմում էր զարտույի ճանապարհների⁵: Հաստատության աղքատութեակ հատկապես արտացոլված է 1919 թ. հունիսի 5-ին իրականացրած բրատան ցուցակագրման տվյալներում⁶: 1920 թ. հունվարի 20-ին Ամենայն Հայոց կարողիկոսին ուղղված գեկուցագրում իրավիճակն առավել ցայտում ներկայացնում է տպարանի տևողությունը վարդապետը: Նա գեկուցագրի վերջում հույս էր հայունում, որ «բերուած թղթով հետրանվոր կինի գունէ երառուարակել 1921 թ. օրացոյցը»⁷: Եթէ հաշվի առնենք այն հաեզամաները, որ Եզմիածնի շափագրական մատյանների⁸ թիվն անցելու էր մեկ տասնյակից, իսկ երանց ծավալը 15 թերթից պակաս չէր, և, բացի այդ, Եզմիած-

⁴ «Հայաստանի աշխատավոր», 23 մայիսի, 1919 թ., N 57, թ. 1. Վայեկազրիք հայ ելեկեցու պատության, զիք 4. Մայր Արքու Ս. Եզմիածնի գրքենուեարքունիք տառչին հաերագետության տարիներին. Երևան, 1997, էջ 136-137:

⁵ ՀԱԱ. ֆ. 57, ց. 2, գ. 588, թ. 6:

⁶ Լոյն տեղում, ֆ. 56, ց. 14, գ. 365, թ. 18:

⁷ Լոյն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 588, թ. 3 զրք.:

⁸ Ըստ պրու, այս տարիներին հրառություններ և մեկը մյուսին վայեկինած «Արքան»-ի ու «Եզմիածն»-ը ևս ունեն իրենց առանձին մասնակիները (ՀԱԱ. ֆ. 56, ց. 15, գ. 815, թ. 7, թ. 11-12):

Նույն հայուսիված լավորակ թղթի մի մասն ուղարկվում էր Զինվորական շտաբի և Ներքին գործերի մինիստրության կարիքների համար, իսկ մի մասը փոխանակվում էր⁹, ապա պատկերն առավել բան ամբողջական է դառնաւմ:

Բավարար չափով չեին վարձատրվում ենան տպարամի բանվորները, որն էլ, իր հերթին, ոչ միայն դանշադեշնում, այլ երրեմն անհնարին էր դարձնում կատարվող աշխատանքը: Տեսուչ Արսեն ճ. վարդապետը 1919 թ. դեկտեմբերից մինչև 1920 թ. հոկտեմբերի ընկած ժամանակահատվածում տպարանի գործունեությունն ամփոփող իր գեկուցման մեջ շրջանում կատարված աշխատանքի անհաջողությունը հիմնականում բացատրում էր աշխատող ձեռքի պակասով և նորած բանվորների անբարեխիճ աշխատանքով. ուզեր ձուլարանում աշխատելու համար 7000-8000 ոուրի օրավարձ էին պահանջում¹⁰: Եվ դա այս դեպքում, եթե ձուլիչ մերինան նորմալ գործի դեելով տպարանը կարող էր ամսեկան 90 վոր տառ ձուլել և մատակարարել հանրապետության տպարաններին՝ տարեկան ապահովելով 1 մլն ոուրի շահույթ¹¹: Տպարամի բանվորների այդօրինակ պահիվածքը պայմանավորված էր ոչ միայն գումարային խնդիրներով, այլև նրանց նկատմամբ տպարանի կառույցիների ու վանականների ցուցաբերած անարդար վերաբերմունքով¹²: Այս ամենին գումարվում էր նաև ցրտի պայմաններում առանց վառելավայտի աշխատելը, որը չեր կարող լրացրցից չագոյն բանվորների աշխատանքի և այն պատշաճ կատարելու պատրաստակամույշյան վրա:

Աշխատող ձեռքի պակաս հասուկապես զգացվում էր 1920 թ. բուլց-հայկական պատերազմի ժամանակ, եթե զենքեր բոլոր բան-

⁹ ՀԱՅ, կ. 57, գ. 2, գ. 588, թ. 1:

¹⁰ Նոյն տեղում, գ. 627, թ. 9-10:

¹¹ Նոյն տեղում:

¹² Մատենադարան, Լ. Ս. Ասիցցանի թուն, թոր. № 261, գալ. 11:

վորսերը զորակոչվել էին բանակ։ Այդ հանգամանքը նույնիսկ տպարանին կանգնեցրեց խպատ փակման եօրին։ Այդ էր պատճառը, որ Արտեն ծ. վարդապետը 1920 թ. նոյեմբերի 18-ին կարողիկուսին ուղղված իր գրության մեջ խնդրում էր միջնորդի Գլխավոր շտաբի առաջ՝ տակի Արտաշես Մելքոնյանին (36 տարեկան, մի ժամանք կորած, աշխից տկար) և կազմարար Հայրապետ Սուրիանինին բանակ զգորակոչելու համար¹³. բայց որ այլապես տպարանի փակումն անհուսափելի կլիներ:

Տայած այդ դժվարին որությանը, եթե վանական կառավարությունը ոչ միայն գումար, այլ օրական ընդումենքը 2 փութ ցորեն դժվարությամբ էր կարողանում տալ բանվորներին¹⁴, լինում էին դեպքեր, երբ հաշվի առնելով խառնակ իրավիճակում տպարանի կայուն գործունեության մեջ աշխատողների ունեցած ներդրումը, նրանց տրվում էր հավելյալ գումարներ՝ «կյանքի բանկության» պայմաններում գոնե իրենց գոյությունը պահպանելու համար¹⁵.

Տպարանին լուրջ ֆինանսական խնդիրների առջև էր կանգնեցրել տպագրության հետ կապված ծախսերը։ Գրքերը լույս էին տեսնում փոքր տպարանակով, իսկ գոյացուծ շահույթը չէր ապահովում տպագրության համար նախատեսված ելքի գումարի գույն 50 տոկոսը։ Ունեցած մանր պատմերները՝ բանկիների, բուկլետների, ինչպես նաև մասնավոր հաստատությունների, վարչությունների համար տարկած հայտարարությունները, շատ թիվ էին, իսկ եղածներն էլ կատարվում էին առանձիկով¹⁶. Բայց վերաբերում է «Արարատ» ամսագրի հրատարակումից ստացված շահույթին,

¹³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 588, թ. 9.

¹⁴ Առյու տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 2194, թ. 15.

¹⁵ Խոսքն առավել քայլ վերաբերումն է գուշար Սմբատ Ճուղյանին, ով բազմության ծառայությունը հաջվի առնելով Արարատական ընդհանուր ժողովը որոշում կարագրեց նրա կենսաբոշակն ավելացնել 25 տորիան («Կավերացք...», էջ 66-67).

¹⁶ Տպարանն ուներ նաև առանձին մասնակիություն (ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 815, թ. 2-4):

ապա պետք է նշել, որ անկախության տարիներին այս լուրս տեսավ ընդամենը երկու համարով՝ 1918 թ. հռուխար-դեկտեմբեր և 1919 թ. ապրիլ-դեկտեմբեր ամսացույցերով և չնչին տպարանակով։ Սա հաստատվում է 1920 թ. հունիսի 29-ին վանական վերստուգիչ հաստատությունների վերատեսուչ Բնիկ ծ. վարդապետի՝ Վանական խորհրդին եերկայացրած հաշվետվությամբ, որտեղ իմի են բերված «Արարատի» վերջին տարիների հրատարակությունների նպատակով կատարված ծախսերը¹⁷։ Նույնը վերաբերվում է նաև ամսագրի անմիջական շարունակությունը հաւայիսացող՝ 1920 թ. հռուխարից հրատարակվող նոր պաշտոնարերը «Եղմիածնին»¹⁸։

Բացի տեսուսական լուրջ խևճիրներից, տպարանը գերծ չէր մնում նաև երրին անհիմ բախումներից, որոնք պակաս բացստական ազդեցություն չէին ունենալ հաստատության աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու վրա։ Առվաճ առավել բան վերաբերվում է դեռևս 1917 թ. սեպտեմբերի 16-ից տպարանի տեսուչ հաւայիսացող Արտել վարդապետի¹⁹ և Բարդուղիմեոս Եպիսկոպոսի միջև ծագած վեճին։ Կապված Եպիսկոպոսի անունն «Արարատ» ամսագրի բաժանորդների ցուցակում «պատշաճ տեղում» չգրելու տեսչի կատարած բայլի հետ²⁰։ Դա հանգեցրեց երան, որ այդ խառնակ իրավիճակում տպարանի տեսուչը՝ առողջական խևճիրների պառատարանությամբ, 1918 թվականի փետրվարի 20-ին հրաժարվեց պաշտոնից²¹։ Պայքար էր գտնվ նաև մոմավա-

¹⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1163, թ. 16.

¹⁸ Թերրի հրատարակության ընդհանություն հետո այս մերկեց վերահրատարակվել 1944 թ.՝ որպէս «Շաշտուռական անսովոր նայապետական Արտօն Ա. Եղմիածնի» («Եղմիածնի» (1944-1973): Առողջապահություն, խմբ.՝ Ա. Հանիկյան, Շ. Թողարկողն, կազմող՝ Ա. Կոնդիկյան, Եղմիածնի, 1975):

¹⁹ Նոյն տեղում, գ. 496, թ. 1-2.

²⁰ Նոյն տեղում գ. 533, թ. 1-4.

²¹ Նոյն տեղում գ. 530, թ. 1:

ճառության «մեխաշնորհը» վերցելու համար²². Լուսարարապետ Ալանիան արքային կուպուր պայքար էր մդրում մոմի վաճառքի իր տևօրինության տակ դեկու համար:

Միաբանական ժողովի որոշմամբ՝ 1918 թ. մարտին տևող Նշանակված Աշոտ Եպիսկոպոս Շիյանցին ոչ միայն շնորհվեց լուծել առաջադրված խնդիրները և մեղմել առանց այս էջ գոյություն ունեցող լարված իրավիճակը, այլ իր պաշտոնավարութիւն երկու ամիս անց՝ 1918 թ. մայիսի 11-ին, ևս հանդես եկալ Սայր Աթոռի տպարանը փակելու առաջարկությամբ²³:

— 1918 թ. մայիսի 18-ին կայացած Միաբանական ժողովի 43-րդ նիստում հաշվի առնելով Աշոտ Եպիսկոպոսի բերանացի բացառությունները ու պատճառաբանությունները, տպարանի գործունեությունը Սայր Աթոռի շահերին վնասաբեր համարելով՝ որոշվեց՝ «անորոշ ժամանակով փակել տպարանը. Զայած այս որոշմանը՝ հաստատությունը փաստացի շարունակեց հաջորդ ամիսներին ևս յս բախով գործել, 1919-1920 թթ. զուց ավելի արգանքեր. բայ 1918 թ. ողջ ընթացքում՝ Այդ տարիներին տպարանը կարդացավ Ֆինանսական ճգլածամբ հաղթահարելու ևս մեկ ձևնապարի գունեն: Խոսքը 1920 թ. հունիսի 23-ին Կարողիկոսի բույսով վուրանվությամբ տպարանի տեսչի և ՀՀ ֆինանսների մինիստրության ներկայացուցիչների միջև կայացած համաձայնության մասին է, որով տպարանը գունելու էր ֆինանսների մինիստրության տրամադրության տակ: Այսինքն՝ տպարանը աշխատացնելու ուժով ծախսն ըսկեամ էր մինիստրության վրա, որի համար Սայր Աթոռն ամսական տռանալու էր 175000 ռուբլի²⁴: Տպարանի ակտին:

²² Նոյն տեղում, թ. 56, գ. 14, զ. 365, թ. 14-17 292:

²³ Նոյն տեղում, թ. 57, գ. 2, զ. 530, թ. 3-4, 6 292-

²⁴ Նոյն տեղում թ. 57, գ. 2, զ. 588, թ. 4-5:

գրիծութեալության ապացուցը այն մեծարժեք գրերն էին, որ տպագրվեցին այդ տարիներին²⁸:

Խողիքիւրի այս ամբողջ համակարգում Սայր Արոնի տպարանն ուներ նաև կարևոր ձեռքբերում: Խոսքը վերաբերում է վերը նշված ձևով մերեւային: Բայս այս է, որ, այս երրեմն գործի գյելով, հաստատված կարողանում էր ապահովել ոչ միայն իրեն անհրաժեշտ տառերի բանակը, այլև տառեր վաճառել դրանք ոչ միայն Երևանում գործող տպարաններին, այլ նաև Ամերկում տեղական որբակոցների վարչությանը, որը, թեև թիվ, բայց որոշակի շահույթ էր ապահովում:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության խորհրդախացումից մի քանի օր աხց՝ դեկտեմբերի 17-ին, Խորհրդային Հայաստանի իշխանության բարձրագույն մարմներ հանդիսացող Հայաստանի ենթախոյսական կոմիտեի հրապարակած դեկրետի համաձայն, պետականացվեցին հանրապետության տարածքում գունդող բոլոր հոգևոր և կորական հիմնարկությունները, այդ թվում՝ Սայր Արոն Ս. Էջմիածնի տպարանը:

²⁸ Հայ պիտը 1901-1920 թթ. էջ 563-624:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ТИПОГРАФИИ ПЕРВОПРЕСТОЛЬНОГО СВЯТОГО ЭЧМИАДЗИНА В 1918–1920 ГГ.

РЕЗЮМЕ

В развитии культурной жизни Первой Республики Армения не малейший вклад внесла церковь Св. Эчмиадзина. Своими средствами здесь было опубликовано множество книг.

В течении этого периода по сравнению со многими существующими типографиями, типография Эчмиадзина развивала весьма продуктивную деятельность, а церковь приложила большие усилия, чтобы деятельность этого учреждения не останавливалась.

Несмотря на неблагоприятные условия типография не прекратила свою деятельность и стала одним из самых известных центров культурной жизни Первой Республики Армения.

GAYANE GHAZARYAN

THE PRINTING HOUSE ACTIVITIES OF THE MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN IN 1918–1920

SUMMARY

During the existence of the First Republic of Armenia for two and half years the Holy See of Etchmiadzin, had a big contribution to the development of the cultural life having published a series of books by own means.

During this period the printing house of St. Etchmiadzin as compared to others existing in the Republic carried out productive activities and the Church made great efforts for the printing house not to cease its activities.

Despite the destroyed economy and seriousness of the situation in the country the printing house did not cease its activities and by the significance of the published books it became one of the popular cultural centers in the First Republic of Armenia.

**ԼՈՌՈՒ ՉԵԶՋՔ ԳՈՏՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԽՆԹԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
(1919–1920 թթ.)**

1918 թ. դեկտեմբերյան վրաց-հայկական պատերազմի ավարտից հետո՝ 1919 թ. հունվարի 9–17-ին, Թիֆլիսում կայացած կոնֆերանսի որոշմամբ Լոռին հարաբարարվեց չեզոք գոտի: Այս ընդունվում էր Ալավերդու պղնձահանքերը, ավելի քան 40 գոտի՝ գերազանցապես հայաբնակ, և երկարուղու մոտ 30 մղոնակոց հաստվածք՝ 6 կայարաններով: Չեզոք գոտու տարածքը բաժանվեց Ռուգունակարի, Վորոնցովիկարի և Ալավերդու տեղամասերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ 4–5 վոլոստ՝ զավառակ-զյուղախմբեր: Ալավերդու տեղամասն ուներ 4 վոլոստ՝ 11 զյուղերով, Ռուգունակարինը (Ներկայումս՝ Օձուն)՝ 4 վոլոստ՝ 11 զյուղերով, Վորոնցովիկայինը (Ներկայումս՝ Տաշիր)՝ 5 վոլոստ՝ 15 զյուղերով¹:

Չեզոք գոտուն հատուտովեց հայկական և վրացական խառը վարչակումը՝ Շաշկանկիցների վերահսկողությամբ: Վերջինների միջամտությամբ 1919 թ. փետրվար-նոյեմբեր ամիսներին Հայաստանի և Վրաստանի միջև ստորագրվեցին մի շարք այլ պայմանագրեր՝ ահկախությունների փոխադարձ ճանաչման, դիմակազմական հարաբերությունների վերականգնման, երկարուղային բռների փոխադրման ազատ տրանզիտի, զուծված ինսդիրենքի խաղաղ ճանապարհով կամ արքիտրածի միջոցով լուծելու վերաբերյալ:

Թվում էր, թե վերոնշյալ պայմանագրերը հիմք հանդիսացան միջամտական հարաբերությունների կարգավորման համար, սակայն տարածաշրջանից բրիտանական գորքերի հետա-

¹ Խաչարյան Կ. Հ., Սուրիական Հ. Կ., Բարյացան Գ. Ա., Խորենացին Հայաստանի և ԼՇԽ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թվականներին, Երևան, 2015, էջ 26–27.

նալոց, հետո՝ 1919 թ. դեկտեմբերին, կրկին սրբեցին հայ-վրացական հարաբերությունները, և որպես առիթ հանդիսացավ Լոռու Շեղոր գոտում տիրող իրավիճակը: Այնուեղ առկա անիշխանության հետևանքով աճում էին հանցագործությունները՝ զանգվածային թալասը, սպասությունները:

Ըստ Վրաստածի գլխավոր կոմիսար Գ. Լորդկիպասիձեի՝ ուստիկանությունը ոչ միայն չէր կարողանում կանխնել ապօրինությունները, այլ ըստհակառակը՝ նպաստում էր դրանց: Իսկ ՀՀ ՆԳ նախարար Ա. Գյուլիսանդականը գույում էր, որ վրացական կողմը պարզապես չէր ցանկանում վերացնել գոտում առկա անիշխանությունը, որպեսզի այնուեղ գործ մոցնելու համար, որպես պատեհ առիթ, օգուազործեր անիշխանության գործուեցնեն: Այս իրավիճակում 1919 թ. դեկտեմբերին Թիֆլիսում հրավիրվեց հայ-վրացական խորհրդաժողով: Գ. Լորդկիպասիձեն ներկայացրեց Շեղոր գոտու կառավարման մասին նոր նախագիծ: Ըստ այդմ՝ նախատեսվում էր ունենալ 56 ռատիկան՝ 18 վրացի, 18 հայ, 14 հույն, 6 բուրբ-թաքար, սակայն միլիցիապետը պետք է լիներ ազգությամբ վրացի: Հայկական պատվիրակությունը դեմ արտահայտվեց միլիցիապետի նշանակման սկզբունքին²:

Շնայած հարցի կարևորությանը՝ վերոնշյալ խորհրդաժողովի նիստերը գումարվում էին երկու շաբաթը մեկ անգամ: Այն ուղեկցվում էր երկուստեք մեղադրանքներով, իսկ Շեղոր գոտու բնակչության խնդիրները շարունակում էին մնալ շրուծված:

Մինչ հայկական և վրացական իշխանությունները միմյանց մեղադրում էին իրադրությունն ապակայունացնելու մեջ, տեղի բնակչությունը ստեղծված իրավիճակից գուրս գալու ուղղությամբ ձեռնարկեց առավել վճռական և կառուցդական քայ-

² ՀԱԱ, ֆ. 201, գ. 1, գ. 548, թ. 49:

³ Նոյն տեղում, գ. 250, թ. 9-12:

լիր: Այդ ձեռնակումներից էր տեղական ինքնավարության ձևափորումը:

1919 թ. դեկտեմբերի 14-ին Ռուգուկար գյուղում գումարվեց տարբեր գյուղերի ներկայացուցիչների ընդհանուր ժողով: Գյուղերի 114 ներկայացուցիչների մեջ կային նաև ռուսներ և հոգիներ (բուրք-բարաները հրաժարվեցին մասնակցել): Ըստրվեց 11 հոգուց բաղկացած խորհուրդ՝ Ա. Արանեսյանի նախագահությամբ և 5 հոգուց բաղկացած վարչություն՝ Ա. Զուրարյանի նախագահությամբ⁴. Վարչության քարտուղար ընտրվեց թշ. Գ. Մելիք-Գրիգորյանը⁵: Ըստհանուր ժողովին ընդունեց մասնակոր Խոդատիրության (կալվածատիրություն) վերացման մասին որոշում, նորընտիր վարչության օժանեց օրենքով և ախատեսված բոլոր լիազորություններով⁶. իսկ տեղական ինքնավարության (չեմշտե) դե յուրէ ճանաչելու համար որոշեց Երևան գործուղել Ա. Երգեկյանին. Թիֆլիս՝ Ա. Զուրարյանին:

Չեզոք գոտում տեղական ինքնավարության ստեղծմամբ լուծվում էր սոցիալ-տեսուսական, իրավական և քաղաքական նշանակության մի շարք խեղիքներ: Սոցիալ-տեսուսական ծանր դրությունը հաղթահարելու համար անհրաժեշտ համարվեց համախմբել հասարակությանը, համազործակցել պետական կառուցների հետ և ուժերի համատեղման արդյունքում հաղթահարել սովոր, համաձարակը, ապօրիենտացները: Ինքնավարության գոյության քաղաքական կարևորությունը կայանամ էր երանում, որ որքան հայերը լինեին ինքնակազմակերպված, այսպիս

⁴ Համաշխառման վերուժակ կազմը, հավաեադար, Եթուարկել է փոխադրյան քանի որ արթիվամին որոշ փաստաքարտերում երանց սպառազուրբանների կողին գրիան է վաշուարյան նախագահ՝ Ա. Արանեսյան, վարչության անդամ՝ Գ. Մելիք-Գրիգորյան, քարտուղար՝ Ա. Թումանյան (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 425, թ. 16-17):

⁵ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 250, թ. 16, «Աշխատավոր», 18 դեկտեմբերի 1919:

⁶ «Հայոց», 6 ապրիլի 1920:

ավելի իրատեսական էր դառնում Շեղոք գոտու վերջնական կարգավիճակի հարցի լուծումը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության:

Հարկ է նշել, որ տվյալ ինքնավարության ձևափորման գործընթացում ՀՀ տեղական ինքնակարավարման մարմինների ստեղծման աշխատանքները համակարգող Ներքին գործերի նախարարության (այսուհետև՝ ՆԳՆ) Համայնքարարային բաժնի դերը գրեթե խսպան բացակայում էր. ՆԳՆ արձանագրության համաձայն՝ նախարարությանը հայտնի չէր. թէ ում կարգադրությամբ. Այսուհետեւ ինչ միջոցներով. որ կուտակցությունների մասնակցությամբ են կազմակերպվել վերոհիշյալ ընտրությունները⁶.

Տեղական ինքնավարության ներկայացուցիչ Ս. Երգելյանը, գալով Երևան, Հայաստանի իշխանություններից ակենքաղում էր տեսլեսական և դիվանագիտական աջակցություն: Նա 1919 թ. դեկտեմբերի 23-ի կառավարության նիստում ներկայացրեց Շեղոք գոտու սոցիալ-տեսլեսական, կրթական ոլորտների մասին գեկուց, որի համաձայն՝ ստեղծված ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ էր այլ համակրեսերում (Շնորհ. Վորոնցովի կայում) ևս ձեսփորել տեղական ինքնավարության մարմիններ, ամիսը 2 անգամ հրատարակել թերթ, որը պետք է լուսաբաներ ինքնավարության հարցերը. կազմակերպել թշշկական խմբեր, գեմսառվյական փոստ, ստեղծել սերմացուների՝ գարուցուել պահեստներ. ավելի քան 100 ծույն ունեցող զուլդերում բացել դպրոցներ (10 դպրոց), դադարեցնել տուրքերի զանանմը՝ միևնույն նոր հունար, ցուցաբերել պարենային օգնություն (50 վագոն այսուր):

Վերոհիշյալ նիստում ՀՀ գործադիր իշխանությունը, դէ յուրէ ճանաշելով Շեղոք գոտու տեղական ինքնավարությունը, հավա-

⁶ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 250, թ. 6, 16.

Նույակ արժանացրեց այս գեկուցքը և, ըստ այդմ էլ, որոշեց Ս. Երզեկյանին դրամագրել 200 հազ. ռուբլի: Ավելին, կառավարության նախագահ Ա. Խատիսյանը ինքնավարության գործունեության առիվն հայտնեց իր գոհունակությունը. «Կառավարության իր ամսոյ 23-ի նիստում լսելով Զեր Երկայացուցիչների գեկուցումը, որոշից յանկացնել Զեզօր Գուլյ գեմատային կարիքների համար 200.000 ռ. որպիսի գումարը յանձնում է վարչութեան անդամ պ. Սուրեն Երզեկյանին:

Կառավարութեան անունից իմ գոհունակությանն եմ յայնում և ցանկանում եմ յարառու գործունեություն և լիակատար յաջողություն տեղական ինքնավարութեան գործերում: Կառավարությանը չի զբանայ բաց բոլորն պատճ առիթը իր աջակցությունը բնորմանոր դարձնելու համար»⁷:

Սակայն Վրաստանի կառավարությունը Զեզօր գույու ինքնավարության նկատմամբ տրամադրություն այլ վերաբերմունք ուներ: Ակզենտական շրջանում վրացական կառավարությունը ողջունեց բնակչության նախաձեռնությունը, բայց մեկ ամիս աեց՝ գունելով, որ վաղաճամ է ինքնավարության գոյությունը, իր Երկայացուցիչը՝ Գ. Լորդիկիապատիձեին, հրահանգեց՝ արգելել ինքնակառավարվող մարմինների գործունեությունը: Ինչորկէ, վրացական կողմը, ի դեմք ինքնավարության, տեսում էր հայկական իշխանությունների հենարանի, որի միջոցով ավելի կամքապետ վեր վերջիններին ազդեցությունը:

ՀՀ ՆԳ նախարար Ա. Գյուլիանդանյանը և նախարարի օգնական Ս. Մանասյանը դիմեցին ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ խնդրելով դիվանագիտական ճանապարհով լուծել Վրաստանի կողմից ինքնավարության իրավական ճանաշ-

⁷ Առյ. տեղում, թ. 5-6, 16:

⁸ «Հայոց», 6 ապրիլ 1920:

ման հարցը⁹. Այս կապակցությամբ Ս. Մանասյանը զբում էր. «Իմ կարծիքով եթե վրաց կառավարութիւնը ուզում է իրօք վերացնել աևարխիան և զալիք բարդութիւնների առաջն առնել և կանչնել այդ բարդութիւնները. որու միակ միջոցն է այն, ինչ որ իրենք՝ ժողովրդի ներկայացուցիչներն են առաջարկում. ընդունել նոր հիմնարդ գենտուան, ճանաչել նրան որպես ժողովրդից ընտրւած մարմին, միշտիան յանձնել նրան և բողնել մեր և վրաց ներկայացուցիչների գերազոյն հսկողութիւն միջն չեզօք Զօնայի հարցի վերքեական լուծումը. սա կլինի միակ ելք»¹⁰. Հարկ է նշել, որ ինքնավարությունը Թիֆլիսում ուներ իր ներկայացուցիչը՝ ի դեմ Հովհ. Թումանյանի¹¹:

Սակայն վրացական իշխանությունները չըեկուեցին. ուստի՝ Հայաստանի կառավարությունը, հիմնախնդրի շուրջ առաջացած լարվածությունը բուլացնելու և պատահելով. Շեզօք գոտում իր ներկայացուցիչ լիազոր կոմիսար Արմենակ Մամիկոնյանին հրահանգեց լուծարել ինքնավարության մարմինները. 1920 թ. փետրվարի 9-ին Ա. Մամիկոնյանը, հաւոյիանելով վարչության անդամների հետ, առաջարկեց գործել ոչ որպես տեղական ինքնավարություն, այլ՝ որպես զբուղացիական խորհուրդ, որին ի պատասխան, Ա. Աբովյեսյանը ՆԳ և այսարարությանն ուղարկեց հետևյալ գրությունը. «Հայեած այն հանգամանքին, որ զեմստային վարչութիւնը, որպես Շեզօք զօնայի ժողովրդի կողմից օրինաւոր ընտրեալ իր և նրա հաւատարմատար արդեն իր պաշտօնի մէջն է և գործում է զեմստային կանոնադրութեան իրաւական սահմաններում և միաժամանակ ևս որպես այդպիսին պաշտոնապես ճանաչած է Հայաստանի կառավարութեան

⁹ ՀԱԱ, թ. 201, գ. 1, գ. 250, թ. 17:

¹⁰ Լոյն տեղում, գ. 425, թ. 4.

¹¹ Լոյն տեղում, թ. 16-17:

կողմից, սակայն, քանի որ միևնույն օրու վրաց կառավարութիւնը չէ ճահացում գօնայի Զեմստուօն, ուստի ինըը՝ պ. կոմիսարը հրահագ ունի. Եթէ՝ պ. մինստրի, կողմից ազդել մեզ վրայ, որպեսզի մենք այսուհետև գործները ոչ որպես զիմստուային փարզութիւն, այլ որպես զիւղացիական խորհուրդ կամ այսպիսի մի քան, որը ձևակերպել չկարողացաւ ինըը՝ պ. կոմիսարը¹²: Կարշության հաղորդագրության մեջ Ա. Սամիկույանի հայտարարությունը որակվեց «տարօրինակ», որը խախտում էր ժողովրդի կողմից ընտրված, Հայաստանի կառավարության կողմից իրավական ճահացում ունեցող մարմնի իրավունքները: Ըստ վարչության հայիագահի՝ այդ ամենի արդյունքում Խոեմացվում էր ՀՀ կառավարության հեղինակությունը՝ ի հետու Վրաստանի, որի «... ցանկութիւնը, կարծես, հրամայական և վճռող է հասդիսանում նաև այսպիսի տարրական հարցերում որպիսին գեմսուի մուծումն է՝ ամեն տեսակ իրաւունքներից և ինքնազործունեութիւնից զուրկ մի տերիտորիա որպիսի Զեզօր զօնան է ... մեր կազմակերպութիւնը չի կարող ուրիշ քան լինել, քան այն, ինչ որ նա փաստացի է, այն է գեմսուվո, անկախ այն քանից կանաչի արդեօք Վրաստանի կառավարութիւնը, թէ՝ ոչ»¹³: Ինքնազործության անդամներին անգամ կառավարությունից պահանջեցին հետ կանչել կոմիսար Ա. Սամիկույանին:

Ինքնավարության կազմակերպման գործում գզայի է ՀՀԴ կուսակցության անդամների ներդրումը: Արխիվային փաստարդյուրից մեկում կարդրում ենք. «Պետք է առանց ուշացնելու գործել, քանի դեռ խայտառակութիւնը որոշ սահմանի մէջ է: Պետք է զրել Երեսն՝ ընկերներին, որ անմիջապես յնտ կանչելս այդ ողորմելուն (Ա. Սամիկույանին – Ա. Ա.): Դա պահանջում է ժո-

¹² Լույս տեղբար. գ. 250, թ. 3 և շրջ.:

¹³ Լույս տեղբար.

դովլոյի, շահերը, մեր գործը, կուսակցութեան հեղինակութիւնն ու Հայաստանի Հանրապետութեան պրիստիմբ։ Որքան շուտ, այսրան լաւ։ Շուապեր¹⁴։

Շուտով՝ 1920 թ. մարտին, Հայաստանի կառավարությունը փոխեց ինքնավարության լուծարման մասին իր դիրքորոշումը (կարծում էեր, դա առաջին հերթին պայմանավորված էր ինքնավարության ներկայացուցիչների անզիջող կեցվածքով), հետևաբար, հարթվեց ինքնավարություն-լիազոր կոմիսար տարածայնությունը։ Դեռ ավելին, 22 ԱԳ նախարարությանն ուղղած իր գեկուցազրում Ա. Մամիկոնյանը գրում էր Շեզոր գոտու բնակավայրերում ինքնավարության կարևորության մասին։ Ըստ երա-ազգայինակցությունը կարու էր ժողովրդական այսպիսի մարմնի, ինչպիսին տեղական ինքնավարությունն էր, որի արժանավոր և բանիմաց անդամների ազդեցությունը կարող էր փրկել ժողովրդին, իսկ վրացական կառավարությունը փորձում էր ամեն կերպ խոշնդրուել ինքնավարության և միլիօնիայի կազմակերպմանն ուղղված աշխատանքները¹⁵։

Հարկ է եշել, որ Հայաստանի բարձրագույն իշխանություն հանդիսացող մարմինը՝ խորհրդարանը, հանդես ցնեակ Շեզոր գոտու ինքնավարության իրավական ճանաչման մասին պաշտոնական որևէ հայտարարությամբ։ Սակայն պաղամենոյի Հոդային և վարչաօրենսդրական հանձնաժողովների անդամների իրենց միացյալ նիստում որոշեցին՝ ա. ճանաչել ինքնավարության օրինականությունը, բ. ցուցաբերել կյուրական աջակցություն, գ. վարչությանը փոխանցել ոստիկանության դեկաֆարման իրավասությունները, դ. վերջինիս տալ կոռպուտացիայի իրավունք (ըստ որի՝ վարչությունը համարվելու էր ևս 3 անդամով)։

¹⁴ Նոյն տեղում, թ. 1 և շրջ.։

¹⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 425, թ. 7 և շրջ.։

է. Վրաստածի հետ համաձայնություն ձեռք բերելուց հետո կազմակերպել եղան ընտրություններ¹⁶: 1920 թ. մարտի 19-ին ՆԳՆ Համայնքադաշտային բաժիննը խուսիրդարանի հաևձնաժողովների ռենցման մասին տեղեկացրեց Նախարարների խորհրդին՝ ավելացնելով «մենք միջնորդել ենք Արտաքին գործոց Սիեհառութեան առաջ Վրաստածի հետ բանակցութիւն մտնելու համար վերայնչեալ տեղավարութիւնը ճանաչելու նպատակով եռա կողմից»¹⁷:

Շաբաթ իրավական կարգավիճակի հարցի շուրջ հայ-վրացական առճակատմանը՝ ինքնավարությունը ծավալեց այսպունական գործունեություն պարենավորման, դարրոցական, բժշկասահմատարական, արդարադատության, անվտանգության պահպանման ոլորտներում՝ զյուդացիությանը բաժանելով սերմանցությունը կազմակերպելով բժշկասահմատարական խմբեր, դատավարություններ, մասնակցելով ոստիկանական համակարգի ձևավորմանը և այլն¹⁸. Համաձայն վարչության 1920 թ. մարտի 15-ի նիստի որոշման՝ ինքնավարության պաշտոնիաները խնդրեցին ՆԳ նախարարությանը միջնորդել կառավարության առջեւ ազգաբնակչության կարիքների համար ուղարկվող ապրանքներն ու մթերքների ազատել մարտային վճարումներից. ինչպես նաև՝ վարչությունը պահպան կազմակերպելու համար համապատասխան պահպանական աշխատավորությունը առաջնային կազմակերպման համար բարութելիանի զինամուրությամբ առենձվեց ընտրական հումանաժողովը (ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 250, թ. 32): Արդիմաշնի ֆաստարդյուն (որը բժագրիած է 1920 թ. մայիսի 31-ով), եղանակ չէ՝ Շնորհ գուստ որ շրջանի ընտրությունների մասին է խոսը: Ամենայն հազարամյամ բարեկարգությունը, հաշվի առնելով այն, որ 1919 թ. դեկտեմբերին Շնորհ գուստ ու բոլոր օգոստերի ենթակառացիների և մասնակցիների նիւթափարության մարմինների ընտրություններին, ցանկաւում կին եղան ընտրություններու համարել արդյունք նույն գործություն ունեցող տեղական ինքնառաջարարական մարմինների խորհրդի և վարչության կազմը:

¹⁶ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 443² թ., թ. 409 և շրջ.

¹⁷ «Նախարար», 6 ապրիլի 1920.

յանը բուլլատորել դիմել ՀՀ մյուս նախարարություններին՝ տևառական կարիքների համար նրանցից համապատասխան վարկ ստանալու համար: Ի պատճենական՝ ՆԳ նախարարությունը դիմեց Ֆիեսանսների նախարարության առևտրաարդյունաբերական բաժնին՝ առաջարկելով բավարարել վարչության՝ եղյալ մարատուրքիրի վերաբերյալ պահանջը՝ իր հաղորդագրության մեջ շեշտելով, որ Շեզոր գոտին ՀՀ անրաժանական մասն է և նրա ազգաբնակչության կարիքների բավարարումն իրենց անմիջական իրավասությունն է: Բայց 1920 թ. ապրիլի 3-ին դիմելով Մասնատարության և վերաշինության նախարարությանը՝ ՆԳ նախարարությունը պահանջեց այսուր և աղ փոխադրել Շեզոր գոտի¹⁸:

Վրաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կերպած պայմանագիրը¹⁹, Բորցալու գավառում վրացական ինքնառվարության գոյությունը, ինչպես նաև Շեզոր գոտում բոլշևիկների ընդհատակցա գործունեությունն առավել ընդգծեցին ինքնառվարության կարևորությունն ու անհրաժեշտությունը:

1920 թ. մայիսյան ապառամբության ընթացքում Վրաստանի մննչնիկյան իշխանությունները դիմում էին խարդախ բայլերի՝ տեղի ոռուական գոտուների (Վորոնցովկա և այլն) ընակչությանը «զրգուելով» հայկական իշխանությունների դեմ²⁰, ինչպես նաև առանց զիւկած ուժերի կուտակման և կառավարության կողմից մի շարք գաղտնի որոշումների ընդունումով՝ բարոզական, խաղաղ ձանապարհով փորձում բնակչությանը զցել իրենց ազդցության տակ:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 201, գ. 1, գ. 250, թ. 19-26:

¹⁹ 1920 թ. մայիսի 7-ին Խորհրդային Ռուսաստանի և Վրաստանի միջև կերպած պարմանագիր համաձայն Ռուսաստանը պարտավորվում էր Թիֆլիսի նահանգը՝ իր բոլոր գավառներով, և Բաքումի մարզը ճականաց որպես Վրաստանի անդամանական մաս:

²⁰ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 425, թ. 70:

Շեզոր գուտում սոցիալական խմբումների, վրացիների հավակնությունների դեմ պայքարելու համար ՀՀ կառավարությունը ձեռնարկեց մի շարք քայլեր, որոնցից եր 1920 թ. մայիսի 16-ին Նախարարների խորհրդի հաստատած օրենքով Շեզոր գուտու ինքնավարության վարչությանը փոխարինարար 500 հազ. ռ. հասուկացումը²¹.

Հայտնի է, որ դեռևս 1920 թ. մարտի 23-ին Շեզոր գուտու վարչության նախագահը դիմել էր ՆԳ նախարարությանը՝ խնդրելով որամական օգևառքուն՝ բացատրականում գրեթե «Անհրաժեշտ ենք համարում բացատրել, որ ի նկատի ունենալով, որ գենտուային վարչութիւնը Լոռու չեզօք զօնայում հանդիսանում է միակ հասարակական վարչական մարմինը, որի վրայ ընկալում է այդ երկրամասի իրաւական-տեսության բոլոր ֆունկցիաների կիրառումը, ուստի և նրա գործունեութիւնը տարածում է վարչական-տեսության բոլոր ասպարեզներում, հետևաբար և նրա ծախսերը միևնույն տեղական միջոցների կազմակերպումը լինելու են բազմատեսակ»²².

Հարկ է նշել, որ ինքնավարության մարմինների հետագա գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, այդ բնույթ վերջիններիս առեցլող պաշտոնական գրությունները սակավաթիվ են: Ենթադրում ենք՝ պայմանավորված Հայաստանի առաջին հանրապետության համար ստեղծված բարյ ռազմաքաղաքական իրավավիճակով, այս գործել է մինչև 1920 թ. սեպտեմբերը:

1919-1920 թթ. Շեզոր գուտու պատմության ամբողջացման համար անհրաժեշտ է ավելացնել, որ, օգտվելով Հայաստանի համար ծանր իրադրությունից, մասնավորապես՝ թուրք-հայկական պատերազմից, 1920 թ. սեպտեմբերին վրացական կառավարութ-

²¹ Առյ. տեղում, գ. 250, թ. 27.

²² Առյ. տեղում, թ. 20.

յան դեկապարի պաշտոնակատար և նորանշանակ Պաշտպանության նախարար Գ. Լորդկիպանինին Վրաստանում ՀՀ դիմագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին հայտնեց Շեղոր գոտին Երևոն մասի բաժնանելու իր կառավարության տեսակետը, սակայն Հայաստանի կառավարությունն այս մերժեց²³.

1920 թ. նոյեմբերին 13-ին, Երբ հայկական բանակի պարտությունն այլևս ակնհայտ էր, քուրքական գորբերի մուտքը Լոռի կանխելու մտահետքությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ըստունելով վրացիների առաջարկը, Թիֆլիսում համաձայնագիր ստորագրեց բառ որի՝ վրացական գորբերը մուտք էին գործելու Շեղոր գոտի, սակայն դա Վրաստանին տարածքի պատականելության առումով նոր իրավունքներ չեր տալու։ Համաձայնագիրը ստորագրվեց երեք ամիս ժամանակով և վերջինիս պայմանների կատարմանը հետևելու համար 1920 թ. նոյեմբերի 19-ին վրացական հրամանատարությանը կից ՀՀ հատուկ լիազոր նշանակվեց հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Գևորգ Խատիսյանը²⁴։

Ի վերջո 1921 թ. նոյեմբերի 6-ին Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանի միջև ստորագրված երկկողմ պայմանագրով որոշվեց և հստակեցվեց հայ-վրացական սահմանագիծը։

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ Լոռու շեղոր գոտու տեղական ինքնակարությունն իր կարձատն գոյության ընթացքում իրեն դրսերեց որպես հայ ազգաբնակչության շահերը պաշտպանող ներկայացուցական մարմին։

²³ Նոյն տեղում, գ. 607, թ. 11։

²⁴ Սորբասյան Հ., Լոռու Շեղոր գոտու պատկանելության վերաբերյալ հայ-վրացական տարածքային վեճը և ՀՄԽՀ պատարին գործերի ժողովածոր (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար), «ՀՀ ԳԱԱ Գիտակցրաբան միջազգային կենտրոն» Գիտական հոդվածների ժողովածոր», Երևան, 2014, էջ 250։

МЕСТНОЕ САМОУПРАВЛЕНИЕ В ЛОРИЙСКОЙ
НЕЙТРАЛЬНОЙ ЗОНЕ (1919–1920 ГГ.)

РЕЗЮМЕ

Нейтральная зона была образована после короткой грузино-армянской войны в январе 1919 года, управлением занималась состоявшая из грузин и армян администрация. Тем не менее, в нейтральной зоне царили анархия и беззаконие, для борьбы с которыми армяне организовали органы местного самоуправления. Были избраны совет самоуправления и исполнительный орган. Правительство Республики Армения де-юре признало самоуправление, а грузинское – отвергло. И все же орган самоуправления сумел повлиять на решение некоторых социально-экономических проблем.

ANNA ASATRYAN

THE LOCAL SELF-GOVERNMENT IN THE NEUTRAL ZONE OF
LORI (1919–1920)

SUMMARY

The neutral Zone was formed as of January 1919 after Georgian-Armenian short war and was governed by the administration comprised of Armenians and Georgians. Nevertheless, anarchy and lawlessness prevailed in the Neutral Zone and the Armenians formed local self-governed bodies to fight against them. The council of self-government and an executive body were elected. The Government of the Republic of Armenia recognized the self-government de jure while the Georgian government rejected it. Still the self-government was able to influence on the solution of some social-economic problems.

ԽՈՐՃԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌ ԿԱՍՍԱՐԻ «ԿՐՈՆՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՍԱՔՈՏԱԺ» ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐՈՒՄ

Գեղարվեստական գրականության աղբյուրագիւռական արժեքի հարցը պատմաբանների շրջանում զիտական բախովվեծի առարկա է հանդիսանում: Որոշ պատմաբան հետազոտութեր գերադասում են ուսումնասիրության առարկային առնչվող գեղարվեստական գործերի ընդհանրապես շրջանցել, կամ էլ դրանց հպանցիկ անորադառնալ: Պատմագիտական ուսումնասիրությունների ավանդական մոտեցումները կիրառվում են առավելապես իրական փաստերի վերլուծության հիման վրա: Եվ սա բնական է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ պատմաբանի առաջնահերթ խնդիրներից է համարվում փաստերի իսկության, դրանց արժանահավաստության հարցը. Այս առումով՝ գեղարվեստական գրականության գործերում ստեղծվող երևակայական պատկերները, շատ հաճախ մուացածին իրադարձությունները և դրանց կամայական մնկնաբառությունները, որպես կանոն, չեն համապատասխանում պատմական ուսումնասիրությունների հետազոտական ոգուն և խնդիրներին: Բայց սա, իսկարկե, այն դեպքում, եթե խոսքը գլուխ է հետազոտական ավանդական մոտեցումների և պատմագիտական հետաքրքրության ներ շրջանակ ներկայացնող հիմնախնդիրների մասին:

20-րդ դարի երկրորդ կեսին եվրոպական պատմագիտության մեջ իսկական հեղափոխություն իրականացրած ֆելունենլոցիական ուղղության հիմնադիրները (Արտիկի Ֆելուն, Ֆելիքս Բրոդել և այլոք) ճանապարհ հարթեցին պատմագիտական

ուսումնասիրությունների նոր ուղղությունների համար, որոնցից մեկն է առօրեականության պատմությունն է: Այն հիմնովին փոխեց պատմական իրադարձությունների հետազոտության վերաբերյալ և այսկին պատկերացումները: Ակսվեց մեծ կարևորություն հաղորդվել ոչ միայն պատմական փաստերին, այլն պատմական ժամանակաշրջանի ոգուն: Իրադարձությունների ենոցինալ գնահատականներին: Մովորական մարդն իր կեցաղով, կյանքի պայմաններով, առօրյա ապրումներով դարձավ պատմական ուսումնասիրության օբյեկտ:

Այս համատերառում փոխվեց նաև պատմագիտական ուսումնասիրությունների աղբյուրագիտական հենքի վերաբերյալ մոտեցումը, ընդլայնվեց աղբյուրագիտական բազան: Մտավոր և նյութական գործունեության ցանկացած արգասիք, որ կարող էր պատկերացում տալ նշված հարցերի վերաբերյալ, համարվում էր պատմագիտական հետազոտության լիիրավ սկզբնաղբյուր: Բնական է, որ գեղարվեստական գրականության նույնականացումը չէին կարող լինել: Եվ բեպես այս բնույթի սկզբնաղբյուրների նկատմամբ գործում են վերաբահումներ, այդուհանդեռ սրանց դերն ու նշանակությունը առօրեականության պատմության ուսումնասիրություններում անցկահատելի է:

Գեղարվեստական գրականության գործերի գիտականության հարցի շուրջ 1960-ականներին գիտական բանավեճ է ծավալվել նաև խորհրդային պատմագիտության մեջ: «Նոր և նորագույն պատմություն» և «ԽՄԿԿ պատմության հարցեր» պարբերականների եզերում ծավալված թևսարկումների ընթացքում արտահայտվում էին տարածեռ կարծիքներ այս հարցի շուրջ: «Դառնարականների մի մասը կտրականապես մերժում էր գրական ստեղծագործությունների՝ պատմագիտական սկզբնաղբյուր հա-

մարմելու իրավունքը. իսկ մյուս մասը գտնում էր, որ օրինակ, կուսակցության պատմաբանն իրավունք չունի անտեսել բոլոր այն սկզբնաբարեւթերը, որոնք այս կամ այն կերպ ներկայացնում են կուսակցության բազմաքանիք գործունեությունը և հասարակության գաղափարական կյանքը¹:

Հայուսի է, որ Խորհրդային Միուրյունում մշակույթի ընդհանրապես գունվում էր կուսակցական մարմինների խուսափույն հոկուրության ներքո: Գրականությունը հանդիսանում էր կուսակցական գաղափարախոսության տարածման հզոր բարձական գործիք, այն ևան հասարակական գիտակցության կառավարման կարևոր միջոց էր: Ըստ այդմ էլ գրական-գիտարվետական ստեղծագործությունները ներարկվում էին խուսափույն գրաքննության: Եվ այս համատերսում անհնար կյիեեր խորհրդային առօրեականության պատմության համակողմանի ուսումնասիրությունը առանց այդ ժամանակաշրջանի հակառակայության և ոչ այնքան հայտնի ստեղծագործությունների ուսումնասիրության:

Նշենք, որ խորհրդահայ ստեղծագործողների գրական ժառանգությունը նույնպես անսպառ ելույթ է հաղորդում Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության վերաբերյալ: Բազմարիվ հեղինակներից առանձնացնենք Լեռ Կամսարին (1888-1965) հաշվի առնելով նրա ստեղծագործությունների առանձնահատկությունները և խորհրդային վարչակարգի հանդեպ վերաբերությունը:

Մի քանի տվյալ գրողի կենսագրությունից: Ան Կամսարը գրական գործունեությունը սկսել է հայրենի Վանում՝ 1910 թ.:

¹ Манкевич И. А. Литературно-художественное наследие как источник культурологической информации. http://www.ifarcom.ru/files/Monitoring/mankevich_lit_hud_nasledie.pdf

1915 թ. ապրիլ-մայիսին երիտասարդ գրողը մասնակցել է Կաևի հերոսական ինքնապաշտպանությանը, իսկ ոռուական գործերի նահանջից հետո զարթել է և հաստատվել Երևանում։ Ռւսուց չորրյանը գուզահետ՝ Արևելյան Հայաստանում ևս նա շարունակել է զբաղվել գրական գործունեությամբ՝ աշխատակցելով Երևանի, Թիֆլիսի և Բարձի հայկական թերթերին։ Իր ֆելիտուններում գրողն ի ցուց էր դնում հայ հասարակության թերի կողմերը, նորք հումորով ծաղրում կուսակցություններին ու տարբեր հայունի անհատությունների։ Հայաստանի Առաջին Հանրապետության օրոր (1918-1920 թթ.) երգիծաբանը պահանջված գրողներից էր։ Այդ մասին են վկայում տարբեր թերթերում («Զանգ», «Աշխատանք», «Հայաստանի ճայ» և այլն) նրա տպագրած ֆելիտոնն-պատմությունները։

Լեռ Կամսարը վկայում է, որ 1920 թ. դեկտեմբերին ողջունել է Հայաստանի Հանրապետության խորհրդայինացումը և ոռոսական գործերի մուտքը Երևան։ 1928 թ. սեպտեմբերի 7-ին 24(5)⁴ կենսունիմին ուղղված Խամակում ևս զրում էր. «Ես բոլշևիկներու առաջին մուտքը Հայաստան մեծ ուրախությամբ ընդունեցի հիվանդության մահման մեջ։ Բժիշկ! Գրոյին, որև այդ լուրը կրերեք ինձի, ըստ. «Չափազանց ուրախ եմ Բոլշևիկներուն ինչ ըլլալը չեմ զիտեք թեև, բայց զիտեմ, որ անհրաժեշտ էր անզամ մը մարրվեր սա դաշխակցական ճահիճը»։ Սակայն Հայաստանի հեղեղումի իրականացրած զանգվածային բռնամնշումները, ձերբակալությունները շատերի բվում խռովում է նաև Երգիծաբանի հոգին։ Զերբակալվածների մեջ մեծ թիվ էին կազմում նրա մտերիմները։ Ռւսուի նա ողջունում է 1921 թ. փետրվարի 18-ին հակախորհրդային ուժերի կողմից Երևանի գրավումը, մասնակցում

⁴ Սովորական Հ. Կ., Լեռ Կամսարի նորանարդ ֆելիտոնները, «Ընթաց», 2014, N 3, էջ 214։

բանուարկված գործիչների ազատմանը ապա բոլշևիկների կողմից բանուում սպասված տասնյակ գործիչների քաղաքացիությանը և աշխատակցության է ապատամբների կազմակերպած ժամանակավոր կառավարության՝ Հայրենիքի փրկության կոմիտեի պաշտոնաթերք «Ազատ Հայաստան»-ին՝ այդուղ տապագրելով երկու ֆելիետոն։

1921 թ. ապրիլի 2-ին խորհրդային ուժերի կողմից Ներևանը վերագրավելուց հետո բոլշևիկյան վրեմջնություննից խուսափելով՝ հազարավոր հայորդների հետ Լեռ Կամսարը ևս անցելում է Պարսկաստան և երկու ամիս հուստուատվում Թալիրիցում։ Այստեղ նա վայելում է Ասորպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թալևյանի (1866-1948) հովանավորությունը։ Միևնույն մայիսի 24-ին Թալիրիզի Արակյան բատրուում հաջողությամբ թեմադրվում է երա «Կասկածուամուսին» կառակերգությունը։

Փետրվարյան ապատամբության պարտությունից հետո Խորհրդային Հայաստանի իշխանությունները քայլեր ձեռնարկեցին Երևանի ու շրջակայից հեռացած բնակչության իրեց ընակավայրեր վերադարձելու նպատակով։ 1921 թ. ապրիլի 10-ին Հայեղեկոմի հրապարակած «Ներման մասին» դեկրետի համաձայն ներում շնորհվեց հակածորհրդային ապատամբության մասնակիցներին՝ բացի Հայրենիքի փրկության կոմիտեի անդամներից։ Վերջինի Արտակարգ հանձնաժողովի կողեզրակցության բարձր հրամանատարական կազմից և խմբապետներից, իսկ Հեղեկոմի ապրիլի 23-ի «Ծնդհանուր ներման մասին» դեկրետով վերացվեց նաև այս սահմանափակումը²։ Ըստ մտավորականության բվում հայրենիք վերադարձավ նաև Լեռ Կամսարը՝ աշխա-

² ՀՄՆՀ դիմունությի և հրամանների ժողովածու, պրոլ 2, Էջմիածին, 1921, էջ 10-12, 20-21։

տանըի անցնելով «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի երգիծական բաժնում:

Իր սուր զրջի պատճառով երգիծաբանը շատ շուտով դասվեց «անընդունելի հեղինակների» շարքին, ուստի նրա ստեղծագործությունները մեծ դժվարությամբ էին տպագրվում խորհրդահայ մամուլում: Ստալինյան բոնությունների օրերին՝ 1935 թ. Խոյեսթերին, ձերբակալվեց ևսև Լեռ Կամսարը: Նրա դեմ ուղղված հիմնական մեղադրանքերից եր 1918 և 1921 թվականներին «դաշկակցական թերթերում» տպած և հակախորհրդային որակված երեք ֆելիետոնները: Դրանք էին՝ 1918 թ. «Հորիզոն» թերթում հրատարակած «Նիկոլայ Գարի և ամակը Ռուսակը Լենինին», 1921 թ. «Ազատ Հայաստան» թերթում տպագրած «Կրոնների պատմություն» և «Սարուած» ֆելիետոնները: Առաջինը 2008 թ. վերահրատարակվել է երգիծաբանի «Փանոց» և ինայնառուի աշխարհի «Ժողովածուում»: Ինչ մյուս երկուսը տեղ չեն գտել նրա ստեղծագործությունների ժողովածուություն: Դրանցում մնանակները երգիծաբանն իրեն բնորոշ անլիրեալ ծաղրով պատկերում է Հայաստանի առօրյան խորհրդայնացմանը հաջորդող սուածին շարաքներին⁴:

Լեռ Կամսարին անդրադառնում ենք հետևյալ պատճառներով: Առաջին՝ ինչպես արդեն նշել ենք, կոմունիստական կուսակցության համար զրականությունը հանդիսանում էր իրենց քարոզական հզոր գործիք: Լեռ Կամսարը այն եզակի հեղինակներից էր, որի գործերը հենվելով մի շարք ստեղծագործությունների վրա, կարող ենք իրավամբ դիտարկել որպես հակաքարտգչություն: Պատահական չե, որ ևս համարվում էր պետության և կուսակցության համար «անբարեհույս» զբո՞յ: Երկրորդ՝ Լեռ

⁴ Սուրիանցն Հ., Լեռ Կամսարի մոտացման ֆելիետոնները. «Գիտուրյան աշխարհում», 2015, N 1, էջ 20-23

Կամսարի՝ որոշ դեպքերում շատ նույր բռղարկված, որոշ դեպքերում՝ բացահայտ բաղարական սատիրան, ժամանակաշրջանի արատավոր բարբերի հանդեպ դիպուկ ծաղրը ներդաշնակում է խորհրդային իրականության դրվագների վառ նկարագրություններին, ինչը նրա ստեղծագործություններն իսկական բացահայտում է դարձնում առօրեականության պատմաբանի համար: Սույն հոդվածում հեղինակի երկու ստեղծագործությունների օրինակով («Կրոնների պատմություն», «Սարուտած») կփորձնեք ներկայացնել խորհրդային կյանքի մի քանի դրվագներ, որոնք ոչ միայն նկարագրել է հեղինակը, այլ նաև սրանց վերաբերյալ արտահայտել է իր հետաքրքիր ընևաղատական մոտեցումները: Նշենք, որ այս ստեղծագործությունները տպագրվել են 1921 թ. Գիւտրվարի 18-ին Երևանում և շրջակացրում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո ապատամբերի կազմակերպած ժամանակավոր իշխանության՝ Հայրենիքի փրկության կոմիտեի «Ազատ Հայաստան» պաշտոնաթերքի 2 համարներում:

«Կրոնների պատմություն»² ֆելիետոնում հեղինակը դիպուկ ծաղրի է եւթարկում Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո հասրապետության ներքաղաքական իրավիճակը: Սոցիալ-դեմոկրատների, սոցիալիստ-հեղափոխականների, ՀՅԴ կուսակցություններում բաղարական խմբումները (Հայ ժողովրդական կուսակցությունն ու հայ ռամկավարները ընդհարապես լրել էին), ճամբարափոխության դրվագները իր սուր գրիչով Լեռ Կամսարը համեմատում է վերամարմնավորման («Ռեժիսկարենացիա») ավանդույթի հետ, որը տարածված էր հինարեւելյան բազմաթիվ կրոնական ուսմունքների մեջ («Աչ դաշ-

² «Ազատ Հայաստան», Երևան, 10 մարտի 1921, N 17.

Նակցական մը կոմունիստ դառնալու համար եախ պիտի ձախ ըլլա, հետո դառնա ետք՝ Աջ դաշնակցությանը, այսինքն՝ իր նախկին կերպարանը հայինէ, ապա քայլերն ուղղե դեպի կոմունիզմը»): Այստեղ հեղինակին հաջողվել է յուրօրինակ ստեղծագործական հետքը միջոցով Վեր հաւել ոչ միայն հասարակության քաղաքական համակարգում տեղ գտած արատները, այլև մարդկային հոգու արատներ, որոնք կարելի է տեսնել ֆելիտուսի ենթատերառում: Այսպէս հոգու անելով կրուսի պատմությանը՝ հեղինակը կուսակցական պատկանելիությունն ըստ եռյան նույնացնում է հավատամբի հետ, և այդ հավատամբը չտեսնելով ժամանակի կուսակցական գործիչների մեջ՝ երանց ճամբարափոխության ձգուումը հեգնաերով համեմատում է վերամարմնավորման հետ: Գաղափարական անսկզբութայուրյուսից զատ՝ ֆելիտուսում կարող ենք դիտարկել նաև պաշտեամուլության և բուլամորթության սուր քննադատություններուն, որոնք տարածված էին և 1920-ականներին, և, հատկապես, 1930-ականներին:

Խորհրդային Հայաստանում իրականացվող ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, որը հաճախ ուղեկցվում էր բոլշևիկ գործիչների ամենառողության հասնող քայլերով, խոր դժգոհություն առաջացրեց բնակչության շրջանում: Այդ օրերին կոմունիստների մասին ժողովրդական լայն խավերի ընկալումն արտացոլված է Լեռ Կամսարի «կոմունիստներն են երկրային դրախտի միակ ժառանգները» տողերում:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմանը հաջորդող օրերին Հ. Յ. Դաշնակցության ձախ քնի՝ «ձախ ինտերնացիոնալիստ դաշնակցականների» խմբի մի քանի տասնյակ անդամներ, Հայաստանի կոմկուսի մեջ ընտրվելու կամ երա

հետ համախորհուրդ գործելու վարձեր կատարեցին⁸. Սակայն նրանցից ոչ բոլորի առջև կոմկուսը «կանաչ լույս» վարեց Այս վերջիններին արժանացան նաև մայր կուսակցության անդամների պարսականքին: Այս հանգամանքը, արևելյան հավատալիքների հետ համեմատելով, Լեռ Կամսարը պատկերավոր կերպով հեղափում է: «Հին Եգիպտոսին մեջ այն հոգիները միայն այս վիճակին կներարկվեին, որոնք իրենց մարդկային մարմիննեն ելեկով, սխալմամբ ջորիի մը մեջ կմտնեին ...»:

Հաջոյի «Սարստած» ֆելիետոնում Լեռ Կամսարի անդրադառն է խորհրդային մարդկանց կյանքի այնպիսի զգացուն կողմից, ինչպիսին ըստանիքն ու ըստանեկան հարաբերություններին են: Խորհրդային ըստանիքն ուներ իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված էին կոմկուսի ամբողջապահական բնույթով և հասարակական հարաբերությունների վրա նրա զաղափարական ազդեցություններով: Հեղինակը ֆելիետոնում ներկայացնում է ըստանեկան փոքրիկ մի վեճ, որի միջոցով կարողաւում է ցույց տալ նշված ազդեցությունները: Ֆելիետոնի հետո սկզբում Լեռ Կամսարի արտահայտում է իր վերաբերմունքը կոմկուսի նկատմամբ: «Ըսկեր Մեսրոպը գեշ կեիկ մը ուեր: Սատոիկ գեշ, բոլշևիկյան գործերուն շափ գեշ»: Հեղինակն ակնարկում է ուսումնական կոմունիզմի քաղաքականությունը, որն իսկական պատուհան էր դարձել հասարակության համար: Ֆելիետոնի հետագա տեքստը, ըստ էության, ըստանեկան հարաբերությունների կարգավորման՝ կուսակցության քաղաքականության նկարագրությունն է այն տրամաբանությամբ, որի իր ուսումնասիրության մեջ այսպես է ձևակերպում Սվետլանա Աշ-

* Հակոբյան Ա. Մ., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կռատակցությունները (1918-1920), Երևան, 2005, էջ 334-335.

[†] «Ազատ Հայաստան», Երևան, 16 մարտի 1921, N 21:

վազովսէ. «Բոլշևիկները դարձան պատմության մեջ երևի քեմիակա պետության դեկազարերը, որոնց ստեղծում էին իրենց հասարակարգը՝ վերակառուցելով մարդկային հիմնարար հարաբերությունները սոցիալական հարաբերությունները սեռերի միջև»⁸.

Ներ Կամսարն իրեն հասունկ ոճով ծաղրում է ընտանիքի «բոլշևիկյան» մոդելը: Ամուսիններն իրար դիմում են բոլշևիկյան ոճով («ընկեր մարդ», «ընկեր կենիկ»). կինը ամուսնուց սեր է պահանջում՝ սպառնալով հակառակ դեպքում դիմել ամենազոր «Շելա»-ին Արտակարգ հանձնաժողովին: Միջանկյալ նշենք, որ 1920-1930-ական թվականներին բավականին տարածված երևոյթ էր ընտանեկան խնդիրների լուծման խնդրանքով պետական և կուսակցության մարմիններին դիմումը: Ի դեպ, այս հարցում առավել ակտիվություն էին ցուցաբերում կանայք: Պատճառն այն էր, որ կոմմունն իր բաղարականության մեջ մեծ տեղ էր հատկացնում կանանց իրավունքների պաշտպանությանը, նրանց հասարակական ակտիվության բարձրացմանը և կենցաղային պայմանների բարեկավմանը ուղղված հարցերին: 1921 թ. մայիսին Երևանի «Կոմունիստ» թերթում տպագրված Խորհրդային Հայաստանի բոլոր աշխատավոր կանանց ուղղված կուսակցության կոչում ազդարարվում էր «ստրկացնող ու կաշկանդող եին բորժուական օրենսդրությունից» կրանց ազատազրման և տղամարդկանց հետ իրավահատկարության մասին⁹: Պատահական չէ, որ այս տարիներին կանայք հաճախ էին նամակներ ուղարկում կուսակցական մարմիններին, որոնցում ամենատարբեր հաճախ գալիքանի հասնող խնդրանքներ կային: Վերադարձել ընտանիքից հեռացած անուստուն, ազդել սկեսրայի կամ սկես-

⁸ Айвазова С., Гендерное равенство в контексте прав человека, Москва, 2001, <http://owl.ru/wm/books/gender/index.htm>

⁹ «Կոմունիստ», Երևան, 19 մայիսի 1921, N 86:

որը վրա, վերջ տալ ամուսին՝ սիրուհիների հետ կապին և այլն³⁰:

Կուսակցական բառապաշարի օգտագործումն ամուսինների կողմից նույնպես իրական իմբքեր ունի (կիևս ամուսնուն մեղադրում է «սաբուտաժի» (ևնեզարույի) մեջ, ամուսինը վախենում է «Եկա» բառը լսելիս, իր հավատարմությունն ապացուցելու համար վկայակոչում է «Յեկա» (կոմունիստական կուսակցության կնևորուսական կոմիտեն) և այլն): 1920-1930-ականներին խորհրդային քաղաքացիները հաճախ էին փորձում երևալ քաղաքական գրագիտությամբ. նմանատիպ արտահայտություններով համեմում էին իրենց խոսքը կամ էլ դրաեր օգտագործում էին իշխանության մարմիններին ուղղված իրենց նամակներում («սկզբնա», «սաբուտաժ», «կուսակցական խիդճ», «վեստարարություն», «բյուրոկրատիզմ» և այլն):

Առհասարակ. խորհրդային հասարակության մեջ կոմունիստական կուսակցության վարած քաղաքականության հետևանքով հասարակական հարաբերություններում առկա էր յուրօրինակ քաղաքականացված մրևուրուս. որը կարող էր դրսնորմի ամենաանհավասական քվացող իրավիճակներում (ըստանեկան վեճեր, հարեւանների միջն վեճեր և այլն) և այդ քաղաքականացվածությունը կարող էր դրսնորմի ամենաանսպասելի մարդկաց մեջ: Թեպեսև Լեռ Կամսարի նշված ֆելիքսոնը գրիլ է 1921 թ., սակայն նկարազրկված իրադարձությունները իհաս ընորոշ են ևս 1930-ականների իրողություններին: Օրինակ՝ Նոր Բայազետի Նորադուզ գյուղում 1937 թ. Գերազույն խորհրդի ընտրությունների ժամանակ լուրջ լարվածություն է առաջանում պատգամավորության երկու կիս թիվնաձուների

³⁰ Այսօրնուակ նամակներ կարելի է տեսնել Հարաբեսի ազգային արխիվի 91-րդ ֆոնդում:

միջև։ Եթու կուսակցության ներկայացուցիչը փորձում է վեճը հարթելու միջոցները գտնել, թէկնածուներից մեկի տասամյա որդին «...սկսում է սպառնալ կցկան ընկերոջը, որ վերջինս ճնշում է քննադատությունը, պահանջում է որ նա ասի իր անուն ազգանունը, որպեսզի մատերիալ գրի նրա վրա»¹¹։ Տվյալ ժամանակաշրջանի բարքերին բնորոշ գավեշութ է այն փաստը, որ տասամյա երեխան կարող էր ոչ միայն պատկերացում ունենալ քննադատության մասին, այլ նաև իր մորը փորձեր պաշտպանել «մատերիալ» (մատնազիր, վարկաբեկող նյութ) գրելով։

Վերը բերված օրինակները շատ են և ապացուցում են մի փաստ։ Խորիրդային հասարակության ներսում մասնավոր բնույթի հարաբերությունների վրա առկա էր կոմունիստական կուսակցության զաղափարական աշխատանքի կնիքը ու ազդեցությունը, ինչն այս հարաբերությունները հանդայեացնելու միտում էր սույնում։ Եվ այս երևույթն իր ստեղծագործություններում սույր քննադատության է եւրարկում և ետ Կամսարը։ Իհարկե, հեղինակի սույր զրիշն ուղղված չէ միայն ընտանեկան կամ այլ մասնավոր բնույթի հարաբերություններին։ Եւ Կամսարի երգիծանքը վերաբերում է խորիրդային կյանքի բոլոր բացասական կողմերին՝ բյուրոկրատիզմ, պաշտոնական դիրքի չարաշահումներ և այլն։ Եւ Կամսարը, ըստ Եւոթյան, համարվում է Խորիրդային Հայաստանի՝ առօրեականության պատմության յուրօրինակ վավերագրողներից մեկը, որի ստեղծագործությունները, կարծում ենք, իրավունք ունեն համարվել նշված ժամանակաշրջանի առօրեականության պատմության կարևոր սկզբանուրիւթեր։ Խոկ մեր կողմից քննության նյութ դարձած երկու ֆելիւտոններ պայմանական կերպով կարող ենք համարել Խորիրդային Հայաստանի՝ առօրեականությունը պատկերող արագին օրինակները։

¹¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 101, թ. 34.

АМО СУКИАСЯН,
ГАГИК ЖАМГАРЯН

ОЧЕРКИ ПОВСЕДНЕВНОСТИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ В
ФЕЛЬЕТОНАХ ЛЕР КАМСАРА "ИСТОРИЯ РЕЛИГИЙ" И
"САБОТАЖ"

РЕЗЮМЕ

В статье рассматриваются описания повседневности Советской Армении в фельетонах известного армянского прозаика Лера Камсара «История религий» и «Саботаж». С помощью краткого анализа фельетонов авторы статьи пытаются обосновать важное источниковедческое значение литературно-художественных произведений в современных направлениях исторических исследований.

HAMO SUKIASYAN,
GAGIK ZHAMKHARYAN

FEATURES OF EVERYDAY LIFE OF SOVIET ARMENIA IN THE
FEUILLETONS 'HISTORY OF RELIGIONS' AND 'SABOTAGE' BY
LER KAMSAR

SUMMARY

The article touches upon the descriptions of everyday life in Soviet Armenia reflected in feuilletons "History of Religions" and "Sabotage" authored by famous Armenian writer Ler Kamsar. Due to brief analysis of these feuilletons the authors of the article try to substantiate the importance of source value of literary and artistic works in modern historical research directions.

«ՄԱԿԱՆՈՎԵԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԴՐԱՅՈՐՈՒՄ ՀԱՅ
ԻՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ

«Սմենովեխականությունը»¹ ուստ տարածիր մտավորականության շրջանում 1920-ական թվ. տարրածված հասարակականարարականան հռասան էր. որև առաջ եկավ բոլշևիկների կողմից ՆԵՊ-ին (ուստ.՝ հոգա տնօքականություն) անցում կատարելու հայտարարությունից հետո: Այս հռասանը դեռևս պատշաճ ուշադրության չի արժանացել հայ պատմագիտության կողմից և չի բացահայտված դրա առունենահատկությունները հայ իրականության մեջ:

«Սմենովեխականությունը» յուրովի էին մեկնաբանում նոր բոլշևիկայի (ՆԵՊ-ական) գաղափարները: Նրանք մտավորականությանը կոչ էին անում համազործակցել խորհրդային իշխանությունների հետ՝ հույս ունենալով, որ ՆԵՊ-ի պայմաններում խորհրդային իշխանությունը կվերասերվի և հնարավոր կլինի վերադառնալ կապիտալիզմին: Այս կապակցությամբ աշխատված թեարկումներ և բանավեճեր կազմակերպեց «Սմենա վեհ» ժողովածունել:² Սակայն ԽՄՀՍՍ-ում տարակրուտանքով մոտեցան ամենովեխականությունը: Վ. Լենինը թեսադատեց վերջինների առաջնորդներից Ն. Ռուտրյալդին, ում կարծիքով իրականում ՆԵՊ-ը ոչ թե մարտավարություն է այլ՝ բոլշևիզմի բարեցրումն ու վերասերումը դեսպի սովորական բոլշևիզման պետությանը:³

¹ Տօղուցե առաջացել է 1921-1922 թվ. Դրանույում լրաց տնօքան ուստան ուստերեն «Անհամ վեհ» (Ռուսիշերի գովոխություն) խորապես ժողովածուի անունոց Արև հրամանարարական էն ուստ տարածիր մի խումը կրպելու և օքուրարիան գործիչներ (Վերաբա Ռուտրյալդ, Յանի Կըլուզիկինը և ուրիշներ) (Օրոքս Ա., Գեօրգիև Ա., Աշուաչական աշխատանքները 1922-1924 թթ. Բայցինու հրամանարարական էն «Հակառակ» թերթը:

² Советская историческая энциклопедия, т. 13, Москва, 1971, стр. 74.

³ Լենին «Լ. Ա. Ռ. հ. 45. Երևան, 1983, էջ 115:

Ամենովեխականությունը դրսևորվեց նաև հայ իրականության մեջ՝ Խորհրդահայ պետական գործի Ալեքսանդր Մյասնիկյանը (Մարտունի) հայկական տեհուութիւնականության առաջամարտիկ համարում է ՀՀ անդրանիկի վարչապետ Հովհաննես Թագավորություն։ Դեռ է նշել, որ ինչպես Ալ Մյասնիկյանը, այնպէս էլ խորհրդահայ բազմաթիվ այլ գործիչներ սմիններով ըստուեցին հայ սմենութիւնականների մոտեցումները։ Սակայն, միևն խորհրդային գործիչների տեսակենուներին անդրադառնալը, ներկայացնելը հայ «սմենութիւնականների» դիրքորոշումը։

Հ. Քաջազնունին, նկատի ունենալով խորհրդային իշխանությունների Նոր տնտեսական բաղարականության ընձեռած որոշակի ազատությունները, Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթում «Ի՞նչ պետք է ըլլայ մեր ուղին» վերևագրով հոդվածաշարում գրում է, որ, օգտագործելով բոլշեվիկների կողմից բռնություններից հրաժարվելու և զիջումների գեալու մասին հայտարարությունները։ Հ.Յ. Դաշնակցությունը, իբրև կազմակերպիչ ընդդիմութիր ուժ, պետք է օգտագործի բոլշեվիկների կողմից թեկողի սահմանափակումներով տրված հեարավորությունները՝ վերջիններիս դեմ օրինակուն միջոցներով պայքարելու նպառակով։ Փաստութեան, Հ. Քաջազնունին հազարում էր, որ «Դաշնակցությունը, որպէս ընդդիմութիր կուսակցություն, կարողանալու է բացահայտ գործել Խորհրդային Հայաստանում։ Խորհրդային Հայաստանում գործունեություն ծավալելու համար նա կարծում էր, որ պետք է քննարկել ոչ թէ գաղտիարարանական ինսիրներ, այլ պարզապէս օրվա բաղարական անելիքները»։

* Մարտունի Ալ., Խորհրդային Հայաստանի ուժին, Թիֆլիս, 1924, էջ 18.

† «Ճակատամարտ», Կ. Պոլս, 30 մայիս 1922:

‡ Նոյն տեղում, 31 մայիսի:

Հ. Քաջազնունին համգոված էր, որ, ՆԵՊ-ի ընձեռած հետո սկզբություններն օգտագործելով, Խորհրդային Հայաստանի տնտեսությունը կկարողանա վերականգնվել: Որպես տնտեսության զարգացման լավագույն ուղի՝ նա մատնանշում էր անհատական տնտեսության վերականգնումն ու բարգավաճումը, որը պետք է լինի պետական հոգածության առարկա⁷: Նա, միաժամանակ, Հայաստանում չէր տեսնում խոշոր հոդատիրության և կապիտալիզմի զարգացման հնարավորությունը: Այս հանգամանքով պայմանավորված, ըստ Հ. Քաջազնունու, հայ ժողովուրդը հասունացած չէ ընկերվարական կարգերի համար, իսկ դրսից դրանց բնի ներմուծումը կարող է դժգոհությունների առիջ հանդիսանալ⁸: Հ. Քաջազնունին մատնանշում է նաև, որ ընկերվարական կարգերի հաստատում չի նշանակում միայն կապիտալի համայնացում, այն ենթադրում է նաև քաղաքական, մշակութային, սոցիալական, տնտեսական ազատություններ⁹: Ըստ նրա՝ Հայաստանի միակ կապիտալը հողն է, ուստի գյուղատնտեսության մեջ խոշոր կապիտալի ներդրումը կեպաստի նաև արյունաբերության զարգացմանը: Այս կապակցությամբ պետք չէ վախենալ օտար կապիտալիստների ներդրումներից: Հայուրյան գերինդիրը պետք է լինի Խորհրդային Հայաստանի հզորացումը: Այդ նպատակի իրականացման համար Քաջազնունին գուևում է, որ պետք է միավորել բոլոր ուժերը, կենտրոնացնել բոլոր հնարավորությունները՝ անկախ քաղաքական և կուսակցական հանգամանքներից, «փրկել պետութիւնը, ամուր իիմբերի վրայ դնել ու կենսունակ դարձնել այն»¹⁰:

⁷ Լույս տեղած, 2 բանիսի:

⁸ Լույս տեղած, 1 բանիսի:

⁹ Լույս տեղած, 3 բանիսի:

¹⁰ Լույս տեղած, 4 բանիսի:

Միսպիտով, Հ. Քաջազնունին Հայաստանի խորհրդայինացումից հետո առավել կարևոր քայլ համարում էր ոչ թե բոլշևիկների դեմ քաղաքարարադարձական պայքարը՝ իր տարբեր դրսություններով, այլ Խորհրդային Հայաստանի տևտեսության վերականգնումը։ Նրա հոդվածաշարը նոր և ազդեցիկ խոսք էր ժամանակի տարագիր հայ քաղաքական մտրի ծիրում։

Մեր կարծիքով Քաջազնունին, լինելով առավելապես պետական մտածելակերպ ունեցող անձնավորություն, հստակ զիտակցում էր, որ աշխարհասրադարական տվյալ իրողության մեջ կարևոր Խորհրդային Հայաստանի տևտեսական հզորացումն է Առաջ խորանակու գոյություն ունեցող զաղաքարադարձական հակասությունների մեջ (թերևս ներազգային)։ Իս ՆԵՊ-ի ընձռնած հնարավորությունը բարեպատճե առիթ էր համարում հայության ամրող ներուժն օգտագործելու երկրի տևտեսական վերականգնման համար, ինչը մեծագույն կովան կարող էր հանդիսանալ հայությանը հայրենիքում և հայրենիքի շուրջ համախմբելու համար։ Տավոր, հայ ականավոր գործչի այս արժեքավոր հոդվածաշարի թեզերը լայն արձագանք չգտան ինչպես Սիյունորում, այնպես էլ Հայաստանում։

Քաջազնունու «ամենովեխական» տեսակետներն առավել զարգացում ստացան կուսակցական խորհրդաժողովին ներկայացրած նրա հայտնի «Հ. Քաջնակցութիւնը ամելիք չունի այլեւս գեկուց-զրբույկի մեջ։ Նա այստեղ ևս զլխավոր խնդիր համարում է Խորհրդային Հայաստանի հզորացումը։ «Այսօր հայ քաղաքական մտրի անմիջական հոգատարութեան առարկան պիտի լինի գոյութիւն ունեցող Հանրապետութիւնը (Խորհրդային – Խ. Ա.), նրա մեջ ու նրա շուրջ ապրող հայ ժողովությը»։ Որում է Հ. Քաջազնունինին¹¹։

¹¹ Քարտազն իի Յ. Հ. Ք. Դաշնամկարդունք անելիք չունի այնու։ Վնանակ. 1923. Խ 56.

Բուշեկանքի հետ հարաբերություններում Քաջազնունին կարևորում է Ռուսաստանի հանգամանքը, որի «բարեացակամութիւնն ու պաշտպանութիւնը ունենալու համար, Հայաստանի ներ խորհրդային պիտի լինի»¹²:

Վուարանդի քաղաքական գործիչը, փաստորեն, հանուն Հայաստանի հզորացման առաջարկում է վայր դնել քաղաքական հակասության տանող բոլոր գելքերը: Հ Քաջազնունին խորհրդային կողմնորոշումը կարևորում է ոչ միայն տեսլուական, այլև քաղաքական հանգամանքների բերումով: Որքան էլ Դաշնակցությանը չգնիացներ Խորհրդային Հայաստանի՝ Մուկվայի հսկողության տակ լինելը, այսուամենայինք անհրաժեշտ էր համարում համակերպել տվյալ իրողության հետ: Առանձևապես կարևոր էր համարվում այս փաստը, որ ռուսական կողմնորոշումից հրաժարվելու դեպքում այդ ընթացքում Հայաստանը կարող էր հայտնվել բուրբ-քարարական գերշիխանության տակ¹³: Ըստ Էռլյան, իր բոլցիկյան կամ, որ նույն է ռուսական կողմնորոշումը Հ Քաջազնունին պայմանավորում է նաև հայ ժողովրդի ունեցած սահմանափակ ընտրության հնարավորություններով:

Այսպիսով, իր հայութի գելուցման մեջ նև Հ Քաջազնունին, տեսլուական, քաղաքական հիմնավորումներով առաջարկում է դադարեցնել գաղափարական պայքարը Խորհրդային Սինոքանություն և բոլոր ուժերով լծվել Խորհրդային Հայաստանի հզորացմանը:

Տարագիր հայության քաղաքական և կազմակերպական եւրումը դեպի Խորհրդային Հայաստան շրջելու տեսակետով հանդէս եկաւ նաև Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի պատգամավոր, Դարձկանառան տարագրիված դաշնակցական գործիչ Արշակ Դազարյանը: Նա նույնպես գտնում էր, որ ՀՅԴ-ն

¹² Լույս տեղում, էջ 65:

¹³ Լույս տեղում, էջ 64:

պետք է հաշումի խորհրդային վարչակարգի հետ և բոլոր ուժերը կենարութացնի Խորհրդային Հայաստանի Վերականգնումները:

Ա. Ղազարյանն իր «Ազատության ուղին և հայի քաղաքական վարքագիծը» գրքույկում անդրադարձում է դաշնային փոխհարաբերություններով Ռուսաստանի կազմում Հայաստանի գույքելու ՀՅԴ ռևեգած նախկին տեսակետին: Քաղաքական մարտավարության հարցում հակասությունների մեջ մտնելով դաշնակցության դեկավար մարմինների հետ՝ նա, քառ եռթյան առաջարկում է վերադառնալ կուսակցության միեցն Հայաստանի անկախացումը որդեգրած դաշնայնության սկզբունքին, քանի Ռուսաստանի հետ դաշնային կազմը Հայաստանի համար անվտանգության երաշխիք է: Ա. Ղազարյանի կարծիքով, թեև վերացվել են խորհրդային հանրապետությունների ազգային իշխանությունները, այնուամենայնիվ ժողովուրդների անկախ ազատ գորգանալու իրավունքը չի վերացվել: Միաժամանակ վերացվել են ազգամիջյան ընդհարումները: Իսկ կատավարման դաշնային ձևը խոստումնալից է¹⁴: Փաստորեն, Ա. Ղազարյանը համոզված էր, որ Դաշնակցությունը պետք է ըստուի բոլշևիկների կողմից Հայաստանը դեկավարելու իրողությունը և անկախության փոխարեն բավարար համարի դաշնային սկզբունքով Ռուսաստանի հետ միությունը: Այս կապակցությամբ նրան զրած ետակություն դաշնակցական գործիչ Գերասիմը հորդորում էր ենթարկվել կուսակցության որոշումներին և նրա ընդունած ծրագրի ու կանոնը համաձայն շարժմել¹⁵:

¹⁴ Հազարյան Ա., Ազատության ուղին և հայի քաղաքական վարքագիծը, Թէհրան, 1928, էջ 5, 35, լույսի: Սովորող պահանջուն է Թէհրան, 1925, էջ 5.

¹⁵ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 362, թ. 3-4 շրջ.: Համար 2.3. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթուրքերի և նորանից ժողովածու), պրոլաբանական խճանքի և կազմող՝ Վ. Ղազարյան, Երևան, Երևան, 1999, էջ 18.

Մեր կարծիքով, Դաշնակցության համար դժվար էր հրաժարմել անկախության գաղափարից: Հայաստանի անկախության հօջակումից հետո քաղաքական իրադրություն էր փոխվել, հետևաբար Խախինում առաջադրվող դաշնության գաղափարն արդյունացնելու էր: Տպավորությունը է ստեղծվում, որ Ա. Ղազարյանը ձգուում է այս «հետարքություն» ասբացուցել իր ճշմարտացիությունը:

Հատկանշական է Ա. Ղազարյանի կողմից նորիրդային Հայութակում նոր ուղղագրության վերաբենության հարցի բարձրացումը: «Այսօր, եթիւ նորիրդային կարգերի թշնամիները քաղաքական շենք են դարձել Սահմանադրության ուղղագրութիւնը և ամեն անքայլաւորելի միջոցներով խորրություն է սերմանում գաղութահայութեան և Հայրնեծիրի միջն, ինչպես և դպրոցական նոր սերնդի դաստիարակութեան, զրական նոր ուղղութիւնների խևայիրելը են հարուցում և տարբերութիւնն ունում արեւելեան և արեւմտեան հասուածների միջեւ, կարծում ենք, անևպատակայարմար չէ նորիրդային Հայաստանի վարիչների կողմից շուտափոյթ ընթացը տալ այդ խևայիրելու»:²⁰ զրում է Ա. Ղազարյանը:²¹ Ինչպես տեսնում ենք, Ա. Ղազարյանը հայության երկու հատվածների (նորիրդային Միության և արտասահմանի) միասնականության համար արդարացն հորդորելու է հղում նաև նորիրդային Հայաստանի իշխանություններին:

Այսպիսով, տարագրության մեջ հաստատված դաշնակցական միևնույն այլ ակնառու գործիչ նու կոչ էր անում հանուն հայրենիքի հզորացման և հայ ժողովրդի հավաքականության ապահովման հրաժարմել բոլշևիկյան իշխանությունների հետ ուսեցած հակառակություններից և կանգնել նորիրդային Հայաստանի կողըին:

Ավելացնենք նաև, որ Հ. Քաջազնուն և Ա. Ղազարյանի դիրքորոշումներում եղել է տարբերություն: Եթե Քաջազնունին

²⁰ Ղազարյան Ա. Հայ լեզուի ուղղագրության խևայրը. Թիֆան. 1926, էջ 3.

գտնում էր, որ Դաշեակցությունը պեսը դադարեցնի իր գործունեությունը. դաշտ բացի կոմունիստների համար, ապա Ա. Ղազարյանը կարծում էր, որ ՀՅԴ-ն դեռևս անելիք ունի հայ կյանքուն:

Դեպի Խորհրդային Հայաստան շրջվելու կողմվ նախկին դաշեակցականներից առանձին զրուսկերով հանդէս եկան նաև Գ. Չալխուշյանը¹⁷ և Ա. Բաղրամյանը¹⁸:

Գ. Չալխուշյանը գրում է, որ «միայն Ռուսաստանի գրկին մեջ մեւը հետք ունիք ապահով բազմանալ, զարգանալ եւ բարորոշեալ հասնիլ». Նա կարևորում է հատկապես Ռուսաստանի խորհրդային լինելու հանգամանքը¹⁹. Գ. Չալխուշյանը, ի տարբերություն Հ. Քաջազնունու և Ա. Ղազարյանի, կարևորում է Հայաստանի «միությունը» ոչ այնքան ըստհանրապես Ռուսաստանի հետ, որքան Խորհրդային Ռուսաստանի հետ մասնավորապես: Մեր կարծիքով, Գ. Չալխուշյանի այս ծայրահետ մոտեցումը մեծապես պարմանեավորված է Դաշեակցության հետ ունեցած ուր և լարված հարաբերություններով: Պատահական չէ, որ նրան բավական սուր վիրավորանքներով պատռախանեցին²⁰. Միևնույն Հ. Քաջազնունուն և Ա. Ղազարյանը ոչ միայն թշնամանք չունեին դաշեակցականների համդեպ, այլև շարունակեցին հարզված մնալ իրենց նախկին կուսակցական ընկերների կողմից Շեպի Խորհրդային Հայաստան շրջվելու հայ «ամենովեխանկաներին» մոռոր հանգամանքը ոչ թէ բոլշևիզմն էր, այլ Ռուսաստանը, ավելին, նաև Ռուսաստանում «ուղղափառ» բոլշևիզմից ժամանակավորապես նահանջելու խորհրդային իշխանությունների մասին հայտարարությունները:

¹⁷ Չալխուշյան Գ., Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին. Պուբլիք, 1923.

¹⁸ Բաղրամյանն Ա. Խորհրդային Հայաստան, պրակտորին, Թիֆլիս, 1927:

¹⁹ Չալխուշյան Գ., Կոյ աշխ., էջ 39:

²⁰ Հայաստանի Ա. Խորհրդային իշխանությունների մասին. Գանձրիք, 1923, էջ 20, 74:

Հետի Խորհրդային Սիուրյուն շրջվելու դիրքորոշում ունենալու ոչ միայն և նույնիսկ ոչ այսքան դաշնակցական վերոնշյալ գործիչները: Բուշեիկ գործիչ Արտաշես Կարիսյանը հայ ամենովեխակաների փետրում է նաև ռամկավարների շարքերում²¹:

Ռամկավարների (նաև հեղակյաների մեծ մասի) Խորհրդային Հայաստանի հանդեպ ունեցած դրական վերաբերությունը պարմանավորված չի եղել Ներկ-ով: Այս առումով պատմագիտության մեջ անձնագիր ստացած «սմենովեխականություն» եղուլթը, բայց եղան, չի կարելի տարածել բոլոր ռամկավարների վրա: Միաժամանակ նշենք, որ կային որոշ անհատ ռամկավար գործիչներ, ինչպես, օրինակ, Ե. Կարիկյանը, որ կոչ էին անում օգտագործել Ներկ-ի ընձեռած հետավորությունները: Վերջինս նույնիսկ այցելում է Խորհրդային Հայաստան, որտեղից Փարիզ վերադառնալուց հետո Ազգային պատվիրակությանը գեկույց է ներկայացնում Խորհրդային Հայաստանի տնօտեսական գարգացման և հետարագորությունների մասին²²:

Միևնույն ժամանակ անում հայության վերաբերյալ խորհրդահայ գործիչների տեսակետները ներկայացնելը, անդրադարձուակը տարագիր հայ գործիչների արձագանքներին:

Սփյուռքում հաստատված դաշնակցական գործիչներն առավել հիմնավորված պատասխանեցին Հ. Քաջազնունու «Հ. Դաշնակցությունն անելիք չունի այլնս» գրքույկին: Քաջազնունուն ուղղված պատասխանների մանրամասն քննարկում կարելի է կատարել այլ առիթով: Սակայն նշենք, որ արդեն նախկին կուսակցական ընկերուջն ուղղված իրենց պատասխաններում Սիմոն Վրացակը, Շուրեւ Դարբինյանը (Արտաշես Շիլինգարյան), Կա-

²¹ Կարիկյուն Ա. Խոյնուայիզմի «Նոր պիրեցք», Սոսկւա, 1929, էջ 7.

²² «Դարբար», Պարզ, 28, 29 փետրուարի 1924, հիմն. «Նոր Արշակուն», Պարզ էջ, 3 ապրիլի 1924.

հան Նավասարդյանը, Արշակ Զամայյանը և ուրիշներ առավելապես անցյաղաբաններ են հայ ժողովրդի կյանքում Դաշնակցության ունեցած հարուստ դերակատարությանը և անելիքին: Խոկ Քաջազնունու եզրահանգումները պայմանավորում էին նրա ունեցած անձնական մուտքումներով²⁹:

Բոլորովին դեմ չյինելով հայրենիքի հզորացմանը՝ դաշնակցական գործիչները նրան սուր քննադատության ենթարկեցին Հայաստանի անկախությունից հրաժարվելու, Դաշնակցության պատմությունը սխալ մենաբանելու, նրա գործն ավարտած համարելու համար:

Կարո Սասունու կարծիքով ամենովեխականների կեցւածք միայն «միայրաբանք» եղավ բոլշևիկներին հանարք³⁰: Նրա կարծիքով հայ բոլշևիկների հետ ըստհաերապես աեմասստ է զաղափարական քննարկումներ անելը, որովհետև նրանք «կապես ընկերվարական չեն, եւ ոչ ալ կոմունիստ (հուսատանի միւս կոմունիստներուն պես) իրենց զաղափարական կազմութեամբ, առնը հակադաշեակցական են»³¹:

Այսպիսով, հայ ամենովեխականները լուրջ աջակցություն չգտան սկիզբություն, ինչը պայմանավորված էր ոչ թե նրանց օքնափարեների «սխալականությամբ», այլ բոլշևիկ-հակաբոլշևիկ զաղափարական խորը անօրոպեսով: Այդ անօրոպեսով հաղթահրելու ցանկությունը չկար ոչ միայն հայ քաղաքական վտարան-

²⁹ Վրացեան Ա., Խարիստիումներ. Յ. Թաղավորունու «Դաշնակցությունը անձիք չունի այլեւս» գրքի ատիբու, Պոտուն. 1924, էջ 33, Նաւուարդեան Վ., Հ. Դաշնակցության անելիքը. Մահիք և լուշիք մի գրքովի ատիբու, Գահիք, 1924, էջ 4, Դարրիեան Շ., Մեր պատմայանը Յ. Թաղավորունիքի, Պոտուն. 1923, էջ 75, Զամայյան Ա., Յ. Թաղավորունիքի և Հ. Դաշնակցությունը. «Հացընիք», 1924, յունուար, էջ 50, «Հայրենիք», 20 դեկտեմբերի 1923, «Ցուսաքեր», Գահիք, 14 օգոստոսի 1924.

³⁰ Սասունի Կ., Ռուսական օրինասացին. «Հայրենիք», 1928, յունուար, էջ 109:

³¹ Սասունի Կ., Գաղափարական բյուզուորին. «Հայրենիք», 1932, յունուար, էջ 115:

դիրքայն, այլ նաև, ինչպես կուսները. Հայաստանի բոլշևիկ դեկավարության մոտ:

Հայ բոլշևիկները սմէնտվեխակաների դիրքորոշումը պայմանավորում էին ոչ թէ վերջիններին՝ հայրենիքի բարեկեցիկ ապագայի հանդեպ ունեցած անկեղծ մոռհոգությամբ, այլ ինչ-որ կուսակցական «հետին նպատակներով» ու բոլշևիզյան զաղափարախոսության «կատարելությամբ»:

Աղքամանդր Մրասնիկյանը ողջունում է Հ. Քաջազնունու առաջարկը՝ Դաշնակցությանը՝ հաշովել խորհրդային իշխանության հետ²⁶: Սակայն նա նշում է, որ «Դաշնակցությունն ու դաշնակցականները յերբեք և ոչ մի րոպէ, ոչ մի վայրկյան չեն հրավիրվի գործակցության և տեղ չեն գույի Հայաստանում» գեր մի կերպ շնչելու համար²⁷: Փաստորեն, հայտարարում էր, որ բացունում է վատարանոյի հայ քաղաքական ուժերի հետ որևէ համագործակցություն, երաժարվում են հայրենիքի համար նրանց կողմից առաջարկվող ծառայություններից. որքան էլ վերջիններին մոտ այդ ցանկությունը մեծ լինի:

Ա. Մրասնիկյանը «Կուսակցությունները զաղութահայության մեջ» աշխատությունում հույս է հայտնում, որ Հ. Քաջազնունու և Ա. Ղազարյանի պիրբարոշումը կխանդականի դաշնակցական շարքերին: Նա սմէնտվեխականների ակտիվությամբ ակնկալում է Դաշնակցության «պատակուումը»²⁸: Կարծում ենք, Ա. Մրասնիկյանի նման պետական գործիչը պետք է լուծումներ գտներ կուսակցական-զաղափարախոսական հակասության պայմաններում և լեզու գտներ հակառակորդների հետ: Ճիշտ է Սոսկվայի վերահսկողության պայմաններում խնդիրը բավակա-

²⁶ Մարտունի Ալ., Խորձուային Հայաստանի ուղին, էջ 17:

²⁷ Լույս տեղայում, էջ 18:

²⁸ Մարտունի Ալ., Կուսակցությունները զաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 98:

եին բարդակում էր, սակայն նույնիսկ Խորհրդային Ռուսաստանում ամենովեխականերին համեմուարար ավելի մեղմ արձագանքեցին, քան Հայաստանում:

Խորհրդային Հայաստանի կենտրոնական Արտաշես Կարիսյանն առաջիկ բացասական գոյակերութ է ներկայացնում դաշնակցական «ամենովեխականերին»: Վերջինների շարքում նա բարձր է գևահատում Միայն Գ. Չալյուշյանի, որի «անհամեմատ ավելի առ կերպով է խարազանում դաշնակիցնի ոոց գործունեությունը»²⁹: Գ. Չալյուշյանի «ամենովեխականությանը», բնականարար, իր «հականացիոնայիստական» դիտողություններով, Ա. Կարիսյանն ավելի լայն լուսարանում է իր «Հայ ազգանականների ուժին» գորում³⁰: Փաստորեն, Ա. Կարիսյանի համար նույնպես առավելաբար կարևոր է ոչ թե տարազրության մեջ հաստաված հայ կարող ուժերի ներզրավումը հայրենիքի վերաշինության գործին, այլ վերջինների դավանած գաղափարների «անանացումը»:

Հ. Քաջազնունու վերուժյալ գեկուցման վերաբերյալ Ա. Կարիսյանը գրում է, որ այն «ներկայացնում է իրենից նացիոնալիզմի պաշտպանության մի փորձ»³¹: Անդրադարձուալով Հ. Քաջազնունու այն կարծիքին, որ հայ բոլցիկները շարունակում են դաշնականների գործը և դրանով ավելի առաջ ընթանում դեպի «ազգային իդեալի իրազրծում»՝ Կարիսյանը փորձում է սաստել ազգային գործիքն և գրում է, որ «Խորհրդային Հայաստանը - դաստկարգային պետություն է, բայց որևէ երի և զուրացիների պետություն, միջազգային կառավարություն»³²: Նա «մոտավախությամբ» է մուտքանում հայ «ամենովեխականների» այն դաստությանը, որ

²⁹ Կարիսյան Ա., Նացիոնալիզմի «առ դիրքերը», էջ 12:

³⁰ Կարիսյան Ա., Հայ ազգանականների ուժին, Սոսկիս, 1926, էջ 121-132:

³¹ Կարիսյան Ա., Նացիոնալիզմի «առ դիրքերը», էջ 13:

³² Նույն տեղում:

Նրանք Խորհրդային Հայաստանը համարում են «հայ ազգի» պետություն, և Նրան մոտենում են «Խոր իշխանության» ազգայնական որոշ ակնկալություններով²⁸. Ըստ Եռքյան, համաշխարհային հեղափոխության, բանվոր դասակարգի տիրապետության սկս զարաֆարեներով տողորված հայ բոլշևիկ դեկանարի համար մերժելի էր ցանկացած ազգային զարաֆարի իրագործում: Ա. Կարիսյանի համար «ամենովեխականները» ես պակաս ազգայնականներ չեին և տեղ չեին կարող ունենալ Խորհրդային Հայաստանում: Նա ևս ավենիներով ընդունեց հայ «ամենովեխականներին», բացահայտ առելություն էր տածում Նրանց հաւայական գունելով, որ վերջիններս վտանգավոր հակառակորդներ են բոլշևիկներ զարաֆարախության իրագործման համար:

Հայ «ամենովեխականներին» բարկոծելու առիթը բաց չի բռնում նաև ՀԿ(բ)Կ կենտրոնի առաջին քարտուսար Աղասի Խանջյանը: Նրա կարծիքով դաշնակցության դեմ պայքարելոց զար չպետք է աշքաբող անել զարաֆարական մյուս հակառակորդներին, այդ թվում նաև սմենովեխականներին, որոնց Խանջյանը ըստորոշում է որպես «Դաշնակցության բազազնության վարիանո»²⁹: Ըստ Եռքյան, այսուհետ ես մենք ականատես ենք ինուս բոլշևիկներ իշխանությունների կողմից «ամենովեխականների» հաւայական անհամարական բարիքան: Ի դեպ, անդրադառնայում վերջիններին Ա. Խանջյանի տրված ըստրաժմանը՝ Կ. Մասունին զբում է որ «Դաշնակցության անելիքները, ըստ Քաջազնունիի, ստանուի հայ բոլշևիկները, փաստօրեն իրենց ուղերգութիւնը ծածկելու համար, հիմա սկսած են հալածել «Դաշնակցության բազազնության վարիանութը»³⁰: Իսկապէս, տպափորություն է տունծ-

²⁸ Խայի տեղում, էջ 19.

²⁹ «Խորհրդային Հայաստան», Երևան, 15 հոկտեմբերի 1932:

³⁰ Մասունի Կ. Գարզափարական բշխաւորին, «Հայքներ», 1932, գետրուար, էջ 157:

վում, որ զաղափարական հակառակորդներին հայածելն ամենակարևոր է եղել խորհրդային գործիչների մոտ:

Խորհրդային հեղինակներից Մարենցը ևս, շնայած Քաջազնունու անկեղծ մոտեցումներին, շարակամությամբ էր ըստունու վերջինիս տեսակետները՝ երան մեղադրելով ազգայնականության մեջ։ Խորհրդային Հայաստանն անմիջականորեն ԽՍՀՄ-ի կազմի մեջ տեսնելու Քաջազնունու ցանկությանն արձագանքելով, երան անմիջապես համեմատում է վրացի նացիոնալ-ռազմունիստների հետ²⁸։ Ալյուրադառնալով Ա. Ղազարյանի «Մոմենտը պահանջում է զրոյւկին» Մարենցը «ախտսանքով» է եղում, որ դրա վաճառքը ոչ միայն չի արգելված Հայաստանում, այլև նույնիսկ տպարանների ամբողջությամբ սպառվել է «Երևանի «ազատախոն» բարեկեհ-ազգայնականների» կողմից²⁹։ Նրա կարծիքով «սմենովեխականների» հիմնական նպատակը ոչ թե Խորհրդային Հայաստանին օգնելն է, այլ՝ Դաշնակցությանը «արդարացնելը»։

Այսպիսով, հիմնական առումներով թեմելով «սմենովեխականություն» ըսդհանուր եզրակացնող ՀՀ դ. 20-ական թթ. խորհրդային հանրապետություններից տարագրված բաղադրական վտարանշիության մեջ տարածված հասարակական-քաղաքական հոսանքի հայկական դրսնորումները, կարելի է եզրակացնել։

ա) Հայ բարագրական վտարանշիության մեջ եղան առանձին անհատներ, որուր ուսւ «սմենովեխականների» նման կոչ արեցին վերադառնալ հայրենիք։ Շայած Հայաստանում գյուղքուն ունեցող բոլշևիկյան կարգերին՝ հայ «սմենովեխականները» գտնում էին, որ պեսոք է ցանկացած առիթ օգտագործել հայրենիքի վերաշինությանը ննցուկ լինելու համար։ Նրանք համոզված էին, որ

²⁸ Մարենց. Հայկական անհովեխականության դեմքը. Երևան, 1928, էջ 29.

²⁹ Լոյն տեղում, էջ 9։

Խորհրդային Հայաստանի իշխանությունները, կը լողուին համագործակցության իրենց առաջարկությունը:

բ) «Սեմսավեխականները» թևադատվեցին սիյուռքյան իրենց կազմակերպությունների կողմից: Սակայն թևադատության հիմքում ընկած էր ոչ թե Խորհրդային Հայաստանին աջակցելու, կամ դեպի ևս շրջվելու գաղափարը, այլ բոլշևիկյան իշխանություններին վատահելու «միամստուքյունը»:

գ) «Մենուվեխականությունը» սվիեներով ընդունվեց հայ բոլշևիկների կողմից Հայ «մենուվեխականների» անկեղծ ցանկությունը՝ օգնելու խորհրդային հայրենիքին, համարվեց Հայաստանում «ազգայնականների» կողմից իշխանությունը վերցնելու քաղաքական հնարքը: Մենուվեխականների հրապարակումները հայ բոլշևիկները սկսեցին օգտագործել նրանց և նրանց քաղաքական կազմակերպություններին, հատկապես ՀՅԴ-ին քարկոծելու համար:

դ) Հայ «մենուվեխականությունը», անշուշտ, որոշակիորեն տարբերվում էր ուստական «մենուվեխականությունից» Նոյնիսկ երևույթը կարելի է ուրիշ եզրույթով ընորոշել: Սակայն հետևողությունների համար առավել կարևոր է այն, որ նոյնիսկ գաղափարադարձական խորը հակասության պայմաններում, հայ քաղաքական վտարանդիտթյան մեջ եղան անհատներ, որոնք ցանկություն հայտնեցին համեստարար ծառայելու հայրենիքին: Տավոք, Խորհրդային Հայաստանի իշխանությունները, հավանաբար ևս Սոսկվայից վախճենալով, ոչ միայն տեղ չուվեց հայրենիքի նվիրյալ գավակներին, այլև ամեն ինչ արեց նրանց հանդեպ անվտանգություն տարածելու համար:

ХАЧАТУР СТЕПАНЯН

ПРОЯВЛЕНИЕ "СМЕНОВЕХОВСТВА" В
АРМЯНСКОЙ РЕАЛЬНОСТИ
РЕЗЮМЕ

В 1920-х годах в кругах армянской политической эмиграции распространялось явление "сменовеховство", которое было сформировано в российской политической эмиграции. Однако искреннее желание "сменовеховцев" пересмотреть свою собственную антибольшевистскую политику ради армянской государственности, не получило одобрения как в армянской диаспоре, так и в Советской Армении.

KHACHATUR STEPANYAN

THE MANIFESTATION OF THE "SMENOVEKHOVSTVO" IN THE
ARMENIAN REALITY

SUMMARY

In 1920's among the circles of the Armenian political proscription the phenomenon of "Smenovekhovstvo" was spread which had been formed in the Russian political emigration. However, the sincere desire of the "Smenovekhovsts" to review their own anti-bolshevik politics for the sake of the Armenian statehood, unfortunately did not meet with the approval both in the Armenian Diaspora and soviet Armenia.

ԽՈՐՀՄԱՎԱՅԻ ԴԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ
ԿԱՂԱՊԱՄՐՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

1920 - 1925 թթ. նշանավորվեցին տեսական-գաղափարախոսական բնույթի աշխատություններով, որում նպառակառության էին բարձրական, ինչպես ևս Հ. Դաշնակցության գաղափարախոսական բնույթի աշխատության հարերդադին կամ բոլշևիկան կուսակցության որդեգրած քաղաքականության իրավացիության հիմնավորմանը: Ըստ որում, հարկ է նշել, որ «քանամական» ճակատում էին ոչ միայն Դաշնակցությունը, այլև Ա.Դ. Շենակյան և ՌԱԿ կուսակցությունները:

Խորհրդակայ պատմազիտության ձեսվորման համար տեսական ուղիներ մասնաւոր առաջին աեճերից է Ազերօանը Մյասնիկյանը: Իր աշխատություններում⁷ նա վերուժում էր սիրութակայ գաղթավայրերում տիրող իրավիճակը և բնութագրում հայ քաղաքական կուսակցություններին:

Ալ Մյասնիկյանի հիշյալ ուսումնասիրություններից առաջինի գլխավոր նպատակն էր գաղութահայությանը հեռու պահել հայ քաղաքական կուսակցությունների գաղափարական ազդեցությունից և նրանց կողմանորոշել դեպի Խորհրդային Հայաստանը: «Կար ժամանակ, - զբում է նա, - եթե Դաշնակցությունը, միջոցներ ձեռք ստեղծով շինական պարիսպ ստեղծելու Խորհրդային Հայաստանի և գաղութահայության միջև, երգնական նկատում էր, թէ բոլշևիկները իբր շեն ուզում կապ պահպանել գաղութների հետ: Այդ կապի չփրությունը շատ ձեռնուր էր դաշնակցականներին: Այդ իսկ պատճառով նրանք աղմուկ էին քարձրացկում և հոխորում: Այժմ

⁷ Մարտանի Ալ, Կռառակցությունները գաղութահայության մեջ. Թիֆլիս, 1924, Խաղաղի Խորհրդային Հայաստանի ուղին. Թիֆլիս, 1924:

կապը կա, ևս ամուր է և քանի գլուխ՝ ուժեղակառ է²: Նա գուտով էր, որ դաշնակցականները դեմ են զարգարահայերի՝ դեպի մայր հայրենիք կողմաբաշխմակը, քանի որ «...եթե զարգահայության որոշ տարրերը երես դարձնեն դաշնակցականներից, ել պատց կցաւը վերջացած կլինի»³:

Աշխատության մեջ հեղինակի առաջարրած շատ որութեներ կրում են քարոզական ընույթ: Սա հասկանալի է, քանի որ Դաշնակցությունն էր այն կուսակցությունը, որը մեծ մասամբ հրաժարվում էր Հայաստանը խորհրդային տեսչելու բոլշևիկյան ձգութերից, իսկ Երևանի համաձայնագրից (2 դեկտեմբերի 1920 թ.) հետո, որով խորհրդայնացվեց Հայաստանը, ևս էր, որ առաջնորդեց 1921 թ. փետրվարյան ապառամբությունն ընդունելու Հայերկումի և կրած վարած քաղաքականության:

Ազ. Մյասնիկյանը 1921 թ. փետրվարյան իրադարձություններից հետո ցանկանում էր ընդլայնել բոլշևիկյան ազդեցությունը, ինչին արտերկրում խոցնելուում էր Դաշնակցությունը: Ռուսի ևս Դաշնակցության դեմ զարաֆիարական պայքարի է նախապատրաստում ուղ խորհրդահայ մուավորականությանը, և այդ պայքարը պետք է արտացըլիք նաև պատմազիտության մեջ: Նրա նպառուակն էր հայ համայնքերի աշխատավորությանը կապել այլ երկրների աշխատավորության հետ: Մյասնիկյանը գրում էր. «Եթա մի վայր, որտեղ չկիենք հայ զարաֆիաներ, զիսավորապես քանվորենից և զուղացիներից բաղկացած: Նրանք ունեն իրենց ուրույն կյանքը, ապրում են Խորհրդային Հայաստանից իրենց հասած լուրերով ու տեղեկություններով, երանարակում են օրաթերթեր, շաբաթա-և-ամսաթերթեր ու զրույկներ, գումարում են ժողովներ, սարքում են հանդեսներ: Բայց այդ ամենը կատարվում է կղզիացած վիճակում, տեղական բանվորների և աշխատավորնե-

² Մարտունի Ազ. Դուռըցորդուները զարգարակարյան մեջ. Թիֆլիս, 1924, էջ 5.

³ Լույս տեղավոր, էջ 6.

ըի հետ հայ գաղքականությունը օրգանապես կապված չէ⁴: Ուրեմն հարկավոր էր, որ գաղութահայ աշխատավորությունը դուրս գար իր «կապիտալիստական օրինապահությունից» և միանար այլազգի աշխատավորությանը՝ կապիտալիզմի դեմ պարբերու նպատակով:

Ալ. Մյասնիկյանը թեսադառնում է նաև ՌԱԿ-ի գործունեությունը և Վերջիններին՝ Հայաստանը գնահատելու տեսակետները անընդունելի է համարում: Նա գրում է, որ ռամկավարելոր Խորհրդային Հայաստանը գնահատում էն այն պատճառով, որ «Մեկ, որ կարելի է այդպիսի երկրում կապիտալ շահեցնել, իսկ ռամկավարը կապիտալ ունի: Երկրորդ, որ խաղաղությունը հետապնդություն կուա արտասահմանան գաղքականությանն անցնել Հայաստան, իսկ այդ գաղքականությունը անհանգստացնում է հայ մեծատնիկ: Երրորդ, որ հարստացող Հայաստանն արտասահմանից կընդունի որբերին, իսկ սրանք հոգս էն պատճառում հայ հարուտոիկ: Վերջապես, որպես ազգասիրական գործ, ռամկավարը, ինչպես ցույց է տալիս «Պայքարի» հոդվածը, կուգենար որպես զի այսօրվա փոքրիկ Հայաստանը վաղը դառնա մեծ Հայաստան»⁵: «Ռամկավարելոր, - զրում է նա, - հայ խոշոր բարժուազիայի կուսակցություննեն, իսկ բոլշևիզմը պրոլետարական հոսանք է, աշխարհայացք է: Դրանք հակառի թերուեր են: Եվ որքան է թենութից մեկը ժամանակավոր համակրանք տաձեւ դեպի մյուսը, հակամարտությունը միշտ էլ կընեին»⁶:

Ալ. Մյասնիկյանը դեմ էր ոչ միայն հայ համայնքերում ոսմկավարելի ծավալած գործունեությանը, այլև նրանց՝ Խորհրդային Հայաստանին օգնելու ցանկությանը, որը նրանք արտահայտել էին Փարիզում տպագրված «Ապագա» թերթի օգոստոսի 3-ի հա-

⁴ Լույս տեղում, էջ 10:

⁵ Լույս տեղում, էջ 15-16:

⁶ Լույս տեղում, էջ 19.

մարդում. «Շամկավար-Ազատական կուսակցությունը, մեր ժողովրդի մեծամասնության հետ համաձայն այն կարծիքն ունի, որ առանց բոլշևիզմի ընկերական ըմբռնումներուն համախոհ բայց, մենք պարտինք Հայաստանի արդի կառավարության օգնել իր վերաշինության գործին մեջ»⁷:

Հասկանալի է, որ այս ամենը պետք է պայմանավորել բոլշևիկյան կուսակցության որպեսորած այլընտրաներային քաղաքական գաղափարախոսությունների նկատմամբ ժխտողական մոտեցումներով. որը չեղ կարող ընդունելի չինել Խորհրդահայ պատմագրության համար:

Ալ. Մյասնիկյանը սկսութահայ քաղաքական ուժերին «մենաշնորհից» զրկելու համար հայ քաղաքական կուսակցությունների կողմից Հայկական հարցով զբաղվելը նույնպես կապում է Եվյուպական բուրժուազիայի հետ և այն համարում հայ աշխատավորության հաւելեա դավաճանությունը: Նրա կարծիքով Հայկական հարցի անոնից կարող է հանդես գալ միայն Խորհրդային Հայաստանը:

Աշխատավորյան մեջ Դաշնակցության գործունեության գնահատականը, մյուս երկու կուսակցություններին նվիրված բաժինների համեմատությունը, ամենաընդարձակելի է: Ալ. Մյասնիկյանը կանգ չի առնում անզում Հ. Յ. Դաշնակցությունը բուրժուամասության մեջ մեղադրելու առջև՝ զրելով. «Թրքատյաց դաշնակցական ջոշերն այսօր դիմում են տաճկական օրինառացիայի, որ նշանակում է բրական ուժով՝ ընդդեմ ուսանականի, երջանկացնել Հայաստանը»⁸: Ալ. Մյասնիկյանի կողմից Դաշնակցություն կուսակցությանն անդրադարձ առավելապես հետապնդում է մեկ նպատակ՝ ցույց տալ, որ այն ուղին, որով հայ համայնքներին առաջնորդում է Հ. Դաշնակցությունը, իբր կորստաքիք է:

⁷ Խոյն տեղում:

⁸ Խոյն տեղում, էջ 30

Իսկ հեշտակյանների մասին նա գոռում է. «Հեշտակյանները կուտակցություն չեն ներկայացնում։ Նրանք այժմ ավելի են կազմալուծված, քան 1897 թվականին և նրանից հետո, եթու որպես ազգային-խաջոհեալիստական կուսակցություն։» տեղի տվին Դաշնակցության⁹։ Նրա կարծիքով հեշտակյանները ուժեղ են եղել մինչև 1897 թվականը, «...սակայն չունենալով որոշ տվյալներ՝ դառնալու խեկան խաջոհեալիստական, մարտական-բուրժուական կազմակերպություն, նրանք ընկել են Դաշնակցության հարվածների տակ և մնացել կրավորական դերում»¹⁰։

Նա, մասնավորապես, գորում է. «...պետք է որ զայութահայ աշխատավորությունը մեկրեսմիշտ վերջացնի իր հաշիվներին այդ մարդկաց հետ։ Թեև մենք պետք են հիշեցնենք այն բարյացակամությունը, որ տածում են հեշտակյանները դեպի Խորհրդային Հայաստանը, թեև մենք ծանոր ենք «Երիտասարդ Հայաստան» կոչված թերթի կոմունիզմի հասցեին արած բազմաթիվ խնկարկություններին, սակայն այդ «քերեստիքական» ծամածությունները, պատմական խեղաքարությունները, բաղաքական հաճախ սխալ ընդունվածները, որ բայց են տալիս հեշտակյաններին իրենց թերթերի եղերում և որ ըստունակ են շատերին մոլորեցնելու։ Մտիպում են նայ աշխատավորությանը, հատակ ու պարզ վերլուծության ենթարկելու հեշտակյանների խնկական նորությունը»¹¹։

Այսպիսով, Ալ. Սյասեիկյանը հայկական համայնքներում Հեղափյան կուսակցությանը նույնապես փորձում է որպես թշնամի ներկայացնել։ Պատճառը բոլշևիկյան բաղաքականության շատ դրույթների հեշտակյանների կողմից չընդունելը կամ դրանց թերահավասորեն վերաբերվել է։

⁹ Լոյն տեղում, էջ 101։

¹⁰ Լոյն տեղում, էջ 11-102։

¹¹ Լոյն տեղում, էջ 102-103։

Ալ. Սյասեիկյանը հակադրվում է հեղակյաններին՝ կապված իր նրանց բրատյացուրյան հետ։ Նա գրում է «...լցված բրատյացուրյամբ և անընդունակ լինելով ըմբռնելու, որ սուլթանիզմի ու խալիֆայուրյան անկումը և խմբերիալիստական գորբերի արտաքսումը Տաճկաստանից ինքը ըստիկըցան դարձնում են վերջինին, համեմատած անցալի հետ, մի նոր երկիր, որը կանգնած է այսօր իր կառարյալ ազատազրման ճանապարհի վրա։ Նորագույն կամ կարմիր Թյուրքիան ապագայի հարց է, իսկ այժմ պետք է օգնել արքևացող Տաճկաստանին, որ դեռևս իր ներսում ունի մի շարք վտանգներ ու անսպասելիքներ։ Այդ է, որ չի ընդունում հեղակյանի բռնավորված ուղեղը և ներ գանգը»¹²։

Նման տեսակետներ հայտնելով՝ Ալ. Սյասեիկյանն ինքը իրեն հակասում է, քանի որ ընսարատելով հեղակյանների կարծեցյալ «բրատյացուրյունը» նա կարծեն մոռացուրյան է տալիս իր մերադրանքները դաշնակցականների հասցեին՝ կապված վերջիններին «բրասիրուրյան» հետ։ Ալ. Սյասեիկյանի մրուս արմատական հակասուրյունը հեղակյանների հետ սոցիալիզմի ըմբռնումների մեջ էր։ Հակադրվելով հեղակյաններին՝ վերջինս կարծում է, որ հեղակյանների նախանշած սոցիալիզմը կեղծ է, և, բնականարար, միակ ճշմարիտը բողշեիկյան սոցիալիզմն է «Հեղակը նոյն դաշնակն է, սակայն, ավելի պարուրված, ամենասկզբից հետց պարուրված սոցիալիստական կեղծ շղարշով»¹³.՝ գրում է նա:

Որ Ալ. Սյասեիկյանի հիմնական նպատակը հայկական համայնքերում կումունիստների ազդեցուրյան ընդլայնումն է, երեսում է հետեւյալ տողերից. «Բաւորեցեք խմբերիալիզմի հիմքը, տապալեցեք նրա լեշը, հայ բանվորներ, հայ երիտասարդներ, հայ աշխատավորներ, դուք՝ որ ցրված եք Եվրոպայի ու Ամերիկայի դաշտերում ու մոալ բաղարներում, դուք՝ որ աշխատանք եք բախում

¹² Լույս տեղայում, էջ 109.

¹³ Լույս տեղայում, էջ 116։

օւստրագի բանկորենի ու զուղացիների կողքին, կովեցեր բազրաց երաց հետ միացած, միահամուռ ուժերուն Ասպարեզն աշխատավորներին է պատկանում, ևս կոմունիզմինն է¹⁴.

Ալ Մյասեիկյանի այս աշխատությունը կարևոր նշանակություն ունեցավ խորհրդահայ պատմագիտության տեսական կատապարտների սաղմնավորման գործում: Երենց կարևոր նպաստը յերեցին նաև Աշ Հովհաննիսիսյանի աշխատությունները, ոյնոր դարձյալ կրում էին ավելի բարոզական ընույթ և որոնց հիմնական թիրախը հայ բաղարական կուսակցություններն էին և հատկապես՝ Դաշնակցությունը: Եվ բայի որ Վերջինս արդեն գործում էր Սփյուռքում, նրա աշխատությունը ուղիներ էր մատեանշում նաև հայրական գաղթավայրերի պատմության պատմագրության ստեղծման համար¹⁵:

Այս աշխատության մեջ մենք նկատում ենք միևնույն նպատակը՝ սփյուռքահայ կուսակցությունների գործունեությանը տալ միև կողմանի, ավելին՝ ոչ հայանպատ գլահատական, քանի որ նրա հիմնական ինտերը սփյուռքահայ աշխատավորությանը դիմումի խորհրդային Հայաստան կողմնարուշելու ցանկությունների գործունեության մնջ գերազանցապես տեսակ բորժուազիայի շահերի պաշտպանության ցանկությունը, որի իրավացի չէ:

Նա ևս հակառակորդի դիրքերում է տեսառմ ոչ միայն Դաշնակցությանը, այլև ՌԱԿ-ին: Նա չէր էլ կարող հակառակն անել: Բոլորին գաղափարախտառությունն այլ դիրքորոշում չէր հանդիպություն: Պատահական չէ, որ ինչպես Դաշնակցությունը, այսպես էլ ՌԱԿ-ը, Աշ Հովհաննիսիսյանի պլոյմամբ, գաղութահայ բորժուազիայի կազմակերպություններ էին: Նու մասնավորապես զորում է: «Ան միեւ այնի հարաբերությունները գաղութահայ բորժուազիա-

¹⁴ Լոյն տեղում, էջ 136:

¹⁵ Տե՛ս Հովհաննիսյան Աշ, Գաղութահայ Խնդիրներ, Երևան, 1925:

ի և իր կազմակերպությունների հետ՝ առիջ են տալիս հաճախ գաղութահայ մասսաներին եւթաղբելու թէ հիրավի ընդհանուր հասկացողության եւս եկել մենք իր դասակարգային հակառակորդների հետ։ Հանգամանք, որ երբեմն տարակուանք և շփոք է ձգել մասսաների մեջ, վարանում և անզում հիւստրոֆուրյուն է տառաջացրել նրանց շարքերում մեր քաղաքականության նկատմամբ¹⁶։ Այստեղից էլ նա եզրակացնում է, որ հայկական համայնքներին դեպի աշխատավորությունը կողմնորոշելու համար «...անհրաժեշտ է, որ այդ տարրերը ճշտեն իրենց դիրքը...» մայր կուսակցության հետ։ Կամ զեք գործական քայլեր անեն նրա ազդեցությունից ազատազրվելու համար»¹⁷։ Աշ. Հովհաննիսյանի կարծիքով ՌԱԿ-ը ներկայացնում էր գաղութահայ այս բուրժուազիան, որը տրամադրված չէր Խորհրդային Հայաստանի դեմ, սակայն խնդիր էր դիսում նրան «...գաղութահայ մասսաների առաջ հայտնաբերելու ու մերկացնելու համար»¹⁸։

Միանգամայն անընդունելի են անվանի պատմաբանի հետևյալ դատողությունները. «Մենք պետք է խորացնենք հակառակությունների այն վիճը, որ ընկերում է ազգայինական կուսակցությունների սիրություն։ Բայց և այնպէս չպիտի մոռանանք, որ հակահեղափոխության ներքին պառակտությ հանգամանք է, որ ունի հեղափոխության համար միայն օժանդակող գործոնի նշանակություն։ Դեսք է օգուազործենք այդ պառակտությը, քանի որ, հիրավի, այդ պառակտությը չէ, որ կազմելու է մեր քաղաքականության առաջըքը, նրա զիսավոր հետակետը։ Այդպիսի առանցք, այդպիսի հետակետ մեզ համար կարող է լինել միայն գաղութահայ մասսայի կազմակերպված ուժը, բուրժուազիայի և իր կուսակցությունների դեմ վարած հետևողական ու անհաջող պայքարը»¹⁹։

¹⁶ Լոյն տեղում, էջ 4-5։

¹⁷ Լոյն տեղում, էջ 6։

¹⁸ Լոյն տեղում, էջ 7։

¹⁹ Լոյն տեղում, էջ 8։

Այսպիսով, նա հետապնդում էր հայ գաղութաբնակներին սեփական կուսակցությունների դեմ համելու խնդիրը, որը դարձայ բոլշևիկներ կուսակցության քաղաքականության դրսևորում էր:

Աշ. Հովհաննեսիսյանն առաջարկում է ստեղծել նոր կազմակերպություններ, որոնց նպատակը պետք է լինի պայքարը հայ բորբության և նրա կուսակցությունների դեմ: Ելենով բոլշևիկներ կուսակցության դիրքորոշումներից հայ քաղաքական կուսակցությունների վերաբերյալ նա ներկայացնում է հայեցակետեր, որոնք հետագայում հիմք հանդիսացան հայ քաղաքական կուսակցությունների և զարութափակության մեջ երանց դրի գնահատմանը միտուած պատմագիտական աշխատությունների առեղծման համար:

Եթե Աշ. Հովհաննեսիսյանի այս աշխատությունն ավելի շատ լրում է գաղափարական-քարոզական ընույթ, ապա նրա մեկ այլ աշխատություն, այնուամենայնիվ, կարող ենք պետք, որ արդեն պատմագիտական ընույթի Շնայած գաղափարական-քարոզական որոշ տարրերին և վիճելի հայեցակետերին²⁰: Հայաստանի հեղափոխական շարժումների պատմության մեջ նո Մայիսյան ապստամբությանը կարևոր տեղ է հանկացնում: Աշ. Հովհաննեսիսյանը արտահայտել է նաև արդարացի և համեմատաբար ընդունելի տեսակետներ ապստամբության պատճառների և դեկանակարերի բույլ տվյալ սիսակների վերաբերյալ: Նա գրում է, թե այս ապստամբությունը «...անարազատ և անդեկ ապստամբության էք»²¹, և որ դրա պարագության հիմնական սրածառարքը «...քանակով և որակով ուժեղ բանվորության բացակայությունն էք»²²: Միաժամանակ, անընդունելի է, որ Հայաստանի Հանրապետության 1920 թ. մայիսյան իրադարձությունները համեմատվում են 1917 թ. հունվարի Ռեստրովայում տեղի ունեցած իրադարձությունների հետ:

²⁰ Տե՛ս Հովհաննեսիսյան Աշ.՝ Հայաստանի հեղափոխության հոգին ու հոկտեմբերը, Երևան, 1923:

²¹ Լոյն տեղում, էջ 46:

²² Լոյն տեղում:

Աշխակցության գաղտնաբարախռության անդրադարձն է նաև իր հաղվածներից մեկում, որտեղ փոքր-ձեռք է ցոյց տալ այդ կուսակցության գաղտնաբարախռության եվոլյուցիանը²¹: Այսուել նա ըստիանդության եզրեր է տեսնում ՀՅԴ-ի և բուրժուազիայի գաղտնաբարախռությունների միջև: ՀՅԴ-ի գաղտնաբարական հենքի հարցը առավել տրամաբանական վերլուծություններով նա ճշտել է իր հետազա աշխատություններում: 1920-ական թվականների առաջին կեսներին նրա հրատարակած գործերից պատմազիտական մտքի առավել հիշարժան է նրա մեկ այլ աշխատությունը²²:

Տեղինակը՝ Դաշնակցությանը մեղադրում է դեպի Արևմտությակակածության մեջ, որի ըստ նրա՝ համահռչակ է դեպի միջազգային խմբերիալիզմ հակվածությանը: Բայց չէ՝ որ այդ նոյն խմբերիալիզմի շարքերում էր նաև ցարական Ռուսաստանը, որը հայոցանը սիե հույսեր էր ներշնչում թէ՝ պատերազմից առաջ և թէ՝ հետո՝ հեղափոխությունների ընթացքում: Բացի այդ՝ Դաշնակցությունը չի անտեսել նաև Ռուսաստանի հետ հարաբերությունների անհրաժեշտությունը, որը նրան չէր կարող ձևող մեկնել, քանի որ պատերազմը շավարտված՝ ներքաշվեց բաղարացիական կորուսների մեջ: Իսկ այս, որ արևմտյան տերությունների նվաճողական բաղարականությունը զահ դարձեց նաև հայությանը, հսկասարակես վերաբերում է նաև Ռուսաստանին՝ ցարական կոմքութելյան:

Հիմնականում նախորդների նոյն ոգով է շարադրված նաև Ա. Կարինյանի աշխատությունը²³: Տեղինակը Հայաստանի և հայ ժողովրդի բոլոր ձախորդումների հիմնուկան մեջունոր համարում է

²¹ Տես Հովհաննեսիան Աշ., Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը, «Նոր», գիրք երկրորդ, Երևան, 1923:

²² Տես Հովհաննեսիան Աշ., Դաշնակցությունը և պատերազմը, Երևան, 1924:

²³ Տես Կարինյան Ա., Խմբերիալիստական պատերազմը և Հայությունը, Երևան, 1924:

Դաշնակցությանը, նրա արևմտամետ կողմնորոշման մեջ է տեսնում պարտությունների պառճառը:

Թեև ժամանակին քննադատութել է²⁶, սակայն հարկ է փաստել, որ Ս. Կասյանի հողվածներից մեկում²⁷ տրամաբանական տարրեր կան: Եթե Շ. Հարությունյանը գուտում է, որ Ս. Կասյանի հետևյալ տեսակետը սխալ է, ապա, մենք, ըստիակառակը, գուտում ենք, որ այն միանկամայն տրամաբանական է: «Համարձակ կարող ենք ասել, որ Հայաստանի զյուղացիության մեծագույն մասը՝ 95 տոկոսը, կազմված է չունիմներից (չունորներից – Ռ. Ա.): Ուրեմն, Հայաստանը ոչ միայն զյուղատնտեսական երկիր է, այլև մասը ու աղքատ զյուղացիական տնտեսությունների երկիր՝ զուրկ դասակարգային խորը անտագոնիզմից»²⁸. Ասինար է չհամաձայնվել նրա այս տեսակետի հետ:

Այսպիսով, 1920-1925 թթ. հիմնարար զիտական արժեք ներկայացնող պատմագիտական աշխատություններ լույս չեն տեսել: Ամրողատիրական քաղաքական համակարգին բնորոշ զարգացմանսական հատակ սահմանադիակումներ ուսումնասիրվող ժամանակահատվածում դեռևս վերջնականապես չեն ձևավորվել: Եվ այսուամենայնին, ձեսակորվել եր հառակ մի միուսում՝ պատմագիտությունը պիտարկել մարքս-լենինյան աշխարհայացքի հիմնարար դրույթներից ելեկով, կարևորագույն պատմական դեպքերը մնկեաբանել՝ ելեկով իշխող քաղաքական դիրքորոշումից:

²⁶ Տե՛ս Հազարբյունյան Շ., Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում, 1920-1963, Ռուբագիտեր, Երևան, 1967, էջ 368.

²⁷ Տե՛ս Կասյան Ս., Հայաստանի տնտեսական-դասակարգային ստուկուրան, «Նոր աշխարհ», Թիֆլիս, 1922, N 1.

²⁸ Նոյն տեքում, էջ 18:

ПЕРВЫЕ ШАГИ ФОРМИРОВАНИЯ ТЕОРИТИЧЕСКИХ
ШТАМПОВ СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ
ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ

РЕЗЮМЕ

Рассматриваемый этап армянской историографии советского периода анализируется в рамках противоположных точек зрения официальной власти Советской Армении и крупных национальных политических партий и движений, действующих как в Армении, так и в армянской Диаспоре.

Данное исследование включает обобщенную и систематизированную картину политических и идеологических позиций в период с 1920 по 1925 гг., относительно полностью охватывая основные ориентиры в политической жизни Армении в указанный период.

RUBEN MIRZAKHANYAN

THE FIRST STEPS TO THE FORMATION OF THEORETICAL
PATTERNS OF THE HISTORIOGRAPHY OF SOVIET ARMENIA

SUMMARY

The milestone of historiography of the period is observed within the context of opposing perspectives of the official authorities of Soviet Armenia and the major national political parties and movements both in Armenia and in the Armenian Diaspora.

The study involves a systemized outline of political and ideological standpoints of the period between 1920 and 1925 with a relatively complete coverage of the mainstream perspectives of the political realm of Armenia of that period.

1920 թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ
ԳԽԱՍՏԱԿԱՆԸ ԸՆՏ Հ ՔԱԶԱՋՆՈՒՆՈՒ
•ՀՅ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԵԼԻՔ ՉՈՒՆԱՌ ԱՅԼԵՒՄ.
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ

Հայ պատմագրության ամենավիճակարույց հարցերից է Հայաստանի ու հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցած 1920 թ. բուրք-հայկական պատերազմը՝ որը, փաստորին, կանխորոշեց Առաջին հանրապետության անկումը և Հայաստանի խորհրդայնացումը։ Այդ է պատճառը, որ զործնականում պատերազմի ավարտից մինչ օրս տարբեր նկատառութերով ամենատարբեր հայացքներ ու քաղաքական դիրքորոշումներ ունեցող հուշագիր, պատմաբան, պետական-քաղաքական գործիչ հեղինակների կողմից գրվել են այդ իրադարձության մասին և ըստ նրանց կուսակցական-քաղաքական հայասիրության ու շահագրգության տրվել են ոչ միանշանակ մեկնաբանություններ ու գետականականներ։ Այդպիսի մի հուշագիր հեղինակ կարելի է համարել Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունուն¹ հաևան 1923 թ. Բուխարեստում, Վիեննայում և մի շաբթ այլ քաղաքներում լույս տեսած և իր ժամանակին մեծ այնուկ հանած՝ «ՀՅ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս» խորագրով արժեքավոր աշխատության։

Մասնագիտությամբ ճարտարապետ-շինարար, 23⁷ նշանավոր գործիչ Հ. Քաջազնունու սույն գրքում բուրք-հայկական պատերազմի մասին արտահայտած մտքերին ու տեսակետներին հիմնավոր գետականական տալու համար նախ՝ անհրաժեշտ

¹ Քաջազնունի Հ. ՀՅ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս. Բուքրեշու. 1923. Վիեննա, 1923. Ավերանդիքու. 1923, Թիֆլիս, 1923, Երևան, 1994, 2016.

է ցուց տալ այն հանգամանքները, որոնցում նախկին վարչապետը ձեռնամուխ եղայ նման աշխատության հրատարակմանը:

Հայտնի է, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո դաշնակցական այլ գործիչների հետ արտասահման անցած և Քաղաքականին հայտնելեց ծանր ապրումների ու հուսայցության մեջ՝ 1923 թ. գարեանը Բուխարեստում զբեց մի ընդարձակ գեկում-դիմում՝ ուղղված ՀՅԴ Վիեննայի խորհրդաժողովին (1923 թ. ապրիլ-մայիս), որում առաջարկում էր, որ ստեղծված իրավիճակում Հաշնակցությունը հեռանա քաղաքական ասպարեզից, դադարեցնի իր գործունեությունը և ասպարեզը բաղնի իշխանությունը ստանձնած Հայկումկուսին՝ երկիրը վերաշննելու և, միզուցելու, հայ ազգային մյուս խնդիրները լուծելու համար:

Սպասելի էր, որ խորհրդաժողովը պետք է մերժեր այդ առաջարկը: Այն անգամ ընտրվյան շրբվեց²:

Գրքում հեղինակը վերագիտատել է ՀՅԴ գործունեությունը սկսած Առաջին աշխարհամարտից (1914-1918 թթ.) մինչև Լռասի հաշտության խորհրդաժողովը (1922-1923 թթ.): Բազում այլ հարցերի հետ Քաջազնությին անդրադարձել է թուրք-հայկական պատերազմի խնդրին՝ սկսած 1920 թ. ամռանը պատերազմի դիվանագիտական նախապատրաստությունից մինչև Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 3-ի կողոպտիչ հաշտության պայմանագիրը:

Աշխատանքը զբած է հարցադրումների, մեկնարանությունների ու դրանց գևահատականներ տալու ձևով: Նախ հարց է տրվում. «Կարո՞ղ ենք արդյոք խուսափել այդ պատերազմից»: Այսուհետև պատասխանում է «Հավանորեն՝ ոչ»³: Փոքր ավելի

² Զանգեռն Ար., Յ. Քաջազնությին և ՀՅԴ Դաշնակցությունը. «Հայքենիք», Բուռն, 1924, բանվար, թիվ 3, էջ 48.

³ Քաջազնությին ՀՅԴ Դաշնակցությունը անձիր չունի այնան. Բուքրեան, 1923, էջ 31.

ուշ հեղինակը, հակասելով ինքն իրեն, զրում է, որ կիսուսափեկը պատերազմից երե ամռանը բանակցելիք բուրքերի հետ և զեայինը որոշ տարածքային զիջումների: Խոսքը վերաբերվում է Երեան ժամանած բուրք երկու պատվիրակությունների հայկական կառավարությանը առաջարկել էին հրաժարվել առաջիկայում կերպելիք Սևրի դաշնագրից և Հայաստանի սահմանների մասին երկուող պարմանազիր կերել: Խոչպես նշում էր Հակոբ Տեր-Հակոբյանը (Դրագեկ) դարձալ բուրք-հայկական պատրազմին նվիրված իր «Հայաստանի վերջին աղետո» զրում: «Անոնք կառաջարկեին սա տեսակ սահման մը. Երեւան հասրապետութիւնը պիտի ընդարձակուեր դեպի Վան անկից դեպի հիւսիս բարձրանալով պիտի հասներ Սեւ ծով ուր Շիզեկի նաւահանգիսոր պիտի բոդուեր Հայոց, սակայն երգում քաղաքը պիտի մնար Թուրքիոյ»⁴.

Բազագումնին կշտամբում է կառավարությանը, որ փորձ չարեց բուրքերի հետ բանակցելու⁵: Այս կապակցությամբ նա հեարավոր էր համարում, որ եթե բանակցելիք, կարելի էր հասնել ոչ միայն 1914 թ. սահմաններին և զուցել բուրքերը «հրաժարվելի նաև Բայազետից և Ալաշկերտից»⁶: Բայց դրան հաւոյիման հեղինակը պատասխանում է, որ «Սևրի դաշնագրից շլաքընել էր բոլորին աշքերը. կաշկանդել միուրը, մթևացրել իրականության զիտակցութիւնը»⁷: «Այսօր մենք, հասկանում ենք. - շարունա-

⁴ Տե՛ Ֆակորեան Յ., Հայուստանի վերջին աղետը, Կ. Պօյիս, 1921, էջ 19.

⁵ Բառագլունի Հ., Խշվ. աշխ., էջ 33: Իրու 1920 թ. ամռանը քննարական Թուրքիայի սպառզործախանությանը երկու անգամ եամսակով դիմել էր ՀՀ կառավարությունը. Բայումի և Բրեստ-Լիտովսկի հաշուության պարմանազըների շրջանակներում բանակցելու և հաշուության կերպելու ստացարկությունը: Սակայն հայկական կազմը, փաստորեն, անհանուն է այդ սպառզործները և ուսումն դրանց պահանջանքները է ոչ թե արտ. գործ Խախաջար Հ. Օհանջանյանը, այլ նախարարության ընդհանուր քարտուղար Ա. Տեր-Հակոբյանը:

⁶ Բայումի Հ., Խշվ. աշխ., էջ 33:

⁷ Հույն տեղում:

կում է Հ. Քաջազնունին. - թէ որքան շահած կլինեինք, եթէ 1920 թ. աշխանք Սևրի դաշնագրի գնով անմիջական համաձայնության նկած լինեինք բուրքերի հետ: ... Փաստն այն էր, անեներելի փաստ, որ ոչինչ շարինք պատերազմից խուսափելու համար, հակառակը՝ ինքեւս անմիջական առիթ տվինք պատերազմի (Ակատի ունի Օլրի ածխահանքերի գրավումը)»⁸:

Այս կապակցությամբ պետք է ասել, որ Հ. Քաջազնունու վերանշյալ դատողություններն ու մեկնաբանություններն իրատեսական չեին: Չենք կարծում, որ առանց ուժ գույց տալու բուրքերը Հայաստանին որոշ զիջումներ՝ թեկուզ մինչև Բայազետ ու Ալաշկերտ, անեին: Հիշեցնենք, որ թևմալականները տակալին 1920 թ. հունիսին էին պլանավորել հարձակվելու Հայաստանի վրա, որը կանխվել ու առժամապես հետաձգվել էր Գ. Շիշերինի Անկարայի կառավարության ուղղված նամակով⁹: Կեշանակի 1920 թ. աշխանք բուրք-հայկական պատերազմը անխուսափելի սպառնալիք էր, քանզի բուրքերը ծրագրել էին կենսազործել իրենց «Ազգային ուխտը»:

Ինչ վերաբերում է Երևան ժողոված բուրք պատվիրակների առաջարկներին, ապա դա կարելի է որպես որպես տակտիկական բայլ՝ միգրացի պատերազմի և խաղաղության խնդրում Հայաստանի իշխանությունների տրամադրությունները ստուգելու համար: Անդրադառնայլվ այս խնդրին՝ պատռմաբան է: Զոհրաբյանը մեղադրում է այն հեղինակներին, որոնք հավատացել են այդ երկու բուրքերին՝ կարծելով, թէ երանք իսկապես ճգուտ են հարթել հորցը և այսինք Արևմտյան Հայաստանի որոշ մարզերը զիջելու գնուլը¹⁰:

⁸ Նոյն տեղում, էր 34:

⁹ Документы внешней политики СССР, т. 2. Москва, 1958, с. 725 (приложение).

¹⁰ Զոհրաբյան է.. 1920 թ. բուրք-հայկական պատերազմը և տերությունները. Երևան, 1997, էր 45:

Այժմ վիրձենք ներկայացնել Հ. Թաջազբունու կարծիքը երկու կողմերի գիևված ուժերի մասին: Նրա կարծիքով՝ 1920 թ. աշխատը «ունեինք բանակ, որ լավ գիևված էր անզիական գերեզով ու մարուր հազվական անզիական հագուստներով, ունեինք բավականաշափ ռազմապաշար» մեր ձեռքին էր Դարսի պես կարևոր բերդը» և այն¹¹: Այսու կողմից նա նշում է՝ «Աներելին այն է, որ տեղյակ չեինք բուրքերի ռազմական կարողությունների մասին ու չեինք ճանաչում մեր սեփական բանակը»¹²:

ՀՀ նախկին վարչապետ Հ. Թաջազբունու ավելի վայ՝ 1919 թ. կազմած և ԱՄՆ-ի Սենատին ներկայացրած պատմական հաւագրով 1919 թ. հույսի վերջին Հայաստանի գործերի ընդհանուր թիվը նշվել է 18 հազար մարդ¹³: Արխիվային տվյալների համաձայն՝ արդեն 1920 թ. գարեանը Հայաստանի գիևված ուժերի ընդհանուր թիվը հասնում էր 25 հազարի շիհաշված կամավորական խմբերը և աշխարհազորը¹⁴: Բով բուրք-հայկական պատերազմի ժամանակ հայկական գիևումի ընդհանուր թիվը կազմել է շուրջ 40 հազար: Այս տվյալն ընդունում են շատ հետազոտողներ ու հուշագիր հեղինակակեներ¹⁵: Այս իմաստով իրավացի էր նախկին վարչապետը, եթե նշում էր, թէ կար բավականաշափ թվով գիևված բանակ, որ կարող էր գոնե պաշտպանել սեփական պետության սահմանները: Թուրքական բանակի գիևումի թվարանակը Հայաստանի բանակի զիանավոր շուրբի հետախուզական բաժնի պետ կապիտան Տ. Դավիթյանը կազմուժ մի զաղուհի ամփոփազրի համաձայն՝ 1920 թ. գարեանը բեմաշական բա-

¹¹ Թաջազբունու Հ., Աշխ. աշխ., էջ 33:

¹² Լուի Յունոն, էջ 34

¹³ Թաջազբունու Հ., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 17:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 422, թ. 31:

¹⁵ «Քուօնք Ա., Հայաստանի Հանրապետություն, Պետքար, 1958, էջ 477, Թոհրային է.Ա., էջի աջի, էջ 170-173. Արձունիք և Հայ տամական պատշաճություն, Երևան, 2002, էջ 31, 34 և ուրիշներ:

Խակում հաշվում էր 51476 մարդ, որի Արևելյան ճակատում գործող 15-րդ կորպուսն ուներ 13338 մարդ¹⁶. Բացի այդ՝ Հայաստանի ռազմաբաղարական դեկավարությունը բուրքերի զինական և այլ կարուղությունների մասին գաղտնի տեղեկությունները եր ստանում ՀՅԴ և Պոլսի, Թիֆլիսի և Բարձի կառուցմերից եւ այս իմաստով այնքան էլ տեղին չէ և Քաջազնունու դիտողությունը, թե «տեղյակ չենք բուրքերի ռազմական կարողությունների մասին»¹⁷: Վերը նշված տվյալները ի մի բերելով՝ պատմարան է: Զոհրաբյանը եղբակացնում է որ 1920 թ. աշխանք Հայաստանի դեմ արշավակի ելած թեմայական գործի ընդհանուր թիվը անցնում էր 50 հազարից¹⁸:

Արդեն բուժ բուրք-հայկական պատերազմի կապակցությամբ Հ. Քաջազնունու առավել վիճահարուց մեկնարանությունների առանձականականներից է Հայաստանի պարտության պատճառներին անդրադարձը:

Անառարկելի է նրա գեահատականը երկամյա պատերազմում Հայաստանի ու հայ ժողովրդի կատարյալ պարտության վերաբերյալ: Չի կարելի շհամաձայնվել, նրա արտահայտած այս մտքին, որ «մեր բանակը, որ կուշտ էր, լավ զինված ու լավ հագնված, չկովեց, գործերը շարունակ նահանջում էին կամ դիրքերը լքում, գենքերը բափում ու ցրվում գյուղերը»¹⁹: Ճշմարիտ է ասված, որ «բանակը բարոյալրված էր»²⁰: Անշուշտ, բանակի բարոյալրման գործում եական դեր էին խաղացել հաերապետության գոյության ընթացքում բուրք-բաթարական հակապետական ելույթների մնջման (հնագանդեցման) ժամանակ խմբապետների ու զինվորականության բալանը, դրան ուղեկցող զինվորական

¹⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 422, թ. 31:

¹⁷ Քաջազնունի Հ., նշվ. աշխ., էջ 34:

¹⁸ Զոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 167, 169:

¹⁹ Քաջազնունի Հ., նշվ. աշխ., էջ 34:

²⁰ Նոյն տեղում:

կարգապահության անկումը: Սակայն միաևշանակ չէ նախկին վարչապետի այն դիտարկմանը, թէ Հ. Օհանջանյանի գլխավորած Բյուրո-կառավարությունը և զինվորական նախարար Ռ.Տեր-Մինասյանի խրախուսած խմբային ու խմբապետական համակարգը «քանդակվել էր զինվորական կազմի ամբողջությունը՝ միությունը»²¹: Մենք կասկած ունենք այս հարցում, որովհետև երբ հետևում ենք պատերազմական զործողությունների ողջ ընթացքին, ապա տեսնում ենք, որ կանոնավոր կոչված գործը իր կաղրային հրամանատարելուն, շարունակ դասարձել ու նահանջել է Մինչդեռ եթե բշխամուն թիշ թէ շատ դիմադրություն է ցույց տրվել, ապա դա տեղի է ունեցել այն ճակատներում ու տեղամասերում, որտեղ կովել են Սեպուհի (Ա.Ներսիսյանի): Դրոյի և մյուս խմբապետների գլխավորած կամավորական խմբերը: Սյուս կողմից հազիվ թէ կարելի է համաձայնվել Հ. Քաջազնունու արտահայտած այն մտքին, թէ բանակը հոգնած եր²²: Առաջին անգամ նման միտք արտահայտել է նախկին զիննախարար Ք. Արարատյանը²³: Այս դեպքում կարելի է հարց տալ, պատրազմներից թուրքական բանեան է՞ ամենի հոգնած, թէ՝ հայկականը: Փաստերը ցույց են տալիս, որ, անշուշտ, թուրքականն ամենի հոգնած կլիներ, որովհետև կոլում էր սկսած 1911 թ. թուրք-հուալական պատերազմից: Ինչը շարունակվեց մինչև 1922 թ. աշուն, և դրա արդյունքում կարողացան փրկել Թուրքիան կործանումից: Այլ բայ է, որ հայկական բանակը պատրազմին հոգեբանորին պատրաստ չէր:

Տեղին է ասված, որ կոմի դաշտում գորքի հաջողության գրավականներից մնկը զինվորի հօգեբանական-կամային պատրաստվածությունն է, որն էլ ենթադրում է ամուր կարգապահություն, տոկունություն, հայրենի հողն ու ժողովուրդը պաշտ-

²¹ Նոյն տեղում:

²² Նոյն տեղում:

²³ «Ճակատամարտ», Կ. Պոլս, 24 դեկտեմբերի 1920:

պատելու խորը զիտակցությունը։ Բանակի բարոյասհոգեբանական գործուի կարևորությանը բանից անդրադարձել է Սեծն Նժդեհը։ «Հոգեբանական գերադասությունը բարոյական ուժ Ե»²⁴։ Հայաստանի պարտությունը մեծ չափով կարելի է հոգեբանական գործուով բացատրել։ Եթե համեմատում ենք 1918 թ. մայիսյան հերոսամարտերը 1920 թ. պատերազմի հետ, ապա տեսնում ենք, որ մայիսյանի դեպքում կովողների ու ժողովրդի բարոյակամային ռզին շատ ավելի բարձր է եղել, որևէ էլ գործնականում փրկել է արևելահայությանը կուռքածից և միաժամանակ հիմք հանդիսացել Առաջին Հանրապետության անկախության հոչակտման համար։

Հ Բազավճունու գլուխկում սկզբունքային թեսության առարկա հանդիսացող հարցերից մեկը բուրք-բոլշևիկյան համաձայնության և բոլշևիկների կողմից հայկական բանակը դասայնեցու ու բայրայելու հարցերն են։ Այս կապակցությամբ հեղինակը հարց է տալիս և շարունակելով զրում է։ «Կա՞ ր արդյոք որևէ համաձայնություն բոլշևիկների ու բուրքերի միջև։ Մեր շարքերու տարածված է այդ համոզմունքը։ Կարծում եմ, սակայն, որ սխալ է այդ համեմայն դեպք տպացուց չկա։ Հավանական է, որ բոլշևիկյան գործակալները (կամ բոլշևիկյան տրամադրություն ունեցող անհատները) աշխատել են բանդել ներսից մեր բանակը։ Բայց որա համար հարկավոր չէր որևէ համաձայնություն բուրքերի հետ, եկան՝ մեր պարտությունը արագացնելու համար շատ էլ կարևոր չէր բոլշևիկների միջամտությունը...», որ բոլշևիկների դավադրությունը չէր մեր պարտության պատճառը, ոչ իսկ բուրքերի ուժը (որ շատ էլ մեծ չէր այն ժամանակ), այլ մեր սեփական ապիկարությունը»²⁵։ Բերլան բաղվածքից երկում է, որ

²⁴ Նժդեհ Գ., Եղիս իմ օրագրեն, Գյումրի, 1924, էջ 14.

²⁵ Բազավճունու Հ., Եղիս աշխ., էջ 35.

Հ. Բաշագինունին կամ փաստերի չի տիրապետել խորհրդաբական գործակցության մասին, կամ եւ փորձել է ժիստել խորհրդաբարքական գործակցության փաստը։ Հայունի է, որ սկսած 1920 թ. ամուսնից խորհրդա-թուրքական հուվիս-օգոստոսյան բանակցությունների արդյունքով Խորհրդային Ռուսաստանը ծովով ու ցամաքով ֆինանսական, գերբ-զինամքերով և այլ համակռողմանի օգնություն է ցուց տվել «հեղափոխական» Թուրքիային։ Դրանց վերաբերյալ ներկայում երապարակի վրա կամ մեծարանակ զրականություն և վավերազիր ևյուրեր²⁶։ Խորհրդաբարքական համաձայնության արտահայտություն եղավ այն, որ պատերազմի նախօրյակին՝ 1920 թ. սկսվում էրին։ Բարգում գումարված Արևելյի ժողովուրդների համագումարի արդյունքում սկսվում էր 17-ին որոշում էր կայացվել, որով բուրքական և ռուսական գործերի առաջ խնդիր էր որեւ Հայուստանի վրա համատեղ հարձակվելու միջոցով տապալել իր «սեփական ժողովրդին հարստահարող դաշնակների լուծը»²⁷։ Եսկ դրանից մեկ ամիս առաջ՝ 1920 թ. օգոստոսի 24-ին, առողջապահ խորհրդաբանական պայմանագրով խորհրդային կուռավարությունը ճանաչել էր բուրքական «Ազգային ուխտը»²⁸, համաձայնություն տվել, որ կարմիր բանակի հետ ցամաքային կազ հաստատելու համար բուրքերը զրակեն Սարիդամիշն ու Շահ-

²⁶ Տե՛ս Հայուստանի պատուհանը ՍՍՀՄ, շ. 3, Մոսկա, 1959, ս. 675. Խելքեց Ա.Ի., Советская Россия и сопредельные страны Востока, 1918-1920 гг., Մոսկա, 1964, ս. 107. Հայուստանի Ա. Բ. Արևելյի ժողովուրդների առաջին համագումարը Երևան, 1960, Զնիքային է. Սպիտական Ռուսաստանը և հայ-բուրքական հարաբերություններ 1920-1922 թթ., Երևան, 1979, եղ. 46. Հայաստանի Հակառակնուրդներ 1918-1920 թթ. (բայրաքանակ պատմություն), փաստաթուրքերի և կուրքերի ժաքանակ, Երևան, 2000, ՀԱԱ, թ. 200, գ. 1, գ. 581, 602, ֆ. 113, ց. 3, գ. 7 և այլք։

²⁷ Տե՛ս Հայաստանի Հակառակնուրդներ 1918-1920 թթ. (բայրաքանակ պատմություն), եղ. 284-286։

²⁸ Գարգարյան Գ. Հայուստանը և մեծ ակրոբակները 1917-1921 թթ., Երևան 1999, եղ. 265-268։

բայսրին, որն էլ հետազայռմ գործողության ազատություն էր տվել քիմալյաններին Հայաստանի վրա հարձակվելու համար²⁶.

Հ. Բացազնունու գորից մեջքերված հատվածի երկրորդ մասում հեղիսակը հևարավոր էր համարում բոլշևիկյան գործակալների քայրայիշ աշխատանքը հայկական բանակում։ Բայց նա հայերի պարտության զվասափոր պատճառը բոլշևիկների դավադրությունը չէր համարել, այլ «մեր սեփական ապիկարությունը»։ Հայկական բանակի դասայրման, մարտական ոզու անկման ու կազմալուծման գործում, անշուշտ, նկատելի է եղել բոլշևիկների հակապետական քարոզությունը բանակում և ժողովրդի մեջ։ Օրինակ, հայտնի է Հայկոմկուսի ԿԿ-ի 1920 թ. սեպտեմբերի 20-ի «հույժ գաղտնան» հրահանգը Բարվից կոսակցական կազմակերպություններին, թիկունքի և ռազմաճակատի բոլշևիկներին, որում կոչ էր արվում՝ չենքարկվել սպաների հրահանգներին, դասայրել ու բռնը միջոցներով կազմալուծել բանակը։ Նկատել առաջացող բուրքական զինվորների վրա²⁷։ Հայկական բանակում բոլշևիկների քայրայիշ գործունեության մասին վկայում են բանակում ծառայած բոլշևիկ զինվորները։ Այսպես, օրինակ, զինվոր Հայկ Միսիքարյանը իր հուշերում պատմում է. «Մենք զինվորների մեջ տանում եինք բացատրական-քաղաքական աշխատանքներ։ Մենք հասկապես զինվորներին բացատրում եինք, որ բուրք աշխատավորներն են մեզ նման աշխատավորներ են և դաշնակցականները ցանկանում են ոչխացնել այդ աշխատավորներին»²⁸.

²⁶ Զոհքացակ Է.Ա., 1920 թ. բարք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 145-148.

²⁷ Բազագնունի Հ. Խշկ աշխ., էջ 35.

²⁸ ՀԱԱ. ֆ. 1022, գ. 3, գ. 275, թ. 1:

²⁹ ՀԱԱ. ֆ. 403, գ. 1, գ. 20, թ. 1:

Դիարկե միակողմանի կլիսի, եթե Հայաստանի պարտության հիմնական մեղքը բարդենք բոշխիկների բայրաջի գործունեության վեա ինչպես որ դա փորձում են ներկայացնել ՀՅԴ որոշ հուշադիր հեղինակներ՝ Ս. Վրացյանը, Գևակասարյանը, Կ. Սատունին, Հ. Տեր-Հակոբյանը (Երազեկ) և որիշներ:

Եթե հանրագումարի թերեւեր Հ. Քաջազնունու արտահայտած տեսակետը պատերազմում հայկական բանակի ու Հայաստանի պարտության հարցում, ապա Նրա կարծիքով զիսավոր պատճառը պետք է համարել Հայաստանի իշխանությունների ու Նրա բանակի թշնամական ներխուժումից: Անջուշու, Հայաստանի կառավարությունը, բանակի հրամանատարությունը մեղքի մեջ բաժին ունեն Հայաստանի պարտության գործում, առկայի մյուս կողմից էլ պետք է ընդունել տարածաշրջանում առեղծված աշխարհաբարական բարյ վիճակը, որում հայունիկ էր Հայաստանը 1920 թ. Երկրորդ կեսին: Այդ նույն ժամանակ հյուսիսից Հայաստանի անկախությանը սպառնում էր նաև 11-րդ Կարմիր բանակը՝ Հայաստանի խորհրդայնացնելու խոկ հետագայում ավելի հարակ շարժվելու: Խպատակով: Արդյունքում, արևմուտքի տերությունների բար անուարբերության պայմաններում, Ս. Վրացյանի պատկերսկոր արուահայտությամբ Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց «ռազմական մուրքի և թուրքական տալի» արաւերում, թուրքական ներխուժման միջոցով կորսվեց Հայաստանի տարածքների զգակի մասը, խոկ մյուս մասը անցավ Խորհրդային Ռուսաստանի հակողության տակ և խաղաղ խորհրդայնացվեց: անքնայունակ գոնվելը պաշտպանելու հայրենիքը:

Հեղինակը պայմանագրի կերպան օրը սկսավամբ համարում է 1920 թ. դեկտեմբերի 1-ը և նույնիսկ՝ նոյմբերի 30-ը: Երականում

հայտնի է, որ պայմանագիրը կերպել է 1920 թ. դեկտեմբերի 2-ի, լուս 3-ի գիշերը՝ ժամը 2-ին մոտ, այսինքն՝ դեկտեմբերի 3-ին³³.

Հայ պատմագրության մեջ դժվար է նշել Հայաստանի կերած որևէ պայմանագիր, որին տրված լինի ավելի խիստ բացասական գևահատական, քան Ալեքսանդրապոլինը:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը իրոք համարվում է ծանրագույն, նվաստացուցիչ, խայտառակ և այլն: Նման որակությունը են տրվել Լեռի, Խորհրդային, հակադաշնակցական ռամկավարության հեղինակների կողմից: Սակայն պետք է ընդունել, որ ստեղծված իրավիճակում Հայաստանի պատմիքրակության դեկազար Ա. Խատիսյանի կողմից ստորագրված այդ պայմանագիրը չի ունեցել իրավական որեւ ուժ և, ըստ Եության, բարեբախտաբար չի կիրառվել: Բնչ վերաբերում է Հ. Քաջազնունու գևահատականին, ապա նաև, արձակագրելով դաշնագրի կերման փաստը, նշել է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը «շատ է չեր տարբերվում Քաջումի դաժան դաշնագրից»³⁴: Այս կապակցությամբ պետք է ընդունել, որ Հայաստան գործ մտցելու, երա գիենիքը սահմանափակելու և Թուրքիայից կախման մեջ զցելու հարցերում երկու պայմանագրերով հոդվածները իրար նման են, սակայն տարածքային, սահմանային հարցում Քաջումի և Ալեքսանդրապոլի պայմանագրերը եապես տարբերվել են իրարից եթե Քաջումի պայմանագրով բուրք-հայկական պետական սահմանն անցնում էր Արագած լեռան ամենաբարձր գագաթով, եջմիածնի շրջագծով. Սև ջուր գնուով և այլն, ապա Ալեքսանդրապոլի պայմանագրով այդ սահմանի անցնում էր Արար-Արփացայ (Ախուրյան) գետերի հունով՝ Հայաստանին բողնելով 4-5 զալառ:

³³ Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում. Երևան, 2000, էջ 58:

³⁴ Քաջազնունի Հ., նշել աշխ., էջ 35:

Հավանաբար և Քաջազնունու արտահայտած այս միտքը խորհրդային շատ հեղինակներ մեխանիկորեն կրկնել են և այդ երկու պայմանագրերը սխալմամբ նույնացրել են իրար:

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի է եզրակացնել.

ա) և Քաջազնունին: Սույն գիրքը գրել է որոշակի հանգամանքների և իր անձնական ապրումների ազդեցության տակ: Նա նպատակ է ունեցել վերագիտառութեան ՀՅԴ գործունեությունը այն միտումով, որպեսզի Դաշնակցությունը հեռանա քաղաքական ասպարեզից և կարողանան համակերպվել ու հաշտվել բոլշևիկների ու խորհրդային իշխանության հետ:

բ) Երանով հանդերձ պետք է ընդունել, որ 1920 թ. բուրքայիկան պատերազմի հարցում նրա մեկնաբանությունների, տեսակետների ու գնահատականների մի մասը տեղին են ու հիմնավոր, իսկ մի շարք իրադարձությունների ու դրվագների վերաբերյալ գնահատականները, մեր կարծիքով, փաստարկված չեն, սույնեկույթ են, հաճախ կառուցված ենթադրությունների վրա:

НАРИНЕ МОВСЕСЯН

ОЦЕНКА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. В ИСТОРИЧЕСКОЙ НАУКЕ ПО РАБОТЕ О. КАЧАЗНУНИ "АРФ ДАШНАКЦУТЮН БОЛЬШЕ НЕЧЕГО ДЕЛАТЬ"

РЕЗЮМЕ

К числу наиболее обсуждаемых и имеющих судьбоносное значение для армянского народа вопросов относится турецко-армянская война 1920 г., которую освещали многие авторы: мемуаристы, историки, политические деятели, в том числе – первый премьер-министр Первой Республики Армения Ованес Качазнун в работе "АРФ Дашнакцутюн больше делать нечего."

Качазнун написал работу в определенных обстоятельствах и под воздействием его личных переживаний. Он ставил перед собой

цель заново оценить деятельность АРФД с тем намерением, чтобы Дашиакцутюн удалилась с политической арены, а также смогла приспособиться и примириться с большевиками и Советской властью.

При этом нужно признать, что его некоторые трактовки и оценки турецко-армянской войны 1920 г. уместны и обоснованы, а целый ряд оценок событий и эпизодов, по мнению автора, не подкреплены фактами, субъективны и часто построены на предположениях.

NARINE MOVSESYAN

THE ASSESSMENT OF THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920
IN THE HISTORICAL STUDIES ACCORDING TO THE WORK
"THE ARF DASHNAKTSUTYUN HAS NOTHING TO DO
ANYMORE" BY H. KAJAZNUNI

SUMMARY

The Turkish-Armenian War of 1920 is one among the most disputed and important issues of fatal importance, which had been elucidated by numerous authors: memoir writers, historians, political figures, including Hovannes Kajaznuni the first Prime Minister of the first Republic of Armenia and his booklet "The ARF (Dashnaktsutyun) has nothing to do anymore".

a) Kajaznuni had written this booklet in definite circumstances and under the impact of his personal regret. He put as an aim to reevaluate the ARF activity striving to urge it to leave the political arena, as well as to adjust and come in terms with the Bolsheviks and Soviet power.

b) We should note that his approach and opinion of the Turkish-Armenian war of 1920 had been appropriate and well-ground; however, it is our assessment, that a number of his estimations of the earlier proceedings and events were not supported by the facts; they were one-sided and often based on presumptions.

ԽՈՐՀՄԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ*

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո, ընալշության լայն գանգվածների շրջանում զաղափարաքաղաքական ու մշակութային քարոզչություն իրականացնելու և կոմունիստական զաղափարներ արմատավորելու նպատակով, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍՀՀ) դեկավարությունը ձեռնամուխ եղավ հանրապետությունում քաղաքական վերահսկողության հաստատմանը: Դրան էին միտված կրթամշակութային հաստատությունների (քառորդն, կին, քանզարան, գրադարան, գրախանութ և այլն), տպարանների, միեցն իսկ երաժշտական գործիքների պետականացումը, հրատարակչական գործի կենտրոնացումը, այնուհետև քաղաքական լուսավորության կենտրոնացված համակարգի ստեղծման ուղղված քայլերն ու մամուլի պետական-կուսակցական վերահսկողությունը: Այս գործողություններին, ընականաբար, հաջորդեց գրաքննական համակարգի հաստատումը:

Արդեն 1921 թ. հուլիսից (խորհրդային Անդրկովկասում վերջինը) Խորհրդային Հայաստանում պարբերական մամուլի նկատմամբ հախնական ռազմական գրաքննությունն էր իրականացվում Ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից: Պարբերականների վերջին եղում պարտադիր նշվում էր ռազմական գրաքննության բույսության մասին: Ցուցադրական միջոցառումների ընթացքում ռազմական գրաքննության շահերը հաշվի առնելու նպատակով նազմողկոմատը համա-

* Հայազնությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳԴԿ-ի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 16ΥԲ-6Ա057 հաճկագլուխ վիճական թեմանի շրջանակներում:

գործակցում էր Լուսավորության ժողկումատի քաղաքական լուսավորության զինավոր վարչության (քաղյուսօվինվարչություն) հետ: 1922 թ. հունիսին ռազմական զրաբենության գործառույթը Ռազմադրության վարչության փոխանունում Արտակարգ հաևանաժողովին, իսկ հուլիսին ՀՍԽՀ-ում ցուցադրական միջոցառումների (թատրոն, կինո, երաժշտություն և այլն) զրաբենությունը վերապահվեց Լուսմոդկումատի քաղյուսօվինվարչությանը: Աշխաեր վարչությանը վերապահվեց նաև տպագրական զրաբենության լիազորությունը²⁵:

Խորհրդային Ռուսաստանում քաղաքական լուսավորության աշխատանքների ծավալների ընդարձակման պայմաններում 1922 թ. նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 1-ը Մոսկվայում տեղի ունեցավ համառուսաստանյան քաղյուսվարական երրորդ համագումարը: Վերջինի որոշումները ուղղուում կարուկ փոփոխություններ կատարելու տեսակետից սկզբունքային նշանակություն ունեցան:

Ինարկե, վերը նշված իրողությունները ՀՀԴանեցին խորհրդային Հայաստանը: Հաերապետությունում քաղաքական վերահսկողության և զրաբենության արմատավորման գործընթացի պայմաններում ՀՍԽՀ լուսմոդկումատի կողեզիան համապատասխան որոշում ընդունեց Քաղաքական լուսավորության զինավոր վարչությունում կառուցվածքային փոփոխություններ կատարելու, գոյություն ունեցող որոշ բաժինները լուծարելու և նորերը կազմակերպելու մասին: 1923 թ. հունվարից Քաղյուսօվինվարչությունն ուներ հետևյալ 4 բաժինները՝ իրենց ենթակառիններով: կազմակերպական-հրահանգչական (տեղեկա-

²⁵ Տե՛ս Առքիապան Հ. Կ., Մանուկ ռազմական զրաբենության սկզբանափառումը Խորհրդային Հայաստանում, «Երաբեր հոսարակական զինությունների», Երևան, 2016, N 3, էջ 53-62:

ուու-վիճակագրական, հրահանջանական, ըսդիանուր և թարածիներով), արտադպրոցական ազիտացիոն-պրոպագանիստական (ազիտացիոն, ակումբային, գրադարանային, գեղարվեստական-դեկորային (վերջինին եր վերապահված գրաքննական գործառույթը) և թարածիներով), դպրոցադասընթացային ազիտացիոն-պրոպագանիստական (անզրագիտության վերացման, մեծահասակերի դպրոցի, ծրագրային-դասընթացային և թարածիներով), ծրագրային-գրախոսական (ծրագրային-մեթոդական, գրախոսական, ինքնազարգացման հանձնաժողովի (վերջինի կազմում եր Արտադպրոցական աշխատանքի տունը) և թարածիներով)³⁶. Վարչության փոքրաթիվ աշխատակազմը և ֆինանսական միջոցների սղությունը արդյունավետ աշխատանք իրականացնելու հետափորություն չեր ընձեռում:

1923 թ. փետրվարի 3-ին ՀԿ(ԲԿ)Կ կենտրոնի կազմակերպչական բաժնին ուղղված գրությունում Քաղյուսականվարչության նախագահ Շանինել Շգեունինի խնդրում եր 6 կոմունիստ գործիչ գործույնել վարչությունում պաշտոնելոր գրադեցնելու համար կազմակերպչական բաժնի վարիչ, երես հրահանգիչ, տեղեկատու (ինֆորմացիոն) և թարախմի վարիչ, գրաքննության բաժնի քարտուղար, ինքնազարգացման հանձնաժողովի քարտուղար³⁷. Շուզահեռ՝ վարչության վերակազմավորման նախագիծ պատրաստվեց: Մայիսի 15-ին այդ նախագիծն ուղարկելով Լուսնող-կոմատի կազմակերպչական կենտրոնին՝ Դ. Շգեունինի խնդրում եր շուտափույթ լուծում տալ վարչության վերակազմավորման հարցին՝ հստուկ շնչուելով, թե այլապես «հետազա աշխատանքը հնարավոր և արդյունավելու չե»³⁸:

³⁶ ՀԱԽՀ ժողովրդական կոմիսարիաների 1922-1923 թթ. հաշվառվորություն, Երևան, 1925, էջ 302:

³⁷ Հայուսանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1, ց. 3, գ. 145, թ. 26:

³⁸ ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 709, թ. 40:

Նախագծում վարչության վերակազմավորման անհրաժեշտությունը հիմնավորվում էր նրա անհրաժեշտ նորագույն հանական միջոցների շտիրապետելու հանգամանքով. ինչպես նաև ՀԿ(բ)Կ կենտրոնի ազիտացիոն-պրոպագանիտական բաժնի կողմից վարչության աշխատանքները «բափարար չեկավարելու» պատճառությունը կազմակերպչական տեսակետից բռնել Լուսժողկումատի կազմում, սակայն ՀԿ(բ)Կ կենտրոնի ազիտացիոն-պրոպագանիտական բաժնի կողմից նրա ապարատի աշխատանքների անմիջական դեկավարման համար վարչության նախագահին համառեղությամբ նշանակել Վենտրոնի ազիտապրոպագանիտի վարիչի տեղակալ. Մրանով Վենտրոնի ազիտապրոպագանիտի Քաղլուսգլխարշության աշխատանքները դեկավարելու էր իր բաժինի տեղակալի միջոցով. որը իրից վարչության նախագահ, հանդիսանում էր նաև լուսավորության ժողկումատի կոլեգիայի անդամ. Ռևենալով կրկնակի ներակայարյուն՝ Քաղլուսգլխարշությունը միաժամանակ հաշվետու էր լինելու ՀԿ(բ)Կ կենտրոնի ազիտապրոպագանիտի և Լուսավորության ժողկումատին:

Առաջարկվում էր նաև կրճատել վարչության ապարատը՝ Լուծարվելու էին կազմակերպչական-հրահանգական և ծրագրային-գրախոսական բաժինները՝ իրենց ներաբաժիններով: Պահպանվելու էին արտադպրոցական ազիտացիայի և պրոպագանիտայի բաժինը (վերջինի վարիչը հանդիսանալու էր վարչության նախագահի տեղակալը՝ գրադարանային և ակումբային (վերջինի մեջ էր մտնելու նաև քատերական սեկցիան) ներաբաժիններով, ինչպես նաև դպրոցադասընթացային ազիտացիայի և պրոպագանիտայի բաժինը: Լուծարվելու էր նաև վարչության արտադրական սեկցիան՝ գրախանությունը ներարկվելու էին գրա-

դարաւային և ենթաքամսին, վարչության դահլիճը (այս գտնվում էր Շռուտանտիորիի շենքում)՝ ակումբային և ենթաքամսին, իսկ կի- և ոյի գործը փոխանցվելու էր Պետկինոյի հաշվեկշռին:

Գյաղընեության աշխատանքները կանոնավորելու նպատա- կով առաջարկվում էր Կենտրոնի ազիտարոպեամեի վարիչի տե- ղակալի (Քաղլուսզլյավարչության նախագահը) նախագահութ- յամ՝ կազմակերպել խաղացանկային (ռեպերտուարային) հանձ- նաշողով, որի մեջ ընդգրկվելու էին ՀՍԽՀ պետական-քաղաքա- կան վարչության (ՊՔՎ) և զինվորական կազմակերպությունների ներկայացուցիչները: Հանձնաժողովի քարտուարը, որը բաղ- լուսզլյավարչության հաստիքացուցակում էր ընդգրկվելու, պետք է գրաբնաւության գծով տեխնիկական աշխատանք իրականաց- ներ Ներկայացումների, համերգների, կինոժամանակների և այլին, ինչպես նաև երաժշտակությունների բովածվությունները կենորութեացվելու: Էր բացառապես հանձնաժողովի նախագահի ձեռքում: Հնտարած հոկոդության լիազորությունը վերապահվե- լու էր պետքադրվարչությանը: Քաղաքական լուսավորության մարմինների աշխատանքների ընդհանուր գաղափարական դե- լիալարման համար շարունակելու էր գորություն ունենալ Քաղ- լուսզլյավարչության կողեզիան՝ բաղկացած Հայաստանի արիեւ- տակցական միությունների (ՀԱՄԽ) խորհրդի մշակույթի բամսի: Հայկական երաժշտական դիվիզիայի բաղաքական բամսի: ՀԿ(բ)Կ կենտրոնի, Հայաստանի կռմունիստական երիտասարդական միության կենտրոնի ազիտարմինների վարիչներից և միլիցիայի զինավոր վարչության ներկայացուցիչը³⁹:

Քաղլուսզլյավարչության վերակազմավորման առաջարկ- վող ծրագիրն արժանացավ Հայկումկուսի կենտրոնի հավանութ- յանը: Կենտրոնի քարտուղարության 1923 թ. մայիսի 23-ի կի-

³⁹ Առաջի տեսքով, թ. 41:

տում ՀԿ(բ)Կ կենուկոմի քարտուղար Աշուտ Հովհաննիսյանն անձամբ ներկայացրեց «Քաղլուսպլխվարչության մասին» հարցը Հավանության արժանացավ քաղլուսպլխվարչության նախագահին միաժամանակ ՀԿ(բ)Կ կենտրոնի ազիտապրոպրամփարի տեղակալ, իսկ վարչության ազիտրամփարին՝ վարչության նախագահի տեղակալ նշանակելու առաջարկենքը Գրաքննության վերաբերյալ որոշման նախագիծը ընտարկելու համար կազմվեց հանձնաժողով, որի մեջ ընդգրկվեցին Դանիել Դզնունին, Արտյոմ Չառ Մադարովը, Դանուշ Շահվերդյանը և Գևորգ Պարզյանը: Հանձնաժողովի աշխատակիցների դեկավարումը հանձնաբարվեց Դ. Դզնունուն, ում առաջարկվեց հաջորդ նիստին ներկայացնել հանձնաժողովի եզրակացությունը: Նույն նիստում որոշվեց Դ. Դզնունուն նշանակել Կենտրոնի ազիտապրոպրամփարի վարիչի տիղակալ, իսկ լուսժողկոմատին առաջարկվեց մեկ շաբաթվա ընթացքում Քաղլուսպլխվարչության նախագահի տեղակալի պաշտոնի համար թեկնածու առաջարկել⁴⁰: ՀԿ(բ)Կ կենտրոնի նախագահության հունիսի 4-ի նիստում Դ. Դզնունին ներկայացրեց Գրականության, երատարակչության և խաղացանկի (ռեպերտուարի) Վերահսկողության վարչության կանոնադրության նախագիծը: Այն հավանության արժանացավ և փոխանցվեց հանրապետության Ժողովրդական կոմիսարների խորհրդին համապատասխան դեկրետով կյանքի կոչելու համար⁴¹: Իսկ հունիսի 7-ին ՀԿ(բ)Կ կենտրոնի քարտուղարությունը որոշեց Գևորգ Քաջախյանի փոխարքեն Քաղլուսպլխվարչության նախագահի տեղակալ նշանակել Ա. Իշխանյանին⁴²:

⁴⁰ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 9, թ. 23:

⁴¹ Լոյն տեղում, գ. 7, թ. 25 ցըզ., 25ու և 25ը:

⁴² Լոյն տեղում, գ. 9, թ. 24 ցըզ.:

Արդին հունիսի 21-ին ՀՍԽՀ ժողկոմիտրից հաստատեց Գրականության, հրատարակության և խաղացանեկի վերահսկողության վարչության (պարմանական կերպով այն անվանելով «Հա գլուխություն»՝ ինչպես ըստունված է մյուս միութենական հանրապետությունների դեպքում⁴¹) կանոնադրությունը⁴²:

Կանոնադրության առաջին հոդվածով ազդարարվում էր, որ «տպագիր նրկերի գրաքննության և ռեպերտուարի վերահսկողության բոլոր ձեռք միացնելու նպատակով» ՀՍԽՀ լուսավորության ժողկոմատի ենթակայության ներքո (վերջինի Քաղաքական լուսավորության զինագոր վարչության կազմում) հիմնվում է Գրականության, հրատարակության և խաղացանեկի (ռեպերտուարի) վերահսկողության վարչություն (Գրատեպղխար. Հայովավլիստ). Վերջինը զավառային գործկոմների ժողովրդական լուսավորության բաժիններին կից ունենալու էր իր տեղական մարմինները:

ՀՄԱՀ Գրականության, հրատարակության և խաղացանեկի վերահսկողության վարչությունը կազմված էր լինելու Պետքադրչության բաղադրական վերահսկողության բաժնի մեկ ներկայացուցիչ և Լուսմոդկոմատի երկու ներկայացուցիչներից, որոնցից Քաղլուսգլխվարչության նախագահը հանդիսանալու էր Հայովավլիստի նախագահը. Գործավարության ու հաշվապահության համար այն Քաղլուսգլխվարչության կազմում ունենալու էր պաշտոնական քարտուղար. նաև օգտվելու էր ՊԲՀ-ի քաղաքական վերահսկողության հաստիքներից: Հայովավլիստի զավառային մարմինները կազմակերպվելու էին Քաղլուսգլխվար-

* Այսպէս Խորհրդացին Շեցառուամբ գրաքննության իրականացնող մարմինը հայտնիության մեջ մտնելու համար առաջին առաջարկությունը է հայտնի լուսականացում՝ "Ապրուակուր" և այլն.

⁴¹ ՀԱԱ, ֆ. 113, գ. 3, գ. 132, թ. 13 լրց.

շուրջան և ՊԲՎ-ի տեղական մարմինների ներկայացուցիչներից՝ գավթադիուսվարի դեկանարությամբ:

Հայզավլիսի և նրա տեղական մարմինների պարտականությունները:

«ա. Բոլոր տպագրելիք կամ տարածելիք թէ՝ ձեռագիր և թէ՝ տպագիր երկերի, պարբերական հրատարակությունների, արտասեկարչությունների, պատկերների, քարտեզների և այլնի հայացելությունը:

բ. Առանձին երկերի, այլն պարբերադրերի հրատարակության բույլտվությունը:

գ. Տանկեր կազմելը այն տպագիր երկերի, որոնց վաճառումն ու տարածելն արգելված է:

դ. Բոլոր տպագրական օրգանների հրատարակությանց, տպարանների, գրադարանների գրախանությունների և արտասեկարչության արհեստանոցների (լուսանկարչաւոնների, կինոստույժանների, տեղագրական արհեստանոցների և այլն) համար պարտադիր կանոնների, կարգադրությունների և հրահանգների հրատարակությունը:

ե. Ռեպերտուարներ՝ դրամայի, օպերայի, օպերետայի, համերգների, կինոժապավենների և այլն, նայելը և նրանց հրապարակային ներկայացման կամ ցուցադրության բույլտվությունը:

զ. Դասախոսություններ նայելը դասախոսների ներկայացրած թեզիսներով և նրանց բույլտվությունը:

Հայզավլիսի և նրա տեղական մարմինների իրավասության ներքո էր հակախորհրդային քարոզության նշաններ պարևակող, ռազմական կամ պետական գաղտնիք քաջականություններին իրականությունը «շարամտությամբ ծաղրող», կրօնական մոլեռանդություն, «խիստ ցավագին անհատականություն», ազգայնամոլություն (շուվիսիզմ) և ազգայնականություն.

պունկագրություն և «արկածախնդրական էլուզակություն» պարունակող աշխատանքների տպագրությունը, տարածումը կամ գեղարվեստական գործերի, կինոժապավենների հրապարակային ներկայացումն ու ցուցադրությունն արգելելը: Գրաքննություննեց ազատվում էին կոմունիստական կուսակցության մամուլը, պետական իշխանության բարձրագույն մարմինների (Կենտրոնական գործադիր կոմիտե, Ժողովրդական կոմիսարների խորհուրդ), Պետական հրատարակչության, զավարյուսվարելի հրատարակությունները և Եջմիածնի գիտական ինստիտուտի գիտական աշխատանքները: Հայզլավիխով և նրա տեղական մարմինների պարտականությունն էր Վերջինների պարագայում «միջոցներ ձեռք առնել զինվորական զրաքննության շահերի բառ ամենայնի ապահովելու համար». Գերատեսչական առանձին հրատարակությունները կարող էին զրաքննություննեց ազատվել միայն Հայզլավիխով և համապատասխան ժողկումատի փոխադարձ համաձայնությամբ: Ըստ այդմ էլ, բացի եշվածներց, Խորերդային Հայաստանի տարածքում մասամբ ողջ տպագիր արտօպրանքի, բատրոններում կամ բաց բեմերի վրա ցուցադրվող բառերական, համերգային և այլ բնագրերի ու կինոժապավենների վրա պետք է լիներ Հայզլավիխով կամ նրա տեղական մարմինների բռնլուվությունը:

Սահմանվում էր, որ տպարանների, արտանկարչական արհեստանոցների և ցուցադրական (ուսու բնագրում՝ զրելահայութեաների) հաստատությունների դեկաֆարները պարտավոր էին «անշեղ հսկողություն ունենալ», որպեսզի իրենց տպարաններում տպագրվող բառերախառների, համերգների և այլ բնագրերի ու ստեղծագործությունները, լույս տեսնող արտանկարները ու ցուցադրվող կինոժապավենները, բացի վերը հիշատակված բացառություններից, ունենա

Հայզլավլիստի կամ նրա տեղական մարմինների թույլտվության նշագրումը՝ հակառակ դեպքում ենթակա էին դատական պատասխանատվության։ Տպարանների և լուսանկարչատների տերերն ու դեկավարները պարտավոր էին յուրաքանչյուր տպագիր և արտանեկարած աշխատանքներից։ Իսկ ներկայացումներ ցուցադրող հաստատությունների դեկավարները ցուցադրվող գործերից (Երաժշտություն, դրամա և այլն) 5-ական օրինակ ներկայացնել զրաքննական մարմիններին։ Պետկինոն ևս զրաքննության էր հանձնելու սցենարների զրբույկների ու մակազդությունների 5-ական օրինակները, ինչպես նաև ներկայացներ փորձնական ժապավենները⁴⁴։

Նշալ կանոնադրությունը, որով իր պրակտիկ գործունեության ընթացքում առաջնորդվում էր Հայզլավլիստը, ՇՍԴԽՀ լուսժողկոմատի Գլուխուի 1922 թ. հունիսի 6-ի կանոնադրության տեղայնացված տարբերակն էր։

Ավելորդ չեն նշել, որ ՀՍԽՀ ժողկոմիորիի կողմից 1923 թ. հունիսի 5-ին լուսժողկոմատին ուղարկված Հայզլավլիստի կանոնադրությունը կրում էր «հոյժ գաղտնի» նշագրումը։ Այն բազմացվել էր սահմանափակ բանակով՝ ընդամենը 5 օրինակ քաղլուսզիլիսվար Դանիել Դեկունու, լուսժողկոմ Ասրանազ Մուավյանի և լուսժողկոմատի կոլեգիայի անդամ և կազմակերպչական կենտրոնի վարիչ Հայկ Յաղությանի համար, 2 օրինակ էլ գործերում էր պահպելու⁴⁵։

Փաստորեն, Հայզլավլիստի կազմակերպմամբ և նրա անդրանիկ կանոնադրության համաձայն միաձուլվեց զրաքննության բնագավառում պետական-կուսակցական քաղաքականությունը։ Քաղլուսզիլիսվարչության նախագահը, ով միաժամա-

⁴⁴ ՀԱՍԼ, ֆ. 122, գ. 2ա, գ. 1, թ. 54 և 2թ., գ. 1, գ. 121, թ. 133 և 2թ.

⁴⁵ Նոյն ակտում, գ. 2ա, գ. 1, թ. 54։

Խակ ՀԿ(բ)Կ կենուկոմի ազիտպրոպրաժվարի տեղակալն էր. դառնում էր հանրապետության թիվ մեկ գրաքննիչը, իսկ գրաքնության բաժնի քարտուղարը փաստացի իրականացնում էր ամենօրյա գրաքննական աշխատանքները, այն է գրաքննում էր բոլոր հրատարակությունների, հայտարարությունների, աֆիշաների, թատերական ներկայացումների, համերգների, երեկոյանների, կինոժապավենների և այլնի վերաբերյալ ստացված հայտերը: Գավառներում այդ գործառութեան առժամանակ վերապահիվ գավրադրուսվարներին՝ մինչև գրաքննիչների հաստիքների հարցի լուծումը:

АМО СУКИАСЯН

СОЗДАНИЕ ГЛАВЛИТА СОВЕТСКОЙ АРМЕНИИ РЕЗЮМЕ

В последующий за советизацией Армении период в республике начался процесс по внедрению политического контроля и цензуры. В этих условиях коллегия Народного комиссариата просвещения СССР в начале 1923 года приняла решение по реорганизации главного управления политического просвещения наркомата. Эта идея была одобрена в ЦК КП(б) Армении. На заседании Президиума ЦК КП(б) Армении 4-го июня 1923 г. было решено в составе главного управления политпросвета учредить Управление по делам литературы, издательства и контроля за репертуаром (Армглавлит). Согласно утвержденного Советом Народных Комиссаров СССР устава Армглавлита (21 июня 1923 г.), государственная и партийная политика в области цензуры были

объединены. Председатель Главполитпросвета, который одновременно являлся заместителем заведующего агитационно-пропагандистского отдела ЦК КП(б) Армении, стал главным цензором республики, а секретарь Армглавлита осуществлял ежедневную цензорскую работу.

HAMO SUKIASYAN

ORGANIZATION OF THE GLAVLIT OF SOVIET ARMENIA SUMMARY

During the next period followed by the Sovietization of Armenia a process of political control and censorship started to root. In these conditions in early 1923 the Collegium of People's Commissariat of Enlightenment of SSRA made a decision on reorganization of the General Department of Political Enlightenment. This idea was approved by the CPA(b) Central Committee. On June 4, 1923 the Presidency session decided to organize a control directorate of Literature, publishing and repertoire (Armglavlit) within the structure of the General Department. According to Armglavlit Charter adopted on June 21 by the Council of People's Commissariat of SSRA, the state and party politics were joined within the domain of censorship. The President of the General Department of Political Enlightenment, who was at the same time the Deputy Head of Agitation-Propaganda Department of CPA(b) Central Committee became the first censor of the Republic and the Secretary of Armglavlit carried out the daily work concerning the censorship.

ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1992-2011 թթ.

Քաղաքական հարաբերություններ

Եզիպտոսի Արաբական Հանրապետությունը (ԵԱՀ) արաբական աշխարհի քաղաքական «ծանրաքաշային» ու տարածաշրջանի առաջատար պետություններից մեկը: Եզիպտոսի հետ երկրորդ համագործակցության սերտացումը բխում է Հայաստանի Հանրապետության շահերից՝ հասկապես արաբական և մահմեդական աշխարհի հետ ՀՀ արևարիև քաղաքական առյունավետ իրականացման տեսանկյունից:

Հայաստանը և Եզիպտոսը դիվանագիտական հարաբերություններ են հաստատել 1992 թ. մարտին: Կահիրենում ՀՀ դեպանությունը բացվել է 1992 թ. սեպտեմբերին, իսկ Երևանում՝ Եզիպտոսի դեսպանությունը 1993թ. ապրիլին:

Երկու երկրների միջև տեղի են ունեցել քարձրաստիճան ահանց տարբեր փոխազդելություններ, այդ թվում Եզիպտոս են այցելել Հայաստանի նախագահները (1992 թ. և 2007 թ.), Ազգային ժողովի նախագահները (1997 թ. և 2010 թ.), ՀՀ վարչապետը (2005 թ.), իսկ 1992 թ. Հայաստան է այցելել Եզիպտոսի վարչապետը:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր Հայաստանը և Եզիպտոսը ստորագրել են համագործակցության շորս տասնյակից ավելի փաստաթղթեր՝ համաձայնագրեր, արձանագրություններ և փոխըմբռնման հուշագրեր: Ստեղծվել է լուրջ իրավապայմանագրային բազ երկպոլմ հարաբերությունները գրեթե բոլոր քաջականներում գարգացնելու համար:

1993 թ. երկու երկրների արտգործեախարարությունների միջև ստորագրվել է դիվանագիտական խորհրդակցություններ

աեցկացնելու մասին փոխընդունման հուշագիր,և 1997 թ. սէսած յուրաքանչյուր տարի կողմէրի միջև տեղի են ունեցել պարբերական ոլիվանազիտական խորհրդակցություններ փոխարտօրքնախարարների մակարդակով։ Դիվանազիտական խորհրդակցությունները մեծապես նպաստել են կողմէրի միջև քաղաքական համագործակցության զարգացմանը։ ինչը հատկապես դրսւորվել է միջազգային կազմակերպություններում, որտեղ երկու երկրները միմյանց աջակցություն են ցուցաբերում տարբեր հարցերում, սատարում, ինչպես նաև տարբեր հանձնախմբերի ընորություններում միմյանց թեկնածուներին։

1993 թ. Եզիպտոսի արտօրքնախարարությունում ստեղծվեց ԱՊՀ երկրների հետ տեխնիկական համագործակցության հիմադրամ, որի նպատակն է ԽՍՀՄ փլուզումից հետո աշխատացնել կապերն ու համագործակցությունը անկախություն և եռորդրած նոր երկրների հետ՝ տարբեր ոլորտներում կաղըների վերապատրաստման, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ասպարեզներում աշխատավորությունների կազմակերպման, տարբեր համատեղ ծրագրերի իրականացման միջոցով։ 1993-2010 թթ. Հայաստանից ավելի քան 1500 մասնագետներ ոլիվանազիտության, անվտանգության, ներքին գործերի, առևտի, բանկային համակարգի, առողջապահության, արարագիտության և այլ ոլորտներից) մասնակցել են Հիմնադրամի կողմից Եզիպտոսում կազմակերպված վերապատրաստման դասընթացների։

1996 թ. ստորագրվել է համագործակցության արձանագրություն 22 նախագահի վերահսկողական ծառայության և ԵԱՀ վարչական վերահսկողության ծառայության միջև։ Այս տարիների ընթացքում երկու գերատեսչությունների միջև իրականացվել են մի շարք փոխայցելություններ, որոնց ընթացքում երկու երկր-

ների վերահսկողական ծառայությունները ծանոքացել են միև-
յակ փորձին և համագործակցության սերտ կապեր հաստատել:

2005-2010 թթ. ընթացքում լուրջ առաջընթաց է արձա-
նազդել երկկողմ հարաբերություններում: ՀՀ վարչապետի
պատճին այցելությունը 2005 թ. դեկտեմբերին, ինչպես նաև 2007
թ. ապրիլին 15-ամյա ընդմիջումից հետո ՀՀ նախագահի պաշ-
տուունական այցը Եգիպտոս՝ որակական նոր մակարդակի վրա
բարձրացրեցին հայ-Եգիպտական քաղաքական երկխոսությունը:
2009 թ. փետրվարին պաշտոնական այցով Եգիպտոսում է
գումարվել ԱԳ նախարարը, իսկ 2010 թ. ՀՀ ԱԺ նախագահը:

Եցիպտոսի ի սկզբանե որդեգրել էր չեղոր և անկողմնակալ
դիրքորոշում ԼՂ հիմնահարցի նկատմամբ: Տարբեր առիթներով
պաշտոնական Կահիրեկ հայուննել է «ԼՂ հակամարտությունը
միմյանց խաղաղ միջացներով ԾԱՀԿ Միևսկի խմբի շրջանակնե-
րում և միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն» կար-
գագործելու իր սկզբունքային և անփոփոխ դիրքորոշման մասին:

Կահիրեկում է գումարվում Արաբական պետությունների լիզա
կազմակերպության (ԱՊԼ) կենտրոնակայանը: Հայաստանն ակ-
տուիլսցրեց իր համագործակցությունը այդ կազմակերպության
հետ 2005 թվականից, երբ Հուշագիր ստորագրվեց ՀՀ ԱԳՆ-ի և
ԱՊԼ-ի միջև, իսկ 2008 թվականից ՀՀ նախագահի հրամանագ-
րով Եցիպտոսում ՀՀ դեսպան Ռ. Կարապետյանը համատեղութ-
յան կարգով նշանակվեց ԱՊԼ-ում ՀՀ վիազոր ներկայացողի:

Առաջին անգամ արաբական այդ միակ և հեղինակավոր
կազմակերպությունում դեսպանի մակարդակով ՀՀ ներկայաց-
վածությունը կարևոր քայլ կարելի է համարել Հայաստան-արա-
բական աշխարհ հարաբերությունների հետազ ծավալման ու
խորացման ուղղությամբ: Այս նոր որակ և մակարդակ ապահո-
վեց արաբական երկրների հետ ՀՀ երկկողմ ու բազմակողմ հա-

մագրքակցության համար՝ հետավորություն ընձեռելով ԱՊԼ-ի շրջանակիներում տարրեր բնույթի քաղաքական, տեսչության և մշակութային նախաձեռնություններով հանդիս զայռ, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ու Միջազգային կարևոր այլ հիմնախնդիրների վերաբերյալ մեր պետության դիրքորոշումները ներկայացնելու ու պարզաբանելու համար:

Հայաստանը, որպես առաջին քրիստոնյա պետություն, և Եղիպտոսը, որպես իսլամական աշխարհի առաջատար երկրներից մեկը, հատկապես այսօր կարող էն և պետք է հանդիս զան տարրեր համատեղ նախաձեռնություններով «քաղաքակրթությունների երկխոսության» կարգախոսի տակ: Դժվար է գտնել մահմետյական որևէ երկիր, որը հայերը պատմության ընթացքում զբաղեցրած լինեն այդքան բարձր քաղաքական պաշտոններ՝ վայելելով հասարակության անվերապահ հարգանքն ու վատահությունը: Եղիպտոսում հայերի բողած քաղաքական, տեսչության և մշակութային հարուստ ժառանգությունը, երկու ժողովուրդների պատմամշակութային սերտ կապերը հանդիսանան են այն հզոր հիմքը, որի վրա ներկայումս հետավոր է խարսխել այդ «երկխոսությունը» նաև միջազգային հարբակներում ու բազմակողմ ձևաչափով:

Առևտրատնտեսական համագործակցություն

Եղիպտոսը հայկական արտադրանքի սպառման հեկաբական շուկա է ինչպես նաև Աֆրիկա մայրցամաք՝ «ուսոր գործելու» և տարածվելու հիմնական ուղի: Եղիպտոսում կարող են լայն սպառում գտնել հայկական գյուղատնտեսական, քիմիական, եկեղեցական և այլ բնագավառների ապրանքները: Եղիպտոսից Հայաստան հետավոր է ներկրել տերատիվի, դեղագործական արտադրանք, ինչպես նաև որոշ էկոկառական սարքավորումներ: Համատեղ փոխահավետ ծրագրեր հետավոր է իրա-

կանացնել տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, տեքստիլի, զյումբերի վերամշակման, սննդի, դեղարտադրության և այլ բնագավառներում:

1992 թ. Հայաստանի և Եզիպտոսի կառավարությունների միջև ստորագրված տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագրի հիման վրա ձևավորվել է հայ-եզիպտական միջկառավարական համակառություն՝ Կայացել է համաձայնագրի 4 եխու (1996 թ. Երևանում, 1997 թ. Կահիրեանու, 2002 թ. Երևանում, 2005 թ. Կահիրեանու), որոնց արդյունքում հաստակեցվել են Երկու երկրների միջև տնտեսական, գիտատեխնիկական և այլ ոլորտներում համագործակցության զարգացման հետականությունները ու հետակարգերը:

Հայաստանը 4 անգամ մասնակցել է յուրաքանչյուր տարի Կահիրեան կազմակերպվող միջազգային արդյունաբերական ցուցահանդեսին թէ՝ պաշտոնական և թէ՝ զործարարների մակարդակով:

Հայաստանի և Եզիպտոսի միջև առևտրատնտեսական համագործակցությունը խթանելու ուղղությամբ ամենակարևոր իրադարձությունը 2005 թ. դեկտեմբերին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի պաշտոնական այցելությունն էր Եզիպտոս։ Այցը լուրջ նախադիրական ստեղծեց հայ-եզիպտական տնտեսական համագործակցության հետագա զարգացման և խորացման համար։ Այցելության ընթացքում ստորագրվեց տնտեսական կարենրագույն համաձայնագրերից մեկը՝ «Երկակի հարկումից խուստիելու վերաբերյալ համաձայնագիրը»։

Նույն թվականին ՀՀ Սահմանադրական դատարանը վերանայեց իր կողմից դեռև 1996 թ. կայացրած որոշումը, որի համաձայն կասեցվել էր ՀՀ և Եզիպտոսի միջև ստորագրված «Ներդրումների խրախուման և փոխադրած պաշտպանության

19-րդ դարում Եղիպատահայ համայնքի բարզավաճման գործում իր նշանակալի ներդրումն ունի Նուբար Նուբարյանը, ով տարբեր պաշտոններ է գրադացրել Եղիպատոսի պետական ապահովություն: Նուբար փաշան, ով 19-րդ դարում երեք անգամ գրադացրել է Եղիպատոսի վարչապետի պաշտոնը, բազմից հայտարարել է որ առանց Եղիպատոսի իր կյանքը լիարժեք չեր լինի²⁴:

19-րդ դարում Եղիպատոսի բաղարական ու տևտեսական կյանքում տեղի ունեցած դրական տեղաշարժերը Խպաստեցին մասնություն գարզացմանը, հիմնելեցին բազմաթիվ թերթեր, ամսագրեր: 19-րդ դարի վերջին Եղիպատական մասնություն գարզացման գործում կարևոր դեր խաղաց սիրիակայ կարուիկ Աղիք Դսհակը, ով 1877 թ. Կահիրենում հիմնեց «Եղիպատոս» շարադրերը, իսկ 1878 թ. Աղերսանդրիայում՝ «Առևորություն» օրաթերթը²⁵:

Ամսագրի գորեր յուրաքանչյուր հանարում խմբագիրը ներկայացնում է պատմական որևէ լուսանկար ու մեկնաբանում այս: «Մի նկարի պատմություն» շարքի 15-րդ համարում ներկայացված է 1919 թ. Աղերսանդրիայի շեյխ Աբդ ալ Սաֆիդ ալ Լաբանի ու հայ համայնքի ներկայացուցիչների հանդիպման ընթացքում արված լուսանկարը, որին Խախորդել էր Եղիպատահայերի ու արաբ որոշ ծայրահեղականների միջև տեղի ունեցած միջադեպը: Եղիպատոսում տեղի ունեցած ապատամբուրյան ընթացքում՝ 1919

²² Նոյն տեղում, 2008, № 123, էջ 4-5:

²³ Նոյն տեղում, էջ 22:

²⁴ Նոյն տեղում, 1998, № 3, էջ 1:

²⁵ Նոյն տեղում, 1998, № 8, էջ 16:

թաղաժողովը լրաց, հանդիսանալու մեջ օւժագած ցուցի համառակ օք-
րին Արգարյան անունով մի հայ, բրիտանացիների ու բուրզերի
դիմամբ, կրուկ բացեց Եղիպտոսի ցուցարարների վրա: Դրան
աևմիջապես հաջորդեց ամբողջ Եղիպտոսում կեղծ լուրերի տա-
րածումը, թէ իբր հայերը համագործակցում են բրիտանական գո-
ղութարարների հետ: ինչը պատճառ դարձավ, որ Եղիպտոսի
ապատամբները Կահիրենում, Ալեքսանդրիայում ու Եղիպտոսի այլ
շրջաններում հարձակվեն հայերի վրա: Հարձակումների արդ-
յունքում սպանվեց 60 և վիրավորվեց 25 հայ, կողոպտվեց ու բա-
լանվեց հայերին պատկանող մոտ 550 տուն ու առևտրական տա-
ղավար²⁶: Այս ամենից հետո հայերը լրեցին իրեց տներին ու
ապատասեցին հայկական եկեղեցում, Գալատիան ու հայկական
այլ վարժարաններում, հասարակական կազմակերպություններ-
ում: Իրեց հերքին բրիտանական իշխանությունները 1919 թ.
ապրիլի 20-ին հայ փախստականների համար Ալեքսանդրիայի
Նոր Եղիպտոս քաղաքանատում հասուն տեղ հասկացրեցին: Մու-
համմադ Ռիֆար ալ Բիտամը նշում է, որ այս բախումների հրահր-
ման գործում առաջնային դեր խաղացին իբրիհատականները,
որոնք համայնքով ցուցարարների շաբթերը, հայերի մասին
կեղծ լուրեր տարածեցին²⁷: Այս քայլով նրանք փորձում էին վրեժ
լուծել Եղիպտահայերից, որոնք Պողոս Նորբար փաշայի գիտակո-
րությամբ ևույն ժամանակահատվածում Փարիզի խաղաղության
վեհաժողովում հանդիսան էին գալիս Օսմանյան կայսրության դեմ:
Իրեց հերքին բրիտանական իշխանությունները, ապատուն
տայով հայերին, աշխարհին ցուց էին տալիս, որ Եղիպտոսը
դեռևս պատրաստ չէ անձախ պետություն դառնալու: Ծուտով
Եղիպտոսի հայրենասիրական ուժերն ընդունեցին իրեց սիսակն
ու հասկացան: որ այս բախումները դավադրության արդյունք

²⁶ Նոյն տեղում, 2001, № 39, էջ 1-3:

²⁷ Նոյն տեղում:

էին, և սկսեցին հայերի հետ հաշուության նօրեր փնտրել։ Կողմերի պատվիրակությունների միջև տեղի ունեցած բանակցություններից հետո պարզ դարձավ, որ բյուրիմացություն է եղել։

Դրանից հետո հայերին իրավունք տրվեց վերադառնալ իրենց տները, ինչպես նաև պատճառված եղութական վնասների դիմաց հատկացվեց 30000 շուստի։ Այդ դեպքից հետո աստիճանաբար կարգավորվեցին Եղիպտացիների ու Եղիպտահայերի եղայրական հարաբերությունները, ու 1921 թ. ապրիլի 5-ին Եղիպտոս վերադառնալիս հայերը Եղիպտացիների հետ մեկտեղ մեծ ողնորությամբ դիմավորեցին Եղիպտոսի հայրենասիրական ուժերի դեկանար Սաադ Զաղլուլին։ Իր հերթին Ս. Զաղլուլն ացելց Հայ Առաքելական եկեղեցի՝ բարեկավելու հարաբերությունները հայերի հետ ու պաշտոնական ներողություն խնդրելու 1919 թ. ապրիլյան դեպքերի համար²⁸։

Մեկ այլ համարում ներկայացվում է 1948 թ. Եղիպտոսում տեղի ունեցած հակարիտանական ցուցերի ընթացքում արված լուսնեարք, որտեղ Եղիպտահայերը Եղիպտացիների հետ մեկտեղ մասնակցում են Եղիպտոսի տարբեր քաղաքներում բողոք ցուցերին²⁹։

Եղիպտահայ նշանավոր արվեստագետներից ամսագիրը մեծապես արժենորում է հայազգի նկարիչ Երվանդ Դեմիրյանի գործունեությունը, ով 20-րդ դարի սկզբին նկարել է Սուհամմադ Ալիի ծոռան՝ Ֆարիմա Զահրայի դիմանեկարը։ Սուհամմադ Ռիֆար ալ Խմամը նշում է, որ հայազգի արվեստագետը ստեղծել է Եղիպտական «Մոնա Լիզա» կտուավը³⁰։ Եղիպտահայ նշանավոր արվեստագետներից է Երգիծաբան Ալեքսանդր Սարուխանը, ում ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Եղիպտահայ նշանավոր հասարակության գործիչ Պերճ Թերզյանը ներկայացնում է Եղիպ-

²⁸ Կոչյե տեղառ, էջ 2-3։

²⁹ Կոչյե տեղառ, 1998, № 7, էջ 17։

³⁰ Կոչյե տեղառ, 2000, № 29, էջ 13-14։

տահայ երգիծաբանի հետ առաջին անգամ հանդիպման ժամանակ ստացած տպավորությունը: Բացի այդ՝ նու անդրադառնութ է Ալեքսանդր Սարովիանի երգիծապառուերենի, աշխատությունների լուսաբանմանը: Դեռ Թերզյանը, Ալեքսանդր Սարովիանին համեմատելով Շարլ Ազնավուրի ու Վիլյամ Սարովանի հետ, նշում է, որ վերոնշյալ հայերը, պահպանելով հայկական արմատները, միևնույն ժամանակ իրենց նոր հայրենիքներուն դարձան տեղի հասարակության կողմից հարգված ու լիիրավ անշամ³¹:

«Արև»-ի արարերեն հավելվածը եզիստահայ ակնառու Ներկայացուցիչներից մեծապես արժենորում է Վահագի Դիրույտանի կրակը ու գործոներությունը: Վ. Դիրույտը ստեղծել է առաջին եկեղեցրական տարացուցիչը Եզիստական բանակի համար, ինչպես նաև նախազգել է տարբեր կառույցների եկեղեցրականության հոսակագծեր: 1973 թ. արարախարակական պատերազմի նախօրերին Եզիստոսի նախագահ Անվար Սարաբի հանձնարարությունը ևս Եզիստոսի անվտանգության ուժերի կենորունախոհում նախազգում է հատուկ սենյակ՝ հազեցած եկեղեցրական սարբերուք, որի օգլությամբ անվտանգության ուժերի հրամանատարական կազմը կարողանում է վերահսկել իրավիճակը Կահիրելում³²:

Հավելվածում հանգամանորեն տեղեկացվում է, որ Եզիստահայ համայնքը իր ողջ պատմության ընթացքում մշտապես նպաստել է Եզիստոսի հասարակական, քաղաքական կրակի բարեկամմանը, ու Եզիստացիները միշտ ակտուածարով են վերաբերվել հայերին՝ անկախ գրադեցրած դիրքից ու պաշտոնից:

«Արև»-ի արարերեն հավելվածն արաբախոս ընթերցողին տեղեկություններ է հաղորդում նաև Կահիրեի՝ հայերեն անունը

³¹ Լոյն տեղում, 1998, № 10, էջ 1-4:

³² Լոյն տեղում, 1999, № 19, էջ 9-12:

կրող փողոցների մասին։ Առաջինը հիշատակում է Յարիմյան Եղիպատոսում մեծ վեզիրի պաշտոնը ստանձնած Բաղր ալ Զամալիի անունը կրող Երկրու փողոցները՝ «Բաղրի փողոց»-ը և «Զամալիի փողոց»-ը։ Բացի այդ՝ Կահիրենում եղել էն Նուբար Նուբարյանի ու Տիգրան Արքայանի անունը կրող փողոցներ։ որոնց անունները հետազայռում փոխվել են։ Այլունեան ամսագիրը ներկայացնում է Կահիրեի «Հայկական թաղը» իր հայկական նկեղեցիով։ Միջևադարում Կահիրեն հարուստ է եղել լճակներով, որոնցից մեկի շրջանում ապրել են հայերը, որը կոչվել է հայկական լճակ։ Ժամանակի ընթացքում հայկական լճակի շորածալուց հետո հայերը շարժվել են մի քանի կիլոմետր հյուսիս ու հաստատվել այստեղ, որը ներկայում կոչվում է «Հայկական թաղ»։ Բացի այդ՝ Կահիրենում կա ևս 2 թաղ, որոնք անվանվել են Սուհամմադ Ալիի հարկածավար հայազգի Ալեքսան Սիսարյանի և առևտրի ու արտարին կապերի նախարար Արքին Շրաբյանի անուններով։ Իսկ ներկայիս Կահիրենում առկա են Պողոս Նուբար փաշալի ու Յակոբ Արքինի անունները կրող փողոցներ²⁵։

Այսպիսով, «Արե»-ի արաբերեն հավելվածն իր եցերում ներկայացնում է Եղիպտահայ համայնքը՝ մեծապես արժնորելով հայ համայնքի ներրումը Եղիպտոսի քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքում։ Ամսագիրը դրվագաներով արաբախոս ընթերցողներին տեղեկություններ է հաղորդում Եղիպտահայ համայնքի եշանակոր հասարակական, քաղաքական գործիչների, մոռագորականների, արվեստագետների գործունեության մասին, ինչպես և աև լուսաբանում հայ համայնքի կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները։ Արաբերեն պարբերականի հրապարակումների արժեքավոր են նրանք, որ դրանցում նորանոր փառառելք են Երևան զայն Եղիպտահայ համայնքի վերաբերյալ։

²⁵ Կոչի տեղում, 1998, № 9, էջ 6-9.

МЯСНИК ЕСОЯН

ОСВЕЩЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ
ЕГИПТА В АРАБСКОМ ПРИЛОЖЕНИИ ГАЗЕТЫ "AREV"

РЕЗЮМЕ

Ежемесячник «Арев» на своих страницах широко представляет историю армянской диаспоры Египта, делая акцент главным образом на освещении вклада армянской диаспоры в политическую, экономическую, общественную жизнь страны. Помимо этого, ежемесячник освещает знаменательные события из общественной, политической жизни ученых и политических деятелей, деятелей искусства. На страницах ежемесячника читатель знакомится с общественно-политической жизнью диаспоры и важными событиями происходящими в ней.

MYASNIK YESOYAN

THE ELUCIDATION OF THE ARMENIAN COMMUNITY
ACTIVITIES IN EGYPT IN THE ARABIC
APPENDIX OF "AREV" DAILY

SUMMARY

The monthly of "Arev" represents the history of the Armenian community in Egypt having accented on the contribution of the Armenian Diaspora to political, economic and social life of Egypt. In addition to it, the magazine elucidates the remarkable events from the social, political life of scientists and politicians, art representatives. In the pages of the monthly a reader can get familiar with the social-political life of the Diaspora as well as important events taking place in it.

**ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2005-2015 թթ.**

Մասնագիտական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում ներկայացված է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ, միջին մասնագիտական կրթությամբ, բարձրագույն և հեռողութական մասնագիտական կրթությամբ:

Խորհրդային շրջանում, եթե հանրապետությունը ուներ արդյունաբերական հզոր ներուժ, այդ հաստատությունները կարեր դերակատարում ունեին արդյունաբերական ձեռնարկությունները որակյալ բանվորական, ինժեներական և կառավարչական ներուժով ապահովելու համար: Մասնագիտական ուսումնական հաստատությունները կաղըքը էին մատակարարում նաև ոչ արդյունաբերական ոլորտներին՝ զյուղատնտեսությանը, առողջապահությանը, կրթությանը, շինարարությանը, տրանսպորտին, կապին և այլն: Սակայն ԽՍՀՄ-ում մասնագիտական կայքերի պատրատումն ուներ իր առանձևահատկությունը, որը ծառայում էր մեծ երկրի պահանջներին, ԽՄԿԿ զարաֆարախոսությանը: Կրթությունը գաղափարականացված էր և մասնագիտական կրթության նպատակն էր ոչ միայն մասնագետ, այլ նաև համակերպմանի զարգացած անհատ պատրաստելը, մարքսիզմի և ինքնական պահանջների ուսումնական պլաներում, բացի ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթարկությունը: Այդ պատճառով մասնագիտական կրթական հաստատությունների ուսումնական պլաներում, բացի ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթարկությունը: Մեծ էին զբաղեցնում ընդհանուր հումանիտար և սոցիալ-տեխնագիտական ու ընդհանուր մարեմատիկական և բևագիտական կրթարկությունը: Այդ առարկաների դասավանդումը արդիում էր

մասնագիտական առարկաների հաշվին, սակայն դա տեղափոխում էր կրթության հայեցակարգի ընդհանուր տրամադրանության մեջ։ Պետական բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը ավարտելոց հետո շրջանուվարտին նշանակում էին որևից պետական հիմնարկում աշխատանքի, որտեղ մեկ-երկու տարբան ընթացրում նա դառնում էր լիարժեք մասնագետ։ Համակարգը ամբողջական էր և արդարացնում էր ինքն իրեն։ Քանի որ ԽՍՀՄ-ը փակ երկիր էր, կրթությունը սպասարկում էր միայն այդ երկրի աշխատաշուկան, կամ, բավագույն դեպքում, որոշ զարգացող երկրների։ ԽՍՀՄ-ում պլանավորվում էր, թե որ մասնագիտությունների գծով որքան կազմեր են անհրաժեշտ։ Արդյունքում՝ գործազրկություն գրեթե չկար:

ԽՍՀՄ փլուզումից հետո մասնագիտական կրթության հայեցակարգը պետք է արմատապես փոփոխվիր։ Անկախության առաջին տարիներին պատերազմի և շրջափակման ճիրաւճերում գտնվող Հայաստանի Հանրապետությունը չեր կարող կրթության ոլորտում դիմել վճռական քայլերի։ Պատերազմից հետո անկառավիարելի սեփականաշնորհման հետևանքը հանրապետությունը չկարողացավ պահպանել իր արդյունաբերական հզոր ներուժը և վերածվեց ազրարային երկրի։ Փոխվեց կրթությունը՝ աշխատաշուկա հարաբերությունը։ Խնդիրը դժվարանում էր նաև այն պատճառով, որ աշխարհաբարական, սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական ոլորտներում խորըային փոփոխությունները մնաց ազդեցություն էին բռնել աշխատաշուկայի վրա։ Այն վաղուց արդեն չեր սահմանափակվում մեկ երկրով, այլ վերածվել է զլորալ, հաճախ վիրտուոզ աշխատաշուկայի։ Բնականաբար, այդ ամենը նոր մարտահրավեր էր մասնագիտական կրթության ոլորտին՝ և՝ կառուցվածքային, և՝ բովանդակային առումով։

1991 թ. 22-ում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները մասնագետներ էին պատրաստում 127 մասնագիտության գծով: Երջանավարտներին շնորհվում էր կրտսեր մասնագետի որակավորում: Համակարգում գործում էր 77 պետական ՍՍՈՒՀ (10 մասնաճյուղով), որոնցում ուսանում էր 28048 սովորող, և 62 ոչ պետական ՍՍՈՒՀ: 2001 թ. ՍՍՈՒՀ-ների թիվը 1991 թվականի համեմատությամբ (68 հաստատություն) աճեց 13,2 %-ով, իսկ ուսումնառուների թվաքանակը (40600) նվազեց 31 %-ով:

Համակարգում գործում էր 16 պետական (10 մասնաճյուղով) և 73 ոչ պետական բուհի թիվը 1991 թվականի համեմատությամբ 2001 թ. աճել էր 14,2 %-ով: Պետական բուհերում սովորում էր 42525, ոչ պետական բուհերում՝ 19755 ուսանող: Պետական բուհերում սովորողների թվաքանակը 1991 թվականի համեմատությամբ նվազել էր 35,7 %-ով⁷:

Անկախության առաջին տասնույնակին մի շարք օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր և ծրագրեր ընդունվեցին, որոնցում փորձ արվեց ներկայացնել մասնագիտական կրթության նոր տեսլականը և կարգավորել ոլորտի հիմնախնդիրները: Այսպես, ընդունվեցին «Կրթության մասին» (1999 թ. ապրիլի 14), «Բարձրագույն և հետքունական մասնագիտական կրթության մասին» (2005 թ. հունվարի 18), «Նախնական մասնագիտական (արհետագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» (2005 թ. հուլիսի 8) ՀՀ օրենքները: 2001 թ. հունիսի 26-ին հաստատվեց «Կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագիրը»: Մրացրով նախատեսվում էր հաղթահարել անցումա-

⁷ Հայուսուսնի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիր, էթ. 1, http://www.parliament.am/?legislation.php?act_id=1422&lang=armen

յին փուլի դժվարությունները և 2005 թ. անցում կառարիչ կրուրային համակարգի առաջացեցիկ զարգացմանը:

2005 թ. մասնագիտական կրուրյան ոլորտում մեծ բարեփոխումներ սկսվեցին: 2004 թ. Լիսաբոնի կոնվենցիան ՀՀ ԱԺ-ի կողմից վավերացնելու և 2005 թ. Բոլոնյան գործընթացին Հայաստանի Հանրապետության միանալուց հետո փոփոխություններ կատարվեցին բարձրագույն կրուրյան մինչ այդ ընդունված օրենքներում: Բոլոնյան հրակագիրը համաեվրոպական կրական տարածք ստեղծելու հայր էր ներկայացրել: Գլոբալացման հետևանքով կրուրյունը պետք է պատասխաներ նոր մարտահրավերների:

2005 թ. ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրուրյան և ուսուցման արդիականացման գերակայությունները և 2005-2008 թթ. գործողությունների պլան»:

Մասնագիտական ուսումնական հաստառություններում ձեռքբերված զիտելիքները մեծ արագուրյամբ հեռանում էին, դրանք անընդհատ եռացնելու կարիք ունեին, ուստի խիստ կարևորվեց կրուրյունը ամրող կյանքի ընթացքում: Մասնագիտական կրուրյան ուղրուում կարևորվեց «սովորեցնել ինչպես ամբողջ կյանքի ընթացքում սովորել» մոտեցումը, որը պահանջում էր ուսուցման համակարգի խորրային փոփոխում: 2009 թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության N 43 արձանագրային որոշմամբ հաստատվեց «Ֆիզիկան ուսուցման հայեցակարգը», որում մասնավորապես նշվում էր: «...ցիսան ուսումնառությունը պետք է զիտարկի իբրև շարունակական և ծրագրված գործունեությունն, որը նպաստում է զիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը, և վերջնական արդյունում, անհատների, համայնքների և

ողջ հասարակության մասնագիտական կրթական կարողությունների զարգացմանը»⁷.

Բարեփոխումները բարձրագույն կրթության ոլորտում Բոլեցան գործընթացի համատեքստում

Բարեփոխումների սկզբին հանրապետությունում կար 22 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն (բուհ) և 11 մասնաճյուղ (73716 ուսանողով): Մեծ թիվ էին կազմում նաև ոչ պետական ուսումնական հաստատությունները, որոնք կարևոր դիրքություն ունեին հաստկապես սոցիալապես անապահով ուսանողներին կրթական ծառայություններ մատուցելու գործում: Բացի այդ՝ պետական բուհերում ցածր աշխատավարձերի պայմաններում դրանք վաստակելու լրացնցից հետապնդություն էին բնձեռում գիտական հիմնարկելերի և բուհերի պրոֆեսորադուրակիուսական անձնակազմին: 2005 թ. հանրապետությունում կար 67 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, որոնցում ուսուցանվում էր 24049 ուսանող: Հետազոտման հանրապետության ժողովադրական հիմնախնդիրները, մի կողմից, ՀՀԿՆ վարած բաղադրականությունը, մյուս կողմից, աստիճանաբար հաևզեցրին ոչ պետական ուսումնական հաստատությունների և նրանցում սովորող ուսանողների բանակի նվազմանը: Այսպէս՝ 2010/2011 ուսումնական տարրում հանրապետությունում գործում էր 23 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն (91404 ուսանողով)⁸, 51 բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատություն (19599 ուսանողով)⁹:

⁷ <http://www.gov.am/files/meetings/2009/3912.pdf>

⁸ Հայաստանը թիվով, 2006, Կրության հիմնական ցուցանիշները, էր 1, http://www.armstat.am/file/article/soc_05_5.pdf

⁹ Լոյն տեղում, էր 11:

¹⁰ Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2010 թվականին, էր 4, http://www.armstat.am/file/article/soc_10_11-12.pdf

¹¹ Լոյն տեղում, էր 16:

2015/2016 ուսումնական տարում՝ 23 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն (87304 ուսանողով)⁷, 37 ոչ պետական ուսումնական հաստատություն (9917 ուսանողով)⁸: Վիճակագրական տվյալների վերլուծությունից երևում է, որ ոչ պետական բուհների ուսանողների քանակը վերջին 5 տարում նվազել է՝ մոտ 2 անգամ: Արդարության համար նշենք նաև, որ ընթացող բարեփոխումների համատեքստում ոչ պետական բուհների մեծ մասը չկարողացավ առահովել կրթության անհրաժեշտ որակը և չդիմացավ մրցակցությանը:

Բնչական վերը նշվեց, 2005 թ. Հայաստանը միացավ Բալթիյան հոչակագրին (1999 թ.), որը ներառում էր վեց գերակա ոլորտ: 2005 թ. մայիսին ստեղծվեց հայկական ENIC/NARIC կազմակերպությունը, որը պետք է նպաստեր որակավորումների փոխանակչելիությանը և որակավորումների ազգային շրջանակի մշակմանը: Հայաստանում մշակվեց և ներդրվեց դիալոգի միասնական հավելվածը, որը սկսեց գործածել 2007 թ., անցում կատարվեց երկաստիճան համակարգի՝ բակալավրիատ և մագիստրատուրա, որը պետք է առարտվեր մինչև 2010 թ.: Ուսանողների շարժությունը խթանելու համար ներդրվեց ECTS կրկնիտային համակարգը: Նախատեսվեց անցում կատարել ուսանողակինորուն ուսուցմանը, սերտացնել կապը բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների միջև:

2003 թ. Բեռլինի կոմյունիկետվ դրվեց այլ նշանակելու՝ մինչև 2005 թ. եւրդինել որակի ապահովման ազգային համակարգեր, որոնք պետք է հավաստեն կրթության ուղրուում մատուցվող ծառայությունների որակը: 2005 թ. Բերգենի կոմյունիկետվ ճանաչվեց

⁷ Հայաստանի Հռուսականության տվյալներին վիճակը 2015 թվականին. էջ 4, 21, http://www.armstat.am/file/article/doc_15_6.pdf

⁸ Լոյն տեղում. էջ 15, 47:

եռափով համակարգը Շնորհվեցին Որակի Ապահովման Եվրապական Յանդի (ENQA) առաջարկության Բարձրագույն Կրթության Եվրոպական Տարածքում որակի ապահովման չափորոշիչները և ուժինիշերը:

2011 թ. հուլիսի 19-ին հաստատվեց «Կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիրը»⁹. Մրագրում վերլուծվեցին կրթության ոլորտի բարեփոխումների 10 տարվա արդյունքները, զանազան կազմակերպությունների գույց էին տալիս, որ կրթական բարեփոխումները չեն ապահովում ժամանակի օպահածներին համապատասխան անհրաժեշտ որակը: Պատահական չեն, որ ծրագրում նշվում էր, որ «Բարեփոխումների շոշափելի և հասարակության կողմից արմարտող ձեռքբերումների բացակայության պատճեռով կրթության համակարգը հայտնվել է մի իրավիճակում, երբ խաթարված է կրթական հաստատությունների հեղինակությունը, վտանգված է վտանդությունը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ»¹⁰: Կրթության ոլորտի գերխորհիրը համարվեց որակի բարձրացումը: Լուրջ խնդիր էր կրթության մատչելիությունը հստակապես ազրատ բնակչության համար: Մրագրում նշվում էր, որ բարձրացույն կրթության համակարգում «աղքատ և ծայրահեռ աղքատ բնակչության ընթացկանությունն ունի նաև տարածքային անհամամատություն»: Մարգերի աղքատ բնակչության շրջանում այս 2,1, իսկ զբուղական համայնքներում 4,3 անգամ բիշ է»¹¹: Ուսման վարձը պետական բուհերում բավականին բարձր էր և կազմում էր աղքատ ընտանիքների ոչ սպարենային ապրանքերի մի-

⁹ <http://edu.am/index.php/am/documents/index/91>

¹⁰ «Կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիր», էջ 3, http://parliament.am/law_docs/190711HO246havelvats.pdf

¹¹ Նույն տեքստը, էջ 7, http://parliament.am/law_docs/190711HO246havelvats.pdf

շին տղարեկան ծախսերի մոտ 50-65 տոկոսը¹²: Այդ պատճառով բարձրագույն մասնագիտական կրթության կարևորագույն խնդիրներից էր ուսման վարձի փոխառուցման մեխանիզմերի և անվճար կրթության ընդլայնումը: Ճիշտ է ՀՀ կառավարության կողմից մշակվեցին մի շարք ծրագրեր, սակայն դրանք միայն մասնամբ են լուծում կրթության մատչելիության հարցը:

Մտյա կար Երկաստիճան համակարգի հետ կապված: Տամյա կրթությունից Երկաստիճանի անցնելիս բոլյ տրվեցին մի շարք սխալներ: Բարձրագույն կրթության ոլորտի բաժանումը բակալավրիատի և մագիստրատուրայի ճիշտ չեր ընկապվում ոչ միայն հասարակության, այլև կրթության կառավարիչների մի մասի կողմից: Բակալավրիան ընկապվում էր որպես թերի բարձրագույն կրթություն: Մագիստրատուրան չեր դիտվում որպես կրթական աստիճան, որն ապահովում էր անհրաժեշտ որակավորում միայն այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են շարունակել հետազոտական աշխատանքը կամ զբաղվել դասավանդմամբ: Պատահական չե, որ 2001 թ. հանրապետության 9 բուհում գործում էր ասպիրանտուրա և դոկտորանտուրա և միայն 3 բուհում՝ մագիստրատուրա¹³: 2007 թ. մագիստրատուրա կար միայն 4 պետական բուհում¹⁴: Մագիստրատուրայի ներմասմաբը վերաբերմունքը սկսեց փոխվել միայն վերջին տարիներին: 2014/2015 ուսումնական տարում մագիստրոսի կրթական ծրա-

¹² Հարաբեկով տպանական պատկերը և ապրանությունը, Սառ 2. Հարաբեկ: Ոչ կորուսկան աշխատավայրական ցույցներները, 2005 թ., էջ 15, http://www.armstat.am/file/article/bd_04_3.pdf

¹³ Հարաբեկ: Հանրապետության կորության գործադրություն 2001-2005 թվականների պետական ծրագիր, էջ 1, <http://www.parliament.am/legislation.php?sel-show&ID=1422&lang=arm#1>

¹⁴ Մկրտչյան Լ.Օ., Развитие образования Республики Армения, стр 54, http://ru.cyberleninka.ru/article?id=MKRTCHYAN_24.pdf

զիր կար արդեն համրապետության 33 բունում ու նրանց 9 մասնաճյուղում և 3 գիտական կազմակերպությունում¹¹:

Խոշիրեւր կային կրեդիտային համակարգով մասնագիտական կրթության ծրագրերը փոխակերպելու հարցում: Բուներին աջակցելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունիսի 19-ի N 588-Ա/Ձ հրամանով ըստումվեց «Ռուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակնի կարգը», որի նպատակն էր ապահովել բուների համար միասնական կանոնակարգային-կազմակերպական հետք¹²:

Կրթական բարեփոխումները այլ հարթություն տեղափոխվեցին 2008 թ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի» (ՈԱԱԿ)¹³ ստեղծվելոց հետո: ՈԱԱԿ-ը պետք է որակի ապահովման գործընթացներ իրականացներ մասնագիտական ուսումնական հաստատություններում ինսուլտուցիոնալ և ծրագրային հավառարմագրման միջոցով: ՈԱԱԿ-ի նպատակների մեջ մտնում է խթանել մասնագիտական կրթության որակի շարտահակական բարեկավումը, նպաստել կրթական համակարգի ինքնավարությանը և հաշվետվողականության մեխանիզմների ներդրմանը:

Հետեւով Բոլոնյան գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորություններին՝ ՀՀ կառավարությունը 2011 թ. հաստատեց ՀՀ որակավորումների ազգային շրջանակը (ՈԱԾ)¹⁴: ՈԱԾ-ով ամենաընդհանրական ձևով ներկայացվեցին կրթական

¹¹ Հարաբեկի Հովհաննելության առջևական վիճուկը 2015 թվականին, էջ 21, http://www.armstat.am/file/article/soc_14_11-12

¹² http://hercumentia.files.wordpress.com/2011/04/ceinsakeli_kargi_final-ects.pdf

¹³ ՀՀ կառավարության 2008 թ. նույների 27-ի թիվ 1486-Ն որոշում, <http://www.apna.am>

¹⁴ ՀՀ կառավարության 2011 թ. նորոի 31-ի N 332-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կրթության ուսումնական ազգային շրջանակը հաստատելու մասին», <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=66856>

յուրաքանչյուր աստիճանի համար շրջանավարուի ընութագրից եերը՝ զիտելիքի, հմտության և կարողության մակարդակով: ՈԱՀ-ի ծրագրի մակարդակը Վերաբերվում է բակալավրիատի աստիճանին. 7-րդը՝ մագիստրատուրային: ՈԱՀ-ը համապատասխանում է Որակավորումների Եվրոպական շրջանակին: Դրա մշակման և հաստատման նպատակն էր ուսանողության շարժությանը նպաստելու համար ամբողջ Եվրոպական տարածքում ունենալ համընթեռների շնորհիվող որակավորումներ:

Հետեւով Բերգենի կոմիտեիների՝ ՀՀ կառավարությունը 2011 թ. հաստատեց մասնագիտական կրթության հավատարմագրման շափակիշները²². ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելող ուսումնական հատուառությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը»²³. Կարգի համաձայն միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների համար սահմանվում էր հավատարմագրման երկու տեսակ՝ ինստիտուցիոնալ և ծրագրային: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է, և մինչև 2018 թ. Վերջը բոլոր միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունները պետք է դիմեն այն անցելու համար: Մրացրային հավատարմագրումը հեարակոր է միայն այն դեպքում, եթե բուհը անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրումը: Ի տարբերություն եախորհ շրջանի պետական հավատարմագրման²⁴ և ինստիտուցիոնալ, և ծրագրային հավատարմագրումները ունեն շրջափուլային բնույթ, կրկնվում են կայուն պարբերականությամբ՝ շարունակական դարձնելով բուհերի թե ինստիտուցիոնալ կարողություններ-

²² ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30 N 959-Ն որոշում, <http://www.anpa.am>

²³ Լույս ստեղծված:

²⁴ ՀՀ կառավարության 2000 թ. հուլիսի 7-ի N 372 որոշում, <http://www.anpa.am>

րի և թէ՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի բարեկավուց: Ըստ ոյնու ինստիտուցիոնալ հավատարմազրում անցած բուհերը կարող են հավատարմազրվել 4 կամ 6 տարով: Կամ սահմանված 2 տարվա պայմանական հավատարմազրում: Միևնույն այժմ հակառապետությունում հավատարմազրում է ստացել 16 պետական և ոչ պետական բուհ: Ինստիտուցիոնալ հավատարմազրումը նպաստեց բուհերի ռազմավարական կառավարման խրանմանը, հաշվետվողականությանը, աշխատանքի ավելի մեծ բարձրացնելությանը, ուսանողակենտրոն կրթական միջավայրի ստեղծմանը:

Ինստիտուցիոնալ հավատարմազրումը վերհասեց նաև այն, որ հակառապետությունում բուհը է գարզացած բուհ – գործադրությունում կազմակերպությունների կրթական ծրագրերը հաճախ չեն համապատասխանում զլորալ աշխատաշուկայի հարափոխուն պայմաններին: Լավ չեն մշակված մասնագիտությունների կրթական ծրագրերի ելքային արդյունքները, հաճախ դրանք չեն համապատասխանում ՌԱՇ-ին: Այժմ հանրապետությունում փորձ է արվում բուհերը ծրագրային հավատարմազրումն նախապատրաստելու համար անցկացնել փորձնական ծրագրային առողջիւ: Նախատեսվում է, որ ծրագրային հավատարմազրումը կիզրուացնի մասնագիտությունների կրթական ծրագրերը՝ դրանք ավելի զրարկի դարձնելով ոչ միայն հակառապետության քաղաքացիների, այլ նաև օտարերկրյա դիմորդների համար:

2015 թ. Եվրոպայի կրթության նախարարների Երևանի գաղաթաշնորհում ամփոփվեցին Բոլոնյան գործըքրացի տաս տարվա արդյունքները, հաստատվեցին համանվագրական նոր չափանիշները ու ուղենիշները և մշակվեց կրեղիտային համակարգի գարզացման նոր ուղեցույց: Դա եշանակում է, որ հա-

մաեվրոպական ինտեգրացիան տվել է իր դրական արդյունքները և նպաստել բուհերի և կրթական ծրագրերի համականչությանը։ Այս ավելի մեծ հետազոտությունն է ընձեռում Հայաստանի ռազմական նոր օգուվելու շարժունակության տարաբնույթ ծրագրերից, որոնց սկիզբը դրեց «Երազմուս Սունդուս» ծրագիրը (2007)։ Դրա հետ մեկտեղ հանրապետության առջև դրվեց նոր մարտահրամակ՝ ուսանողության շարժունակությունը, ավելի լայն հետազոտություններ ընձեռելով ուսանողներին, ուժեղացրեց հանրապետությունից «ուղեղների արտահոսքի» հիմնախնդիրը։ Դրա ելքը ոչ թե նմանատիպ ծրագրերից երաժարվելու է, այլ բարձրագույն կրթության ոլորտու ավելի մրցունակ դարձնելը՝ բուհերի ուսուուսային բազան հզորացնելու, ինովացիոն ծրագրեր ներմուծելու, օտարարևելու դասընթացների բաևակը ավելացնելու, հետազոտական կրթությունը խրախուսելու միջոցով։

Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգ

Ի տարրելություն բուհերի՝ հանրապետության նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները ընտրազնվում են ավելի սահմանափակ ինքնուրույնությամբ։ 2002 թ. եվրոպական երկրների կրթության նախարարներն ընդունեցին Կոպենհագենիան հոչակազիրը. որի նպատակն էր եվրախուսեցնումը, այդ ոլորտում ևլուսական կրթության որակի բարձրացումը, ուսանողների շարժունակության խրախուսումը։ Կոպենհագենիան և Բուլոնյան գործընթացները բավական շատ նմանություններ ունեն և ուղղված են եվրոպական կրթական տարածքի մրցունակության բարձրացմանը։

2004 թ. տվյալով կար 81 պետական միջին միջնակարգ ուսումնական հաստատություն, որոնցում սովորում էր 27.8 հազ.

մարդ⁷⁷: Ըստ մասնակց գործել է 27 միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատություն, որոնցում սովորում էր 2.7 հազ. մարդ⁷⁸. ՀՀ կառավարության 2008 թ. դիկտեմբերի 18-ի նիւթի N 51 արձանագրային որոշմամբ մշակվեց «Նախանական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության հայեցակարգը». Հայեցակարգում նախանշվեցին ողորուի հիմնախնդիրները և առաջիկա տարիեւերի քաղաքականության հիմնական ուղղությունները:

2008 թ. նախանական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում բարեփոխումներին աջակցելու, դրանք առավել արդյունավետ դարձնելու համար ստեղծվեց «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության «Մասնագիտական կրթության և ուսուցման գործազրման ազգային կենտրոն» հիմնարկը (ՄԿՈՒԶԱԿ): ՄԿՈՒԶԱԿ-ը պետք է աջակցեր ՄԿՌ ժակարդակում Որակավորումների ազգային շրջանակի ներդրմանը, նպաստեր Հայաստանի Հանրապետությունում «ՌԱՍՏ-ԽԱՐԱՐԵՐ» ոռջ կյանքի ընթացքում» սկզբունքի ներդրմանն ու շաբաթների աջակցեր պետական կրթական չափորոշիչների և այլ ծրագրերի մշակմանը, նպաստեր տարբեր հաստատությունների և կազմակերպությունների կողմից մասուցիող կրթական ծառայությունների որակի ապահովմանը: 2011 թ. հոկտեմբերին հաստատվեցին արհեստագործական ուսումնարանի, պետական բոլեղի և տարածաշրջանային պետական բոլեղի նոր օրինակելի կանոնադրությունները և բոլոր արհեստագործական ուսումնարանները հանձնվեցին ՀՀ կրթության և գիտության նա-

⁷⁷ Հայրառանձ թվերով. 2005 թ. վիճակագրական տեղեկատու, էջ 2. http://www.armstat.am/file/article/arm_05_51.pdf

⁷⁸ Հայրառանձ Հանրապետության աղյուսական վիճակը 2004 թվականին, էջ 14. http://www.armstat.am/file/article/soc_04_4.pdf

հարաբության ենթակայությանը: Մինչ այդ արդեն կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրման, ՄԿՌԻ համակարգում բարեփոխումները խթանելու համար հանրապետությունում ստեղծվել եր 12 տարածաշրջանային քոլեջ: Մեծ աշխատաք էր տարվել այդ քոլեջների լաբորատորիաների, համակարգչային լսարանների նորացման, նյութատեխնիկական բազայի հարստացման և վերազինման. ինչպես նաև շենքային պայմանների բարելավման ուղղությամբ:

2007, 2009, 2012 թթ. մշակվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների չափորոշիչների և մոդուլային ուսումնական պլանները: ՀՀ կառավարության 2012 թ. հունիսի 4-ի եկանի Ն 27 արձանագրային որոշման համաձայն հասուալեց «Մասնագիտական կրթության և ուսուցման 2012-2016 թվականների բարեփոխումների ծրագիրը»: Ծրագրին ուղղված էր ապահովելու մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՌԻ) ոլորտի արձանագրված ձեռքբերումների և 12 տարածաշրջանային քոլեջների փորձի զարգացումը և ընդլայնումը: Ծրագրով նախանշվեցին ոլորտի զարգացման նպատակները և խնդիրները հետևյալ ուղղություններով՝ ՄԿՌԻ համակարգի ինստեգրում եվրոպական մասնագիտական կրթական տարածքին, համակարգի կրտավարման արդյունավետության բարձրացում, ՄԿՌԻ ոլորտում սոցիալական գործերեկերության ընդլայնում:

Կուպենիագենյան գործընթացով նախատեսվել է կրնայիտային համակարգ ենթանել նույն նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտում: Թեև Հայաստանը չի միացել Կուպենիագենյան գործընթացին, սակայն ՄԿՌԻ ոլորտում բարեփոխումներ անցկացնելիս հետևում է դրա սկզբունքներին: 2014-2015 թթ. ուսումնական տարվանից որոշ մասնագիտությունների գծով կրեդիտային հա-

մակարդ է փորձնական ներդրվել պետական բայցների մի մասում: Դրականացնելի է ՈԱՀ-ի ներդրման գործընթացից բնող մաս աշխատությունների ցանկի և շնորհվող որակավորումների վերանայման գործընթաց: ՈԱՀ-ի 4-րդ մակարդակը համապատասխանում է նախանական մասնագիտական կրթությանը, 5-րդը՝ միջին մասնագիտականին: Կառավարության կողմից ընդունված վերլիիչյալ հավատարմագրման կարգը վերաբերվում է նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին: Դրանց և բուհերի հավատարմագրման շափակիչներու ու շափութշիշները նույն են: Սակայն ի տարբերություն բուհերի, որոնց հագաւորմագրման գործընթացը մեկնարկեց 2012 թ., բուհերը դեռ առ են մտնում գործընթացի մեջ Առաջին փորձնական հավատարմագրում պետք է անցնեն տարածաշրջանային 12 բուհերը, այսուհետև մինչև 2018 թ. վերջը, ինչպես և նախառնության կարգով, մյուս բոլոր բուհերը պետք է ներկայացնեն դիմում ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար:

2015/2016 ուս. տարրում հաերապետությունում գործում եր նախանական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 44 պետական ուսումնական հաստատությունն, որոնցից 25-ը նախանական մասնագիտական (արհեստագործական) և 19-ը՝ միջին մասնագիտական²⁴: Կան նաև ոչ պետական նմանառինյա ուսումնական հաստատություններ: Մեծարանակ ուսումնական հաստատությունների հավատարմագրում անցկացնելու համար այժմ ձևակորվում է փորձնագիտական բազու: Առաջիկա սարիների գերակայությունների մեջ լինելու է այդ ուսումնական որակի ապահովման կայությի նախապատրաստելը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ մասնագիտական կրթության օլորտում բարեփոխումների առաջիկա սարիներին շարու-

²⁴ Հոգածառության Հանրապետության տպելայական վիճակը 2015 թվականին, էջ 1, http://www.amstat.am/file/article/soc_15_4.pdf

Նակարածությունը էլեկտրոնային համակարգը բարձրագույն կրթության ոլորտում և ներդնել միջին մասնագիտական կրթության ոլորտում այնպես, որ ապահովվի ՌԱՀ-ի 5-րդ և 6-րդ փուլերի միջն կրթությունների փոխանցելիությունը և կրթության շարունակականության ապահովումը։ Այդ գործընթացները ինքնին անհնար են առանց մասնագիտական ուսումնական հաստատությունների ինքնուրույնության աճի։ Մոտ ապագայում անհրաժեշտ է մշակել նաև նորակավորումների սեկտորալ շրջանակները, որոնք կհեշտացնեն մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից մասնագիտության կրթական ծրագրերի մշակումը, և մասնատիպ եվրոպական ծրագրերի հետ պահանջ համապելիության ապահովումը։ Երեսակի զարգացմանը նվազագույնը 2015 թ. հաստատված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման նոր չափանիշները և ուղենիշները (ESG), ինչպես նաև Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգի (ECTS) նոր ուղղությունը լավ հիմք են հանդիսանում ազգային փաստաթուրերի վերանայման և բարելավման համար։

ЛИЛИТ ЗАКАРЯН

РЕФОРМЫ В СИСТЕМЕ ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В 2005–2015 ГГ.

РЕЗЮМЕ

Реформы в системе высшего образования представлены в контексте Болонского процесса, в системе среднего профессионального образования – Копенгагского процесса (к которому Армения не присоединилась). Изменения в системе высшего образования стали видимыми после проведения государственной аккредитации. Были выработаны и утверждены Правительством РА Национальная рамка квалификаций Армении, Положение о государственной аккредитации и Критерии и стандарты государственной аккредитации.

ции. В результате вузы страны, прошедшие институциональную аккредитацию, переходят на стратегическое планирование, важное значение приобретают отчетность, прозрачность управления, студентоцентрический подход к образованию. Следующей ступенью в реформе системы высшего образования является пересмотр академических программ, упор на потребности рынка и усиление связи между обучением и научными исследованиями, развитие внешних связей и международного сотрудничества.

LILIT ZAKARYAN

THE REFORMS IN THE PROFESSIONAL EDUCATION FIELD
IN THE REPUBLIC OF ARMENIA 2005-2015

SUMMARY

The reforms which are being realized in the professional education field are presented in this article. The reforms of higher education are presented in the context of the Bologna process and the reforms of secondary professional education in the context of Copenhagen process. The changes in the sphere of higher education became visible after the state accreditation procedure had been implemented. The national frame of the qualifications, the criterions and normatives of the institutional and programming accreditation were worked out and later confirmed by the Government. In the result of it, the universities which are institutionally being accredited have passed to the strategic planning, report, transparency of the management, contribution of the approach of centralized student body. The next step in the system of higher education has a goal to revise professional educational programmes, to adopt marketing approach, to strengthen the link between the teaching-research, to develop foreign relations and international cooperation.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վաեե Մարզպան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

Վաեան Skr.-Նոնցպան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Արգիշտի Վարդակյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Մարիամ Գրիգորյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Հակոբ Մուրադյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի գլուխարտուդար, Նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դրանու

Հասմիկ Ասիրյանյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու

Կարո Շամիլյան

պատմական գիտությունների թեկնածու

Գարեն Խաչատրյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի վախտեօրեն Ընդհանուր պատմության բաժնի վարիչ. ԳԱԱ ԳԿՄԿ Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Քանաքարտա Հայրապետյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

Մարիամ Հակոբյան

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ

Աշխեն Բասենցան

ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ

Գայտեն Ղազարյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Ընդհանուր պատմության բաժնի աշխատակից

Աննա Առաքյան

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամ»-ի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու

Հանն Սուրիանյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գագիկ Ժամենարյան

Վանաձորի պետական համալսարանի Պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու.

Խաշատուր Մուկիանյան

Խ. Աբովյանի անվան ՀՊԱՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու:

Ռուբեն Միքայելյան

Խ. Աբովյանի անվան ՀՊԱՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Նարինե Մովսեսյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ:

Ռուբեն Կարապետյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Ընդհանուր պատմության բաժնի ավագ գիտաշխատող, Եզիզության ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (2004-2009 թթ.), պատմական գիտությունների դոկտոր:

Վայրա Մարտիրոսյան

ԳԱԱ գկուկ մագիստրատուրայի «Միջազգային հայաբերություններ» մասնագիտության շրջանավարտ:

Մյասիկ Եսոյան

ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մանուկի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու:

ԼԻԼԻԹ ԶԱՐԱՐՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագոյն պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ՄԱՐԳԱՐԻՏ

- Կ. Յ. ԼԵՍՅԱՆ. ՀԱՌԻՄԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԿԱՆԻ
ԹԱՎԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿՈՒՄԱՆ ԽՈՐԻ ՃՈՒՐ 3

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՒԹՅՈՒՆ

- ԲԱՐԱՔԱԿԱՆ ԿՈՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՄԻՋԵՐԿՐՈՎԿԱՆԻ ԵՐԿՐՈԵՐՈՒՄ XII ԴԱՐԻ ՎԵՐՋՆԸ
(ըստ հայ-հումեական 1199 թ.)
բանակցությունների վավերագրերի) 19

ՄԳԻԼԾԻ ՎԱՐԴՈՒՅԱՆ

- ՏՄՈՒՆ ԳԱՎԱԿՈՒ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՃՈՒՐ
(VIII դ. ԵՐԿՐՈՐ ԿԵՍ - IX դ. ՍԿԻԶԲ) 41

ՄԱՐԴԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

- ԽՈՒ. ԱՄՈՒՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶԱՆԱԴՐԱՅԻ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (IX-XI դդ.) 52

ՀԱԿՈԲ ՄՈԽԱՆՅԱՆ

- ԲՈՒ. ԱԳԱՎԱՐԵՐ ՈՒ ԱՐՏԱԳԱՎԱՐԵՐԸ ԿԱՐՈՒ ՆԱՀԱՆԻՑ
ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՎՈՒԵՐԻ ԵՐԱՆՈՒՄ
(1512-1639 թթ.) 64

ՀԱՅՈՒԿ ԱՄԻԳՅԱՆՅԱՆ

- ՀՈՒ. ՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ ԱՐՆՈՒԹՅԱՆԻ ԴԵՐԸ 203-
ՈՒԽԱ-ՎՐԱՅԱԿԱՆ ԱԽՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(XVIII դ. ՎԵՐԳ) 78

ՎԱՀՈ ԺԱՍՄԱՆՅԱՆ

- ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒ ԵՎ ԵՐԱԿԱՎԲԻ ՀԱՅ
ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐ ԿԵՍՆԸ 90

ԿԱՐԵՆ ԽԱՉԻՆ/ՑԱՆ

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՄՊՈՒՏԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԹՈՒՐՔՎԿԱՆ ՔԱՂՋՔՎԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 1894-1922 թթ. (ռուս.)	101
ԲԱԼԱԲՐՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	
ԽՈՐԵՆ ՄՈՒՐԱԴՆԵԿՑԱՆՈՐ ԲԱՑԱԳԵՏԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳԻՉ (1901-1909 թթ.)	120
ՄԱՄԻԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ	
ՀՅԴ ԶԻՆՎՈՐՎԿԱՆ ԴՐՈՅԻ ԱՏԵՂՇՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՊՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՂԱՐԺԻԱՅՈՒՄ	129
ԱԾԽԵՆ ԲԱՍԵՆՅԱՆ	
ՀԱՅ ԶԻՆՎՈՐՎԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՅԻԹՅՈՒՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ (1914-1916 թթ.)	147
ԳԱՅԱՆԵ ՂԱԶՄՈՅԻՆ	
ՄԱՅՐ ՎԹՈՒՐ ՄՈՒՐՐ ԷԶՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՊՈՒԹՅՈՒՆ 1918-1920 թթ.	164
ԱԽԱ ԱՄԱՏՐՅԱՆ	
ԼՈՅՈՒ ՏԵԶՈՔ ԳՈՏՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԽԵԲԱՎՎԱՐՈՒԹՅՈՒՆ (1919-1920 թթ.)	173
ՀԱՅՈ ՍՈՒՐԻԱՆՅԱՆ, ԳԱԳԻԿ ԺԱՍՏԱՐՅԱՆ	
ԽՈՐՀՄԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՆ ԿԱՄՍԱՐԻ «ԿՐՈՆԱԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՍԱՐՈՏԱԺ» ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐՈՒՄ	186
ԽԱՀԱՏՈՒՐ ԱՏԵՓՈՒՅՆ	
«ՍՍԵՆՈՎԵԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԴՐՄԵԿՈՐՈՒՄ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ	199

ՈՂԻՔԵՆ ՄԻՐՅԱՆԱՑԻՆ	
ԽՈՐՀՐԴԱԿԱՅ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԿՐԴԱՊԱՐԵՐ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԱԽԱՐԻ ԲԱԼԵՐԸ 215	
ՆԱՇԻՆ ՄՈՎՍԵՍԻՆ	
1920 թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՅՈՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ, ԳԱԼՈՎԱՆԻԿԱՆՆԵՐԸ Հ. ԲԱՋԱՎՈՒԹԻՆ «ՀՅՈՒԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՄԵԼԻՔ ՇՈՒՆ ԱՅԼԵՒ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ 227	
ՀԱՅՈ ՍՈՒՐԻԱՆԻՆ	
ԽՈՐՀՐԴԱՎԻՆ ՀԱՅԱՏԱՐԻ ԳԼՈՎԼԻՏ ԿԱՌԱՎԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ 241	
ՈՂԻՔԵՆ ԿԱՐԱՊԵՏՅՈՒՆ	
ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1992-2011 թթ. 253	
ԴԱՅԱ ՄԱՐՏԻՐՈՒՅԻՆ	
ՄԻԴՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՄԱԴՐԱՅԵՐԸ ՀԱՅԱՏԱՐԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ԵՎ ՄԻԳՐԱՏԻՎ ՄԻՋԱՋԿԱՅԻ ԿՈՉՈԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 272	
ՄՎԱՄԻԿ ԵՍՈՅԻՆ	
ԵԿԱՊԻՏԱԿԱ ՀԱՍՑԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՍԱՐԱՆՆԵՐ «ԱՐԵՎ» ՕՐԺԵՐԹԻ ԱՐԱՐԵՐԵՆ ՀԱԿԵՎԱԾՈՒՄ 284	
ԼՈՒԹ ԶԱՐԱՐՈՒՄ	
ՐԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՏԱՐԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2005-2015 թթ. 297	

СОДЕРЖАНИЕ

ВАГЕ САРГСЯН

- КОНЦЕПЦИЯ К. Ф. ЛЕМАНА-ХАУПТА ПО ВОПРОСУ
ФОРМИРОВАНИЯ ВАНСКОГО ЦАРСТВА 3

ВААН ТЕР-ГЕВОНДЯН

- ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В СТРАНАХ ВОСТОЧНОГО
СРЕДИЗЕМНОМОРЬЯ В КОНЦЕ XII ВЕКА (ПО ДОКУМЕНТАМ
АРМЯНО-РИМСКИХ ПЕРЕГОВОРОВ 1199 Г.) 19

АРГИШТИ ВАРДАНЯН

- К ВОПРОСУ О ПРИНАДЛЕЖНОСТИ КАНТОН ТАРОНА
(ВТОРАЯ ПОЛОВИНА VIII ВЕКА – НАЧАЛО IX ВЕКА) 41

МАРИАМ ГРИГОРЯН

- СМЕШАННЫЕ БРАКИ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ
(IX–XI вв.) 52

АКОП МУРАДЯН

- НАСИЛЬСТВЕННЫЕ ПЕРЕСЕЛЕНИЯ И ЭМИГРАЦИЯ ИЗ
КАРОССКОЙ ГУБЕРНИИ В ПЕРИОД
ТУРЕЦКО-ПЕРСИДСКИХ ВОЙН (1512–1639 гг.) 64

АСМИК АМИРДЖАНЯН

- РОЛЬ ИОСИФА АРГУТЯНА В АРМЯНО-ГРУЗИНО-РУССКИХ
ОТНОШЕНИЯХ (КОНЕЦ XVIII в.) 78

КАРО ЖАМХАРЯН

- АРМЯНСКИЕ ЕВАНГЕЛИСТЫ АЛЕКСАНДРОПОЛЯ И
ОКРЕСТНОСТЕЙ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX-ОГО ВЕКА 90

КАРЕН ХАЧАТРЯН

- ПРЕЕМСТВЕННОСТЬ В ТУРЕЦКОЙ ПОЛИТИКЕ
ОСУЩЕСТВЛЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН В 1894–1922 ГГ. 101

КАНАКАРА АЙРАПЕТЯН

- ХОРЕН МУРАДБЕКЯН – БЛАГОСТРОИТЕЛЬ ЦЕРКВЕЙ НОР
БАЯЗЕТА В 1901–1909 ГГ. 120

МАРИАМ АКОЛЯН

- СОЗДАНИЕ ВОЕННОЙ ШКОЛЫ АРФ-ДАШНАКЦУТЮН И ЕЕ
ДЕЯТЕЛЬНОСТЬ В БОЛГАРИИ 129

АШХЕН БАСЕНЦЯН

- ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКИХ СОЛДАТ В ОСМАНСКОЙ
АРМИИ (1914–1916 ГГ.) 147

ГАЛЯНЕ КАЗАРЯН

- ДЕЯТЕЛЬНОСТЬ ТИПОГРАФИИ ПЕРВОПРЕСТОЛЬНОГО
СВЯТОГО ЭЧМИАДЗИНА В 1918–1920 ГГ. 164

АННА АСАТРЯН

- МЕСТНОЕ САМОУПРАВЛЕНИЕ В ЛОРИЙСКОЙ
НЕЙТРАЛЬНОЙ ЗОНЕ (1919–1920 ГГ.) 173

АМО СУКИАСЯН, ГАЛИК ЖАМГАРЯН

- ОЧЕРКИ ПОВСЕДНЕВНОСТИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ В
ФЕЛЬЕТОНАХ ЛЕР КАМСАРА "ИСТОРИЯ РЕЛИГИЙ" И
"САВОТАЖ" 186

ХАЧАТУР СТЕПАНЯН

- ПРОЯВЛЕНИЕ "СМЕНОВЕХОВСТВА" В
АРМЯНСКОЙ РЕАЛЬНОСТИ 199

РУБЕН МИРЗАХАНЯН

- ПЕРВЫЕ ШАГИ ФОРМИРОВАНИЯ ТЕОРИТИЧЕСКИХ
ШТАМПОВ СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ
ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ 215

НАРИНЕ МОВСЕСЯН

- ОЦЕНКА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. В ИСТОРИЧЕСКОЙ НАУКЕ ПО РАБОТЕ О. КАЧАЗНУНИ "АРФ ДАШНАКЦУТЮН БОЛЬШЕ НЕЧЕГО ДЕЛАТЬ" 227

АМО СУКИАСЯН

- СОЗДАНИЕ ГЛАВЛИТА СОВЕТСКОЙ АРМЕНИИ 241

РУБЕН КАРАПЕТИАН

- АРМЯНО-ЕГИПЕТСКИЕ ОТНОШЕНИЯ В 1992–2011 ГГ. 253

ВАЛЯ МАРТИРОСЯН

- ПРОБЛЕМЫ МИГРАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И ДЕЯТЕЛЬНОСТЬ МЕЖДУНАРОДНОЙ ОРГАНИЗАЦИИ ПО МИГРАЦИИ 272

МЯСНИК ЕСОЯН

- ОСВЕЩЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ЕГИПТА В АРАБСКОМ ПРИЛОЖЕНИИ ГАЗЕТЫ "АРЕВ" 284

ЛИЛИТ ЗАКАРЯН

- РЕФОРМЫ В СИСТЕМЕ ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В 2005–2015 ГГ. 297

CONTENTS

VAHE SARGSYAN

- THE CONCEPT OF C. F. LEHMANN-HAUPt ON THE
FORMATION OF THE KINGDOM OF VAN 3

VAHAN TER-GHEVONDIAN

- THE POLITICAL SITUATION IN THE EASTERN
MEDITERRANEAN COUNTRIES AT THE END OF THE XII C.
(ACCORDING TO THE DOCUMENTS OF
1199 ARMENIAN-ROMAN NEGOTIATIONS) 19

ARGISHTI VARDANYAN

- THE ISSUE OF THE BELONGING OF TARON CANTON (THE
SECOND HALF OF THE VIII C. –
THE BEGINNING OF THE IX C.) 41

MARIAM GRIGORYAN

- MIXED MARRIAGES IN MEDIEVAL ARMENIA
(IX–XI CC.) 52

HAKOB MURADYAN

- FORCED DEPORTATIONS AND EMIGRATIONS FROM KARS
GUBERNIA DURING THE PERIOD OF THE TURKISH-PERSIAN
WARS (1512–1639) 64

HASMIK AMIRJANYAN

- THE ROLE OF HOVSEP ARGHUTYAN AND THE ARMENIAN-
GEORGIAN-RUSSIAN RELATIONS
(THE END OF THE 18th C.) 78

KARO JAMKHARYAN

- THE ARMENIAN EVANGELISTS OF ALEXANDROPOL AND ITS
SURROUNDINGS IN THE SECOND HALF OF THE 19th C. 90

KAREN KHACHATRYAN

- THE TURKISH POLICY CONTINUITY IN REALIZATION OF THE ARMENIAN GENOCIDE IN 1894–1922 101

QANAQARA HAYRAPETYAN

- KHOREN MOURADBEKYAN: A REFORMER OF THE CONDITION OF THE CHURCHES IN NOR BAYAZET REGION IN 1901–1909 120

MARIAM HAKOBYAN

- THE ESTABLISHMENT OF ARF MILITARY SCHOOL AND ITS ACTIVITY IN BULGARIA 129

ASHKHEN BASENTSYAN

- THE STATE OF ARMENIAN SOLDIERS IN THE OTTOMAN ARMY (1914–1916) 147

GAYANE GHAZARYAN

- THE PRINTING HOUSE ACTIVITIES OF THE MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN IN 1918–1920 164

ANNA ASATRYAN

- THE LOCAL SELF-GOVERNMENT IN THE NEUTRAL ZONE OF LORI (1919–1920) 173

HAMO SUKIASYAN, GAGIK ZHAMHARYAN

- FEATURES OF EVERYDAY LIFE OF SOVIET ARMENIA IN THE FEUILLETONS "HISTORY OF RELIGIONS" AND "SABOTAGE" BY LER KAMSAR 186

KHACHATUR STEPANYAN

- THE MANIFESTATION OF THE "SMENOKEHOVSTVO" IN THE ARMENIAN REALITY 199

- THE FIRST STEPS TO THE FORMATION OF THEORETICAL
PATTERNS OF THE HISTORIOGRAPHY OF SOVIET ARMENIA ... 215

- THE ASSESSMENT OF THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920
IN THE HISTORICAL STUDIES ACCORDING TO THE WORK
"THE ARF DASHNAKTSUTYUN HAS NOTHING TO DO
ANYMORE" BY H. KAJAZNUNI 227

- ORGANIZATION OF THE GLAVLIT OF SOVIET ARMENIA 241

- ARMENIAN-EGYPTIAN RELATIONS IN 1992-2011 253

- MIGRATION-RELATED ISSUES IN THE REPUBLIC OF
ARMENIA AND THE ACTIVITIES OF INTERNATIONAL
ORGANIZATION FOR MIGRATION 272

- THE ELUCIDATION OF THE ARMENIAN COMMUNITY
ACTIVITIES IN EGYPT IN THE ARABIC
APPENDIX OF "AREV" DAILY..... 284

- THE REFORMS IN THE PROFESSIONAL EDUCATION FIELD
IN THE REBUBLIC OF ARMENIA 2005-2015 297

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրին հոդվածներ ներկայացնելու շափորչիչները:

• Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:

• Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերնե, ուսուերեն և անգլերեն ամփոփագրերով (10-15 տող). Տառանձեակը հայերենի դեպքում՝ Sylfaen, այլ լեզուների՝ Times New Roman, տերասի տառաշափը՝ 12, տողատակում՝ 9, միջառողային հեռավորությունը՝ 1.5, լրասանցքերը՝ վերևից՝ 2, ներքեից՝ 2.5, ձախից՝ 3, աջից՝ 1:

• Գիտական աստիճան շրւեցող հեղինակները պարուադիր պետք է ներկայացնեն հոդվածի մասին երաշխավորական գրություն գիտական դեկավարից կամ գիտական (գիտակրական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:

• Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորույթ շպարունակող կամ նախկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

«Հայոց պատմության հարցեր» տարեգրի բոլոր համարենքը էլեկտրոնային տարբերակով տե՛ս՝